

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ԱԿՈՒՆՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 2(18)

ԵՐԵՎԱՆ 2018

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝

ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ - պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Առաքելյան Ս. Ա. – պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ասատրյան Ա. Գ. - արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

Գասպարյան Ս. Զ. - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Դերձյան Հ. Մ. - իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

Զաքարյան Ս. Ա. - փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Ղարիբյան Գ. Ա. - տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ

թղթակից անդամ

Մանուչարյան Հ. Գ. - քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր

Մինասյան Է. Գ. - պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Միքայելյան Մ. Վ. - տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Միքայելյան Վ. Հ. – հոգեբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Մուրադյան Ս. Պ. - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Նահապետյան Ռ. Ա. - պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ակունք: Գիտական հոդվածների ժողովածու/Խմբ. խորհուրդ՝ Ս.Ա.

Առաքելյան և ուրիշ.; Գլխ. խմբ.՝ Ա.Ա. Ներսիսյան - Եր.: ԵՊՀ հրատ., 2018թ.-

190 էջ:

© ԵՊՀ հրատարակչություն, 2018 թ.

© Հեղ. խումբ, 2018 թ.

YEREVAN STATE UNIVERSITY

IJEVAN BRANCH

A K U N Q

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

NUMBER 2 (18)

YEREVAN 2018

YSU PUBLISHING HOUSE

EDITOR-IN-CHIEF

ASHOT NERSISYAN - doctor of historical sciences, professor

EDITORIAL COUNCIL

Arakelyan S. A. - candidate of historical sciences, professor

Asatryan A. G. - doctor of art, professor

Derdzyan H. M. - doctor of law, professor

Gasparyan S. K. - doctor of philological sciences, professor

Gharibyan G. A. - doctor of economic sciences, professor, associate member of
NAS, RA

Manucharyan H. G. - doctor of political science, professor

Minasyan E. G. - doctor of historical sciences, professor

Mikaelyan M. V. - doctor of economic sciences, professor

Mikaelyan V. H. - doctor of psychological science, professor

Muradyan S. P. - doctor of philological sciences, professor

Nahapetyan R. A. - doctor of historical sciences, professor

Zakaryan S. A. - doctor of philosophy, professor

Akunq. Collection of Scientific Articles/Editorial Board - S. A. Arakelyan
and others; Editor – in – chief - A. A. Nersisyan. - Yerevan; YSU
Publishing House, 2018 – 190 pages.

© YSU Publishing House 2018

© Author group, 2018

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՄՈՒՄՆԱԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈՒՄԸ «ՄԱՄՆԱ ԾՈՒՐ» ԷՊՈՍՈՒՄ ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Ազգագրության մեջ ընդգրկված տնտեսական ու արտադրական, կենսապահովման, սոցիոնորմատիվ և հումանիտար մշակութային երևույթներն իրենց ինքնատիպ գեղարվեստական, երբեմն էլ առասպելաբանական արտացոլումն են գտել բանահյուսական բոլոր ստեղծագործությունների մեջ՝ դառնալով էթնոսի հազարամյակներ գոյատևած պատմության յուրակերպ հուշարձաններ: Դրանք են մինչև օրս ժողովրդի բանավոր ավանդության մեջ տակավին գոյատևող վիպական-պատմողական ժանրերը՝ հեքիաթ, առասպել, առակ, ժողովրդական վեպ ու վիպերգ, երգիծական զանազան պատումներ, ասություններ, ծիսական ու կենցաղային սովորությունների հետ առնչվող երգեր ու պարերգեր, կրոնահավատալիքային իրողություններին առնչվող ավանդություններ ու սնահավատական գրույցներ, հմայական աղոթքներ ու հմայական բանահյուսական այլ ժանրեր: Դրանցից սույն հոդվածում ընտրված է հայ ժողովրդական բանահյուսության գոհարներից մեկը՝ «Մասնա Ծոերը», որը յուրակերպ ազգագրական նյութի հարուստ աղբյուր է: «Մասնա Ծոերի» ազգագրական աղբյուրագիտական արժեքը, հիրավի բացառիկ է:

Հայագիտության մեջ առ այսօր չկա մի գիտական ուղղություն, որ անդրադարձած չլինի հայոց ազգային էպոսի արժևորմանը, ցավոք այն ազգագրորեն դեռևս հետազոտված չէ, անդրադարձներ են եղել միայն այս կամ այն հարցերի ազգագրական մեկնաբանությունների ժամանակ: Սույն հոդվածում արծարծվում է միջնադարյան Հայաստանի հայոց ամուսնաընտանեկան հարաբերությունների վերաբերյալ տեղեկությունների ազգագրական բնութագրությունը ըստ «Մասնա Ծոեր» էպոսի:

Էպոսը ամուսնաընտանեկան հարաբերությունները պատկերող մի սքանչելի սկզբնաղբյուր է, որտեղ կարելի է գտնել տվյալներ ինչպես հեթանոսական, այնպես էլ վաղ ֆեոդալական դարաշրջանի վերաբերյալ: Հ. Օրբելին նկատել է, որ էպոսի «հնագույն տարրերը ծնվել են անգամ անհիշելի ժամանակներում. երբ դեռ չէր հնչում հայկական բառը»¹: Մ. Աբեղյանը գտնում է, որ «վեպն իր մեջ պահում է պատմական հիշողություններ մեծ մասամբ IX դարի կեսերից մինչև XIII դարի կեսերը», որ «մեր վեպի առաջին ճյուղի հնությունը հասնում է մինչև Մ. Խորենացու ժամանակը»²:

¹ Օրբելի Հ., Հայկական հերոսական էպոսը, Երևան, ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1956, էջ 8:

² Աբեղյան Մ., Երկեր, հ. Ա, Երևան, ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1966, էջ 381:

Էպոսի տվյալների հիման վրա ընտանիքի, ընտրության և ամուսնության նախնական ձևերի և դրանց ժամանակների բացահայտմամբ հնարավոր է դառնում լրացնել ազգագրական այն տվյալները, որոնք հավաստված են միջնադարում և XIX-XX դդ.¹: Էպոսի հիման վրա քննարկվող հարցի վերաբերյալ արժեքավոր ուսումնասիրություն է կատարել Վ.Բդոյանը² և Ս.Հովհաննիսյանը³:

Էպոսում ամուսնա-ընտանեկան կյանքի պատկերները կարելի է բաժանել երեք շերտի. անհիշելի ժամանակներից մինչև Հայաստանում քրիստոնեության հաղթանակը պատկերող հնագույն շերտ. վաղ ավատական Հայաստանի ամուսնա-ընտանեկան հարաբերությունները պատկերող միջին շերտ. նորագույն տարրեր, որոնք հետագա դարերի դրսևորումներ են և արտահայտված են որոշ պատումներում:

Ի՞նչպիսին էր հայ ընտանիքի ձևը Էպոսի հերոսների ապրած դարաշրջանում: Էպոսում առկա է ընտանիքի երկու ձև՝ փոքր անհատական և նահապետական մեծ՝ գերդաստանական ընտանիք: Այս երկու ձևն էլ Հայաստանում գոյություն են ունեցել մասնավոր սեփականության, դասակարգային հարաբերությունների առաջացման ժամանակ: Ահա գերդաստանական ընտանիքի կազմը արտացոլող երկու պատումում ասվում է.

Նստուկ տեղ հարցուց. – Քեռի՛ Թորոս,

Մենք քանի՞ տղամարդ ինք:

Ըսավ ... Քեզնով մենք քառսուն մարդ ինք⁴:

Այդպես է պատասխանում Քեռի Թորոսը Դավթի հարցումին:

Էպոսի մյուս պատումների համաձայն հերոսների ընտանիքը բազմանդամ չէ: Նրանց երեխաների թիվը միայն առանձին դեպքերում է անցնում 1-2-ից: Մինչդեռ ընտանիքի բազմանդամությունը նահապետական ընտանիքի բնորոշ առանձնահատկություններից է: Ավելին, ծնողի և զավակի հարաբերություններում Էպոսում երբեմն դրսևորվում է զավակի անհարգալից վերաբերմունքը հոր և մոր նկատմամբ: Այսպես, մի շարք պատումների համաձայն Փոքր Միերը ձեռք է բարձրացնում անգամ իր հոր՝ Դավթի վրա: Մի պատումի համաձայն էլ՝ Բաղդասարը սպանությամբ է սպառնում իր մորը⁵:

¹ Սասնա Շոեր, խմբագրեց Մ.Աբեղյան, աշխատակցությամբ Կ.Մելիք-Օհանջանյանի, հ. Ա, Երևան, 1936, հ. Բ, մաս Ա, խմբագրեց Մ. Աբեղյան, աշխատակցությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, Պետ. հրատ., 1944, մաս Բ, խմբագրեց Մ. Աբեղյան, աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1951, հ. Գ, Պատումների գրառումների և բնագրերի պատրաստում՝ Ս. Հարությունյանի և Ա. Սահակյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979 և «Սասնա Շոեր» հ. Դ, Նոր պատումների և բնագրի պատրաստում Ս. Հարությունյանի և Ա. Սահակյանի, Երևան, «Գիտություն», 1999:

² Բդոյան Վ., Ընտրության և ամուսնության ձևերը «Մասունցի Դավիթ» Էպոսում, ԲԵՀ, Երևան, 1976, թիվ 1, էջ 84-100:

³ Հովհաննիսյան Ս., «Սասնա Շոերը»՝ հայ ընտանեկան իրավունքի պատմության կարևոր հուշարձան. – Բանբեր Երևանի համալսարանի (այսուհետ՝ ԲԵՀ), Երևան, 1968, թիվ 3, էջ 96-109:

⁴ Սասնա Շոեր, հ. Բ, մ. Ա, էջ 373-374, հմմտ. հ. Գ, էջ 203:

⁵ Սասնա Շոեր, հ. Ա, էջ 483:

Նույն բանը նկատելի է էպոսի հերոսների և նրանց մերձավոր բարեկամների՝ հորեղբոր, քեռու, երկու եղբայրների, այդ թվում՝ խորթ եղբայրների հարաբերություններում: Այս երևույթները արտահայտում են հերոսների ապրած ժամանակի իրավական կյանքը, հարազատների իրական հարաբերությունները, որոնք անհա-մատեղելի են նահապետական գերդաստանի գոյության հետ: Հստ էպոսի, թվում է, թե հերոսների ապրած ժամանակի ընտանիքի տիրապետող ձևը եղել է փոքր ընտանիքը: Բայց կարծես թե հակասություն կա էպոսի պատմական հայրենիքում՝ Սասունում, մինչև եղեռն ու արտագաղթը նահապետական գերդաստանական ընտանիքները մեծ թիվ էին կազմում, ընտանեկան հարաբերություններն էլ՝ խիստ գերդաստանական էին, որտեղ իշխում էր տան մեծի, ավագի հեղինակությունն ու կամքը: Այն առավելապես դրսևորվում էր ամուսնության հարցում, երբ նշանվող կողմերը պասիվ դերում են, վճռորոշը՝ նրանց հարազատների ցանկությամբ իրականացվող ամուսնու-թյունն էր: Այսպես, պատումներից մեկում Ձենով Հովանն ասում է.

Տ՛ երթամ, քե (Դավթին) կնիկ ուզեմ:

Գնաց Չմշկիկ Սուլթան ուզեց Դավթի համար¹:

Էպոսում հարսնացուի կամ փեսացուի ընտրությունը կատարվում էր այն հեռանկարով, որ տոհմն ապահովվեր աշխատավոր, կովոդունակ, երկրի ինքա-պաշտպանությանը և ազատ ու անկախ ապրելու իրավունքը կազմակերպող սերնդով: Իսկ ընտրության ձևերը բազմազան ու հին էին, որքան հայ հասարակությունը: Փաստորեն հարսանիքով և եկեղեցական պսակով էր միայն վավերացվում ամուսնությունը:

Էպոսում խստորեն էր դրված որդեծնության, ժառանգ ունենալու, երկիրը, հողը, ունեցվածքը, տունը կամ ծուխը ժառանգին փոխանցելու, տիրազուրկ չթողնելու անհրաժեշտության գիտակցությունը: Որդեծնության համար էպոսի հերոսները ոչնչի առաջ կանգ չէին առնում, քանզի.

Մի տղեն որ ըլնը՝

Մե տան անուն չկորուսը²:

Ժառանգ ունենալն այնքան կարևոր է եղել, որ հանուն այդ բանի ամուսինները պատրաստ էին մեռնելու: Ահա թե ինչու կնոջ ամլությունը ճանաչվել է ապահարզանի հիմք, իսկ երբ չի ցանկացել բաժանվել ամուլ կնոջից, թույլատրվել է բերել երկրորդ կին, ինչպես որ այդ, որպես բացառություն XIX դ. վերջում, XX դ. սկզբներին թույլատրվել է Սասունում³: Մերնդի ապահովումը գերդաստանի անմահությունն է:

¹ Սասնա Շոեր, Ժողովրդական վեպ, աշխատությամբ Ս. Հարությունյանի, Երևան, «Սովետական գրող», 1977, էջ 326:

² Սասնա Շոեր, հ. Ա, էջ 165:

³ Նահապետյան Ռ., Աղձնիքահայերի ամուսնահարսանեկան սովորույթներն ու ծեսերը, (Պատմաազգագրական ուսումնասիրություն), Երևան, ԵՊՀ հրատ., 2007, էջ 58-60:

Սակայն մի քանի պատումներում էլ նկատվում է, որ միջնադարում Հայաստանում գործնական նշանակություն է ունեցել կողմերի՝ աղջկա և տղայի փոխադարձ համաձայնությամբ, առանց ծնողների կամ այլ հարազատների մասնակցության, նշանադրություն իրականացնելը, ինչպես, օրինակ.

Սա՛նասար, ի՞նչ կա, խեղճ էնի:

Սանասար ասաց. – Իս էկիր իմ՝ քիձի կնիկ առնիմ:

Խանում կ'ասա. – Աչքիս վրա, իս քի պես ըզիր մ' էլ տը տեսնի՞մ:

Էն ժամանակին մատնիկնիք խիտ իրարու կը փոխին¹:

Հայոց մեջ որպես ազատ սիրո արտահայտության և ամուսնության առաջարկության ամենատարածված միջոցներից մեկն է եղել տղայի կողմից սիրո և պտղաբերության խորհրդանշան խնձորի հանձնումը աղջկան: Խնձորով ընտրելու մեզ հայտնի ամենահին դրվագը հանդիպում է Հպոսում, երբ աղջիկները տղաներին խնձոր էին հանձնում և իբրև ընտրյալ թիրախ՝ նրանց ավին էին նետում².

Դավիթ գուր ձին խեծավ,

Քշեց գնաց, հեռջև Խանդութ խաթնի փանջարին:

Խանդութ խաթուն՝ որ աչք ընկավ,

Զ Դավիթ տեսավ, ուրախացավ.

Ուրախութենե խնձոր մ'էզար Դավթին:

Դավիթ զխնձոր բռնեց վար ձիուն,

Խնդացավ վար խնձորին³:

Հետագայում խնձորով ընտրությունը լիովին համարվում էր տղաների իրավունքը: Հպոսում որպես փեսացու հրավիրելու և ընտրելու միջոց ոսկե խնձորը դրվում էր վրանի բարձր սյան գլխին, շենքի կամ աշտարակի գագաթին կանգնեցված ձողի ծայրին կամ դարպասի սյան բարձրացված կատարին՝ ի նշան այն բանի, թե այս հարկի տակ ապրող օրիորդը պատրաստ է առաջարկության կամ «տնփեսա» ընդունել⁴: Դա արբունքի հասած օրիորդներին «մարդու տալու» և ծնողների անհամաձայնության առհավատյալն էր, փեսացու գտնելու լռիկ միջոցը: Ուշագրավ է, որ այդ սովորույթը դեռևս հանդիպում էր XX դ 60-70-ական թթ. Ապարանի և Արագածի մշտնիշխանությունում⁵:

Հպոսում, նկատելի է մի երևույթ ևս, որ XIX-XX դարերում բացառվում էր: Այսպես, Հպոսում, աղջկա նախաձեռնությամբ և ցանկությամբ նշանադրության համաձայնություն կայացնելը խորթ չի եղել հայ իրականությանը: Այսպես, Դավիթը Մշո Չմշկիկ Սուլթանից ստանում է նամակ. «Տավիթ, արի՛, ընձիկ առ քե

¹ Սասնա Շոեր, հ. Ա, էջ 989:

² Նահապետյան Ռ., նշվ. աշխ., էջ 39-40:

³ Սասնա Շոեր, հ. Ա, էջ 33, հմմտ. էջ 96, 1072, հ. Բ, մ. Բ, էջ 604:

⁴ Սասնա Շոեր, հ. Ա, էջ 149, 486, 540-541, 612, հ. Բ, մ. Բ, խմբագրեց Մ. Աբեղյան, աշխատակցությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, Պետ. հրատ., 1951, էջ 130:

⁵ Նահապետյան Ռ., նշվ. աշխ., էջ 40:

կնիկ, յըմ երկիրն էլ էրա քո հեսաբով»։ Դավիթը գնում, հավանում է Սուլթանին և ասում. «- Ես քե կառնեմ»։ Դավիթը մի ժամանակ մնում է Սուլթանի տանը և մեկնում։ Սուլթանը պահանջում է երդվել, որ կգա իր ետևից։ Դավիթը երդվում է¹։ Սրանից կարելի է եզրակացնել, որ և հարազատների ցանկությամբ ու ընտրությամբ և հարսնացուի ու փեսացուի փոխադարձ, հոժարակամ ցանկությամբ ամուսնություն կայացնելու ձևերը Հայաստանում միջնադարում գոյություն են ունեցել զուգահեռաբար²։

Էպոսում աղջիկները սիրո առաջարկություն են անում տղաներին նաև նամակ, դիմանկար, մատանի ուղարկելու միջոցով³։ Դավիթն ընդունում է Խանդութի ուղարկած մատանին⁴, մեկ այլ դեպքում՝ դիմանկարը⁵։ Սուռաթը Սանասարին, որպես սիրո և ամուսնության առաջարկության միջոց, իր դիմանկարներն է ուղարկում⁶։ Այսպես, օրինակ՝ Քաջանց թագավորի աղջիկ Դեղձուն Ծամը մի կուժ լիքը ջուր է լցնում և մի կուժ էլ դատարկ է թողնում, երկուսի բերանին էլ մեկական խնձոր է դնում և նամակի ու դիմանկարների հետ ուղարկում Սանասարին՝ ամուսնության առաջարկով⁷։ Կամ՝ Պղնձե քաղաքի թագավորի աղջկա նամակը հանձնվում է Բաղդասարին, Գոհարի նամակը նույնպես բերվում է Սանասարին, Խանդութի նամակը հանձնվում է Դավիթին, իսկ նամակա-տարները՝ աղջիկների ուղարկած մարդիկ են⁸։ Էպոսում հանդիպում ենք նաև գոտիով ու լաչակով (թաշկինակով) ամուսնության առաջարկին⁹։

Էպոսում որոշակի տեղ ունի նաև կողմերի կամքով մատանիներ փոխանակելու միջոցով ընտրություն կատարելը¹⁰, որը հավանորեն ծագելու էր գնմամբ ամուսնության ժամանակներում¹¹։ Այստեղ Սանասարն ու Քառսուն Ծամ Գոհարը և Բաղդասարն ու Ձենով Հովանի աղջիկն անձամբ տեսակցում են և մատանիներ փոխանակում տղաների առաջարկով¹²։ Մի այլ պարագայում Դավիթն է ընդունում Խանդութի ուղարկած մատանին¹³։

¹ Սասնա Շոեր, հ. Ա, էջ 856:

² Սասնա Շոեր, հ. Ա, էջ 983-1022:

³ Սասնա Շոեր, հ. Ա, էջ 865, 987-990, 1033, հ. Բ, մ. Բ, էջ 144, 509:

⁴ Սասնա Շոեր, հ. Բ, մ. Բ, էջ 691-692:

⁵ Սասնա Շոեր, հ. Բ, մ. Բ, էջ 144, 509-510, հ. Գ, էջ 275:

⁶ Սասնա Շոեր, հ. Ա, էջ 1033:

⁷ Սասունցի Դավիթ, Հայ ժողովրդական հերոսավեպ, առաջաբան, բառարան, ծանոթագրություն Ս. Հարությունյանի, Երևան, «Լույս» 1981, (այսուհետ՝ Սասունցի Դավիթ, ՀժՀ), էջ 54:

⁸ Սասնա Շոեր հ. Ա, էջ, 610, 849, 865, հ. Բ, մաս Բ, էջ 142, հ. Գ, էջ 215:

⁹ Իսմիլ Խաթունը Մեծ Միերին ուղարկած գոտիով ու լաչակով ամուսնության առաջարկ է անում (Սասունցի Դավիթ, ՀժՀ, էջ 114), մեկ այլ տարբերակում Դավիթն է Խանդութին թաշկինակ ուղարկում (Սասնա Շոեր, հ. Բ, մ. Բ, էջ 345:

¹⁰ Սասնա Շոեր, հ. Ա, էջ 989-990:

¹¹ Բդոյան Վ., նշվ. աշխ., էջ 86:

¹² Սասնա Շոեր, հ. Ա, էջ 987-990:

¹³ Սասնա Շոեր, հ. Բ, մ. Բ, էջ 691-692:

Էպոսում ևս երբեմն փեսացու էին հրավիրում երգիչ միջնորդների միջոցով, պայմանով, որ տղաներն ապրեին աներանց տոհմերում: Երգիչ միջնորդների՝ օրիորդներին գովաբանող երգերից մեկն է.

Իմ բոլլի՝ Խանդուք, ինչ օր բոլլն ծառն ի չինար,

Իմ ճերմակ Խանդուք, ինչ օր բամպուկ զգիս ու դիզիս:

Իմ կարմիր Խանդուք, ինչ օր խընձոր ծառին ի ծիրին:

Իմ խորոտի՝ կ Խանդուք, ինչ օր լուսնակ տըսնըհինգին¹:

Էպոսում արտացոլված են նաև առևանգմամբ, պայմանադրությամբ և օրորոցախազով ամուսնության սովորության ձևերը: Առևանգմամբ ամուսնության հետքեր ցայտուն արտահայտված է «Սասնա Շոերում»: Այստեղ Դավիթն ամուսնանում է Խանդուքի հետ՝ նրան առևանգել ցանկացողներին սպանելուց հետո², Սանասարն առևանգում է Քաջանց թագավորի Սուռաթ դստերը³, Դավիթն առևանգում է Գյուրջիստանի թագավորի աղջկան⁴ կամ նույն Դավիթը առևանգում է 41 կույսերի, մեկը Մհերի և 40-ը մրցակից մենամարտողների համար⁵ և այլն:

Էպոսում գտնում ենք նաև պայմանադրությամբ, նախքան նրանց ծնվելը ամուսնության իրողության մասին: Այսպես, Դավթի ու Գոհարի ամուսնությունը նրանց ծնողների վաղօրոք համաձայնությամբ կայանալու արդյունք է:

Էպոսում տեղ է գտել նաև XIX-XX դդ. սկզբներին դեռևս գոյություն ունեցած օրորոցախազով ամուսնության հետքեր: Այսպես, օրինակ, Արևելոց Պաճիկ թագա-վորը Դավթին առաջարկում է խնամիանալ.

Ըսեց. – Դա՛վիթ, իմ Խոշունին դագմիշ մ՛էղնի,

Արի, ես դու ահտ ու շարթ էնինք:

Ըսեց. – Ի՞նչ ահտ ու շարթ էնինք:

Ըսեց. – Մկա ես լէ ագաբ, դու լէ ագաբ,

Իմ աղջիկ տամ քու տղին,

Քըզի աղջիկ էղավ, ընձի տղա,

Քու աղջիկ տուր իմ տղին:

Վերի դեն Աստված վկա բռնին,

Ներքին դեն լե Դավթի տկի ձին⁶:

Էպոսում նկատելի է նաև մեկ այլ երևույթ ևս, որ հայոց մեջ աղջկա տանը XIX-XX դարերում, անգամ մեր օրերում բացառվում է: Դրանց թվում էին մինչև նշանադրությունը, հարսանիքն ու պսակադրությունը՝ աղջկա հարազատների տանը հաց ուտելը, ընծայաբերությունը, աղջկանը փեսացուի ազատ

¹ Սասնա Շոեր, հ. Բ, մ. Բ, էջ 306, հմմտ. հ. Ա, էջ 587, հ. Գ, էջ 215:

² Սասնա Շոեր, հ. Ա, էջ 454, հ. Գ, էջ 50-51:

³ Սասնա Շոեր, հ. Ա, էջ 1035:

⁴ Սասնա Շոեր, հ. Ա, էջ 221-224:

⁵ Սասնա Շոեր, հ. Գ, էջ 51:

⁶ Սասնա Շոեր, հ. Բ, մ. Ա, էջ 78, հ. Բ, մ. Բ, էջ 525:

այցելությունները, տանը մնալը, կենակցելը և այլն: Կամ մեկ այլ երևույթ ևս: Հայտնի է, որ նշանադրությամբ ամուսնական պարտականությունը սովորության ուժով հարգվում և պաշտպանվում էր, սակայն էպոսում հանդիպում ենք պատումներում գրանցված դեպքերի, երբ ոտնահարվել է նշանի պարտավորությունը, դրժվել է այն կողմերից մեկի՝ առավելապես տղամարդու միակողմանի հաճությամբ, կողմերի հարազատների կամքով, ինչպես և այլ պատճառներով: Օրինակ.

Դավիթ էսաց. – Խրոդրեր,

Իս Չըմշկիկ Սուլթան չըմ առնր.

Տ'երթամ, Խանդութ խաթուն բիրիմ¹:

Պատումներից մեկում էլ հանդիպում ենք նշանը աղջկա ծնողների կամքով դրժելու դրվագի, երբ աղջկան ուզելու է գալիս ուժով և դիրքով առավել հզոր թեկնածու: Ահա այն հաստատող մի հատված.

Քեռի Թորոս, իմ աղջիկ նշանելու յա...

Ձըր օրենքով լը նշանեցին ախճիկ,

Նշան էլ եդ չդառնա ...

Գնա՛, թը էն մարթուն Յախթեցի՛ր,

Ձ Խանդութ կ'իտամ Դավթին²:

Էպոսում առկա են նաև ուրիշի նշանած աղջկա և նրա ծնողների կամքին հակառակ իշխանություն և ուժ ունեցող Դավիթի կողմից բռնությամբ վերցնելու իրողությունը: Դավիթը տիրանում է Չընմաչին թագավորի տղայի նշանածին³: Փաստորեն ստացվում է այնպես, որ միջնադարյան Հայաստանում նշանը դրժելը գործնականում կիրառելի է եղել: Միայն թե, ըստ սովորության իրավունքի մասնագետ Ս. Հովհաննիսյանի հետազոտությունների՝ ուրիշի նշանածի հետ ամուսնանալ ցանկացողը պարտավոր էր հատուցել նախկին փեսացուին հասցված նյութական վնասը, կանխել նաև սպառնացող վրիժառության հնարավորությունը⁴: Իսկ Ե. Լալայանի գրառած նյութերի՝ հեթանոս հայերը նշանին այնքան մեծ կարևորություն են տվել, որ նշանածները միմյանց համարում էին ամուսնիներ և անարգել կենակցում, մի երևույթ, որ իր արտացոլումն է ստացել նաև մեր էպոսի շատ պատումներում⁵: Էպոսում առկա են նաև բարքերի ազատության այլ դրսևորումներ ևս: Օրինակ, Դավթի որդի Մհերը, երբ գնում է Բաղդադի խալիֆի դուստր Գոհարին կնության առնելու, ճանապարհին մի գյուղում հյուրընկալվում է որբ և այրի մի կնոջ կողմից: Գիշերն

¹ Սասնա Շոեր, հ. Ա, էջ 95:

² Սասնա Շոեր, հ. Ա, էջ 314:

³ Սասնա Շոեր, հ. Ա, էջ 370:

⁴ Հովհաննիսյան Ս., «Սասնա Շոերը»՝ հայ ընտանեկան իրավունքի պատմության կարևոր հուշարձան, ԲԵՀ, Երևան, 1968, թիվ 3, էջ 99-100:

⁵ Լալայան Ե., Նոր Բայազետի գավառ կամ Գեղարքունիք // «Ազգագրական հանդես», գիրք XVI, 1907, էջ 14-15:

այդ գեղեցիկ կինը Մհերի մոտ «մեզնվալ» անկողին¹: Մհեր այդ տանը մնաց որոշ ժամանակ: Իսկ երբ հորում նետված Մհերին մի կին հարցնում է, թե քեզ հանեմ ջրհորից, իմ Ջոհար աղջկան կառնե՞ս: - Չըմառնի Գոհար, կառնիմ Ջոհար, ասում է նա²: Մեկ այլ տարբերակում, - Է՛, - ըսավ, - չեղավ Գոհար, թը՛խ էլնի Ջըղար, Բի՛ տեսնամ³:

Մեկ այլ դրվագում Ձենով Հովանի կինը՝ Սառան հրապուրանքով փորձում է ամեն կերպ գայթակղել Դավթին՝ նրա հետ սեռական կապ հաստատելու համար ⁴ : Ահա թե ինչու հայոց ազգային եկեղեցին կանխարգելումներ մտցրեց այդ արդեն սովորույթ դարձած երևույթի դեմ, որովհետև այդ էին պահանջում ընտանիքի կայունության, հասարակության ընդհանուր բարոյականության բարձրացման, պսա-կով եկեղեցական արարողությամբ դրանց իրավական ուժ տալու պայմանները⁵:

Հայոց ամուսնաընտանեկան սովորութաիրավական ավանդական չափա-նիշների համաձայն այլակրոնն իր դավանանքից հրաժարվելու և քրիստոնեություն ընդունելու գնով միայն կարող էր արժանանալ եկեղեցու կողմից նշանադրության օրինականացմանը: Սակայն, քաղաքական անբարենպաստ իրավիճակը, երբեմն ավելի զորեղ էր գտնվում կանոնական նորմերից և հանդուրժում էին այլադավանների հետ խնամիական կապերը: Այդպիսի դեպքերը վկայված են ոչ միայն հայ պատմիչների երկերում, այլև ժողովրդական բանահյուսության և հատկապես «Սասնա Ծռեր» էպոսում: Այսպես, քաղաքական բռնությունների պատճառով հայոց խաչապաշտ թագավորի դուստր Ծովինարը կնության է տրվել Բաղդադի խալիֆին: Էպոսի մի շարք պատումների համաձայն՝ այլազգի է եղել նաև Խանդութը: Սակայն Խանդութի հետ ամուսնանալու փաստը, որպես շեղում կանոնական նորմերից հարթվում է նրանով, որ Խանդութն ամուսնությամբ դառնում է քրիստոնյա: Խանդութին քրիստոնյա դարձնելը էպոսում պատկերվում է հետաքրքիր ձևով՝ Դավթի՝ քրիստոնեավայել չորս խաչաձև համբույրներով⁶:

Ուշագրավ է, որ էպոսում Սասնա կտրիճների ամուսնությունը 7 կամ 40 օր տևող հարսանիքներով են ավարտվում, ընդ որում՝ աղջիկների տներում: Օրինակ, Խանդութի և Դավթի հարսանիքը տեղի է ունենում Խանդութի հայրական տանը⁷, Գոհարի և Մհերի հարսանիքը՝ Գոհարի հայրական տանը⁸: Իսկ դրանց հետևում է երեխաների ծնունդը: Կտրիճներն այստեղ են ապրում

¹ Սասնա Ծռեր, հ. Բ, մ. Ա, էջ 330:

² Սասնա Ծռեր, 1977, էջ 233-234:

³ Սասնա Ծռեր, հ. Գ, էջ 235:

⁴ Սասնա Ծռեր, հ. Ա, էջ 443-445:

⁵ Հովհաննիսյան Ս., նշվ. աշխ., էջ 100:

⁶ Սասնա Ծռեր, 1977, էջ 273-247:

⁷ Սասնա Ծռեր, հ. Ա, էջ 868, 1125, Բ, մ. Բ, էջ 518:

⁸ Սասնա Ծռեր, հ. Ա, էջ 48, հ. Գ, էջ 505:

առնվազն երեք, բայց սովորաբար 7 տարի: Նկատելի է նաև հնագույն սովորույթի նա մի արձագանք՝ քեռիների մոտ մանկական շրջանը անցկացնելը, ինչպես, օրինակ, Դավթի և Խանդուքի տղա Միքիի որոշ ժամանակ մնալը քեռիների մոտ ¹: Խանդուքի երեխան ծնվում է դարձի ժամանակ, քեռանց տանը ²: Մասնագիտական գրականության մեջ հայկական դարձի սովորույթը նույնացվում է ավունկուլատի սովորույթի հետ, սովորույթ, որով խիստ մեծ է քեռու դերը երեխաների դաստիարակության գործում³: Էպոսում ունենք քեռու այդպիսի անվանի տիպեր, որոնցից մեկը Քեռի Թորոսն է, որը քրոջորդիների համար վիրիսարի ջանքեր է թափում հատկապես ռազմաքաղաքական ասպարեզում: Մյուսը Գորգիկ իշխանն է, Ծովինարի եղբայրը, որը Սանասարին և Բաղդասարին է նվիրել Քուռկիկ Ջալալին և որը մարմնավորում է քեռանց կողմից հատկացված մի ամբողջ ռազմական ուժ:

Էպոսում հանդիպում ենք ամուսնության վաղնջական սովորույթներից Ծիսական համբույրի կիրառության: Այստեղ ամուսնության վերաբերյալ տարբեր սովորությունները հաճախ խաչաձևվում են: Այսպես, օտարածին Խանդուքի և Դավթի միջև ընտրության և նշանադրության կապակցությամբ բացահայտվում են նրանց իրարամերժ սովորությունները: Խանդուքը հրավիրված Դավթին ընդունում է նրա նկատմամբ իր տոհմական ծիսական սովորույթներ կիրառելով: Սակայն Դավթի, որը հայրիրավական տոհմի զավակն է, անակնկալի է բերում Խանդուքին, կիրառելով ծիսական համբուրման այն ձևը, որը լուծում է երկու նպատակ՝ նշանադրություն օրիորդի հետ և վերջինիս հայացումը: Դավթը Խանդուքի երեսը խաչաձևում է՝ այտերը, ճակատը և շուրթերը համբուրելով: Խաչաձև համբույրը հնագույն իմաստով նշանակում է «իբենով անել» յուրայնացում և տաբույացում⁴: Այսպես, ըստ Էպոսի, Դավթի կողմից Խանդուքի երեսը համբուրելուց կապտում է, որ նշանակում է, թե խաչ է առաջանում⁵: Ի դեպ, ծիսական համբույրի սովորույթի մնացուկներից է անցյալ դարերում կիրառված «խնամապագ» կամ «խնամապաչ»-ը, որ տեղի էր ունենում աղջկան զգեստավորելուց և նրա ոտքը հայրական տնից դուրս դնելուց անմիջապես հետո: Այդ պահին հարսնեղբայրը հարձակվում էր փեսայի քրոջ կամ նրա մեկ այլ հարազատ օրիորդի վրա, իբրև թե զվարճության համար էր համբուրում⁶:

Մասնա կտրիճների ամուսնությունը դրսևորվում է ընտրված կամ նախապես չընտրած աղջկան ուզելու երեք եղանակով.

¹ Մասնա Ծոեր, հ. Ա, էջ 109, 296, 690, 868, հ. Բ, մ. Ա, էջ 39, 403:

² Մասնա Ծոեր, հ. Գ, էջ 221:

³ Косвен М., Авункулат // «Советская этнография», 1948, N 1, с. 3-46.

⁴ Հովհաննիսյան Ս., նշվ. աշխ., էջ 198:

⁵ Մասնա Ծոեր, հ. Ա, էջ 451, հ. Գ, էջ 492:

⁶ Նահապետյան Ռ., նշվ. աշխ., էջ 37-38:

- 1) Փեսացուն ինքն է իր հարսնացուին ներկայացնողը և նրա հետ պայմանա-վորվողը՝ Դավիթը մենակ գնում է Խանդութի մոտ¹: Մա ընտրության ամենանախնականն է: Այդ նույն կերպ, Մհերը մենակ գնում է Գոհարին ուզելու²:
- 2) Պատգամախոսի հետ փեսացուի գնալն է, երբ քողարկված կերպով երևում է առնանգամբ կին ձեռք բերելու սովորությունը: Այսպես, Մհերը պատ-գամավոր է Խոր Մանուկին՝ Դեղձունին ուզելու համար³: Մելքոն թագա-վորը պատգամավոր է՝ Մհերի համար աղջիկ ուզելու նպատակով⁴:
- 3) Պատգամախոսներով աղջիկ ուզելն է՝ առանց փեսացուի մասնակցության. Այս դեպքում պատգամավորներն են՝ թագավորը, վեզիրը և Մելքոն՝ Մհերի համար Թևաթորոսի աղջկան ուզելու նպատակով⁵:

Ուշագրավ է էպոսում հայոց հարսնատի երթի ձևի նկարագրությունը՝ երբ ազապներն ընթանում էին առջևից (Ձենով Հովանը կամ Քեռի Թորոսը), փեսան՝ խնձոր հոտոտելով՝ նրանց ետևից (Դավիթ), իսկ հարսնացուն (Խանդութը) փեսայի բռնած թաշկինակի ծայրը ձեռքում՝ վերջից⁶: Ըստ էպոսի՝ տղամարդը գլուխն էր համարվում, այսինքն տղամարդու խոսքն է իշխողը, իսկ կինը՝ ոտքերը, այսինքն՝ հնազանդվողը⁷:

Էպոսում զարմանալիորեն ինչպես նաև անցյալի կենցաղում հարսանիքները տևում են յոթ օր ու զիշեր⁸, բայց էպոսում պահպանված է 40 օրյա օրյա տևողությամբ հար-սանիք⁹:

Էպոսում արձանագրված են նաև բազմակնության և բազմայրության, հարճեր պահելու սովորություններ: Տեգրամուսնության (լևիրատ) սկզբունքով բազմայրության և բազմակնության օրինակներ են տալիս Մեծ Մհերի, Դավթի, Մսրա Մելիքի և նրանց կանանց այսպես կոչված «ապօրինի» կապվածությունները: Հերոսներից որևէ մեկի մահվանը հետևում է նրա կնոջ տեգրամուսնությունը կամ տղամարդկանց կողմից կնոջը տիրելը. Մսրա Մելիքի կնոջ հրավերով Մեծ Մհերը գնում է նրա մոտ և տղա է ունենում¹⁰:

Մսրա Մելիքի կին Իսմիլ Խաթունն ամուսնու մահից հետո խորհում է. Ջանըմ, ինձի մա՛րդ մի հարկավոր է, որ երկրին տիրություն անի: Չելնի՞նք

¹ Մասնա Ծոեր, հ. Ա, էջ 1011, հ. Բ, մ, Ա, էջ 310:

² Մասնա Ծոեր, հ. Բ, մ, Ա, էջ 331:

³ Մասնա Ծոեր, հ. Բ, մ, Ա, էջ 94:

⁴ Մասնա Ծոեր, հ. Բ, մ, Ա, էջ 59-62:

⁵ Մասնա Ծոեր, հ. Բ, մ, Բ, էջ 112-113:

⁶ Մասնա Ծոեր, հ. Ա, էջ 97-99, 292-293, հ. Բ, մ, Բ, էջ 386:

⁷ Մասնա Ծոեր, հ. Ա, էջ 253:

⁸ Մասնա Ծոեր, հ. Գ, էջ 282:

⁹ Մասունցի Դավիթ, ՀԺՀ, էջ 90:

¹⁰ Մասնա Ծոեր, հ. Ա, էջ 384, հ. Գ, էջ 29:

ճամփենք Մհերի մոտ, Մհեր թող գա, ինձ հյուր ըլնի: Թող իմ սենեկ պառկի, էնոր ցեղեն ինձ կտրիճ տըղա մը ըլնի: Թե Մհերից ու իր ձիուց ջինս չը վերունք, Մհերի ցեղ մեր քոքն տի կտրի: Եվ ահա Իսմիլ Խաթուն գրում է Մհերին. – Արի, ինձ առ: Թե դուն չգաս՝ քան զիս շատ կընիկ ես¹:

Մհերն իր Արմաղան կնոջն ասում է, թե գնալու է Իսմիլի մոտ: Արմաղանը խնդրում է. – Մհեր, մ'երթա. Ինչի՞ կերթաս, էնի քեզ կխաբե: Երբ Արմաղանը տեսնում է, որ Մհերը վճռել է գնալ, ասում է. – Մհեր, իմ գոռ քո վրա չանցնի: Ամա թե երթաս. – ես ուխտ կանեմ իմ հերն ես դու, իմ աղբերն ես, 40 տարի դու իմ գողենք չըգաս²: Մարա թագուհին խիստ հաշվենկատ է իր սիրո մեջ, մեջ, դրա համար էլ հոգում է ոչ միայն իր սերնդի, այլև իշխանության հավերժության մասին: Այս նույն կերպ Մարա Մելիքը տիրում է Մհերի կնոջը՝ Գոհարին³, Դավթի մահից հետո Խանդութին տեգրամուս-նական առաջարկ է անում Վերգոն⁴: Բազմակնության ձևերից մեկն էլ հարձ պահելու սովորությունն էր, որ Հայաստանում հարատևում էր մինչև միջին դարերը⁵: Նկատենք, որ հարձեր պահելը կամ «յար բռնելը» համարվել է հանդուրժելի. Իսա՛ն է՝ կը խաբվի: Հաշվենք՝ գացեր, յար է բռներ, հիմիկ էկեր է՝⁶: Այստեղ խոսքը Մեծ Մհերի Մհերի մասին է, որ եկել է երկիր, և երկրի ազդեցիկ մարդիկ Արմաղանին համոզում են կրկին ընդունելու Մհերին, որից հետո՝ ծնվում է Էպոսի գլխավոր հերոսը՝ Դավիթը: Էպոսում առաջնայնությունը տրվում է տղամարդուն.

Տղամարդ որ կա՝ կլուխ ի,

Կնիկ որ կա՝ ոտ ի⁷:

Բազմայրության տիպիկ օրինակ է Ձենով Հովանի կին Սառայի վարքագիծ է, որը ձգտում է սեռական կապեր ունենալ Դավթի կամ Մհերի հետ⁸: Բազմակնության երևույթը արտացոլված է Էպոսի Դավթի ճյուղում: Դավիթը Խանդութի հղի լինելու պատճառով, նրան «օգնելու» նպատակով մի գեղեցկուհի է բերում, հանուն որի նա Մհերի դեմ այնքան լարված պայքար է մղում⁹: Կամ՝ Պառավը իր յոթ աղջիկներին Մհերին կին դարձնելու առաջարկ է անում¹⁰, ինչպես նաև Չմշկիկ Սուլթանի, ապա Խանդութի հետ Դավթի ամուսնության ակտերը¹¹:

¹ Սասունցի Դավիթ, ՀԺՀ, էջ 114-115:

² Սասնա Ծոեր, հ. Ա, էջ 547-548:

³ Սասնա Ծոեր, հ. Բ, մ. Ա, էջ 162:

⁴ Սասնա Ծոեր, հ. Բ, մ. Ա, էջ 91, հ. Գ, էջ 503:

⁵ Նահապետյան Ռ., Ազգագրական տեղեկությունները Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» երկում, Երևան, Հեղ. հրատ., 2013, էջ 36-39:

⁶ Սասունցի Դավիթ, ՀԺՀ, էջ 122:

⁷ Սասնա Ծոեր, հ. Ա, էջ 253:

⁸ Սասնա Ծոեր, հ. Ա, էջ 13-14 (Դավթի հետ) և Մհերի հետ՝ Սասնա Ծոեր, հ. Ա, էջ 106, 522, 598:

⁹ Սասունցի Դավիթ, ՀԺՀ, էջ 283:

¹⁰ Սասնա Ծոեր, հ. Բ, մ. Ա, էջ 99:

¹¹ Սասնա Ծոեր, հ. Ա, էջ 32-33:

Էպոսում հանդիպում ենք նաև հիշատակություններ, որոնք հայ ժողովրդի հեռավոր անցյալի ամուսնա-ընտանեկան կապերի և բարքերի անդրադարձումներն են: Այսպես, օրինակ, Սանասար ու Բաղդասար դյուցազն եղբայրները միաժամանակ ամուսնանում են երկու քույրերի հետ¹: Մա արդեն ամուսնության ստորադասին (քենամուսնության) ձևի վերհուշն է ժողովրդական ստեղծագործության մեջ: Մոկաց Հովանի պատումում Դավիթն իր 40 մրցակիցներին պսակում է նրանց հանդիպած 40 քույրերի հետ²: Մեկ այլ պատումում վարդապետի խորհրդով Սանասարն ու Բաղդասարը կնության են առնում յոթ ճյուղ ներկայացնող քույրերին³:

Այսպիսով՝ ընտրության և ամուսնության ձևերն և՛ բազմազան են և՛ հին այնքան, որքան հայ հասարակությունը: Նախնական այս ձևերի ու դրանց ժամանակների բացահայտմամբ հնարավոր է դառնում լրացնել ազգագրական այն տվյալները, որոնք գալիս են հազարամյակների խորքերից: Էպոսում ավանդված ամուսնության ձևերը և դրանց հետ կապված սովորությունների նկարագրությունները աղբյուրագիտական կարևոր արժեք են ներկայացնում:

Էպոսում, ներընտանեկան հարաբերությունների տեսակետից շատ արդիական կողմեր ևս աչք են զարնում: Մի դեպքում նկատելի է ընտանիքում տղամարդու բարձր դերն ու հեղինակությունը, իսկ կնոջ ենթարկվածությունն ու հնազանդությունը: Մեկ այլ դեպքում գովաբանվում է կնոջ խելքն ու իմաստությունը:

Էպոսում բավականին ուժեղ է եղել կնոջ՝ որպես անձի արժանապատիվ կեցվածքի գնահատման խնդիրը: Արմատական է ամուսնության հարցում կանանց կամքի կարևորման հարցը. Էպոսում կանայք բացառում են իրենց կամքի վրա որևէ բռնացում, ամուսնության նախապայմանը դառնում են հավասարությունը, փոխա-դարձ սերը⁴: Նույնիսկ կանայք ամուսնության հարցում նախահարձակ են: Նրանք լսելով Դավթի⁵, Միերի⁶ մասին, հրավիրում են նրանց, բայց և ամուսնանում են միայն մենամարտից հետո: Այստեղ նկատելի է երկու կարևոր պահ. առաջինը՝ սեռային հավասարության խնդիրն է, երկրորդը՝ հզոր հենարան ունենալու կանացի ձգտումը, տոհմի, ցեղի պահպանության, ցեղային գեների փոխանցման, այն հզոր սերնդով ապահովելու իդձը:

Ուշագրավ է ևս մի հանգամանք. Դա Էպոսի ստեղծման ժամանակներում կնոջ քաղաքական գործունեության տիրույթների և արտահայտությունների բավականին բազմազան ու բազմատարր իրավունքի կայացումն է: Նա կարող է

¹ Սանա Ծոեր, հ. Ա, էջ 324-325:

² Սանա Ծոեր, 1977, էջ 483:

³ Սանա Ծոեր, հ. Ա, էջ 135:

⁴ Թումանյան Ս., Տղամարդու և կնոջ իրավահավասարության խնդիրները առասպելներում և «Սանա Ծոեր» էպոսում. - Գենդերային հետազոտություններ, Երևան, 2001, թիվ 3, էջ 81:

⁵ Սանա Ծոեր, հ. Բ, մ. Ա, էջ 38:

⁶ Սանա Ծոեր, 1977, էջ 226-230:

հանդես գալ տարբեր քաղաքական իրադրություններում: Սանասարի մահից հետո Դեղձունը կառավարում է երկիրը մինչև Միեթի հասունացումը¹: Վերգոն, Օհանը հրաժարվում են Սասունը ղեկավարելուց՝ ընդգծելով, որ իրենց մեջ չեն տեսնում երկրի ղեկավարներին: Կինը՝ Դեղձունը, իր մեջ տեսնում է երկրի քաղաքական և տնտեսա-կան պատասխանատվություն վերցնելու ուժ և կարողություն²:

Կինը բոլոր իրադրությունների մեջ ազատ է վճիռներ կայացնելու և դրանք իրականացնելու հարցերում: Ավելին, հաճախ երկրի ղեկավար տղամարդկանց կողմից գնահատվում են կանանց խելամիտ առաջարկները, ինչպես օրինակ՝ Ծովինարի առաջարկն թշնամու կինը դառնալու, դրանով իր ազգն ու երկիրը քաղաքական ծանր կացությունից դուրս բերելու հարցում, որն արժանանում է նաև Քեռի Թորոսի, ապա հայոց մյուս մեծամեծների ընդհանուր գնահատականին³:

Մաքառումների մեծ ճանապարհ անցած հայ ժողովրդի համար շատ կարևոր է կնոջ ռազմական դաստիարակության խնդիրը: Էպոսի կանայք հաճախ են անվանվում «փահլևան»: Նրանք լավ են տիրապետում զենքերին, ձիավարժ են և հարկ եղած դեպքում տղամարդու հետ հավասար ելնում են մարտի: Պատումներից մեկում կարդում ենք.

Գոհար խաթուն Միեթին ասաց.

- Ինչուր, էնու խելու հիտ քաղքեն կտրի,

Տու գնա՛, հետևանց զար՛, կտրի՛

Ես լե հառջևանց զարկեմ, կտրեմ:

Միեթ գնաց:

Որ խելին հիտ քաղքեն կտրավ

Մախսուզ մնաց հիտուց, առեց սպանել:

Գոհար խաթուն հեռջելուց սպանեց.

Չուր Գոհար խաթուն՝ Միեթ առան հիրար⁴:

Էպոսի նմանատիպ դրվագներում, մեր օրերի մտածողությամբ պետության մեջ կանայք են, որոնք իրենց քաղաքական ակտիվությունը ցույց են տալիս ոչ այնքան խաղաղ պայմաններում, որքան ռազմական և ռազմավարական վճռորոշ իրադարձությունների ժամանակ գործնականորեն:

Սասնա Ծռերում նկատելի է նաև այն, որ կանայք գործում են իրենց փայլուն խելքով, տղամարդիկ՝ ուժով, ուրեմն, հազարավոր տարիներ պահպանվել է տոհմում կնոջ հանդեպ տածած հարգանքը: Արմաղանն (Միեթի կինը) ավելի ճիշտ է ըմբռնում իր ժողովրդի շահերը, քան Միեթը, որը որոշ

¹ Սասունցի Դավիթ, ՀԺՀ, էջ 102:

² Սասունցի Դավիթ, ՀԺՀ, էջ 95:

³ Սասունցի Դավիթ, ՀԺՀ, էջ 6-7:

⁴ Սասնա Ծռեր, հ. Ա, էջ 48-49:

Ժամանակ անց միայն գլխի է ընկնում, որ ինքը Իսմիլ Խաթունի թակարդն է ընկել: Ծանր վիճակում միշտ պառավ կանայք են բանական ելք մատնանշում: Պառավն է Դավթին համոզում, որ նա մարագում արգելափակված (որպես հարկ) 120 հայ կանանց ազատ արձակի: Երբ Դավիթը պառավի ձեռքից առած անթրոցով է ուզում կռվել հարկահավաքների դեմ, պառավն է նրան սովորեցնում, թե ինչպես և որտեղից վերցնել հոր սպառազենը և Քուռկիկ Ջալալին: Վերգոն ծաղրում է Դավիթ ռազմիկին, իսկ Ձենով Հովանը ափսոսում է, որ նա տիրացավ հայրական ասպազենքին¹: Մինչդեռ պառավ կինը Դավթին սովորեցնում է ժողովրդին փրկելու միակ ճանապարհը՝ ապստամբել կեղեքիչների դեմ և նրանց դուրս քշել երկրից²:

Մարտի գնալիս Դավիթը մնաք բարով է ասում կանանց, որոնք իրեն քույրություն և մայրություն են արել³: Մի պատումում Դավիթը խնդրում է պառավին իրեն մայր լինել, որովհետև ինքը մայր չունի: Բարի պառավը խոստանում է շարունակել իր մայրությունը⁴:

Էպոսում մեծ տեղ է հատկացված կանանց: Անձնվիրությունը, հավատարմությունն ու պատվասիրությունը հայ կամ ամուսնությանը հայացած հերոսուհիներին է բնութագրական: Նրանք ճակատագրի հյու կամակատար չեն, նրանք ստանձնում են այնպիսի պատասխանատվություններ, որոնք սովորաբար տղա-մարդուն են վերապահվում, երկիր են կառավարում իրենց զոհված ամուսինների փոխարեն՝ մինչև օրինական ժառանգների չափահաս դառնալը⁵: Էպոսում աչք է զարնում մի հանգամանք ևս, որ միջնադարյան հայ հասարակությունը իր կանանց օժտել է այնպիսի իշխանությամբ ու ազատությամբ, որ ոչ մի ընդհանուր եզր չունի Միջին Արևելքի կնոջ ստրկական վիճակի հետ:

Էպոսը օգնում է բացահայտել, որ տղամարդու և կնոջ սեռային անհավասարության մտայնությունը ավելի ուշ շրջանի արդյունք է: Էպոսի շատ պատումներում սեռային անհավասարություն չկա, Քեռի Թորոսի ձևակերպմամբ «Այդուծն առյուծ է, թե կին, թե մարդ»⁶, իսկ Խանդութն ընդգծում է. «Դավիթ ջան, ես էլ քեզնից պակաս մարդ չեմ»⁷:

Այսպիսով, Էպոսում նրա առանձին պատումներում, պարզորոշ երևում է ամուսնա-ընտանեկան հարաբերություններից բխող այն բնորոշ հանգամանքը, որը շեշտում է կնոջ թե՛ ուժը, թե՛ խելքը և թե՛ գործելու ճկուն տակտիկան:

¹ Սասնա Շոեր, 1977, էջ 446-455:

² Սասնա Շոեր, հ. Գ, էջ 144:

³ Սասնա Շոեր, հ. Ա, էջ 194:

⁴ Սասնա Շոեր, հ. Ա, էջ 439:

⁵ Սասունցի Դավիթ, ՀԺՀ, էջ 102:

⁶ Սասնա Շոեր, հ. Բ, մ. Ա, էջ 316:

⁷ Սասնա Շոեր, հ. Գ, էջ 399:

Դրանով իսկ էպոսում անթառամ է մնում մոր պաշտամունքի հմայքը, նրա վաղեմի պաշտամունքի սրբազան լինելը:

Բանալի բառեր – էպոս, Սասունցի Դավիթ, Սասնա ծռեր, կին, ընտանիք, ամուսնություն, ամուսնաընտանեկան հարաբերություն, սովորույթներ, հայկական, ավանդական, ազգություն, աղբյուր:

Ռաֆիկ Նահապետյան, Ամուսնաընտանեկան հարաբերությունների արտացոլումը «Սասնա ծռեր» էպոսում - Սասնա Ծռեր էպոսը հայ ազգագրական գիտության ուսումնասիրության բացառիկ սկզբնաղբյուրներից է: Չկա ազգագրական մի երևույթ, որ այս կամ այն չափով արտացոլված չլինի նրանում: Մույն հոդվածում մեկնաբանվում են միջնադարյան, անգամ նաև հեթանոսական ժամանակաշրջանների հայոց ընտանեամուսնական հարաբերությունների վերաբերյալ «Սասնա Ծռերում» տեղ գտած տեղեկությունները: Դրանցում առկա են ամուսնության հինավուրց ձևերի՝ առնանգամբ, պայմանադրությամբ, օրորոցախազով, հոծարական ընտրությամբ՝ հին ժամանակներից եկող սովորույթների՝ խնձոր, նամակ, դիմանկարներ, մատանի ուղարկելու միջոցով սիրո զգացում փոխանցելու, կամ էլ ձեռքը բռնելու, թևով թևին հավելու, թևանցով լինելու, օձիքից բռնելու, ծիսական համբույրով միմյանց մտադրությունը հասկացնելու սովորույթներ: Էպոսում արձանագրվել է նաև տեգրամուսնությամբ, քենամուսնությամբ, բազմայրությամբ, բազմակնությամբ, և վերջապես՝ պատգամախոսությամբ ամուսնության ձևերը, որոնց որոշ մնացուկներ հարատևեցին նաև հետագա դարերում:

Էպոսում ընտանիքի տիրապետող ձևը՝ փոքր ընտանիքն էր, իսկ նրա ներսում նկատելի էր բարքերի առավել ազատությունը. գործնական նշանակություն է ունեցել կողմերի՝ աղջկա և տղայի փոխադարձ համաձայնությամբ, անգամ աղջկա նախաձեռնությամբ ու ցանկությամբ նշանադրությունը, մինչև հարսանիք և պսակ կատարելը՝ փեսայի աղջկա հերանց տանը մնալը, կենակցելը, նշանը դրժելը և այլոց հետ ամուսնանալը, հարճեր պահելը և այլն, որոնք հեթանոսական բարքերին բնորոշ երևույթներ էին:

Էպոսում առանձնանում է տղամարդու և կնոջ իրավահավասարության հարցերը: Տղամարդուց զատ կինը բարձր բանականության կրող է, հասարակական-քաղաքական ակտիվ անհատ, տնտեսավարող, սեռի արժանապատվության և պատվախնդրության կրող, ամուսնության հարցում առավելապես ընտրության իրավունքի տեր: Էպոսում հայ կինը համարձակ է, ընդունակ է ինքնատիպ որոշումներ կայացնելու, ներկայացվում է անձնավիրության, հավատարմության, պատվասիրության վեհ հատկանիշներով:

Рафик Наапетян, Отражение внебрачных отношений в эпосе “Давид Сасунский” - Эпос “Давид Сасунский” (Сасна Цырер) является одним из исключительных источников изучения этнографической науки. Нет ни одного этнографического явления, которое тем или иным образом не отобразилось в

нем. В данной статье интерпретируются данные о брачно-семейных отношениях в средневековый и даже языческий период в Армении, нашедшие место в эпосе "Давид Сасунский". В нем есть описания старейших форм браков по обычаям, идущим из древних времен путем похищения, договоренности, черточек на колыбели, добровольного выбора, а также обычаев предания чувства любви с помощью послания яблоки, письма, портретов, кольца, или же сообщения о намерении держанием за руку, дотрогиванием рукой к руке, бранием под руку, бранием за воротник, ритуальным поцелуем. В эпосе также зарегистрированы формы брака в виде брака с деверем, свояченицей, многоженства, многомужества и наконец в форме посреднических браков, остатки от некоторых продолжали существовать также в следующих веках.

Преобладающей формой семьи в эпосе является маленькая семья, а внутри нее заметна свобода нравов: практическое значение имело помолвка на основе взаимного согласия девушки и мужчины, даже инициативой и желанием девушки, проживание жениха в отцовском доме девушки до свадьбы и бракосочетания, сожительство, возвращение обручального кольца и брак с другими, содержание наложниц и др., которые были свойственными явлениями языческим нравам.

В эпосе выделяются вопросы равноправия мужчины и женщины. Кроме мужчины женщина является носителем разума, активной общественно-политической личностью, хозяйкой, носителем достоинства пола и самолюбия, а в вопросе брака носителем преимущественного права выбора. В эпосе армянская женщина смелая, способная на принятие своеобразных решений, и представляется высокими характеристиками самоотверженности, верности и почтенности.

Rafik Nahapetyan, Reflexion of extramarital relationships in the epic "Daredevils of Sassoun" - The epic "Daredevils of Sassoun" (David of Sassoun) is one of the exceptional sources for studies of ethnographic science. There is not a single ethnographic phenomenon, which did not appear in it in one way or another. This article interprets data on marriage and family relations in the medieval and even pagan period in Armenia, which found their place in the epic "Daredevils of Sassoun". It contains descriptions of the oldest forms of marriages according to the customs coming from ancient times through abduction, agreement, dashes on the cradle, voluntary choice, and the custom of transmitting the feelings of love through sending apples, letters, portraits, rings, or messages of intent by holding hand, touching the arm with an arm, holding hands, holding on someone's collar, and ritual kiss. In the epic forms of marriage in form of marriage with brother-in-law, sister-in-law, polygamy, polyandry and finally in form of mediation marriages

also were found, the remnants of some of which continued to exist in the following centuries.

The predominant form of the family in the epic is the small family, and freedom of morals is noticeable within it: the engagement on the basis of the mutual consent of the girl and the man was of practical importance, even the girl's initiative and desire, the residence of the groom in the girl's father's house before the wedding, cohabitation, return of the wedding ring and marriage with others, having concubines, etc., which were characteristic phenomena for pagan morals.

In the epic, issues of equality between men and women are highlighted. In addition to a man, a woman is the bearer of consciousness, an active social and political individual, a mistress, a bearer of the dignity of sex and self-esteem, and in the matter of marriage the bearer of the preferential right of choice. According to the epic Armenian women are brave, capable of making original decisions, and it is represented with high characteristics of self-sacrifice, loyalty and respectability.

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՏԱՌՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

ԱՇԽԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հնդկաստանի արտաքին քաղաքականության հին շրջանը ավարտվեց, երբ երկրորդ աշխարհամարտի արդյունքում առաջացած համակարգը փլուզվեց: Ավարտվեց ոչ միայն սառը պատերազմը, այլ նաև փլուզվեց ԽՍՀՄ-ը: Վերջինիս փլուզումից և Պարսից ծոցի պատերազմներից հետո աշխարհում հաստատվեցին նոր կարգեր՝ պետությունները, այդ թվում Հնդկաստանը կանգնեցին նոր մարտահրավերների առջև: Հնդկաստանը ստիպված եղավ վերստին փոխել իր քաղաքականությունը: Տնտեսական պայքար դարձավ ավելի վճռական և նախկինի համեմատ ուղիղ ներգործություն ունեցավ արտաքին քաղաքականության վրա: Հնդկաստանին արտաքին քաղաքականությունը կառուցելու համար նոր ուղղություններ են հարկավոր պայքարելու համար աշխարհի մարտահրավերներին և ձևավորելու իր քաղաքականության հիմնական ուղղությունները: Այդ ուղղություններից կարելի է առանձնացնել Հնդկաստանի երկկողմանի հարաբերությունները ԱՄՆ-ի, Ռուսաստանի, ԵՄ-ի, Պակիստանի, Չինաստանի և Աֆրիկյան պետությունների հետ:

Հնդկաստան –ԱՄՆ

Հետսառպատերազմյան տարիներին Հնդկաստանը ստիպված եղավ վերսկսել կր հարաբերությունները ԱՄՆ-ի հետ, քանզի տնտեսական հարաբերությունները գերազնցում են քաղաքականին: Այնուամենայնիվ Հնդկաստան-ԱՄՆ հարաբերություններում հսկայական փոփոխությունները կապված էին որոշ երկրների շահերի հետ: Այն շարունակվեց մնալ հակասական և «զիզգազաձև» ուղղություն ընդունեց:

Բուշի կառավարությունը Հնդկաստանի հետ հարաբերություններում նորորարություն մտցրեց և բեղմնավոր ժամանակաշրջանի սկիզբ դրեց: Ամեն ինչ փոխվեց, երբ կոնգրեսական կառավարությունը պարտվեց և նոր միացյալ կառավարությունը հաղթեց: Դժվար է ասել, թե Հնդկաստանի տնտեսության մեջ էական փոփոխություններ եղան, սակայն նոր կառավարությունը ողջունեց օտարերկրյա ներդրումները և խոստացավ ավելի աղքատիկ մոտեցում քան Նարոշիմա Ռաո-Մանուսան Սինգի բաշխման ծրագիրը: Այնուամենայնիվ ֆինանսների նախարար Ս.Ռ. Չիդամբարն և արտադրության նախարար Մոտասուվի Մարան անշուշտ ներդրումների կողմնակից են և հրահրում էին կառավարությանը որդեգրել տնտեսական քաղաքականություն: ¹ Այսպիսով

¹ India-US Relationship Beyond Mutual Interest, Good For Humanity: PM Modi.

<https://www.ndtv.com/india-news/asean-pm-modi-says-relationship-with-us-beyond-mutual-interest-good-for-humanity-1775047>

տնտեսական հարաբերությունները դրական արդյունք էին գրանցում, մինչդեռ այս փուլում քաղաքական հարաբերություններում որևէ կարևոր դեպք չէր գրանցվել, քանի որ երկու երկրների միջև տարբերությունը չէր կարող քողարկված մնալ: Հնդկաստան-ԱՄՆ հարաբերությունների հիմնական բնույթը հիմնականում տնտեսական փոխազդեցությունն էր և 1990-ականների քաղաքական փխրուն հարաբերությունները:

Օբամայի կառավարման տարիներին Հնդկաստանի և ԱՄՆ-ի միջև հարաբերությունները դարձան որպես գլոբալ ստրատեգիական գործընկեր երկրներ՝ համընդհանուր ժողովրդավարական արժեքների տարածման, երկկողմ շահերի, տարածաշրջանային, գլոբալ խնդիրների լուծման ոլորտներում:

Առևտուրը փոխեց Հնդկաստան-ԱՄՆ հարաբերությունները, որք 2014թ-ին Հնդկաստանի վարչապետ Նարենդրա Մոդիին ԱՄՆ նախագահ Օբամայի հետ քննարկեցին առևտրի ընդլայնման, ներդրումային ծրագիրը, ինչի արդյունքում օտարերկրյա ուղիղ ներդրումները աճեցին 500 տոկոսով, իսկ առևտրաշրջանառությունը նույնպես աճ գրանցեց, եթե դեռևս 2006թ-ին կրկնապատկվեց 45 մլրդ ԱՄՆ դոլլար էր, իսկ արդեն 2016-ին 114 մլրդ ԱՄՆ դոլլար: Հաջորդ կարևոր քայլը Հնդկաստանի համար այն էր, որպեսզի ջանքեր գործադրեր ընդգրկվելու Ասիա-խաղաղօվկիանոսյան Տնտեսական համագործակցության ֆորումին: Հնդկաստանը փորձում էր վերջին 20 տարիներին անդամակցել այս կազմակերպությանը, և 2010 թվականին միայն կազմակերպությունը վերացրեց նոր անդամների մտրատորիումը: Չնայած այս ամենին, պաշտոնական Վաշինգտոնը չի աջակցել Հնդկաստանին անդամակցելու հարցում, և անդամակցությունը կոյտվել որպես Չինաստանի տնտեսության տարածմանը հավասարեցնող, հակազդող ներուժ:

2017թ-ը Հնդկաստան-ԱՄՆ հարաբերությունների համար թերևս ամենաբեղմնավոր ժամանակաշրջանն է, Թրամփի վարչակազմը Հնդկաստանի հետ 100 ամյա ծրագիր է մշակել: Թրամփի վարչակազմը Ասիախաղաղօվկիանոսյան տարածաշրջանը ոչ միայն վերակնքել է որպես Հնդկական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան, այլ նաև պաշտոնական Դելիին տվել այս տարածաշրջանում մեծ դեր, ինչպես նաև պամության մեջ առաջին անգամ Հնդկաստանին դիտարկել է որպես Աֆղանստանի հարցում կարևոր դերակատարում ունեցող երկիր: Թրամփը հրատարակելով իր Ազգային Անվտանգության ստրատեգիան՝ Հնդկաստանին դիտարկել է որպես առաջատար գլոբալ ուժ:

Կարելի է եզրակացնել, որ միայն երկկողմանի առևտուրն է Հնդկաստանին և ԱՄՆ-ին տնտեսապես մոտեմացնում, իսկ Չինաստանի ռազմական գործողություններն նրանց դարձնում են ստրատեգիական դաշնակիցներ: ԱՄՆ-ն Հնդկաստանին է վաճառում տրանսպորտային միջոցներ,

ծովային պարեկային ինքնաթիռներ, ուղղաթիռներ, հականավատորմային հրթիռներ, ինքնաթիռների փոխադրման տեխնիկաներ, դրոններ, ռազմական ինքնաթիռներ:¹²

Հնդկաստան-ՌԴ

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Հնդկաստանի և Ռուսաստանի Դաշնության միջև հաաբերությունները նոր փուլ թևակոխեցին: Երկու երկրների միջև առաջին լուրջ պայմանագիրը կնքվեց 1992 թվականի փետրվարի 22-ին Նյու Դելիում: Պայմանագրի համաձայն Ռուսաստանը ստանձնեց Հնդկաստան ներմուծել կերոսին, նավթ, ծանր մետաղներ, պոլիէթիլեն, սինթետիկ կաուչուկ և Հնդկաստանից ներկրել թեյեր, սուրճ, թեթև արդյունաբերության արտադրանքներ: Երկու երկրների միջև ոչ միայն զարգանում էին տնտեսական կապը, այլ նաև քաղաքական փոխհարաբերությունները: Ե՛վ Հնդկաստանից, և՛ Ռուսաստանից պատվիրակություններ էին փոխանակվում՝ քննարկելու համար հետագա փուլերը կապված տարածաշրջանային անվտանգության խնդիրների հետ: Կարևոր քայլ էր 1992թ.-ի մայիսին Ռուսաստանի Դաշնության գլխավոր քարտուղար Գեննադի Բուրբուդիի այցը Հնդկաստան, որով կնքվեց առևտրային 5 ամյա պայմանագիր: ՌԴ-ն պարտավորվեց վավերացնել դեռևս ԽՍՀՄ-Հնդկաստանի միջև կնքված 67 պայմանագրեր 48 համաձայնագրեր:

Հնդկաստան-ՌԴ հարաբերություններում հատկանշական է 1993 թվականին ՌԴ նախագահ Ելցինի այցը Հնդկաստան, որով նոր շունչ հաղորդվեց երկու երկրների միջև հարաբերություններին: Մասնավորապես այս այցից հետո երկու երկրների Պաշտպանության նախարարների (Պավար-Գրաչև) ստորագրվեց կարևոր համաձայնագիր, որով ՌԴ ստանձնեց պաշտպանական միջոցների մատակարարմանը, Հնդկաստանի զինուժի և նավատորմի սպասարկման համար անհրաժեշտ ծառայությունները, ցամաքային և օդային ուժերի սարքավորումների և արդիականացման ծառայությունները: Այս համաձայնագիրը նաև ներառում էր Հնդկաստանի պաշտպանական պատրաստվածության խթանում և ուղղված էր 3 ծառայությունների իրականացմանը՝ MIG մարտիկների, T-72M մոդելների զրահամեքենաների, հակավաճառիկ համակարգերի, ռազմածովային հրթիռների, MI-17 պահեստամասերի, ուղղաթիռների և հսկա մեքենաների ներկրմանը ՌԴ-ից:³ Համաձայնագիրը կոչված էր նաև պաշտպանական գիտությունների, նորագույն տեխնոլոգիաների, ռազմավարությունների փորձի փոխանակման ծրագրերը զարգացնելուն: . Հնդկաստան-Ռուսաստան համագործակցությունը ավել

¹ India-US relations. https://www.mea.gov.in/Portal/ForeignRelation/USA_15_01_2016.pdf

² Vinay Kaura, US National Defence Strategy 2018 a great opportunity for India to turn bilateral cooperation with Washington into strategic alliance. <http://www.firstpost.com/world/us-national-defence-strategy-2018-a-great-ppportunity-for-india-to-turn-bilateral-cooperation-with-washington-into-strategic-alliance-4315543.html>

³ V.P.Dutt, India's foreign policy in changing world, p 65-92, Delhi, 1999.

խորացման միտում ունի արդի ժամանակաշրջանում: Թե՛ Պուտինը և թե՛ Մոդիին ջանում են երկկողմ առևտուրն զարգացնել: Նախորդ տարիների ընթացքում առևտուրն աճել է 22 տոկոսով, համագործակցության ոլորտներն էլ ընդլայնվել, ընդգրկելով նաև գյուղատնտեսությունը, դեղագործությունը, էներգետիկան: Այդ մասին են վկայում Ռոսնեֆտ կազմակերպության հսկայական ներդրումը հնդկական Հսսար Օիլ կազմակերպությունում՝ գնելով շուրջ 12.9 մլրդ ԱՄՆ դոլլարի նավթամթերք: Երկրներ համագործակցում են ոչ միայն էներգետիկ այլ նաև ռազմական ոլորտում. Հնդկաստանը ներմուծում է Ռուսաստանից S-400 Տրիումֆ հակաօդային պաշտպանական համակարգեր, Կամով-ԿԱ 226T թեթև ուղղաթիռներ, ինչպես նաև համագործակցում է արտադրել գեներալ Գրիգորովիչ առաջնորդած 4 հրթիռային “խելացի” ֆրագատներ: ¹²

Տնտեսական և նոր պաշտպանական պայմանագրերն Պուտինին և Մոդիին առաջնորդում ավելի խորը ստրատեգիական համագործակցության, բայց աշխարհաքաղաքական փոփոխությունները, ՌԴ-ի դեմ սանկցիաները, Չինաստանի օր օրի տնտեսական առաջընթացը առաջիկա տարիներին կհանգեցնեն Ռուսաստանի և Հնդկաստանի միջև հարաբերություններում զգալի փոփոխությունների:

Հնդկաստան-ԵՄ

Հնդկաստանի համագործակցությունը Եվրոպական երկրների հետ սկսվել է դեռևս 1960-ական թթ-ից, երբ Հնդկաստանը դարձավ առաջին պետությունները մեկը, որը դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Եվրոպական Տնտեսական Համայնքի հետ: ԵՄ-ն ստեղծումից ի վեր 1994 թ-ին ստորագրվեց Հնդկաստանի հետ երկկողմ առևտրի և էներգետիկ համագործակցության պայմանագիր: Առաջին անգամ Հնդկաստանը մասնակցեց 2000թ-ին Լիսաբոնում ԵՄ-ի հետ խորհրդաժողովի, ինչն էլ խթան հանդիսացավ սերտ տնտեսական համագործակցությանը: 2004 թվականին Հաագայում կայացած 5-րդ Հնդկաստան-ԵՄ գագաթնաժողովը համարվում է ստրատեգիական գործընկերության ազդարար: Երկու կողմերը որդեգրում են մեկ համընդհանուր միասնական ծրագիր, / 2008-ին վերանայվեց, / ինչը պայմանավորված է քաղաքական և տնտեսական ոլորտներում երկխոսությամբ և խորհրդատվական մեխանիզմների ամրապնդմբ, առևտրի և ներդրումների ընդլայնմբ, ժողովուրդների և մշակույթների սերտացմամբ: ³⁴

¹ Сергей Гунеев, Межгосударственные отношения России и Индии
<https://ria.ru/spravka/20170601/1495513974.html>

² Двусторонние отношения между Индией и Россией

<http://www.indianembassy.ru/index.php/ru/2013-07-06-11-02-37/2013-07-06-10-56-05>

³ Ankit Panda, Where Do European Union-India Relations Stand?

<https://thediplomat.com/2016/03/where-do-european-union-india-relations-stand/>

⁴ The Relationship between the European Union and India

<https://www.grin.com/document/89970>

ԵՄ-ը հանդիսանում է Հնդկաստանի համար ամենամեծ տարածաշրջանային տնտեսական գործնկերը: Երկկողմ առևտուրը 2015 թ-ին 105.2 մլրդ Եվրոի է հասել/ ապրանքային առևտուրը 77.5 մլրդ եվրո, ծառայությունները 27.7 մլրդ եվրո/: Հնդկաստանը արտահանման ծավալը ԵՄ հասնում է 39.47 մլրդ եվրո, մինչդեռ ներմուծում է ԵՄ-ից 38.1 մլրդ եվրո: 2016թ-ին 51.2 մլրդ եվրո՝ Հնդկաստանի արտահանումը 26.6 մլրդ եվրո, իսկ ներմուծում է 24.6 մլրդ եվրո: 2000 թվականի ապրիլից մինչև 2016 թ. ընկած ժամանակահատվածում ԵՄ երկրներից արտարժույթի ներհոսքի արտացոլումը կազմել է 73,97 մլրդ դոլար: Հնդկաստանը ԵՄ (\$ 291.87 միլիարդ դոլար) արտահանման հոսքերի 25.34%-ը կազմում է Հնդկաստանի ամենաբարձր ՀՆԱ-ն: Հնդկաստանը և ԵՄ-ն բանակցություններ են վարում 2007 թվականից սկսած երկկողմ առևտրի և ներդրումների համաձայնագրի երկխոսության շուրջ: Տնտեսական և առևտրային հարցերով զբաղվող Հնդկաստանի և Եվրամիության համատեղ հանձնաժողովները տարեկան հանդիպումներ են ունենում՝ քննարկելու համար առևտրի, տնտեսական համագործակցության և զարգացման համագործակցության հետագա փուլերը:¹

Հնդկաստան-Պակիստան

20-րդ դարի վերջին Հարավային Ասիայի նկատմամբ հետաքրքրությունն ավելի մեծացավ: Հատկապես Հնդկաստանում և Պակիստանում միջուկային սարքավորումների փորձարկումներից հետո գերտերությունների ուշադրությունն ուղղվեց Հարավային Ասիայում սպառազինությունների մրցավազքի հնարավոր սցենարի զարգացմանը: Հատուկ անհանգստություն են առաջացնում Պակիստանում իսլամական ծայրահեղականության օջախներից մեկում, միջուկային զենքի առկայության հետ կապված խնդիրները: Այստեղ ատոմային զենքն առկա է դեռևս 1980 ական թվականներից, իսկ 1998 թվականին տեղի ունեցավ դրա պաշտոնական փորձարկումը: Բանն այն է որ պայքարի ֆորմատը միջուկային հարթություն տեղափոխելու ռիսկերը օրեցօր էլ ավելի է աճում:

Ժամանակակից աշխարհակարգի պայմաններում առավել քան արդիական են կրոնական հենքի վրա առաջացած տարածաշրջանակին կոնֆլիկտները: Ինչ վերաբերում է Հնդկաստանին, այս տարածաշրջանում, թերևս, ամենալարված հարաբերությունները Պակիստանի հետ են՝ կապված Քաշմիրի խնդրի հետ: Եվ այս տարածաշրջանում երկու առաջատար տերությունների միջև առճակատումը խիստ բացասական ներգործություն է ունենում Հարավային Ասիայում խաղաղության կայունության ու տնտեսական ինտեգրման վրա: Գերտերությունները երբեք չեն հանդիսացել այս տարածաշրջանում լարվածության աղբյուր, սակայն միշտ առանցքային դերակատարում են ունեցել

¹ file:///C:/Users/Ashkhen/Desktop/India-EU_Relations_December_2016.pdf

ներտարածաշրջանային փոխհարաբերությունների բնույթի և զարգացման ուղղվածության վրա: ¹Հարկ է նշել, որ Քաշմիրի խնդրի ձևավորման հարցում անմասն չմնացին բրիտանացի գաղութարարները՝ արհեստական սահմաններ գծելով Հնդկաստանի և Պակիստանի միջև: Ակնհայտ է որ կոնֆլիկտի դեստաբիլիզացմամբ առաջին հերթին շահագրգռված էր արևմուտքը ուստի նրան էր պատկանում պատասխանատվության մեծ մասը: Ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ Մեծ Բրիտանիայի համար անկախ և ուժեղ Հնդկաստանը մեծ սպառնալիք էր իրենից ներկայացնում, ուստի ի սկզբանե որոշվել էր մասնատել այն երկու պետությունների/ավելի ուշ ավելացավ երրորդը՝ Բնագլադեշը: Ունենալով սոցիալական, տնտեսական, քաղաքական, ռազմական, մշակութային ընդհանրություններ՝ այս երկրները տարբերվում էին իրենց կրոնական հիմքով, թերևս, Հնդկաստան-Պակիստան հակամարտությունը սկիզբ է առել հենց կրոնական հողի վրա՝ թիրախ հանդիսանալով Քաշմիրը:²

Սկսած 20-րդ դարի 40-ական թթ.-ի վերջից Քաշմիրի հարցը ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի օրակարգային հարցն է: ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի կողմից ընդունված բանաձևերով ամրագրվում էր հանրաքվեի միջոցով քաշմիրյան բնակչության ինքնորոշման իրավունք տալու դրույթը (1948թ.-ի օգոստոսի 13, 1949թ.-ի հունվարի 5):

Հիմնախնդիրը դիտարկելիս հնդկական կողմը կտրականապես դեմ էր հանդես գալիս դրան՝ փաստելով, որ հարցը լուծվել է Ջամմուի և Քաշմիրի նախկին իշխանությունների կողմից՝ հօգուտ Հնդկաստանին միացման: Նման դիրքորոշումն ակնհայտորեն հակասում է ժողովրդավարության հիմնարար արժեքներին և գաղափարախոսությանը, խախտվում են միջազգային իրավունքի մի շարք սկզբունքներ, օրինակ, մեծ և փոքր ժողովուրդների շահերի հավասար ներկայացման սկզբունքը, փոքր ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը և այլն: Հետագայում ՄԱԿ-ի վերահսկողության ներքո հանրաքվեի անցկացումը բազմիցս հաստատվել է ՄԱԿ-ի մի շարք բանաձևերով (1951, 1952, 1957 թվականներին), սակայն ոչ մի քվեարկություն այդպես էլ չանցկացվեց:³ Սկզբում Հնդկաստանի կառավարությունը համաձայն էր հանրաքվե ակացնելու առաջարկին, սակայն տարբեր պատճառներով անընդհատ ձգձգվում էր: Ներու-Աբդուլլա համաձայնության ձեռքբերումից և Ջամմուի-Քաշմիրի սահմանադրությունների ընդունումից հետո Հնդկաստանը սկսեց այս տարածքը դիտել որպես իր անքակտելի մասը: Գաղութատիրական համակարգի

¹ Индо-пакистанский конфликт в контексте проблемы региональной безопасности на Среднем Востоке. <http://csef.ru/ru/oborona-i-bezopasnost/340/indo-pakistanskij-konflikt-v-kontekste-problemy-regionalnoj-bezopasnosti-na-srednem-vostoke-8103>.

² Харина Ольга Александровна, Индо-пакистанский конфликт: истоки и последствия <http://jurnal.org/articles/2011/polit5.html>.

³ Индо-пакистанский конфликт. Досье <http://tass.ru/info/2247208>.

փլուզումից և անկախության ձեռք բերումից ի վեր Հնդկաստանը և Պակիստանը պատերազմել են 3 անգամ, ընդ որում, 1971 թվականի պատերազմի արդյունքում Պակիստանը կորցրեց իր տարածքի գրեթե կեսը: Այսօր ևս երկու երկրների տարածքի երկայնքով բախումներ են տեղի ունենում: Թե 1999 թվականի Կարգիլյան ճգնաժամը, թե պակիստանից զինյալների հաձակումը Հնդկաստանի պառլամենտի անդամների վրա նոր պատերազմի եզրի կանգնեցրին հակամարտող կողմերին, ընդ որում, այս անգամ եկու կողմերն էլ տիրապետում էին միջուկային զենքի: Այս հարցում որոշիչ դեր խաղաց դիվանագիտական միջամտությունը:¹

20-րդ դարի վերջին տասնամակին Հնդկաստանը որդեգրեց Չինաստան հետ փոխհարաբերությունների նորմալացման քաղաքականություն: Իր հերթին Չինաստանը փորձում էր Հնդկաստանի և Պակիստանի միջև հարաբերությունները կարգավորել: Հնդկաստանը շարունակում էր Չինաստանը գնահատել, որպես Պակիստանի դաշնակից, իսկ երկարաժամկետ հեռանկարում՝ որպես Ասիայում հիմնական ռազմավարական հակառակորդ: Ներկայումս խաղաղույթն ավելի բարձր է, իսկ աճող վտանգն էլ ավելի մեծ: Վատագույն սցենարներից մեկը կարող է լինել միջուկային զենքի ծայրահեղական խմբավորումներից մեկի ձեռքում հայտնվելը: Ինչն էլ իսկական աղետի կհանգեցնի: Միջազգային հանրությունից պահանջվում է էլ ավելի մեծ ջանքեր ներդնել խնդրի հանգուցալուծման համար: Առաջնահերթ է վերականգնել վստահությունն երկու երկրների միջև, և հնարավոր տարբերակներ մշակել երկխոսության հաստատման համար: Այսպիսով Հնդկաստան-Պակիստան հակամարտությունը այսօր ևս շարունակում է մնալ թիվ մեկ սպառնալիքն աշխարհում: Ինչպես համաշխարհային խաղաղության և այնպես էլ կարգուկանոնի պահպանման տեսանկյունից:

Հնդկաստան-Չինաստան

Անհերքելի փաստ է, որ Հնդկաստանի և Չինաստանի միջև հարաբերությունները մեկնարկել են դեռևս անհիշելի ժամանակներից: Նորմալ և բարիդրացիական հարաբերությունների վերադարձը, անշուշտ, նպաստեց ներքին և արտաքին կարևոր ոլորտների զարգացումն: Չինաստանը նոր էջ թևակոխեց Մաո Յզեդունի մահից հետո՝ կենտրոնանալով տնտեսության զարգացման վրա: Ռազմական բախումները և հեղափոխությունը այլևս չէին անհանգստցնում պաշտոնական Պեկինին, այժմ մտահոգության առարկան տնտեսության աճն էր: Այս արմատական վերելքը ստրատեգիական նշանակություն ուներ պետության կարիքները իրական դարձնելու նպատակով, և անխուսափելի

¹ Asad Hashim, India-Pakistan relations

<https://www.aljazeera.com/indepth/spotlight/kashmirtheforgottenconflict/2011/06/2011615113058224115.html>

էր հարեան երկրների հետ հարաբերությունների խորացումը: Աշխարհը բացահայտելու քաղաքականության իմաստն էր՝ ստեղծել մի տնտեսություն, որը ունակ կլիներ արտաքին առևտուրը գրավել և օտարերկրյա կապիտալին ներդրման համար նպաստավոր միջավայր հանդիսանալ:

Ե՛վ Հնդկաստանը, և՛ Չինաստանը կարիք ունեն խաղաղ տնտեսական միջավայրի և ստեղծելու պայմանների, որոնք կապահովեին տնտեսության արագ աճին: Երկու երկրներն էլ քաջ գիտակցում էին, որ ժամանակակից աշխարհում ստիպված կլինեն բախվել տնտեսական պայքարին, որը կապված չէր լինի քաղաքական դաշտի հետ և հնարավոր չէր լինի հաղթանակ տոնել ճնշումներ գործադրելով:

Անկասկած մշագգային իրադրության փոփոխությունները ավելի մտերմացրին Հնդակստանին և Չինաստանին: Սառը պատերազմի հետևանքները աստիճանաբար վերանում էին: Մրցակից երկրներից մեկը փլուզվեց: Անվտանգության դեմ ուղղված սպառնալիքները հնագույն մեթոդներով չէին կիրառվում: Չնայած այս ամենին, դեռևս, կան որոշակի խնդիրներ՝ օրինակ Տիբեթյան խնդիրը, որը անընդհանու քննարկումների տեղիք է տալիս: Ամենիկացիները օր օրի ավելի են ինֆորմացվում Պակիստանին Չինաստանի կողմից ռազմական օգնության հարցում, արդեն իսկ կասած չկա Չինաստանի վերաբերմունքին Պակիստանի հանդեպ, ինչն էլ Պակիստանը ամեն կերպ փորձում է Հնդկաստանի անվտանգության դեմ օգտագործել:

Հնդկաստան - Աֆրիկա

Չնայած Աֆրիկյան պետությունների աղքատ և չգարգացած իրադրությանը, այն կարևորություն է ներկայացնում Հնդկաստանի համար: Այս տարածաշրջանում կա 750 մլն. բնակչություն, որը կազմում է աշխարհի բնակչության 13 տոկոսը, որից 500 մլն.-ը տեղակայված են Սահարայի շրջակայքում, ինչն էլ զբաղեցնում է Աֆրիկա մայրցամաքի 18 տոկոսը: Աֆրիկյան պետությունների մի մասը տեղակայված է Հնդկասկան օվկիանոսի ափին, և հենց այդ պատճառով տնտեսական նշանակություն ունեն Հնդկաստանի համար:

Հնդկաստանը մեծ ներգործություն ունի Աֆրիկյան պետություններում: Հնդկաստանի պայքարը ազատության համար սկսվեց Աֆրիկյանում: Հարավային Աֆրիկանում էր Գադիի-ջին սկսել իր պայքարը գաղութատիրության և ռասսայական խտրականության դեմ:

Այսպիսով Հնդկաստանի և Աֆրիկայի միջև բավականին շատ նմանություններ կան: Զվաճարլալ Ներուն մեծ ուշադրություն էր դարձնում Աֆրիկայի զարգացմանը և այնեղ ընթացող պայքարին: Նա խստորեն դատապարտում էր իմպերիալիստական (կայսերապաշտական) պետությունների ձեռնարկած փորձերը, որոնք ուղղված էին Աֆրիկայում ճնշումներ գործադրելուն և սպիտակ ռասսայի մարդկության իշխանության գերակայությանը: Նա իր ելույթներում պարզ նշում էր, որ Հնդկաստանը Աֆրիկայի կողքին է և աղոթում է

Աֆրիկայի անվտանգության համար: Ներուից բացի նաև Ինդիա Գանդին նույալեւ աջակցում էր Աֆրիկային այդ պայքարում և փորձում էր զագացնել մտերմիկ հարաբերություններ: Հնդկաստանը անգամ ռազմական օգնություն ցուցաբերեց Նամիբիայում և Զիմբաբվեյում պայքարի զարգացմանը:

Ռաջիվ Գանդին, ոչ միայն շարունակեց աջակցել Աֆրիկային, այլ նաև այս աջակցությունը Հնդկաստանի արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը դարձրեց: Նա բացարձակ դիվանագիտական ճանաչման արժանացրեց Նամիբիայի ազգային ֆրոնտին: Հնդկաստանը ջերմ հարաբերություններ հաստատեց Մահարայի տարածաշրջանի այլ պետությունների հետ, հակապես նրանց հետ, որոնք պայքար էին մղում ազատության հավասարության համար՝ օրինակ Զիմբաբվե, Նամիբիա, և տնտեսական հարաբերությունները խորացրեց Նիգերիայի, Քենյայի, Գվինեայի, Սենեգալի, Գիանայի հետ:

Ազատության համար և զաղութատիրության դեմ պայքարի ավարտից հետո Հնդկաստանը ստիպված եղավ կենտրոնանալ քաղաքական հարաբերությունների բարելավման խնդրում՝ փորձելով կառուցել տնտեսական ,առևտրային փոխհամաձայնեցված կապ, ինչով Հնդկաստանը կնպաստեր Աֆրիկայի զարգացմանը:¹

Այսպիսով Հնդկաստան-Աֆրիկա տնտեսական հարաբերություններում հատկանշական է առևտրային կապի տարածումը և աջակցությունը: Այս տեսանկյունից կարելի է նշել «Հնդկաստանի տեխնիկական և տնտեսական համագործակցության» ծրագիրը, որը սկիզբ էր դրվել դեռևս 1967 թվականին և դարձել էր կարևոր գործիք տնտեսական հարաբերությունների զարգացման համար: Այն կոչված էր ձևավորելու հարաբերություններ նոր անկախացած պետությունների հետ, ինչպես նաև այն պետությունների, որտեղ հնդկական համայնք կար: Ծրագիրը՝ աֆրիկյան պետություններում, 1996 թվականի տվյալներով ծախսել էր մոտավորապես 2.5 միլիարդ ԱՄՆ դոլլար, ներառյալ Մաուրիցիան, Քենիան, Եթովպիան, Գիանան, Ուգանդան, Տանզանիան, Զամբիան, Սոմալի, Նիգերիան, Մոզամբիկը, Նամիբիան և Զաիրենում: 1994-1995 թվականներին ծրագրում ներառված էին 875 ուսանողներ, որոնցից 270-ը աֆրիկյան երկրներց էին ժամանել: Զարգացման ծրագիրը իր մեջ ներառում էր փոքր և միջին արտադրությունների զարգացում, ջրային ռեսուրսների կառավարում, ժողովրդավարություն և այլն: Աֆրիկյան պետություններ էին ժամանաում հնդիկ մասնագետներ և օգնության ձեռք մեկնում՝ տրանսպորտի, աշխարհագրական չափագրումների, անասնաբուժության, հեռահաղորդակցման ոլորտներում, ինչպես նաև հիմնում լաբորատորիաներ:²

¹ V.P.Dutt, India's foreign policy in changing world, p 297-319, Delhi, 1999.

² ITEC, <https://www.itecgoi.in/index.php>

Այսօր աշխարհը փոփոխության ենթարկող լուրջ գործոն են հանդիսանում ժամանակակից տեխնոլոգիաները և դրանց անագ տարածումը: Եվ անկասկած այս տեխնոլոգիաները յուրաքանչյուր երկրի տնտեսության զարգացման համար խթան կարող են հանդիսանալ: Հնդկաստանը վերանայելով իր տնտեսական քաղաքականությունը կարող է ոչ միայն ասիական տարածաշրջանում, այլ նաև համաշխարհային շուկայում թելադրող երկրներից մեկը դառնալ: Հնդկաստանը պետք է լիզնի զգոն և հստորեն օգտագործի իր ներուժը, իր քաղաքականության բնորոշումը դարձնելով «գալվաճությունը և հավասարակշռությունը»՝ օգնության ձեռք մեկնելով բոլոր պետություններին, հատկապես հարևան երկրներին, իր շահերը համապատասխանեցնելով այլ երկրների շահերի հետ, սերտ հարաբերություններ ձևավորել միջազգային հանրության հետ և իհարկե հոգալ հնդիկ ժողովրդի բարօրության, անվտանգության մասին:

Բանալի բառեր - 100 ամյա ծրագիր, Ներու-Արդուլա համաձայնություն, «Հնդկաստանի տեխնիկական և տնտեսական համագործակցության» ծրագիր:

Աշխեն Հովսեփյան, Հնդկաստանի արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները հետսառապատերազմյան տարիներին - Սառը պատերազմի ավարտից հետո Հնդկաստանը ստիպված եղավ նոր քաղաքական ուղղություն մշակել՝ ԱՄՆ-ի Զինաստանի, Պակիստանի, ՌԴ-ն, Աֆրիկյան պետությունների հետ հարաբերություններում: 2017 թ-ին Թրամփի վարչակազմը Հնդկաստանի հետ 100 ամյա ծրագիր է մշակել՝ Հնդկաստանին տալով տարածաշրջանում մեծ դեր: Պակիստանի հետ հարաբերությունները սրվեցին Ներու-Արդուլա համաձայնության ձեռքբերումից և Զամմուի-Քաշմիրի սահմանադրությունների ընդունումից հետո Հնդկաստանը սկսեց այս տարածքը դիտել որպես իր անքակտելի մասը: Հնդկաստանի արտաքին քաղաքականության առաջխաղացման համար Աֆրիկյան երկրներում կարևոր ներդրում ունի «Հնդկաստանի տեխնիկական և տնտեսական համագործակցության» ծրագիրը, որը կարևոր գործիք է տնտեսական հարաբերությունների զարգացման համար: 1996 թվականի տվյալներով ծրագիրը աֆրիկյան պետություններում ծախսել էր մոտավորապես 2.5 միլիարդ ԱՄՆ դոլար:

Ашкен Овсепян, Основные направления внешней политики Индии после холодной войны - После окончания «холодной войны» Индии пришлось разработать новый политический курс в США, Китае, Пакистане, России и африканских государствах. В 2017 году администрация Трампа разработала 100-летний план с Индией, чтобы дать Индии важную роль в регионе. Отношения с Пакистаном усугубили соглашения Неру-Абдуллы, и после принятия конституции Джамму-Кашмир Индия стала рассматривать эту область как ее неотъемлемую часть. Для содействия Индии в области внешней политики в африканских государствах Индия внесла важный вклад программу технического и

экономического сотрудничества Индии, которая является важным инструментом развития экономических отношений. К 1996 году программа потратила около 2,5 млрд. Долл. США в африканских странах.

Ashkhen Hovsepyan, The main directions of India's foreign policy in Post-Cold war period - After the end of the Cold War, India had to develop a new political course in the US, China, Pakistan, Russia, and the African States. In 2017, the Trump administration has worked out a 100-year plan with India to give India an important role in the region. Relations with Pakistan have aggravated the acquisition of the Neru-Abdulla agreement, and after the adoption of the Jammu-Kashmir constitution, India began to view this area as its integral part. For India's foreign policy promotion in African states, India has made an important contribution to "India's technical and economic cooperation program," an important instrument for the development of economic relations. By 1996, the program had spent about \$ 2.5 billion in African countries.

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ԴԵՐԸ ՀԱՅ-ԹՈՒՐԶԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 1991-1997 ԹԹ.
ՄԵՐԻ ՆԱԶԱՐՑԱՆ**

Կարևորելով Թուրքիայի հետ երկկողմ բնականոն հարաբերությունների հաստատման անհրաժեշտությունը Լ.Տեր-Պետրոսյանը հայտարարում էր, որ «Հայաստանը մտադիր է Թուրքիայի հետ զարգացնել քաղաքակիրթ երկրների վայել հարաբերություններ»¹ : Թուրքիայի նախագահ Թուրգուօ Օզալը արձագանքելով Լ.Տեր-Պետրոսյանի այս հայտարարությանը, 1991 թվականի հունվարի 7-ին հանդես է գալիս Հայաստանի հետտնտեսական հարաբերություններ հաստատելու ծրագրով, քանզի Հայաստան-Թուրքիա ներկայիս հարաբերություններում շատ բան է փոխվել, որի ընթացքում «...հայերն ալ տեսան, որ իրենց շահը կը պահանջէ մեզի հետ կապ հաստատել» և, որ «Հայաստանի համար աւելի շահաւոր է թուրքերու հետ լաւ...յարաբերութիւններ հաստատել»: Իսկ ինչ վերաբերում է Հայաստանի նկատմամբ Թուրքիայի «դրները բանալուն», ապա ըստ Օզալի «մենք (նկատի ունի Թուրքիան-Մ.Ն) ավելի առաջ «Ադրբեջանի հետ մեր միջեւոներ պիտի բանանք: Օրինակի համար Նախիջևանի դուռը: Յետոյ Վրաստանի հետպիտի բանանք մեր դրները» և միայն դրանից հետո «...Հայաստանի հետ ալ կրնանք բանալ մեր դրները»²:

Նկատենք, որ ի պատասխան Լ. Տեր-Պետրոսյանի հայտարարության Թուրքիայի նախագահը Հայաստանի հետ հարաբերություններում շեշտը դնում էր զուտ տնտեսական հարաբերությունների վրա:

Թուրքիայի նախագահի նշված հայտարարությանը հետևում են կոնկրետ գործնական քայլեր: Այսպես, 1991 թվականի ապրիլին ԽՍՀՄ-ում Թուրքիայի դեսպան Վոլքան Վուրալը պաշտոնական այցով ժամանելով Հայաստան, քննարկում է երկու երկրների միջև սեղմ ժամկետում սահմանային անցակետ բացելու խնդիրը³: Թուրք դիվանագետի Հայաստան այցի կապակցությամբ Լ.Տեր-Պետրոսյանը կրկին շեշտում է այն հանգամանքը, որ «Հայաստանը փոխվում է, և այս նոր աշխարհում պետք է նոր մտածողությամբ հարևան երկրներ լինենք: Ուզում ենք բարեկամանալ: Պատրաստ ենք ամեն տեսակի փոխշահավետ համագործակցության: Հայաստանը որևէ տարածքային պահանջներ չունի Թուրքիայից»⁴:

¹ Չաքրյան Հ., Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Երևան, 1998, էջ 10-11:

² Ինչո՞ւ հայերու հետ ալ տնտեսական կապեր չհաստատենք, Ազգ, 27/04/1991:

³ Թուրքիան միջնորդի դերում. Անկարան Մութալիբովի հետ կքննարկի Ղարաբաղի հարցը, <http://ankakhutyun.am/archives/108>

⁴ Թուրքիան Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ կհաստատի... 30/05/2002, http://www.azg.am/wap/?nl=AM&id=2002053010&Base_PUB=0, նույնը նաև Независимая Газета, 14.05.1991:

Թուրքիայի դեսպանն իր հերթին 1991 թվականի ապրիլի 13-ին «Հյուրիեթ» թերթում հրատարակված «Ձերմ հարաբերություն Հայաստանի» հետ խորագիրը կրող հոդվածում անդրադարձել է Հայաստան կատարած իր այցին՝ անվանելով այն երկու երկրների միջև «Բարի կամքի դրսևորման գագաթնակետ»։ Բացի այդ Վուրալը նշում էր, որ «Հանդիպումները Հայաստանի ղեկավարության հետ խիստ կարևոր նշանակություն ունեն» և որ իրենք չէին «...կարող չնկատել այն ձեռքը, որ հակառակ շփումների առնչությամբ մեր գրաված տատանողական դիրքին, հաշտությամբ մեզ էին մեկնել»¹։ Ավելին, մի փոքր ավելի ուշ արդեն 1991 թվականի նոյեմբերի 27-ին ռուսական «Իզվեստիա» թերթին տված հարցազրույցում նույն Վուրալը հայտարարում է, որ «Թուրքիան պատրաստվում է հյուպատոսություն բացել Երևանում»²։

Հետաքրքիր է նկատել, որ այս ժամանակաշրջանում Թուրքիան փորձում էր տնտեսական ինչ-ինչ լծակներով ազդել ՀՀ արտաքին քաղաքականության վրա։ Այսպես, Թուրքիայում հայտնի գործարար «Ալարկո հոլդինգ» բաժնետիրական ընկերության խորհրդի նախագահ Բցհակ Ալաթոնը թուրքական կառավարությանն է ներկայացնում տնտեսական ծրագիր, որով նախատեսվում էր Կենտրոնական Ասիայի գազը և նավթը Հայաստանի տարածքով տեղափոխել դեպի Տրապիզոն։ 1991 թվականի հունիսին հավանություն տալով Ալաթոնի ծրագրին՝ թուրքական կառավարությունը պատրաստակամություն է հայտնում Տրապիզոնի նավահանգիստը որպես ազատ առևտրի գոտի ՀՀ-նտրամադրության տակ դնելու հարցում։ Ծրագրով նախատեսվում էր նաև Էրզրում-Տրապիզոն երկաթգծի շինարարությունը³։

Առաջին հայացքից կարող է թվալ, թե այս ծրագիրը Հայաստանի համար լուրջ ձեռքբերում էր, քանի որ ծրագրի իրագործման դեպքում, Տրապիզոնի նավահանգիստը ՀՀ-ի համար կարող էր դառնալ ազատ առևտրի հատուկ գոտի, որի շնորհիվ էլ Հայաստանը կարող էր ճեղքել շրջափակումը և վերածվել Միջին Ասիան Արևմուտքին կապող միջազգային առևտրատնտեսական տարանցիկ կետի։ Իրականում դա այնքան էլ այդպես չէր, քանզի ծրագրում առկա էր պահանջ, ըստ որի Հայաստան փոխադրվող բեռները պետք է անցնեին Ադրբեջանի տարածքով։ Ի դեպ, հենց այս պահանջն էր ստիպում Ալաթոնին գնալ երկակի խաղերի և հանդես գալ կեղծ հայտարարություններով այն մասին, թե իբրև Հայաստանը պատրաստ է հրաժարվել ցեղասպանության ճանաչման պահանջից նույնիսկ սփյուռքի մակարդակով։ Այս հանգամանքն արդեն վկայում է այն մասին, որ ծրագիրն իրականում զսպաշապիկ պետք է դառնար Հայաստանի համար Ադրբեջանի հետ հարաբերություններում, քանզի

¹ Hurriyet, 02.05.1991, նույնը նաև Ազգ, 24.04.1991:

² Ազգ, 27.11.1991:

³ Ազգ, 23.11.1991, նույնը նաև Չաքրյան Հ., Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Երևան, 1998, էջ 21:

Ադրբեջանի մերժման դեպքում ծրագիրը փաստացի ձախողվելու էր: Այլ կերպ ասած, Ալաթոնի ծրագրի քաղաքական ենթատեքստն ամենևին էլ ձոնատու չէր Հայաստանին և նպատակ էր հետապնդում ստիպել Հայաստանին հրաժարվել արցախյան հարցից:

Ամեն դեպքում ծրագրի կենսագործման նպատակով 1992 թվականի փետրվարի 13-ին Իցհակ Ալաթոնի հրավերով հայկական պատվիրակությունը այցելում է Թուրքիա՝ ծանոթանալու Հայաստանին տրամադրվող ազատ գոտու պայմաններին¹:

Որոշ ժամանակ անց ԼՂՀ-ում տեղի ունեցող իրադարձությունների պատճառաբանությամբ Թուրքիան, փաստորեն, հրաժարվում է Ալաթոնի ծրագրից²:

Հետագայում ամերիկյան «Նյու Յորք Թայմս» պարբերականը անդրադառնալով Ալաթոնի ծրագրի տապալմանը, նշում էր թե նախագիծը տապալվեց, երբ «նախաձեռնության մասին թուրքական մամուլում արտահոսք եղավ, և երբ Ալաթոնը խիստ քննադատության էր ենթարկվում Հայաստանին օգնելու նպատակով Թուրքիայի ավանդական ախոյանների՝ Ամերիկայի հայկական լոբիի հետ համագործակցելու համար»³:

1992 թվականի օգոստոսի 23-25-ը պաշտոնական այցով Երևան է ժամանում Թուրքիայի պատվիրակությունը՝ փոխարտգործնախարարի տեղակալ Բիլգին Ունանի գլխավորությամբ: ⁴ Կայացած հանդիպումների ընթացքում ՀՀ առաջին նախագահի արտաքին հարաբերությունների գծով խորհրդական Ժ. Լիպարիտյանի պնդմամբ «Հայոց ցեղասպանության խնդիրը չի քննարկվել»⁵, քանի որ այդ հարցը բարձրացվել է «տարբեր առիթներով», սակայն ոչ «պաշտոնական ձևով»⁶: Իվերջո կողմերը պայմանավորվում են սահմանների հետ կապված բանկացություններն ավարտել 1993 թվականի ձմռանը⁷:

Ճիշտ է արդեն 1993 թվականի սկզբին Թուրքիայի ղեկավարությունը թույլատրում է իր տարածքով փոխադրել արտասահմանից ՀՀ առաքվող մարդասիրական օգնությունը, սակայն անգամ այս պարագայում Թուրքիայի ղեկավարության նման «մարդասիրական» քայլը չի կարելի բացատրել Հայաստան-Թուրքիա հարաբերությունների ինչ-ինչ դրական տեղաշարժով,

¹ Շիրանի Աֆսանեհ, Հայաստան-Թուրքիա միջպետական հարաբերությունների զարգացումը (1991-2013 թթ.), Լրաբեր Հասարակական Գիտությունների, թիվ 1, Երևան, 2014, էջ 121:

² Ազգ, 23.11.1991,

³ New York Times, March 7, 1992.

⁴ ՀԱՄ, ֆ. 326, ց.9, գործ 70, թերթ 19-21:

⁵ Pope N. & Pope H., Turkey Unveiled, New York, 1997, p 292.

⁶ ՀՅԺԻ ֆոնդ, Բաժին 32, թղթապանակ 26, փաստաթուղթ 5, էջ 3:

⁷ Libaridian G. J., Modern Armenia: People, Nation, State, -Chicago, Transaction Publishers, 2004, pp. 269-270: Նույնը նաև Brief Chronology of the Armenian-Turkish Relations, 1991-2004, in Armenia-Turkey: Open Conversation, published by the Center of Public Dialogue and Development, Yerevan, 2005, p.109.

քանի որ այս պարագայում անգամ Թուրքիան առաջնորդվում էր Եվրոպայի աչքին մարդասեր երևալու բուռն ձգտումով:

Թուրքիայի կողմից ՀՀ-ն արվող առաջին հայացքից շահավետ տնտեսական համագործակցության առաջարկները հարևան Ադրբեջանում ոչ միանշանակ էին ընդունվում: Այսպես, 1995 թվականի փետրվարի 18-ին Թուրքիայի ԱԳ նախարար Մուրադ Քարայալչընը հանդես է գալիս հայտարարությամբ, ըստ որի Թուրքիան դեմ չէր ՀՀ տարածքով կասպիական նավթամուղի անցկացման հնարավորությանը ¹ : Ուստի ամեննին էլ պատահական չէ, որ ինչպես Թուրքիայի այդհայտարարությունն, այնպես էլ 1995 թվականի փետրվարին ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ռիչարդ Հուլբրուքի ՀՀ-ի հետ հարաբերությունների բարելավման Թուրքիային ուղղված կոչը, հարևան Ադրբեջանում դժգոհության ալիք է բարձրացնում: Այսպես, 1995 թվականի փետրվարի 27-ին Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի խորհրդական Վաֆա Գուլուզադեն մեղադրում է Թուրքիային ադրբեջանցիների նկատմամբ դավաճանության մեջ²: Այս հայտարարությանը հետևում է «Ջումհուրիյեթ» թերթի էջերում տեղ գտած Թուրքիայի բավականին կոշտ արձագանքը, որտեղ, մասնավորապես, նշվում էր. «Թուրքիան արտաքին քաղաքականության մեջ այլ պետության քմահաճույքով չի առաջնորդվում»³:

Մեր կարծիքով, այս փաստը վկայում է այն մասին, որ Թուրքիան իրոք իր արտաքին քաղաքականության մեջ չէր առաջնորդվում մեկ այլ պետության, այդ թվում Ադրբեջանի շահերով: Ուստի առնվազն միակողմանի են որոշ ուսումնասիրողների այն պնդումները, թե իբր հայ-թուրքական հարաբերություններում Թուրքիան զգալի տեղ էր հատկացնում Ադրբեջանի շահերին ու եթե ընդունենք անգամ, որ դա իրոք այդպես էր, ուստի միայն այն դեպքերում, երբ Ադրբեջանի շահը տվյալ իրադրության մեջ լիովին համընկնում էր Թուրքիայի շահերին: Ասվածն ավելի համոզիչ դարձնելու համար բերենք մեկ այլ փաստ:

1995 թվականի մարտի 12-ին Կոպենհագենում Լ. Տեր-Պետրոսյանի և Ս. Դեմիրելի միջև հերթական հանդիպման ժամանակ Դեմիրելը դիմելով ՀՀ նախագահին ասում է հետևյալը. «Ի՞նչ վատ կլինի եթե նավթամուղն անցնի ձեր երկրով: Լուծեք ձեր խնդիրներն Ադրբեջանի հետ: Դրանք վնաս են հասցնում մեզ»⁴:

Քննարկվող հարցի տեսանկյունից անկասկած ուշադրության է արժանի թուրք գործարար շրջանների մոտեցումը: Վերջիններս, հասկանալի պատճառներով, խուսափում են Հայոց ցեղասպանության ճանաչման հետ

¹ Независимая Газета, 16.02.1995:

² Չաքրյան Հ., Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Երևան, 1998, էջ 38:

³ Cumhuriyet, 25.02.1995.

⁴ Hurriyet, 01.03.1995.

կապված խոսակցություններից և արտահայտվում առանց նախապայմանների Հայաստանի հետ լայն առևտրատնտեսական համագործակցություն հաստատելու օգտին: Ընդ որում թուրք գործարարներին անհանգստացնում էր նաև դարաբաղյան հակամարտության ձգձգումը, իհարկե, ոչ այնքան մարդասիրական, որքան շահադիտական նկատառումներով: Անկասկած, հայ գործարար շրջանները ևս շահագրգռված էին Թուրքիայի հետ երկկողմ լայն առևտրատնտեսական հարաբերություններ հաստատելու հարցում, ուստի ամեննին էլ պատահական չէր, որ արդյունքն երկար սպասեցնել տվեց:

Արդեն 1997 թվականին Թեմիսիան Տեր-Պետրոսյանի ջանքերով ստեղծվում է «Հայ-թուրքական տնտեսական խորհուրդ», որը բավականին ակտիվ գործունեություն է ծավալել: Դրա մասին են վկայում կողմերի բազմաթիվ փոխադարձ այցելություններ¹:

Քննարկվող ժամանակաշրջանում նկատված հայ-թուրքական տնտեսական հարաբերությունների աշխուժացումը երկար կյանք չի ունենում: Դրա ապացույցը 1997 թվականի հոկտեմբերի 30-ին Թուրքիայի նախագահ Ս. Դեմիրելի ելույթն էր Կարսում, որտեղ վերջինս անդրադառնալով հայ-թուրքական հարաբերություններին նշում էր, որ «երեք դուրուշ առևտրի համար մենք ազերիներին դժվար կացության մեջ չենք դնելու»²: Այլ կերպ ասած Թուրքիայի նախագահը հայտարարում էր հանուն Հայաստանի հետ տնտեսական հարաբերությունների զարգացման, որոնք Թուրքիայի համար «երեք դուրուշ» արժեք ունեին, իրենք չեն դավաճանելու Ադրբեջանի շահերին:

Բացի այդ, մեր խորին համոզմամբ, Թուրքիայի նախագահ Ս. Դեմիրելի վերը նշված արտահայտության մեջ էլ հենց պետք է որոնել Թուրքիայի կողմից ՀՀ նկատմամբ հարաբերությունների կառուցման առանցքը: Դեմիրելն այստեղ փաստորեն հստակ հասկացնել է տալիս, որ իրենք ազերիներին չեն դավաճանի, հանուն Թուրքիայի համար «երեք դուրուշ» արժեք ունեցող Հայաստանի հետ առևտրի: Ուստի, եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ դեռևս 1995 թվականին ինչպես արդեն նշել ենք վերևում Թուրքիան, նկատի ունենալով, Ադրբեջանի հետ իր հարաբերությունները պաշտոնապես հայտարարել է, որ Թուրքիան արտաքին քաղաքականության մեջ այլ պետության քմահաճությամբ չի առաջնորդվում, դժվար չէ գրականացնել, որ անկախ ՀՀ գործադրած ջանքերից Հայաստան-Թուրքիա հարաբերություններում առաջընթաց կգրանցվեր միայն այն դեպքում, երբ Հայաստանը դադարեր Թուրքիայի համար ներկայանալ որպես «երեք դուրուշ անոցառևտրի» երկիր: Այլ կերպ ասած միայն տնտեսապես հզոր ու կայացած հայոց պետականությունն ի գուրու կլիներ ստիպել Թուրքիային վերանայելու իր հարաբերությունները ՀՀ-ի հետ: Մեր խորին համոզմամբ, միայն

¹ Երկիր, 29/04/2005: Նույնը նաև Հայաստան-Թուրքիա բաց խոսակցություն, Երևան, 2005, էջ 110-111:

² Ազգ, 01.11.1997:

այս դեպքում Թուրքիան իր արտաքին քաղաքականության մեջ իրոք չէր առաջնորդվի ուրիշ պետության քառահարկայինքներով:

Ուզում ենք նշել, որ չնայած այն հանգամանքին, որ հայ պատմագիտության մեջ հայ-թուրքական հարաբերությունները կարծես թե լուսաբանված են «բոլոր հնարավոր տեսանկյուններից և կարծես թե ոչ մի տեսակետ քննարկումներից դուրս չի մնացել»,¹ այնուամենայնիվ, մեր կողմից բերված այս տեսակետը, կարծում ենք, պատշաճ ուշադրության չի արժանացել լուսումնասիրողների կողմից և լուրջ ու բազմակողմանի լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունի:

Երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում հայ-թուրքական հարաբերություններում, բնականաբար, առաջին պլան են մղվում հասարակական կառույցների մակարդակով հայ-թուրքական շփումները: Հենց սկզբից ցանկանում ենք նշել, որ հայ-թուրքական առնչությունները հասարակական կառույցների մակարդակով միշտ չէ, որ արդյունավետ են եղել և հաճախ տապալվել են: Սակայն անկախ արդյունքից, կարևորն այն էր, որ այդ մակարդակով հայ-թուրքական շփումների անհրաժեշտությունը գիտակցում էին ոչ միայն Հայաստանում, այլև Թուրքիայում՝ հատկապես գործարար շրջանակների մակարդակով:

Նման կառույցներից ուշադրության է արժանի 1997թվականի մայիսի 3-ին ստեղծված Թուրք-հայկական գործարարության զարգացման կոմիտեն (ԹՀԳԶԿ)²: Փաստերը վկայում են, որ վերջինս որոշակի ջանքեր է գործադրել երկու երկրների գործարար շրջանակների համագործակցության ձևավորման ու զարգացման ուղղությամբ: Նշենք նաև, որ կազմակերպության ծրագրերում առկա էին այնպիսի փոխշահավետ հեռանկարային նախագծեր, ինչպիսիք էին «Մերսին-Երևան-Բաքու երկաթգծի գործարկումը, ազատ առևտրի գոտու ստեղծումը, օդային հաղորդակցության զարգացումն ու տարածաշրջանային արդյունաբերական ճյուղային համագործակցությունը»³:

Կազմակերպության հնգամյա հաշվետու զեկույցի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Թուրք-հայկական շփումների մոտ 70%-ը իրականացվել է այդ կազմակերպության նախաձեռնությունների արդյունքում: Ավելին, կոմիտեի համանախագահ Քասան Սոյակի կարծիքով նման շփումների արդյունքում ի վերջո կարելի էր հասնել հայ և թուրք ժողովուրդների միջև առողջ գործակցային

¹ Տեր-Մաթևոսյան Վ., Հայ-թուրքական հարաբերությունները մեթոդաբանական վերանայման ու աշխարհաքաղաքական անտարբերության խաչմերուկում 29.06.2017, - <http://repairfuture.net/index.php/hy/geopolitics-standpoint-of-armenia-ar/armenian-turkish-relations-at-the-crossroads-of-methodological-revision-and-geopolitical-negligence-armenian>

² Կազմակերպության մասին ավելի հանգամանալից տե՛ս, <http://www.tabdc.org>

³ Անանյան Ա., Հայ-թուրքական երկխոսությաննոր փորձ (Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի գործունեության մասին), Երևան, 2003, էջ 17:

մթնոլորտի ձևավորմանը, որն էլ ավելի իրատեսական կդարձներ նրանց միջև «քաղաքական հաշտեցման հնարավորությունները»¹:

Նշենք նաև, որ կազմակերպությունը գործունեություն էր ծավալում ոչ միայն տնտեսական այլև մշակութային, պատմագիտական և այլ ոլորտներում: Ինքնին հասկանալի է, որ երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում կառույցի ոչ բոլոր ծրագրերն ու նախաձեռնություններն էին իրականացվում:

Բանալի բառեր – Հայաստան, Թուրքիա, տնտեսական գործոն, դիվանագիտական հանդիպումներ, երկխոսություն, հասարակական կազմակերպություններ, Ալարկո Հոլդինգ, ԹՀԳԶԿ, Լ.Տեր-Պետրոսյան, Ս. Դեմիրել

Մերի Նաջարյան, Տնտեսական գործոնի դերը հայ-թուրքական հարաբերություններում 1991-1997թթ. - Սույն հոդվածում բերված փաստական նյութերի հիման վրա փորձել ենք ցույց տալ, որ Հայաստան-Թուրքիա միջպետական հարաբերություններում տնտեսական գործոնը զգալի տեղ էր գրավում: Այսպես, Հայաստանի անկախության հռչակումից հետո թուրք բարձրաստիճան պաշտոնյաները իրենց ելույթներում բազմիցս շեշտում էին այն հանգամանքը, որ հենց այս ոլորտում է, որ հնարավոր է հայ-թուրքական հարաբերությունների որակական աճ գրանցել, սակայն դրա հետ միասին անգամ Հայաստանի հետ տնտեսական հարաբերությունների զարգացման հեռանկարը Թուրքիան առկախում էր որոշակի նախապայմաններից, այլ կերպ ասած Թուրքիան անգամ Հայաստանի հետ տնտեսական հարաբերությունները զարգացնելու հարցում առաջ էր քաշում նախապայմաններ: Ներկայացվող հոդվածում շեշտել ենք նաև այն հանգամանքը, որ Թուրքիան Հայաստանին արված տնտեսական համագործակցության առաջարկներում անգամ հետապնդում էր կոնկրետ քաղաքական նպատակներ, այն է՝ հայկական կողմին տնտեսական զարգացման հեռանկարներով գայթակղելու ճանապարհով հասնել նրան, որ հայկական կողմը հրաժարվի իր համար կենսական նշանակություն ունեցող այս կամ այն հարցից: Չենք կարող չընդգծել նաև այն հանգամանքը, որ ՀՀ ղեկավարությունը պատշաճ ուշադրություն չէր դարձնում այն կարևոր հանգամանքին, որ ի վերջո Թուրքիայի համար Հայաստանը իր սահմանափակ շուկայով և տնտեսական թույլ պոտենցիալով լուրջ հետաքրքրություն չէր ներկայացնում, մի բան, որի ակնարկները կարելի է հանդիպել ժամանակի թուրք պաշտոնյաների ելույթներում:

Мери Наджарян, Экономический фактор в армяно-турецких отношениях в 1991-1997 гг. - В этой статье на основе фактического материала мы пытались показать, что экономический фактор в межгосударственных отношениях Армении и Турции занимал значительное место. После того как Армения была

¹ Noyan Tapan Newsline, 13/02/1998, <http://www.nt.am>

провозглашена независимой республикой, турецкие высокопоставленные должностные лица в своих выступлениях многократно подчеркнули то обстоятельство, что именно в этой сфере возможен зарегистрировать качественный рост в армяно- турецких отношениях. Однако, вместе с этим имея перспективу развивать экономические отношения с Арменией, Турция вновь предъявляла условия, иначе говоря Турция даже в вопросе о развитии экономических отношений с Арменией продвигала предварительные условия. В представленной статье с нашей стороны был подчеркнут тот факт, что Турция в экономическом сотрудничестве с Арменией тоже преследовала конкретную политическую цель, а именно соблазняя Армению перспективой экономических развитий, достичь отказ армянской стороной от тех или иных важных вопросов, жизненно значимых. Важно отметить подчеркнуть и тот факт, что руководство РА не обратило на это нужное внимание, так как для Турции Армения, в конце концов, своим ограниченным рынком и слабым экономическим потенциалом не представляла серьезный интерес. Такие своего рода “намеки” мы можем встретить в выступлениях турецких должностных лиц того времени.

Meri Nadjaryan, The Role of the Economic Factor in Armenian-Turkish Relations from 1991 to 1997 -Based on the facts that we have presented in this article, we have tried to show that the economic factor had a considerable place in Armenia-Turkey inter-state relations. Thus, after the declaration of independence of Armenia, in their speeches Turkish high-ranking officials had repeatedly pointed to the fact that in this field it was possible to register a qualitative increase in Armenian-Turkish relations, but even together with it, Turkey postponed the prospect of the development of economic relations with Armenia by certain preconditions, in other words Turkey put forward preconditions even in the problem of developing economic relations with Armenia. In the presented article, we have also emphasized the fact that Turkey pursued concrete political goals even in the proposals of economic cooperation made to Armenia, i.e., by tempting the Armenian side with the prospects of economic development to get the Armenian side to renounce this or that issues of vital importance for itself. We can not ignore the fact, that the RA leadership did not pay proper attention to the fact that, after all, for Turkey, Armenia with its limited market and economic weak potential did not represent serious interest. Its hints could be found in the speeches of Turkish officials at the time.

ՀԱՅՈՒԹՅԱՆ ԳԱՂԹԵՐԸ 9-10-Դ ԴԱՐԵՐՈՒՄ ԱՐԱՐԱՏ ՍՏԵՓԱՆՅԱՆ

IX դարի երկրորդ կեսին Բյուզանդական կայսրությունը կրկին բռնեց վերելքի ուղին: Դա համընկնում էր մերձավորարևելյան տարածաշրջանում արաբական խալիֆայության դիրքերի թուլացմանը: Կայսրությունը, օգտվելով այս պատեհի առիթից, ձգտում էր Արմինիայում վերականգնել իր նախկին դիրքերը: Կայսրությանը հաջողվեց արաբների դեմ մղված ռազմական գործողություններում զգալի հաջողությունների հասնել և իր վերահսկողությունը սահմանել հայկական մի շարք տարածքների վրա:

Արաբական խալիֆայության թուլացումից օգտվեցին նաև Շիրակի Բագրատունիները՝ հիմնելով Բագրատունյաց թագավորությունը¹: Հայաստանում կորսված թագավորության վերականգնումը կարևոր և առաջնահերթ նշանակություն ունեցավ հայության համար: Այն ոչ միայն հայության համախմբող և պաշտպանող կարևորագույն ազդակ, էր այլև դեռևս VIII դարում գանգվածային չափերի հասած գաղթը զսպող լուրջ գործոն:

Սակայն պետք է փաստել, որ, այնուամենայնիվ, խնդրո առարկա ժամանակահատվածում հայության գաղթեր տեղի ունեցան:

Ըստ Ղ. Ալիշանի՝ IX դարի առաջին տասնամյակում հայերը Խալալ քաղաքից գաղթել էին Սիս. «Ի սկիզբն Թ դարու (809) ըստ աւանդութեան Արաբացոց՝ խոյս ետուն բնակիչք Սսոյ ի լերինս, այլ ի նորոգել զայն Արաբաց՝ Հայք թողեալ զգեղեցկաշէն քաղաք իւրեանց Խալալ, եկին ի Սիս. և բովանդակ արևելակողմն երկրին մինչև ի Հալեպ կոչեցաւ յանուն Սսոյ, յորում էին երեք հարիւր վաթսուն աւանք ամուրք և քսաննվեց բերդ անառիկք»²: Պետք է նշել, որ այս տեղեկության պնդման համար բավարար հիմքեր չկան: Ղ. Ալիշանի համար կռվան է արաբ պատմիչ ալ-Բալազուրի վկայությունը, սակայն վերջինիս երկում բառացի ոչ մի տեղեկություն չկա հայերի՝ 809 թ. Խալալ քաղաքից դեպի Սիս գաղթի վերաբերյալ: Ղ. Ալիշանի աշխատանքում առկա շփոթությունը հավանաբար վերաբերում է ալ-Բալազուրի հետևյալ վկայությանը. «Ասել է Մուհամմադ իբն Սաադը, վերցնելով Վակիդիից, թե Սիսի (Սիսիայ) ժողովուրդը դուրս եկավ իր տներից և Ռումի լեռնային հեռավոր շրջանները հասավ հարյուր իննսունչորս (15 հոկտեմբեր 809- 3 հոկտեմբեր 810) կամ հարյուր իննսուններեք

¹ Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Աշոտ Ա Բագրատունի. Թագավոր Հայոց (թագադրության թվականը և գահակալության տարիները), Երևան, 2014, էջ 66:

² **Ալիշան Ղ.**, Սիսուան. ՀամագրութիւնհայկականԿիլիկիոյէւԼեւոնՄեծագործ, Վենետիկ, 1885, էջ 214: Այս սխալը նկատելի է նաև հետագա ուսումնասիրողների աշխատանքներում: Տե՛ս **Քիւրքճեան Վ.**, Հայկական Կիլիկիա, Նիւ Եորք, 1919, էջ 10, 149: **Աճառյան Հ.**, Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002, էջ 350: «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 2, Երևան, 1988, էջ 621: **Յովհաննեսեան Մ.**, Հայկական Կիլիկիոյ բերդերն ու բերդաքաղաքները, Վենետիկ, 1989, էջ 37:

(25 հոկտեմբեր 808- 14 հոկտեմբեր 809) թվականին: Իսկ Միս քաղաքը (կառուցված) է Անարգաբայի բլրի (Տալ Այն Զարրա) վրա...¹»: Սա պատմիչի՝ Միս քաղաքին վերաբերող միակ հիշատակությունն է, և ինչպես ակներև է մակաբերումից, այստեղ ոչ մի խոսք չկա դեպի Միս հայերի գաղթի մասին: Իսկ պատմիչի երկում Խալալ բնակավայր առհասարակ հիշատակված չէ: Այստեղից հետևում է, որ պետք է բացառել 809 թ. հայերի գաղթի վարկածը:

IX դարի 30-ական թվականներին Բյուզանդական կայսրությունը, օգտվելով Ասորպատականում սկզբնավորված Խուռամյանների ² ապստամբությունից, սկսեց նրանց զինական ուժը օգտագործել խալիֆայության դեմ: Պահը հարմար համարելով՝ Թեոփիլոս կայսրը (829-842) սկսեց նվաճողական արշավանքներ իրականացնել: Հայ պատմագրության մեջ ևս տեղեկություններ են պահպանվել Թեոփիլոս կայսեր՝ դեպի արևելք արշավանքի և հայության տեղահանության մասին: Ըստ Ստեփանոս Տարոնեցու՝ նրա կառավարման ժամանակահատվածում հռոմեացիները ³ գալիս են Բասեն գավառի Գումաձոր ⁴ գյուղաքաղաք և շատերին սրախողխող անում: Իսկ Թեոփիլոսը կայսրը Խաղտիք⁵, անցելով ցամաք-կամուրջը՝ մտավ և գերեվարեց շատ հայերի իրենց ընտանիքներով: «Իսկ ի ՄՀԸ թուականին վախճանեցաւ Միքայել (իմա՝ Միքայել Բ Թվատ, 820-829 թթ.- Ա. Ս.) եւ թագաւորեաց Թեովփիլոս որդի նորա ամս ԺԳ. ի սորա աւուրս եղև գալուստ հռոմեացիերոյն ի գաւառն Բասեան, եւ զբազումս խողխողեցին սրով՝ ի վերայ յարուցեալ

¹ Տե՛ս **Բալագուրի**, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 16, Արաբական աղբյուրներ, հ. 3, Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, (այսուհետև՝ «Արաբ մատենագիրներ», Թ-Ժ դարեր), ներած. և բնագրից թարգմ.՝ Տեր-ՂևոնդյանԱ.: Կազմ., խմբ., ծանոթագր. և ցանկ. հեղ.՝ Վ. Տեր-Ղևոնդյան, Երևան, 2005, էջ 241: Հմմտ. «Kitab Futuh Al-Buldan of **Al-Balhaduri**», trans, by P. Hitti, New York, 1916, p. 262-263:

² Ըստ Իբն ալ-Ասիրի՝ Խուռամ նշանակում է հաճույք, և դա մոգերի ուսմունքն է: Նրանք հավատում են փոխակերպման ուսմունքին՝ այն, որ հոգիները մի կենդանի արարածից անցնում են մյուսին: Խուռամյան շարժումը խալիֆայության դեմ մեծ ընդգրկում ստացավ 817 թվականից, երբ շարժման ղեկը ստանձնեց Բաբելը: Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 11, Արաբական աղբյուրներ, հ. Բ, **Իբն ալ-Ասիր**(այսուհետև՝ Իբն ալ-Ասիր), թարգմ.բնագրից առաջարկան և ծանոթագրություններ՝ Տեր-ՂևոնդյանԱ., Երևան, 1981, էջ 120, 126-136: Հմմտ. **А. Василев**, Византия и Арабы, СПб. 1900, էջ. 78., **Լեո**, Երկերի ժողովածու, հ. 2., Երևան, 1967, էջ 414-419:

³ Ինչպես արդեն ապացուցել է Հ. Բարթիկյանը, Բասեն և Վանանդ ներխուժած և գազանություններ իրականացրած հռոմեացիները կայսրությունում ծառայության մեջ գտնվող Խուռամյաններն էին, որոնց Թեոփիլոս կայսրը բնակեցրել էր Մեծ Հայքի բյուզանդացիների վերահսկողության ներքո գտնվող տարածքներում: Տե՛ս **Բարթիկյան Հ.**, « Բյուզանդական» Խուռամյանները և Հայաստանը, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. Ա. , Երևան, 2002, էջ 605-616:

⁴ Տե՛ս **«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»**, հ. 1, Երևան, 1986, էջ 936-937:

⁵ Հանիքը կամ Խաղտիքը գրավում էր լեռնայինայն շրջանը, որ ընկած էր Հորոխի ու Սնծովի առափնյա շերտի՝ մինչև Տրապիզոն ձգվող Պարխարլեոնների միջև: ՀորոխիհովտումՀանիկեն (Հանիքը) սահմանակից էր պարսից տերություններին և Տայոց գավառին՝ սկսած Փառանգինո՝ Մպերից մինչև Թուխարսերդը, այժմյանԽերեսը, այնուհետև Գուգարք գավառին ու Կղարջետքին՝ Արտանուջ գետի երկարությամբ: Տե՛ս **Ադոնց Ն.**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, թարգմ. Է. ևԱ. Խոնդկարյանների, Երևան, 1987, էջ 36-37: Հմմտ. **«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»**, հ. 2, Երևան, 1988, էջ 633:

գեղաքաղաքին Գոմաձորոյ: **Իսկ Թեովփիլոս գնաց ի Խաղտիս եւ ել ի ցամաք կամուրջ եւ գերեաց զբազումս ի Հայոց հանդերձ ընտանեալք իւրեանց...**»¹: Սամվել Անեցու շարունակողի մակաբերումից եւս երևում է, որ Թեովփիլոս կայսրը գտնվել է Տրապիզոնում. «Թեովփիլոս կայսրն ի Տրապիզոն եմուտ...»²: Իսկ Կոստանդին Ծիրանածինը, իր աշխատության «Բանակաթեմերի մասին» գլխում նկարագրելով Խաղտիքը վերջինիս մայրաքաղաքն է հիշատակում Տրապիզոնը³:

Ն. Ադոնցը, քննելով Ստեփանոս Տարոնեցու տեղեկությունը, եզրակացնում է, որ այստեղ խոսքը երկու արշավանքի մասին է, այսինքն՝ հռոմեացիները եկան Բասեն, իսկ Թեովփիլոսը գնաց Խաղտիք⁴:

Անդրադառնալով այս դեպքերին՝ Ռընե Գրուսեն եւս գրում է, որ բյուզանդական մեկ այլ բանակ, հարկահանելով Թեոդոսուպոլիսը, անցավ Բասենը եւ հասավ մինչև Կարսի մերձակայքը: Իսկ Թիֆլիսի ամիրան՝ Իսահակ իբն Իսմայիլը, 837թ. Կարսի մոտ՝ Կաճկաքարում, տեղի ունեցած ճակատամարտում, բյուզանդացիներին հետ մղեց դեպի արևմուտք⁵: Պատմագրության մեջ պահպանվել են Թեովփիլոս կայսեր նվաճողական արշավանքների մասին տեղեկություններ, որոնցից կարելի է եզրակացնել Խաղտիք արշավանքի եւ հայերի գաղթի թվի մասին:

Միխայել Ասորին գրում է, որ Թեովփիլոսը 837 թ. արշավեց եւ ավերեց Ջապետրան⁶, Հանձիթը⁷, Արշումաշատը⁸ եւ մարդ ուղարկեց Հայաստան՝ հարկ հավաքելու⁹:

Արաբ հեղինակներ Վակիդին, Իբն Կուտայբան, ալ-Բալազուրին, Յակուբին վկայում են, որ Թեովփիլոս կայսրը 837 թ. պաշարում է Ջապետրա քաղաքը եւ բնակչությանը գերեվարում¹:

¹ **Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ**, Պատմություն տիեզերական, (այսուհետև՝ Ստեփանոս Տարոնեցի), ՄՀ, ԺԵ. հատոր, Ժդար, Պատմագրություն, գիրք Բ., Երևան, 2011, էջ 734:

² **Սամվել Անեցի եւ շարունակողներ**, Ժամանակագրություն, աշխատասիրությամբ Մաթևոսյան Կ., Երևան, 2014, էջ 163:

³ Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, 6, Բյուզանդական աղբյուրներ, Բ, **Կոնստանդին Ծիրանածին** (այսուհետև՝ Կոնստանդին Ծիրանածին), թարգմանությունը բնագրից առաջաբան եւ ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 170:

⁴ Տե՛ս **Ադոնց Ն.**, Երկեր, հ. Ա., Երևան, 2006, էջ 337: Հմմտ. **Тер-Гевондзян А.**, Армения и арабский халифат. Ереван, 1977, էջ 138:

⁵ Տե՛ս **R. Crousset**, histoire de L' Armenie des origines à 1071. Paris, 1847, էջ 354: Հմմտ **Laurent J.**, L' Arénie entre Byzance et l' Islam, depuis la conquete arabe jusqu'en 886. Nouvelle edition revue et mise a jour par Ganard M., Lisbonne, 1980, էջ 250:

⁶ **Ջապետրա-Սոգոպետրա**՝ ամրոց Փոքր Հայքում, նրա հարավային կողմում, Սամուսատ-Մելիտինե ճանապարհին: Տե՛ս «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», նշվ. աշխ., էջ 269:

⁷ Գավառ Մեծ Հայքի Չորրորդ Հայք աշխարհում: Տե՛ս նույն տեղում, հ. 3, Երևան, 1991, էջ 350:

⁸ Արշումաշատ քաղաք Մեծ Հայքի Չորրորդ Հայք աշխարհի Հանձիթ կամ Բալահովիտ գավառում: Այժմ Խարաբա-Նաջարան ավերակների գյուղ: Տե՛ս **Երեմյան Ս.Ս.**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց-ի», Երևան, 1963, էջ 40-43: Հմմտ **«Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան»**, հ. 1, Եր., 1986, էջ 477:

⁹ Տե՛ս **Michel le Syrien**, Chronique. Editée pour la première fois et traduite en français par J.-B. Chabot, t. III. Paris 1905, p. 88-89.

Մեզ ևս հավանական է թվում Ն. Ադոնցի այն տեսակետը, որ Ստեփանոս Տարոնեցու տեղեկությունը վերաբերում է տարբեր դեպքերի և իրադարձությունների: Կայսրությունում ծառայող Խուռամյանները հարձակվել էին հայկական բնակավայրերի վրա՝ կոտորած կազմակերպելով Բասենում և Վանանդում: Իսկ Թեոփիլոս կայսեր նվաճողական արշավանքերը, ինչպես ցույց են տալիս արաբա-ասորական աղբյուրները, տեղի են ունեցել 837 թ.: Հավանաբար հենց այս ժամանակահատվածում կայսրը Ջալետրան նվաճելուց և բնակչությանը գերեվարելուց հետո մեկ այլ արշավանք իրականացրել դեպի Խաղտիք և հայությանը գերեվարելով՝ իր հետ տարել արևմուտք:

838թ. Արաբական խալիֆայությունը Ատրպատականում Բաբեկի գլխավորած ապստամբությունը ճնշելուց հետո ձեռնամուխ եղավ իր վերահսկողությունը սահմանել նախկին հպատակ տարածաշրջանների վրա²:

Արաբական խալիֆ Ջաֆար ալ-Մութավաքիիլ ալա Ալլահինը (847-861) կրկին ծանրացրեց հարկերը և նախկինում չհավաքված տուրքերը զանձելու համար 849 թ. Հայաստան ուղարկեց Աբուսեթ ոստիկանին: Հայոց իշխան Բագարատ Բագրատունին³ և Աշոտ Արծրունին արաբ ոստիկանին թույլ չտվեցին մտնել Հայաստանի սահմաններ, այլ, հավաքելով հարկը, ուղարկում են նրան⁴: Աբուսեթը, սակայն, հեռացավ՝ ապստամբություններ հրահրելու համար, իսկ Հայաստանում զորք թողեց Ալա Ծովափի և Մուսա բին-Ջուրարայի գլխավորությամբ: Հայտնի անցքերից հետո⁵ խալիֆը ապստամբությունները ճնշելու համար մեծ բանակ է ուղարկում Հայաստան՝ կրկին Աբուսեթ ոստիկանի գլխավորությամբ: Բայց նա ճանապարհին մահանում է, և նրան փոխարինում է որդին՝ Յուսուֆ իբն Մուհամմադ ալ-Մարուազիին⁶: Նա 851 թ. շարժվում է Հայաստան և բանակում Խլաթ քաղաքում: Յուսուֆը Հայաստանը զինական ուժից և ղեկավարներից զրկելու համար իր մոտ է կանչում հայոց իշխան Բագարատ Բագրատունուն զինակիցներին, նրանց ձերբակալում, և ուղարկում

¹ Տե՛ս «Արաբ մատենագիրներ», Թ-Ժ դարեր, նշվ. աշխ., էջ 129, 203, 263, 388: Հմմտ **Hunger H.**, “Kilikien und Isaurien”, Tabula Imperii Byzantini (այսուհետև՝ TIB), Band. 5, Wien 1990, S. 49., TIB, Band. 2, Wien 1981, S. 78:

² Տե՛ս «Արաբ մատենագիրներ», Թ-Ժ դարեր, էջ 190:

³ Բագրատ Բագրատունին Աշոտ Մսակերի որդին էր, ով իշխում էր Տարոնում, Մասունում, և Խլաթում: Նրա եղբայրը ժամանակի հայոց սպարապետն էր, նրա տիրություններն էին համարվում Արշարունիքը, Շիրակը, Աշոցքը, Տայքի և Սպերի որոշ հատվածներ: Տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, «Հայոց իշխանը» արաբական տիրապետության ժամանակաշրջանում, Հոդվածների ժողովածու, Երևան, էջ 100:

⁴ **Թովմա Արծրունի և Անանուն**, Պատմություն տանն Արծրունեաց, (այսուհետև՝ Թովմա Արծրունի և Անանուն), ՄՀ, ԺԱ. հատոր, Ժ դար, Պատմագրություն, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 141-144:

⁵ Մեր ուսումնասիրության շրջանակներից դուրս է այստեղ մանրամասն անդրադառնալ Վասպուրականում և Տարոնում սկզբնավորված հայ-արաբական ընդհարումների նկարագրմանը:

⁶ Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 148:

խալիֆայության մայրաքաղաք Սամառա ¹ : Յուսուֆի այս արարքները հիշատակում են ինչպես հայ, այնպես էլ արաբ մատենագիրները: Թովմա Արծրունին գրում է. «Իսկ իշխանն Բագարատ, ... եւ առ զարս նորա, ել գնաց անխիղճ համարձակութեամբ... Եւ նորա ըմբռնեալ զնա եւ զամենայն ազգատոհմն նորա ի տանէ Բագրատունեաց եւ կապեալ երկաթեղէն կապանաւք, խաղացոյց ի Սամառայ»²: Իբն ալ-Ասիրի աշխատության մեջ կարդում ենք. «... Յուսուֆը երբ գնաց Հայաստան, նրան դիմավորեց մի պատրիկ, որի անունն էր Բագարատ որդի Աշոտի (Բակրաթ իբն Աշութ) և կոչվում էր պատրիկների պատրիկ: Սա նրանից երաշխավորագիր խնդրեց, Յուսուֆը նրան և որդուն ձեռքակալեց և ուղարկեց Խալիֆայի դուռը» ³ : Պատմական աղբյուրներում պահպանվել են նաև այլ վկայություններ Յուսուֆի և իր հպատակների կողմից հայության բռնի տեղահանության վերաբերյալ: Ըստ Թովմա Արծրունու՝ երբ Յուսուֆը գնաց Մուշ քաղաք ձմեռն այնտեղ անցկացնելու, իր հետ վերցրել էր նաև Վասպուրականում գերած բնակչությանը: Նա Տարոնում ևս սկսեց հայերին գերեվարել: Գերիների մեծ թվաքանակի պատճառով նրանց մի մասին ուղարկեց Ասորիք և խալիֆայության այլ տարածքներ՝ վաճառելու ⁴ : Յուսուֆի նվաճողական արշավանքներից առժամանակ գերծ էր մնացել լեռնային Սասունը, որտեղ և Բագարատ Բագրատունու գերեվարումից հետո նրա որդիները՝ Դավիթն ու Աշոտը, Խույթեցի Հովնանի հետ նախապատրաստական աշխատանքներ էին տանում արաբներին ծնկի բերելու համար: Այդ նպատակով ապստամբ լեռնականները հանկարծակի հարձակվում են Մուշ քաղաքում գտնվող արաբական կայազորի վրա և ազատում վասպուրականցի պատանդներին: Յուսուֆը, այս հարձակումից անակնկալի գալով, թաքնվում է Փրկիչ եկեղեցում և հենց այստեղ էլ սպանվում է հայ զինվորներից մեկի ձեռքով⁵:

Այդ դեպքերից հետո Մութավաքիլ խալիֆան Հայաստանում սկզբանվորված հակաարաբական ասպտամբությունը ճնշելու համար 852 թ. մեծ զորքով Բուղա ալ-Քաբիրին ուղարկեց Հայաստան⁶: Բուղան նախապես իր բանակի հրամանատարներին հրահանգել էր՝ հայոց աշխարհը սրի մատնել և գերել երկրի իշխաններին, կուսակալներին, ազատներին կապանքներով գերել,

¹ **Սամառա**- Քաղաք Տիգրիս գետի միջին հոսանքի արևելյան ափին, Բաղդադից 125 կմ դեպի հյուսիս: Արքայապան խալիֆայության մայրաքաղաքն էր 836-892 թվականներին: Տե՛ս «**Արաբ մատենագիրներ**», Թ-Ժ դարեր, էջ 221, ծնթ. 19:

² **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 150: Հմմտ **Հովհաննես Դրասխանակերտցու** Պատմություն Հայոց, (այսուհետև՝ Հովհաննես Դրասխանակերտցու), ՄՀ, ԺԱ. հատոր, Ժ դար, Պատմագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 430: **Մանանդյան Հ.**, Երկեր, հ. Բ., Երևան, 1978, էջ 565:

³ **Իբն ալ-Ասիր**, էջ 157: Հմմտ «**Արաբ մատենագիրներ**», Թ-Ժ դարեր, նշվ. աշխ., էջ 282, 393:

⁴ Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, նույն տեղում:

⁵ Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 151: Հմմտ **Հովհաննես Դրասխանակերտցու** Պատմություն Հայոց, էջ 430: «**Արաբ մատենագիրներ**», Թ-Ժ դարեր, նշվ. աշխ., էջ 282:

⁶ Տե՛ս **Իբն ալ-Ասիր**, էջ 158: Հմմտ. **Մելիք-Բախշյան Ս. Տ.**, Հայաստանը 7-9 դարերում, Երևան, 1968, էջ 364: **Դիտտոն Հ.**, Հայերի տեղաշարժերը բյուզանդական կայսրության մեջ Հուստինիանոս Ա-ից մինչև Թ դար (թարգմանությունը՝ Ա. Բոգոյանի) ՊԲՀ, 1988, № 1, էջ 30:

իսկ նրանց պատկանող բնակավայրերը դարձնել իրենց ժառանգական սեփականությունը: Բուղայի այս ձեռնարկի մասին Հովհաննես Դրասխանակերտցին գրում է. «...Բուխայ կոչեցելոյ, առաքէ ի Հայս. եւ ապա հրաման անշուշտ ի վերայ եղեալ, զի զիշխանս աշխարհիս եւ գտեարս համագունդ ի կապանս ըմբռնեալ առ ինքն տարցէ, եւ զայլ եւս ռամիկ հեծելագարս, որ սուր յագդեր ունել մարթացեալ եւ կամ զգէն շարժել զամենենսին սատակեցե՞լ»¹: Արաբները կրկին սկսում էին դեռնա 8-րդ դարից որդեգրած հայության տեղահանության և նրանց տարածքներում արաբական ցեղեր բնակեցնելու քաղաքականությունը²:

Բուղան, մտնելով Հայաստան, մեծ կոտորած է կազմակերպում: Աղձնիքում շուրջ 30 հազար մարդ է սպանում, շատերին գերեվարում ու վաճառում: Այնուհետև հաջորդ հարվածը հասցնում է Խուրթին ու Սասունին: Արաբական զորքը լեռնային շրջանի գյուղերի ու գավառների բնակչությանը սրակոտոր արեց, կամ գերեվարեց և ուղարկեց Արաբիա: Յուսուֆի սպանության վրեժը առնելու համար ապստամբության կազմակերպիչներ Դավիթ, ու Աշոտ Բագրատունիներին և Հովնան Խութեցուն ուղարկեցին Սամառա³:

Տարոն-Սասունում ապստամբությունը ճնշելուց հետո Բուղայի զորքը հաջորդ հարվածը հասցրեց Վասպուրականին: Նա, արաբական ցեղերի առաջնորդությամբ հետամուտ լինելով Վասպուրականի իշխան Աշոտ Արծրունու զորաշարժին, եկավ և պաշարեց Թոռնավան գավառի Նկան ամրոցը: Աշոտ Արծրունին իր յուրայիններով գտնվում էր ամրոցում և ձեռնամուխ եղավ դրա պաշտպանությանը: Նրա զինակիցները սկսեցին գաղտնի բանակցել Բուղայի հետ: Աշոտ Արծրունին ստիպված անձատուր եղավ: Թովմա Արծրունու հիշատակմամբ, Աշոտին և իր յուրայիններին գաղթեցնում են Սամառա. «Ընդ աուրսն ընդ այնոսիկ, մինչ կային ի կապանսն իշխանն եւ նախարարքն իւրաքանչիւր ընտանեալք, կազմեալ գունդ զինուորաց եւ ընտիրս այրուձիոց, վառեալ զինու բազում պատրաստութեամբ, եւ զիշխանն Աշոտ եւ զորդի նորա Գրիգոր, եւ զՎահան Արծրունի եւ զորդի նորա Գագիկ, որ եւ Ապումրուան կոչէր, եւ զՄուշեղ եղբայր Վահանայ եւ զտիկնայս նոցա եւ զտիկինն Հրանոշ եւ զայլս յազատատանէ կապեալ եւ բարձեալ ի վերայ ուղտուց՝ վտարեաց ի

¹ Հովհաննես Դրասխանակերտցույ Պատմություն Հայոց, էջ 430-431:

² Տե՛ս Տեր-Ղևոնդյան Ա., Արաբականամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 58-79:

³ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցույ Պատմություն Հայոց, էջ 431: Հմմտ «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ», Վենետիկ, 1862, էջ 80: Իբն ալ-Ասիր, էջ 158: Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, էջ 282:

Սամառայ...»¹ : Պատմիչի արժեքավոր վկայությունից ակներև է դառնում, որ, բացի նախարարներից, բռնի տեղահանվել են նաև նրանց ընտանիքները:

Աշոտ Արծրունուն քաղաքական ասպարեզից հեռացնելով՝ Բուղան 15-հազարանոց զորք ուղարկեց Աշոտի եղբոր՝ Գուրգեն Արծրունու դեմ՝ Վասպուրականը վերջնականապես նվաճելու համար: Նա այդ ժամանակ գտնվում էր Ռրսիրանք գավառի Թով գյուղի² մոտ: Արյան լճի մոտ 852 թ. հայտնի ճակատամարտում հայերը փայլուն հաղթանակ են տանում: Բուղան, ստեղծված իրադրությունում այլ ելք չգտնելով, փոխում է մարտավարությունը և խաբեությամբ իր մոտ է հրավիրում Գուրգեն Արծրունուն ու իշանների մեծ մասին, ապաձերբակալում և աքսորում Սամառա: Նույն բախտին է արժանանում Վասպուրականի եպիսկոպոս Հովհաննեսը: Թովմա Արծրունու հավաստմամբ՝ որդիների գերի տարվելուց հետո նրանց մայրը՝ Հռիփսիմե տիկինը, նույնպես բռնում է գաղթի ուղին³:

Վասպուրականը ավերի և գերության մատնելուց հետո Բուղան 853 թ. կրկին նվաճողական արշավանքեր սկսեց և առաջին հարվածը ուղեց Սյունիքի դեմ: Նրա զիվորներին հաջողվեց հետնել և ձերբակալել Սյունաց մեծ իշխան Վասակ Գաբուռին, եղբորը՝ Աշոտին և նրանց մորը, ու վտարել Սամառա⁴: Այնուհետև Բուղան իր զորքով Վրաստանից վերադարձավ և 854 թ. սկսեց ռազմական գործողություններ ծավալել Ուտիքում և Արցախում: Նրան կարճ ժամանակում հաջողվեց ձերբակալել Խաչենի, Գարդմանի, Ուտիքի, իշխաններին: Արաբներին մեկ տարի շարունակ համառ դիմադրություն ցույց տված հարավային Արցախի Եսայի Աբու Մուսե իշխանն, զենքը վայր դնելուց հետո ստանալով առանձնաշնորհում, գաղթեցվում է առանց կապանքների⁵: Վերոնշյալ իշխաններից գատ՝ Բուղան 855 թ. Սամառա ուղարկեց նաև իր դաշնակցին՝ Սմբատ Բագրատունուն: Այս դեպքերը հիշատակված են Թովմա Արծրունու երկում. «...եւ մտեալ ի ներքս ըստ հրամանի գաւրավարին իւրեանց՝ եղին զոտս նոցա ի կապանս երկաթիս եւ բարձին ուղտուց եւ խաղացուցին ի Սամառայ. որոց անուանք ճանաչի սոցա՝ տէր Սմբատ սպարապետ Հայոց, եւ

¹ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 166: Հմմտ. Հովհաննես Դրասխանակերտցոյ Պատմություն Հայոց, էջ 431: «Հայ ժողովրդի պատմություն», հ. 2, Եր., 1984, էջ 356: Հարությունյան Բ., Արծրունյաց իշխանական ընտանիքը հայոց պատմության մեջ, Եր., 2016, էջ 136-137: Mutafian C., L'armenie du Levant (XI-XIV siècle), tom. I, Paris, 2012, էջ 244.

² Թովգյուղ, Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի Ռրսիրանք գավառում: Սրա մոտ էր գտնվում Արյան լիճ վայրը: Տե՛ս «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 2., նշվ. աշխ., էջ 472:

³ Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 170-176: Հմմտ. Լեո, նշվ. աշխ., էջ 443: Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 139:

⁴ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցոյ Պատմություն Հայոց, էջ 435-437: Հմմտ. «Պատմություն նահանգին Սիսականարարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910: էջ 169-172:

⁵ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցոյ Պատմություն Հայոց, էջ 435-437: Հմմտ. Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, 1975, էջ 62-63:

Գրիգոր Քուրդկայ որդի Մամիկոնեից տէր, եւ Ատրնէրսէն Աղուանից իշխան, եւ Գրիգոր Սինեաց տէր, եւ Սահլ Սմբատայ որդին Շաքէոյ տէր, որ զԲաբանն կալաւ, եւ Իշանիկն Վասակ՝ Վայոց Ձորոյ տէրն, եւ Փիլիպպէ իշխանն Սինեաց, եւ Ներսէն իշխան Գաբիթայանից, եւ ապա Եսայի Ապումուսէ, որ զշատ պատերազմունսն եհար»¹: Պատմիչի վկայումից ակներև է, որ բռնագաղթեցված իշխանները մեծ թիվ էին կազմում:

Բուղայի՝ Արմինիայում իրականացրած ջարդի և մեծ թվով հայերի գաղթեցնելուց հետո՝ 855 թ., Մութավաքիլ խալիֆան նրան ետ է կանչում: Խալիֆայությունը շուտով փոխեց մարտավարությունը և տանելի պայմաններ ստեղծեց Հայաստանում: Գանձվող հարկի չափը թեթեւացվեց², ինչպես նաև 857 թ. ներում շնորհվեց գերի տարված հայ նախարարներին: Սակայն Թովմա Արծրունու հիշատակումից երևում է, որ գերությունից վերադարձան շատ քիչ թվով նախարարներ³:

Արաբական խալիֆայության այս նոր՝ մեղմ քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ պայմանավորված էր Արևելքում Բյուզանդիայի դիրքերի հզորացմամբ: Արաբները այս կերպ ձգտում էին օգտագործել հայ զինական ուժը ընդդեմ հակառակորդի:

Եվ այս համատեքստում պատահական չպետք է համարել կայսրությունում ճնշումների ենթարկված պավլիկյանների՝ դեպի Չորրորդ Հայք (Ծոփք) և Մալաթիաանցնելը: Մալաթիայի ամիրա Օմար իբն Աբդալլահ ալ-Ակթաննույնիսկ առանձնաշնորհումներ տվեց պավլիկյաններին և բնակեցրեց արաբա-բյուզանդական հակամարտ շփման գոտիներում և նրանց զինական ներուժը օգտագործում էր ընդդեմ կայսրության⁴: Շուտով պավլիկյանները այդ վայրերում ստվարացան: Այդ է վկայում վանական Պետրոս Սիկիլիացին. Սերգիոս աղանդապետը իր հետևորդներով հաստատվեց Մալաթիայում⁵: Դեպի այս տարածք պավլիկյանների հաջորդ մեծ բնակեցման մասին է վկայում Թեոփանեսի Շարունակողը: Ըստ պատմիչի՝ Կարբեասը, լսելով, որ հորը ցցահան

¹ **Թովմա Արծրունիի Անանուն**, էջ 207: Այս դեպքերի մանրամասն հիշատակումկա նաև Վարդան վարդապետի աշխատությունում. «Եւ Բուղայի կալեալ զիշխանսն Սիսական զՎասակ և զեղբայր նորա զԱշոտ և զմեծ իշխանն Ատրնէրսէն ի գաւառին Խաչենոյ և զիշխանն Գարդմանայ զԿտրիճն, և երթեալ յՈւտի ըմբռնէ զՍտեփաննոս Կոնն որ ի նախնւոյն իւրմէ Սևկոյ որդիք ազգն անւանին և զիշխանն Աղուանից Եսայի խաղացուցեալ տանի առ ամիրապետն, կոչելով զկնի իւր սպարապետն Սմբատ խաբէութեամբ գոր՝ իբրև չոգաւ, ընդ կապեալսն խառնէին և պահանջէին ուրացութիւն...»: Տե՛ս **Մեծիկն Վարդանայ Բարձրբերդեցոյ** Պատմութիւն Տիեզերական, ի լոյս ընծայեց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 110-111: Հմմտ **Մխիթարայ Այրիվանեցոյ**, Պատմութիւն Հայոց, Մոսկուա, 1860, էջ 54-55: Մանր ժամանակագրություններ XIII-XVIIIդդ., հ. II., կազմեց՝ **Հակոբյան Վ.**, Երևան, 1956, էջ 335: **Լեւո**, նշվ. աշխ., էջ 444- 450:

² Տե՛ս **Նալբանդյան Հ.**, Արաբների հարկային քաղաքականությունը Հայաստանում(640-862), Տեղեկագիր, Երևան, 1954, № 12, , էջ 83-84:

³ Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 215-218:

⁴ Տե՛ս **Իբն ալ-Ասիր**, նշվ. աշխ., էջ 160:

⁵ Տե՛ս **Բարթիկյան Հ.**, Բյուզանդական աղբյուրները պավլիկյան շարժման մասին, «Պետրոս Սիկիլիացի», էջ 448:

են արել, հինգ հազար աղանդավորների հետ փախավ Մալաթիա՝ այն ժամանակվա ամիրա Ամերի (Օմար իբն Աբդալլահ ալ-Ակթա) մոտ¹:

Պավլիկյանների նկատմամբ բռնաճնշումները առավել մեծչափերի հասան Բյուզանդիայում, մակեդոնական դինաստիայի հիմնադիր Վասիլ (Բարսեղ) Ա Մակեդոնացու (867-886) կառավարման տարիներին²: Վասիլ Ա-ն IX դարի 70-ական թվականներին մի քանի պատժիչ արշավանք իրականացրեց պավլիկյանների դեմ³: Վերջիներս, ենթարկվելով ավերի և բռնաճնշումների, ստիպված թողնում էին իրենց բնակության վայրերը ու գաղթում: Այս դեպքերին անդրադառնել է նաև բյուզանդացի հեղինակ Հովսեփ Գենեսիոսը, որից քաղել ենք ուշագրավ տեղեկություններ պավլիկյանների գաղթի և նոր բնակավայրում հաստատվելու մասին. «... Կայսրը նրանց վրա արշավեց երկու անգամ: ... որոշ ժամանակ պատերազմ մղելով Տեֆրիկիեի⁴ դեմ: Անհաջողության մատնվելով, նա վերադարձավ մայրաքաղաք: ... Դրանից հետո նա բազում զորքերով դարձյալ արշավեց նրանց դեմ՝ մեծ կորուստներ պատճառելով: Այդ ընթացքում (աղանդավորների) գլխին երկնքից թափվեց ամենասարսափելի որոտ, այդ որոտից Տեֆրիկիեի տները երերացին, բնակիչները զարհուրած, ենթադրելով, որ դա աստվածուհի է իրենց դեմ ուղղված, մի մասը կայսեր կողմն անցավ՝ ողորմածություն աղերսելով, մյուսն էլ՝ փախուստի դիմեց **Աստրիքի** խորքերը: Փախուստն այնպիսի ծավալ ստացավ, որ քիչ էր մնացել, նրանց քաղաքը մարդաթափ լինի»⁵:

Գենեսիոսի մակաբերումից ակներև է, որ Վասիլ Ա-ն պավլիկյանների դեմ արշավել է երկու անգամ, ընդ որում առաջին արշավանքի ժամանակ պարտություն է կրել: Այստեղից կարելի է ենթադրել, որ պավլիկյանների կենտրոն Տերիկի դեմ կործանարար արշավանքը, այն ավերի մատնելը և բնակչության գաղթը տեղի են ունեցել Վասիլ Ա-ի վերջին արշավանքի ժամանակ՝ 879 թվականին⁶:

Բյուզանդական կայսրությունը Վասիլ Ա-ի որդի Լևոն Զ կայսեր (886-912) կառավարման տարիներին փոխեց վերաբերմունքը պավլիկյանների նկատմամբ և կրկին սկսեց նրանց զինական ներուժը օգտագործել ընդդեմ հակառակորդների:

¹ Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 15, Բյուզանդական աղբյուրներ, Ե, **Թեոփանեսի Շարոնակոդ**(այսուհետև՝ Թեոփանեսի Շարոնակոդ), թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1990, էջ 98-99:

² Տե՛ս **Թեոփանեսի Շարոնակոդ**, էջ 159-163:

³ Տե՛ս **Կոնստանդին Միքանաձին**, էջ 67, 72-73, 78:

⁴ Գավառ պատմական Փոքր Հայքում, Մեքաստիայի նահանգի Մեքաստիայի գավառում: Տարածվում էր Մեքաստիայի գավառի արևելյան մասում, Երզնկայի գավառի սահմանակցությամբ, Եփրատի աջակողմյան Տերիկի գետ վտակի և նրա օժանդակների հովիտներում: Տե՛ս Տե՛ս **«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»**, հ. 5, Երևան, 2001, էջ 80:

⁵ **Բարթիկյան Հ.**, Բյուզանդական աղբյուրները պավլիկյան շարժման մասին, «Հովսեփ Գենեսիոս», էջ 462:

⁶ Տե՛ս **Canard M.**, Note sur L'Article de M. Bartikian, Revue des Etudes Arméniennes, t. IV, Paris, 1967, էջ 405:

Այն, որ Լևոն Զ-ի մղած ռազմական գործողություններին հայերը իրենց մասնակցությունն են բերել, փաստվում է նաև Կոստանդին Ծիրանածինը: Նա նկարագրում է ինչպես բուլղարների Սիմեոն թագավորի (893-927) դեմ մղած ճակատամարտը (896թ. Բուլգարոփիզոնի ճակատամարտ), այնպես էլ տեղեկություններ հաղորդվում հայերի մասնակցության, Լիկանդոսի բանակաթեմի հիմնադրի վերաբերյալ. «Երբ այն մեծ և հսկա հայր, Լեկաստրիա Անգուրիների փեսան, այն երկայնաբազուկն ու կոփվածը, որին հայերն Ազոտ (իմա՝ Աշոտ- Ա. Ս.) էին անվանում, չգիտեմ որպես փախստական, թե բարեկամ եկավ իմ երանելի և սուրբ հոր մոտ, որպես սպասավոր ուներ... Մելիասին (Մլեհ):... Ահա վերոհիշյալ Մելիասը պատերազմում մի կերպ կենդանի մնալով գնաց հայոց երկիրը. լինելով տաղանդավոր մարդ և ավագակային գործերին հմուտ, հայերից բաղկացած ինչ-որ խումբ կազմեց և ինչպես որ կարողացավ, ամրացրեց այդ [Լիկանդոս¹] քաղաքի միջնաբերդը: Կամաց-կամաց նա ամբողջ քաղաքին հարություն տվեց: Ժամանակի ընթացքում անչափ բարեբեր ձիեր և ամեն տեսակի անասուններ բուծելու շատ հարմար այս ողջ շրջանը լցվեց հայերով և այդ նույն խոհեմ Մելիասի ջանքերով բանակաթեմի վերածվեց և բարձրացավ նշանավոր գորավարության աստիճանին: **[Լիկանդոս] քաղաքի անունը հին է և վերաբերում է հայկական ցեղին ու լեզվին**»²:

Կոստանդին Ծիրանածինի ուշագրավ հիշատակումից այստեղ կարևորվում են Մլեհի հաստավելը կայսրությունում և Լիկանդոսի բանակաթեմի կազմակերպումը, տեղում հաստատված հայության հովանավորումը և մարտունակ զորքի ստեղծումը:

Այս ամենին անդրադարձել են մի շարք ուսումնասիրողներ, սակայն առավել արժեքավոր են Ն. Ադոնցի և Հ. Բարթիկյանի դիտարկումները:

Ն. Ադոնցը, անդրադառնալով Աշոտ Երկայնաբազուկի և Մլեհի՝ կայսրությունում հաստատվելու խնդրին, հավանական է համարում, որ դա տեղի է ունեցել Լևոն Զ կայսեր օրոք, և դրված է եղել հողերի փոխանակման խնդիր: Նա նաև գտնում է, որ Աշոտ երկայնաբազուկը և Մելիասը սերում էին Եփրատիայի տարածաշրջանից:³

¹ Բանակաթեմ. պրովինցիա, գավառ բյուզանդական կայսրությունում, նրա արևելյան կողմում: Տարածվում էր Փոքր Հայքից մինչև Կիլիկիայի հյուսիս և հյուսիս-արևելյան շրջանները: Գլխավոր քաղաքը՝ Պլաստա (Ալբիստան): Բերդերից նշանավոր էին Լիկանտոս և Ծամոնավը: Տե՛ս «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 2, Երևան, 1988, էջ 585:

² Կոստանդին Ծիրանածին, էջ 171-172: Հմմտ **Տաշեան Հ.**, Հին Հայաստանի արևմտեան սահմանը: ՓոքրՀայք եւ Կողովքներ (Մեքաստիա), Վիեննա, 1948, էջ 420: **Dédéyan G.**, "L'immigration arménienne en Cappadoce au XI^e siècle", Byzantion, t. XLV, Bruxelles, 1975, p. 96: **Grégoire H.**, Notes épigraphiques (VII, Melias le Magistre), dans Byzantion, 8, Bruxelles, 1933, pp. 79-88: **E. Honigmann**, Die Ostgrenze des byzantinischen Reiches von 363 bis 1071, Bruxelles, 1935, S. 55-56:

³ Տե՛ս **Ադոնց Ն.**, Լիկանդոսի բանակաթեմը հայ-բյուզանդական հարաբերություններում, ֆրանսերենից թարգմանեց Պողոսյան Վ., «Էջմիածին», ԿԱ տարի, հոկտեմբեր-նոյեմբեր, Էջմիածին, 2006, էջ 51-53:

Ըստ Հ. Բարթիկյանի՝ Մլեհը Զորորդո Հայքի և Մալաթիայի բնիկ չէր, այլ պավլիկյան աղանդի հետևորդ էր, և Մալաթիայում նրա հաստատվելը կապված էր Վասիլ Ա-ի՝ պավլիկյանների դեմ բռնաճնշումներով: Իսկ Լևոն Զ-ի ժամանակ փոխվել էր վերաբերմունքը պավլիկյանների նկատմամբ և նա դեմ չէր ռազմունակ աղանդավորներին օգտագործել ի շահ իր նպատակների իրագործման¹:

Մեզ առավել հավանական է թվում Հ. Բարթիկյանի տեսակետը, քանի որ Կոնստանդին Ծիրանածինը Մլեհի մասին, առում է. «Իսկ Մելիասը դեռևս փախստական էր Մելիտենում»²: Այստեղից պարզ է դառնում նաև Մլեհի կայսրությունում նորից ծառայության անցնելու պայմանը՝ Խարսիանոնի զորավար Եվստաթիս Արգիրոսից խրիստովուով³ հաստատված երաշխավորագրի պահանջելը, որով ինքը կդառնար Եփրատիայի շրջանի կլեյսուրախ⁴: Այստեղից պարզ է, որ Եփրատիան պավլիկյաններով բնակեցված տարածքներն է, որի կառավարիչ էր ձգտում դառնալ Մլեհը:

Կոնստանդին Ծիրանածինը տեղեկություններ է հաղորդում նաև Լիկանդոսի բանակաթեմի հիմնման և Մլեհին տրված կոչումի վերաբերյալ. «...Մելիասը իջավ և գրավեց Լիկանդոս հին ամրոցը: Նա վերակառուցեց այն, ամրացրեց և այնտեղ հաստատվեց, իսկ քրիստոսասեր Լևոն կայսեր կողմից [Լիկանդոսը] դարձավ կլեյսուր⁵: [Մելիասը] այնուհետև Լիկանդոսից անցավ Ցամանդոսի⁶ լեռը և այնտեղ կառուցեց մինչ օրս գոյություն ունեցող ամրոցը: Այն ևս կլեյսուրի հորջորջում ստացավ:... Քրիստոսասեր տեր Կոստանդինի և նրա մայր Զոեյի ժամանակ Լիկանդոսն առաջին անգամ դարձավ զորավարություն. Լիկանդոսի առաջին զորավար նշանակվեց պատրիկ Մելիասը: ...Մելիասը հռոմեացիների կայսեր հանդեպ տածած

¹ Բարթիկյան Հ., Հայաստանի նվաճումը Բյուզանդական կայսրության կողմից, էջ 234-235:

² Այստեղ Ծիրանածինը Մլեհի հետ միասին թվարկում է հայ այլ փախստականների անուններ՝ Վասակիոսը իր երկու եղբայրների՝ Կրիկորիկի (Գրիգոր) և Պագունի հետ, նաև Իսմայիլ հայրը: Տե՛ս Կոնստանդին Ծիրանածին, էջ 26:

³ Խրիստովու - կայսեր ոսկե կնիքը կրող և նրա կողմից կարմիր թանաքով ստորագրված փաստաթուղթ: Տե՛ս Բարթիկյան Հ., «Բյուզանդական տերմիններ», Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. 2., Երևան, 2006, էջ 126:

⁴ Տե՛ս Կոնստանդին Ծիրանածին, նշվ. աշխ., էջ 26:

⁵ Կլեյսուր - նշանակում է պաշտպանության համար նեղանցք, ամրացված վայր: Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 17, Բյուզանդական աղբյուրներ, Զ, Միքայել Աստաշիանտես Պատմություն, թարգմանությունը բնագրից առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 2015, էջ 196, ծնթ., 64: Հ. Աճառյանը բառը բացատրում է հետևյալ կերպ. «Լեռան կապան, կիրճ և այնտեղ շինուած բերդ»: Տե՛ս Աճառեան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 2., Երևան, 1926, էջ 602:

⁶ Բերդաբաղաբ Փոքր Հայքում, այսօրվա Կունկալեսի (Ջամանթիկալեսի), Կեսարիաքաղաքից 30-35 կմարևելք՝ Սարոսգետի Օամֆոկլոտակի ապառոժոտ լեռան վրա, տե՛ս «Հայաստանին հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 2, Դ-Կ, Երևան, 1988, էջ 841: Հմմտ. Hild Friedrich und Marcell Restle, "Kappadokien (Kappadokia, Charsianon, Sebasteia und Lykandos)", Tabula Imperii Byzantini, Band. 2, Wien 1981, S. 300-301:

հավատարմության, ապա նաև սարակինոսների դեմ կատարած բազմաթիվ քաջագործությունների համար հետագայում արժանացավ մագիստրոսի պատվին¹: Պատմիչի հիշատակումից պարզվում է, որ Լիկանդոսը Լևոն Ջ կայսեր ժամանակ դեռևս կլեյսուր էր, իսկ բանակաթեմի ատիճանի բարձրացավ Կոստանդին Ծիրանածին կայսեր և Զոեի կառավարման տարիներին: Լիկանդոսի բանակաթեմի հիմադիրը, ինչպես երևում է, Մլեհն է դառնում, որը կայսրությանը հավատարիմ ծառայելու համար հետագայում ստանում է նաև մագիստրոսի աստիճան: Ուշագրավ է այն տեղեկությունը, որ Մլեհը Լիկանդոսից անցնում է Ծամնդավի լեռը և այնտեղ կառուցում ամրոց, որը նույնպես դառնալու էր կլեյսուր: Այս ամրոցի մասին տեղեկություններ հաղորդում է Մ. Չամչյանը՝ «...և ապա գնացեալ (Մլեհ) ի փոքր Հայս՝ ժողովեցավ քանի մի արս. և եկեալ ի Լիկանդիա գաւառ... ի սահմանս ջահանայ՝ յերկիր բերրի և արգաւանդահող, շինեաց անդ դդեակ յանուն **Աշոտայ**². ուր եկեալ բազումք ի Հայոց՝ բնակեցան անդ»³: Մ. Չամչյանը ամրոցի հիմնման տարի նշում է 888թ.: Իսկ այն վկայությունը, որ ամրոցը ստացել է Աշոտ անվանումը, թույլ է տալիս ենթադրելու, որ Մլեհը այդպես է անավանակոչել ի պատիվ իր գերակայի՝ Աշոտ Երկայնաբազուկի:

Պետք է փաստել, որ շրջահայաց քաղաքականության շնորհիվ Մլեհին հաջողվեց Լիկանդոսում ստեղծել կենտրոնաձիգ իշխանություն և այն վերածել բանակաթեմի, ինչը նաև տեղում հաստատված գաղթահայությանը հովանավորող և պաշտպանող կարևոր գործոն էր: Մլեհի այս ձեռնարկումը անհետևանք չանցավ: Նրա մահից (934) հետո բանակաթեմի գորավարությունը շարունակեց թողնել Մլեհը⁴ (շփոթությունից խուսափելու համար վերջինիս կանվանենք Մլեհ Բ):

Մլեհ Բ-ն հայտնի էր որպես սխոլների դոմեստիկոս, Հովհաննես Չմշկիկ կայսեր (969-976) կառավարման տարիներին բյուզանդական զորքով արշավանքներ է իրականացրել արաբների դեմ: Այս դեպքերի մասին տեղեկություններ է հաղորդում Մատթեոս Ուռհայեցին. «...ի Հայոց թուականութեանն՝ յամին ՆԻԱ, վասն զի զօրապետն Հոռոմոց Դեմեալիկոսն, որում անուն Մլեհ ասէին, ելեալ բազում զօրօք գայր ի վերայ Տաճկաց»⁵: Ինչպես երևում է, Մլեհ Բ-ն արտաքին քաղաքականության մեջ շարունակում էր իր

¹ Կոստանդին Ծիրանածին, էջ 27:

² Աշոտի – ավան Կիլիկիայում, Ալբիստանի մոտակայքում, Ջահան գետի հովտում: Տե՛ս «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 1, էջ 295:

³ Չամչեանց Մ., Պատմություն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչևցամ 1784 (այսուհետև՝ Չամչեանց Մ), հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 706:

⁴ Մեզ ևս հավանական է թվում Ժ. Դեդեյանի այս տեսակետը, որ Մլեհ Բ-ն Մլեհ Ա-ի թողնել կարող է լինել, քանի որ հայ իրականության մեջ ընդունելի է թողնանք անվանակոչել պապի անունով: **Dédéyan G.**, Mleh le Grand; stratège de Lykandos; REArm, NS, t. XV, 1981, p. 98-102: Հմմտ **Ադոնց Ն.**, Լիկանդոսի բանակաթեմը, էջ 65:

⁵ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 14:

նախորդի գործելաոճը՝ համերաշխելով և իր մասնակցությունը ունենալով կայսրության մղած ռազմական գործողություններին: Մլեհ Բ-ն մահացել է Ամիդի մոտ՝ 973 թ.՝ արաբների կողմից գերեվարվելուց հետո¹: Պատմագիտության մեջ հայտնի է ևս մեկ Մլեհ, որը կնիքում հիշատակվում է Անարգաբայի ² Մամեստիայի ³ և Ծամնդավի ստրատեգ-գորահրամանատար Գեորգիոս Մելիաս ⁴: Ժ. Դեդեյանը առանձնացնում է Գեորգիոս Մելիասին Մլեհ Բ-ից և նրանց ծավալած գործունեությունը դիտարկում է առանձին⁵: Մենք ևս հակված ենք այդ տեսակետին:

Այստեղ պետք է փաստել, որ մինչ XI դարում Կիլիկիայում բուն հայկական իշխանությունների ձևավորումը, Քդարի 2-րդ կեսին Գեորգիոս Մելիասը իշխում էր Կիլիկիայի վերոնշյալ շրջաններում:

X դարի 2-րդ կեսին Մլեհ Բ-ին Լիկանդոսի բանակաթեմի կառավարչի պաշտոնում փոխարինել էր Մխիթարի որդի Վասիլը. այս հանգամանքը ևս փաստվում է կնիքով⁶:

XI դարում ևս Լիկանդոսը գտնվել է հայերի վերահսկողության ներքո: Վասպուրականի վերջին թագավոր Սենեքերիմ Արծրունին իր տարածքները տվեց կայսրությանը և փոխարենը ստացավ նաև Լիկանդոսի բանակաթեմի մի մասը ⁷ : Այսպիսով, մինչ վասպուրականցիների մեծաքանակ գաղթը, Լիկանդոսում արդեն հաստատվել էր ստվար թվով հայություն, և դա փաստում է

¹ Տե՛ս **Ադոնց Ն.**, Լիկանդոսի բանակաթեմը, էջ 65:

² «Յընդարձակ դաշտավայրի երկուստեք ափանց Ջահանայ ծավալի ամայացեալ գաւառն Անագարբայ, ի հարաւոյ և յեկից վիճակին Սոյո, ի հիւսիսոյ Մսիսայ, անտ և ջըրպետ ընդ սա ունելով զԱրա գետ, և յարևմտից Թիլ Համտընոյ. Ընդ սա իջեալ գետն մեծ՝ երկու փարսախաւ ի ստորև աւերակաց Անագարբայ, ընդունի զխառնուրդս երկուց գետոցն՝ Սաուրանի և Սոյն, յորոց անկեան կցուածոյն կանգնեալ է քաղաքն»: Տե՛ս **Ալիշան Ղ.**, Սիսուան, էջ 236: Հմմտ. Անարգաբա՝ քաղաք Կիլիկիայում, նրա դաշտային մասում: Գտնվում է Սսից մոտ 25 կմ հարավ-արևելք, Սաուրան և Միս գետերի միջև ընկած հարթավայրում: Տե՛ս «**Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան**», հ. 1, էջ 250: **Յովհաննէսեան Ս.**, էջ 140-157:

³ **Մամեստիա-Մսիս**. «Մի յերից գլխաւոր քաղաքաց դաշտային Կիլիկիոյ՝ Մամեստիա՝ զարևելեան հարաւային մասն երկրին ունի վիճակ, և սահմանի ի հյուսիսոյ՝ Անագարբաւ, յարևմտից՝ գաւառաւ Ատանայ և անձանոթ՝ անջրպետօք Ջահանայ և Մարոսի, ի հարաւոյ՝ ընդարձակ դաշտագետնաւն մինչև յԱյաս, յարևելից՝ լեռամբք որ զհիւսիսային արևմտեան եզերս Հայոց ծոցոյն պարսպեն, և ի տոյն իսկ անուն քաղաքիս՝ կոչին Մսիսայ լերինք, Ճեպել-Մսիս»: Տե՛ս **Ալիշան Ղ.**, Սիսուան, նշվ. աշխ., էջ 245: Հմմտ **ТИБ**, 5, S. 351-359, «**Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան**», հ. 3, էջ 873: **Յովհաննէսեան Ս.**, էջ 334-341:

⁴ Տե՛ս **Ադոնց Ն.**, Լիկանդոսի բանակաթեմը, էջ 65: Հմմտ **Ալիշան Ղ.**, Սիսուան, նշվ. աշխ., էջ 531:

⁵ Տե՛ս **Dédéyan G.**, Mleh le Grand; stratège de Lykandos, նույն տեղում:

⁶ Տե՛ս **Ադոնց Ն.**, Լիկանդոսի բանակաթեմը, էջ 65:

⁷ 1022 թ. Սենեքերիմ Արծրունին 14 հազար զինվորականներով, որոնց հետո միանալու էին նրանց ընտանիքները, հաստատվեցին կայսեր կողմից փոխանակությամբ անցած Մեքաստիա, Լարիսա և Աբարա քաղաքներում: Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 298: Հմմտ. **Վարդանայ Բարձր բերդեցոյ** Պատմութիւն Տիեզերական, նշվ. աշխ., էջ 125: **Տաշեան Հ.**, Յուցակ հայերէն ձեռագրաց, Վիեննա, 1895, էջ 100: **Werner Seibt**, Die Eingliederung von Vaspurakan in das Byzantinische Reich (etwa 1019 bzw. Anfang 1022), - «Հանդես Ամսօրեայ», Վիեննա, 1978, № 1-12: (Հոդվածը լույս է տեսել 1980 թ.), էջ 49-66:

նաև Կոստանդին Ծիրանածինը.«Լիկանդոսքաղաքի անունը հին է և վերաբերում է հայկական ցեղին ու լեզվին»:

X դարի երկրորդ կեսին կրկին լայն թափ ստացան բյուզանդա-արաբական ռազմական գործողությունները, որի պատճառով Կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի տարածքները ձեռքից ձեռք էին անցնում: 958 թ. բյուզանդացիներին հաջողվեց գրավել Սամոսատ¹ քաղաքը², որում մեծ երիտասարդ (հետագայում՝ կայսր)Հովհաննես Զմշկիկիդերը: Բյուզանդացիները այնտեղ վերաբնակեցրին հայ և հույն գաղթականների³: Միխայել Ասորու հավաստմամբ, Սամոսատում հետագայում ձևավորվում է հայկական իշխանություն: Նա հայ իշխաններից հիշատակում է Դավթուկին, Կոնստանդինին և Սմբատի որդի Քրիստափորին: Վերջիններս իշխում էին նաև Մար Բարսումայի⁴վրա⁵: Հետագայում ևս այս քաղաքում ապրող հայերի մասին հիշատակությունկա:Արաբ աշխարհագիր Յակուտ ալ-Համավին, խոսելով Սամոսատի մասին, գրում է, որ XIII դարում այստեղ հայեր էին ապրում⁶:

Հայերի հաջորդ տեղաշարժը և նոր միջավայրում հաստատվելը վերաբերում են բյուզանդական կայսր Նիկեփոր II Փոկասի (963-969) նվաճողական արշավանքների շրջանին: Նա 965 թ. արաբներից գրավում է Մալաթիա քաղաքը ևարաբ բնակչության հեռանալուց հետո այստեղ բնակչության թիվը ստվարացնելու նպատակով կայսրը,անսալով խորհուրդներին, Անտիոքի ասորի պատրիարք տեր Հովհաննեսին առաջարկում է տեղափոխվել նոր նվաճված քաղաք՝ խոստանալով նրան զերծ պահել կրոնադավանաբանական վեճերից: Պատրիարքը, տուրք տալով կայսեր հավաստիացումներին, համաձայնվում է: Նրան հետևեցին մեծաթիվ ասորիներ և հայեր: Միջագետքից և Հայաստանից: Այս մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Միխայել Ասորին. «Եւ յետ սակաւու մեռաւ Ռոմանոս. և թագաւորեաց Նիկեփոռ այր տըգէտ և ատեցող ուղղափառութեան. որ և գնացեալ ի Մելտենի եգիտ աւերեալ և անմարդ գնա. և ետուն նմա խրատ զի կոչեցէ զտէր

¹ «Սամոսատ հին եւ պատմական բերդաքաղաքն է, կրգտնոյ Ոռհայէն 30 քլմ. հեռու՝ դէպիհիւսիս: Շինուած է Եփրատի մօտիկ բարձրաւանդակի մը վրայ. Քաղաքին հարաւը կըբարձրանային լեռներու շարքը, ուսկից կըբխէին բազմաթիւ գետակներ եւ կոռոզ էին շրջակայ պարտէզները»: **Յովհաննէսեան Մ.**, էջ 499-501: Հմմտ. «**Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան**», հ. 4, էջ 487-488:

² Տե՛ս **ԴԻԲ, 2**, “Kappadokien”, S. 90: Հմմտ.**ԴԻԲ**, Kilikien und Isaurien, teil 1, S. 57: **E. Honigmann**, S. 81, 87:

³ Տե՛ս **Michel le Syrien**, էջ 198: Հմմտ. **ՀԺՊ**, էջ 509:

⁴ «Գտնվում է Մալաթիայի գավառում, Կարկառից մի փոքր հյուսիս-արևմուտք»: Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 12, Ասորականաղբյուրներ, Բ, **Անանուհեղեսացի, Ժամանակագրություն**. Թարգմանությունը բնագրից առաջաբանը և ծանոթագրությունները՝ Լ. Հ. Տեր-Պետրոսյանի, Երևան, 1982, էջ 206-207, ծնթ. 9: Հմմտ. Պատմութիւն Այթէպի Հայոց, հ. Ա., աշխատաւորեց եւ խմբագրեց՝ **Սարաֆեան Գեորգ Ա.**, Անթիլիաս, 2013, էջ 226:

⁵ Տե՛ս **Michel le Syrien**, էջ 198:

⁶ «Սամոսատ քաղաքի մի մասը գրավում է բերդը: **Այդ քաղաքում բնակվում են հայեր**»: Տե՛ս Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց **Նայրանյան Հ.**, Երևան, 1965, էջ 79:

Յովհաննէս պատրիարքն Անտիոքու և տացէ ցնա գերկիրն. զի բերեալգագն իւր շինեաց զաշխարհն: ... և շինեաց զքաղաքն և զաշխարհն և ելից գերկիրն գեղիք և վանորայիւք, ածեալ ի Միջագետաց և ի Հայոց ուղղափառս և արար զբնակութիւն իւր ի Պերիտն ¹ »: Մալաթիայում հաստատված բնակչության նկատմամբ այս բարյացակամ վերաբերմունքը երկար չտևեց. նրանք հույն արքեպիսկոպոսիկոսից խարդավանքների էին ենթարկվում: Այս ամենը հետագայում ուղեկցվելու էր հալածանքներով, բանտարկությամբ և բռնի դավանափոխությամբ:

Նիկեփոր Փոկասի բանակում մեծ թիվ էին կազմում նաև հայ զինվորականները: Թերևս սրանով կարելի է բացատրել կայսեր ստորագրած մի հրամանագիրը, որը վերաբերում էր հայ զինվորների (ստրատիոտների) հողային իրավունքներին: Կայսերական բանակում ծառայող հայ զինվորները ստանում էին մշակելի հողեր: Սակայն այստեղ կայսրը մի կարևոր հավելում է կատարում. հողերը երեք տարի չմշակած զինվորականները, այլևս զրկվում էին իրենց հողերից: Կայսրը իր այս քայլը հիմնավորում էր հայերի՝ անվերջ թափառելու բնավորությունը զսպելու գործոնով: Այնտեղ արձանագրվում էր նաև, որ եթե հայ զինվորականները գնային խալիֆայության այլ վայրեր ու դրանից անցած լինեք մեկ տարի, վերադառնալուց հետո նրանք զրկվում էին հողերից ²:

Բար Հեբերոսը նույնպես, խոսելով բյուզանդական բանակում հայերի խաղացած մեծ դերի մասին, նշում է, որ կայսրության մղած բոլոր պատերազմներին հայ հետևազորը ներդրում էր ունենում ³:

Հայերի՝ Անտիոք ⁴ կատարած գաղթի մասին գրում է Մ. Չամչյանը: Ըստ նրա՝ ՆԺԹ (970) թ. շատ հայեր թողել են հայրենի երկիրը՝ ցրվելով տարբեր քաղաքներ: Մի քայել անունով հայոց իշխանը կնոջ՝ Մարիամի հետ գնում է Անտիոք որտեղ կային ավելի վաղ բնակություն հաստատած հայեր ⁵:

X դարի երկրորդ կեսին բյուզանդական կայսրությունում սկսվեց գահակալական կռիվներ: 976 թ. Վասիլ 2-րդ կայսեր (976-1025) դեմ ապստամբություն բարձրացրեց Վարդ Սկլերոսը, որի բանակում կային մեծ թվով հայեր: Սկլերոսի ապստամբությանն էին հարել նաև Տարոնի իշխաններ

¹ Ժամանակագրության Տեառն Միխայելի Ասորաց պատրիարքի, Երուսաղեմ, 1870, էջ 388-389: Հմմտ. **The Encyclopaedia of Islam, Vol. VI., E. J. Brill, Leiden, 1991, p. 230: Խարանիս Պ.**, Հայերը բիզանդական կայսրության մեջ, թարգմ. Պերպլերեան Հ., Վիեննա, 1966, էջ 61: **Գեղցեր Հ.**, Համառոտություն բիզանդական կայսրների պատմության, գերմ. թարգ. Մ. Վրդ. Տեր Մովսիսեան, Վաղարշապատ. 1901, էջ 228:

² **Կոնստանդին Օրբանաձին**, էջ 203-204:

³ Տե՛ս **The Chronography of Gregory Abu'l-Faraj, 1225-1286**, the son of Aaron, the Hebrew physician, commonly know as **Bar Hebraeus**, being the first par of his political history of the world, translated from the Syriac by Ed. E.A.W. Budge. London, 1932, (Reprinted Amsterdam 1976), էջ 169:

⁴ Անտիոք - քաղաք Ասորիքում, Որոնտես գետի ափին: Հիմնադրել է Մելսկիոս 1-ին Նիկատորը մ.թ.ա. 301թ. և կոչել հոր՝ Անտիոքոսի անունով: Տե՛ս **Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան**, հ. 1, նշվ. աշխ., էջ 284-285:

⁵ Տե՛ս **Չամչեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 858:

Գրիգորն ու Բագրատը, Սահակ Վահրամանը (Փիլարտոս Վարաժնունու նախապապը)¹ : Յսիա Անտիոքացու հաղորդմամբ, Վարդ Սկլերոսը իր ապստամբ զորքի մի մասը 978 թ. ուղարկում է Անտիոքի ուղղության՝ քաղաքը գրավելու: Այս արշավանքին միանում է Իբն ալ- Բազիլը, որի գործում նույնպես հայեր կային²: Իբն-ալ Բազիլը կարողանում է գրավել Արտավո բերդը, սակայն Անտիոքի կառավարիչ Մագիստրոս Ուրեյդ-ալլահից պարտություն կրելով՝ հեռանում է Հալեպ³ : Այս իրադրությունում Անտիոքում բնակվող հայերը, խառնակ վիճակից օգտվելով, ապստամբություն են բարձրացնում քաղաքի կառավարչի դեմ. «Եվ նրանք հանկարծակի ներխուժեցին մագիստրոս Ուրեյդ-ալլահի պալատը, որպեսզի սպանեն նրան: Եվ Ուրեյդ-ալլահը հարցրեց իր հպատակներին և կողմնակիցներին, իր կողմն են արդյոք Անտիոքի բնակիչները, թե իր դեմ: Եվ նրանք ասացին նրան, որ իր կողմն են: Եվ այդ ժամանակ նա քաջալերվեց և դուրս եկավ հայերի դեմ հանդիման: Եվ նրա մոտ հավաքվեցին քաղաքի բնակիչները և կռվեցին հայերի հետ ու սպանեցին շատ-շատերին: Եվ հայերը փախուստի մատնվեցին, ու նրանցից փախավ Ս-Մուլը (թերևս Մամվել)»⁴: Այս տեղեկությունից հնարավոր չէ պարզել, թե քաղաքից փախուստի մատնված հայերը որտեղ հաստատվեցին և որն էր ապստամբության պատճառը: Անտիոքի հայության ընդլվածանալը շարժառիթը, ըստ երևույթին, բյուզանդական վարչակարգի կողմից տեղի հայության կեղեքումներն էին, որոնք հարուցել էին նրանց դժգոհությունը:

Սակայն պետք է փաստել, որ Անտիոքից ապստամբ հայերի հեռանալուց հետո էլ քաղաքում հայությունը զգալի թիվ էր կազմում: Թերևս դա է վկայում Անտիոքում Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսի (972-992) կողմից եպիսկոպոսական թեմի հիմնումը. «Իսկ յաւուրս Տեառն Խաչկայ հայրապետին Հայոց սփռեալ տարածեցաւ ազգս Հայոց զկողմամբքն արեւմտից, մինչեւ ձեռնադրել նմա եպիսկոպոսունս յԱնտիոք Ասորոց եւ ի Տարսոն»⁵ Կիլիկեցոց եւ ի Սուլնդայ⁶ եւ յամենայն գաւառսն յայնոսիկ»⁷: Հայերը հետագայում ևս Անտիոքի

¹ Տե՛ս **Ստեփանոս Տարանեցի**, նշվ. աշխ., էջ 763: Հմմտ. Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 10, Բյուզանդական աղբյուրներ, Գ. **Հովհաննես Սկիլիցես**, թարգմանությունը բնագրից առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1979, էջ 55-67:

² Տե՛ս *Извлечения из летописи Яхьи Антиохиского*, издал, перевел и объяснил Барон В.Р. Розен. Записки императорской Ак. Наук, т. 44. СПб., 1883, с. 4:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ **Яхьи Антиохиского**, նշվ. աշխ., էջ 5.

⁵ **Տարսոն**-քաղաք Կիլիկիայում, նրահարավարևմտյանկողմում, Կիդնուգետիափին, Դաշտային Կիլիկիայի արգասաբերու արգավանդտարածքում: Տե՛ս **«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»**, հ. 5, էջ 59:

⁶ Գավառակ Կիլիկիայում, ԱդանայինահանգիԻջելիգավառում: Տարածվումէհամանունգետիոհովտում, միջերկրական ծովիափին, Գոռիկոսի և Անամուռի միջև: Տե՛ս **«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»**, հ. 4, էջ 561:

⁷ **Ստեփանոս Տարանեցի**, էջ 810: Հմմտ. **Օրմանեան Մ.**, Ազգապատում, հ. Ա., Էջմիածին, 2001, էջ 1327-1328:

Անտիոքի քաղաքական կյանքում կարևոր դեր էին խաղալու: XI դարում՝ Կիլիկիայում և Միջագետքում հայկական իշխանությունների ձևավորման ժամանակահատվածում, որպես Անտիոքի դուքսերեն հիշատակվում Խաչատուրը (Գրիգոր) (1069-1072), ապա Գրիգոր Մագիստրոսի որդի՝ Վասակ Պաիվունին (1072-1076): Իսկ Վասակի սպանությունից հետո հայզինվորների հրավերընդունելով՝ Փիլարտոս Վարաժնունին (1072-1090թթ.) գնում է Անտիոք և ստանձնում քաղաքի վերահսկողությունը¹:

Բյուզանդական կայսրությունը, ոգևորված իր հաղթական ռազմերթով, արդեն Վասիլ 2-րդ կայսեր կառավարման ժամանակ սկսեց նաև Կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի բնակավայրերի նվաճումը: Վասիլը 999 թ. գրավում է Շեյգար քաղաքը (Կեսարիա².) և այնտեղ բնակեցնում հայերի³:

Այն, որ հայությունը Կիլիկիայում և Ասորիքում ստվարացել էր, փաստում է նաև Միխայել Ասորին. «Այն ժամանակ, երբ հույները արաբներից գրավում էին Կապադովկիայի, Հայաստանի, Սիրիայի քաղաքները, Մեծ Հայաստանից (Մեծ Հայք) շատ մեծ քանակությամբ հայերի դուրս հանեցին: Սրանք կենտրոնացան այդ վայրերում և բազմացան»⁴: Պատմիչի հիշատակումից հիշատակումից ակներև է, որ բյուզանդական կայսրությունը հայությանն իր բնաշխարհից՝ Մեծ Հայքից, տեղահանելուց հետո բերում և բնակեցնում է վերոնշյալ տարածքներում:

Բյուզանդական կայսրության այս անհեռատես քաղաքականությունը՝ Հայաստանը զինական ուժից և բնակչությունից զրկելը, ունենալու էր անդառնալի հետևանքներ: Նա Մեծ Հայքի բնակչությանը բռնի տեղահանելով և Կիլիկիայում, Հյուսիսային Ասորիքում և Կապադովկիայում բնակեցնելով արևելքում զրկվում էր այն պատվարից, որը իզոպրու էր դիմակայելու տարածաշրջանում նոր հայտնված սելջուկ-թուրքերի հարձակումներին:

Բանալի բառեր - Կիլիկիա, գաղթ, Խալալ, Միխայել Ասորի, ապստամբություն, Սամառա, բռնի տեղահանություն, Թոռնավան գավառ, Վասակ Պաիվունի, պատրիարք:

Արարատ Ստեփանյան, Հայության գաղթերը 9-10-րդ դարերում- Այսպիսով, արաբների և բյուզանդացիների իրականացրած քաղաքականության

¹ Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, նշվ. աշխ., էջ 213-214: Հմմտ **Մմբատայ Սպարապետի** Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 83-84: **Ստեփանյան Ա.**, «Փիլարտոս Վարաժնունու իշխանապետությունը (1072-1090թթ.)», Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես, Երևան, 2016, էջ 244: **Dédéyan G.**, Reconquete territoriale et immigration arménienne dans l'Ancienne Cilicie sous les empereurs macédoniens (de 867 à 1028), Migration set Diasporas méditerranéennes (Xe -XVIe siècle), Paris, 2002, էջ 31:

² **Կեսարիա** - քաղաք Փոքր Հայքում, Արգեոս լեռան հյուսիսային կողմում, Ալիս գետի վերին հոսանքի շրջանում: Տե՛ս «**Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան**», հ.3, էջ 97: Հմմտ. Հայաստանի պատմության ատլաս, Ամաս, հեղինակ՝ **Հարությունյան Բ.**, Երևան, 2007, էջ 58-59, 62-63:

³ Տե՛ս **Яхья Антиохиского**, էջ 40:

⁴ Տե՛ս **Michelle Syrien**, նշվ. աշխ., էջ 198:

արդյունքում հայերին բռնի կերպով հեռացնում էին բնաշխարհից: Արաբները այս կերպ հող էին նախապատրաստում հայաթափ արված բնակավայրերում արաբական ցեղեր բնակեցնելու համար, իսկ բյուզանդացիները, հայերին գաղթեցնելով, բնակեցնում էին արաբներից գրավյալ Կիլիկիայի և Միջագետքի բնակավայրերում և նրանց զինական ներուժն էլ օգտագործում էին կայսերական բանակում: Հայության 9-10-րդ դարերի գաղթերը նախադրու էին հանդիսանալու հետագայում 11-րդ դարի հայության զանգվածային գաղթին և հայկական իշխանությունների հիմնման համար:

Արարատ Степанян, Миграция армянского населения в 9-10 вв. - Таким образом, в результате арабской и византийской политики, армяне были насильственно переселены из своей родины. Арабы готовили Армению для размещения там арабских племен, в то время как византийцы переселяли, армян в территории которые были аннексированы от арабов и использовали потенциал армян для имперской армии. Миграция армян 9-10 вв. Стало прецедентом для массовой депортации в 11-ом веке, и создала почву для появления армянских княжеств.

Ararat Stepanyan, The migration of Armenians in 9-10 centuries - Thus, as a result of Arabic and Byzantine policies, Armenians were violently expelled from their natural, land. Arabs were preparing Armenia for settling there Arabic tribes, while the Byzantines, immigrating Armenians to the territories which were annexed from Arabs and used the military potential of Armenians in the imperial army. The migrations of Armenians of the 9th and 10th centuries would be precedent for the mass deportation of Armenians in the 11th century and establishment of Armenian princedoms.

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐՇԱԿ ԵՐԿՐՈՐԴԻ ԶԵՅԹՈՒՆՑՅԱՆԱԿԱՆ

ԿԵՐՊԱՎՈՐՈՒՄԸ

ԱՌԴԱ ՍԱՐՀԱՏՅԱՆ

4-րդ դարը հայ ժողովրդի պատմության ամենաողբերգական ու դրամատիկ իրադարձություններով հագեցած շրջանն էր, երբ երկիրը արյունաքամ էր լինում երկու հզոր պետությունների՝ Պարսկաստանի ու Բյուզանդիայի նենգ ու դավադիր քաղաքականության ու նրանց հրահրած պատերազմական գործողությունների հետևանքով, երբ երկիրը քայքայվում էր նախարարների պառակտումից, թագավորի դեմ նրանց ապստամբություններից, հայոց իշխանների դավաճանությունից, երբ իշխանության էր ձգտում նաև եկեղեցին՝ հակադրվելով արքային, երբ համընդհանուր անմիաբանություն էր, ու 16-րդ Արշակունի թագավորը՝ Արշակ Երկրորդը, մենակ ու անօգնական էր մնացել ներքին ու արտաքին թշնամական ուժերի դեմ ...

Թեև անցել է մեկուկես հազարամյակ, սակայն նրա կերպարը այսօր էլ չի աղոտանում: Արշակին սիրել են կամ ատել, համարել դաժան ու ոճրագործ, բայց նրա՝ որպես մարդու և արքայի գործունեության նկատմամբ երբեք անտարբեր չեն եղել. նա դարձրել է չմարդկային հետաքրքրություն ներկայացնող պատմական ու գեղարվեստական դրամատիկ-ողբերգական կերպար...

Նրա անձին ու վարած քաղաքականությանը անդրադարձել են պատմիչներ Խորենացին ու Բուզանդը, բոլոր ժամանակների հայ պատմաբանները՝ իրենց օբյեկտիվ ու սուբյեկտիվ գնահատականներով, հայ մեծանուն գրողներ Բաժժին ու Ստեփան Զորյանը, մեր ժամանակների լավագույն վիպասան, դրամատուրգ ու հրապարակախոս Պ. Զեյթունցյանը, արձակակիր Լևոն Խեչոյանը, նաև բանաստեղծներ, գեղանկարիչներ, երգահաններ: Ո՞րն է նրա անվան շուրջը ծավալվող շարունակական բուռն, հաճախ իրարամերժ գնահատականների պատճառը...

Գուցե 4-րդ դարում կատարված դեպքերի ու դեմքերի մասին պատմագեղարվեստական հարուստ ու հետաքրքիր շերտեր ունեցող և չնոռացվող բազմաթիվ իրապատում գրույցները, գուցե մեր ժողովրդի բոլոր սերունդների հոգում սերմանված անկախության ու ազատասիրության կրա՞կը, գուցե մեր նենգ ու դավադիր դարավոր թշնամիների նկատմամբ ունեցած լեռնակուտակ ատելությունը, կամ մեր ժողովրդի՝ չարիքներ ծնող անմիաբանությունը, միամիտ հավատն ու ներողամտությունը, գուցե հենց Արշակ Երկրորդին վերագրված հեթանոս ապրելաձևը, ծանր հարկերը, դնելը ժողովրդի ու իշխանների վրա, կամ եկեղեցու դերի սահմանափակումը, գուցե

այն, որ սնափառությունից մղված էր կառուցում Արշակավանը ու կենտրոնախույս ուժերը համախմբելու և երկրում միաբանություն հաստատելու համար դիմում էր անգամ սահմոկեցուցիչ դաժանությամբ... թե՛ անկախ ու հզոր պետություն ունենալու նրա միշտ արդիափառն զգալին երազանքը. . .

Հայ երկու մեծագույն պատմիչները իրարամերժ գնահատականներ են տվել Արշակին: Իր «Պատմություն հայոց» մատյանում Փավստոս Բուզանդը գովասանքով է հիշատակում Արշակի թագավորության առաջին շրջանի բարենորոգումները. «Եվ հայոց աշխարհի թագավորությունը նորոգվեց ու պայծառացավ, ինչպես առաջ. մեծամեծներն իրենց գահերում, գործակալներն իրենց աստիճաններում ...»: ¹ Թեև, ինչպես նշում է պատմիչը, թագավորն այնքան էլ չէր գնում աստվածահաճո ճանապարհով: ²

Մ. Խորենացին հիշատակում է Արշակի անհնազանդությունն ու արհամարհանքը հունաց Վալենտիանոս թագավորի և Շապուհի նկատմամբ. «Արշակը նույնիսկ չպատասխանեց այս նամակին, այլ ատամ կրճտացնելով նրան արհամարհեց. մինևնույն ժամանակ Շապուհի կողմն էլ չդարձավ ամբողջ սրտով, այլ կերով խումների ժամանակ և վարձկան երգիչների բերանով ինքնահավանությամբ միշտ պարծենում էր, իբրև թե Աբիլլեսից էլ ավելի քաջ և արի է, բայց իրոք նմանվելով կաղ ու սրագլուխ Թերսիտեսին, իր մեծամեծներից մերժված, մինչև որ ամբարտավանության վարձն ստացավ»: ³ Կայսեր և Շապուհի նմատմամբ արհամարհանքը Արշակին չի նսեմացնում, ընդհակառակը, իսկ ահա նրա ինքնահավանությանն ու պարծենկոտությանը վերաբերող մասը այսպես է մեկնաբանում մեծանուն գրականագետ Մ. Մկրյանը. «Այստեղ, ինչպես և ընդհանրապես իր «Պատմության» մեջ, Արշակ Երկրորդի գործունեությանը իր քաղաքական նկատառումներից ելնելով բացասական պատասխան տալով՝ **Խորենացին անշուշտ մեծապես սխալվել է**, բայց տվյալ դեպքում խնդիրն այդ չէ, այլ այն, որ այստեղ նույնպես Խորենացու հումանիզմը մերժում է պալատներում գտնվող վարձկան երգիչների՝ տերերին ուղղված փառաբանությունները, որոնց մեջ նրանք ներկայացվում են ոչ որպես սովորական մահկանացուներ»: ⁴

Արշակի մասին եղած գեղարվեստական գրականության մեջ ուշագրավ է Ստ. Զորյանի «Հայոց բերդը» պատմավեպը, որում հեղինակը այլ մոտեցում դրսևորեց Արշակի հանդեպ՝ նրա գործի գլխավոր ուղղությունը համարելով **ինքնուրույն, կենտրոնացած պետականություն ստեղծելու ջանքերը**,

¹ Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ե., 1987, էջ 107:

² Տե՛ս Փավստոս Բուզանդ, նույն տեղում, էջ 189:

³ Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Եր., 2009, էջ 214:

⁴ Մ. Մկրյան, Երկեր, հ. 1, Եր., 1987, էջ 186:

արժեքավորելով դրանք իբրև հասարակական առաջադիմության՝ պատմական զարգացման միտումի արտահայտություն:¹

Արշակ Երկրորդի մասին եղած գրականության մեջ իր պատմական-գաղափարական թարմ հնչեղությամբ, կերպարների հոգեբանության խորունկ բացահայտումներով առանձնանում է Պ. Զեյթունցյանի «Արշակ Երկրորդ» պատմավեպը, որի մեջ պատմականությունը այնքան գեղարվեստական է, ու գեղարվեստականը՝ այնքան պատմական..., որտեղ Արշակը երևում է որպես լիարյուն իրական-պատմական կերպար՝ իր մարդկային կամային հատկանիշներով, հոգեբանորեն արդարացված մանր ու մեծ կրքերով, իր սիրով ու ատելությամբ, իր տագնապներով, դաժանությամբ ու երազանքներով...

Պ. Զեյթունցյանը ամենևին էլ նպատակ չի հետապնդել Արշակին իդեալականացնել և լուսապսակ դնել նրա գլխին և ոչ էլ համարել է մեղսագործ... Արշակը փոթորկահույզ, ցնցող դեպքերով հարուստ պատմաքաղաքական ճգնաժամային շրջանում սկսեց իր գործունեությունը՝ սկզբում փորձելով սիրաշահել պառակտված և հայոց միաբանությունից անջատված նախարարներին: Նրան թվում էր՝ տասնյակ նախարարներ պարտապան էին դառնում իրեն և ստացած պատիվների դիմաց պարտք մնում հավատարմություն, համերաշխություն, միաբանություն: *Սակայն նա դեռ չգիտեր, որ կար էլ ավելի իմաստուն ու մեծ ճշմարտություն. պարտապան լինելու մոռացումը, պարտքը չվճարելու աշխարհի հինավուրց և բնական օրենքը...* ԱԵ-19/

Երկրի ապահովության երաշխիքը համարելով յուրայիններով շրջապատված լինելը՝ նա հոգևոր առաջնորդ դարձրեց բյուզանդական կողմնորոշում ունեցող իր հորաքրոջ որդի Ներսեսին, որ Լուսավորչի տոհմից էր՝ դրանով թոթափելով իր մեղքը կայսրի առաջ և այժմ էլ խոցելի դառնալով արքայից արքայի առաջ, թեև... *«Հայոց արքան միշտ է խոցելի, մոր արգանդից, իր ծնունդից, իր առաջին ճիչից, իր առաջին ինքնուրույն քայլից», - խորհում էր Արշակը՝ իրեն զգալով լարախաղացի դերում, գլխավոր լարախաղացի, լարախաղացների արքայի, որին փողի դիմաց տալիս են թագ...*» /ԱԵ-18/

Զեյթունցյանը չի անդրադառնում Արշակի վարած ռազմական գործողություններին, միայն պատմիչն է նշում, որ Շապուհը յոթ տարվա ընթացքում երեսունյոթ անգամ հարձակվեց, ու Արշակը այդ հարձակումները հետ մղեց: Նա տիրապետում էր պատերազմելու արվեստին և երբեք բաց դաշտ դուրս չէր գալիս. իր հետևից թշնամուն տանում էր լեռներն ու վրահաս լինում: Արձակակիր Լ. Խեչոյանը պատմական այս իրողությանը գեղարվեստական հնչեղություն է տվել. «Յոթ տարի նրա այրուծին չիջավ թամբից: Հետևակը սահմանամերձ դիրքերից չվերադարձավ ու կանանց չպտղավորեց, մանուկներ

¹ Ս. Աղաբաբյան, Հայ սովետական գրականության պատմություն, հ.1, Եր., 1986, էջ441:

լույս աշխարհի չեկան: Աղջնակների ստիճանները կլորացան, պատանիներին մորուք աճեց: Ծերունիները մեռնում էին, ու ջահելները խրամատներում ծերանում »:¹

Բյուզանդիան ու Պարսկաստանը արտաքուստ հաշտ էին հայոց արքայի հետ, բայց այդ հաշտությունը խաբուսիկ էր, պատերազմը՝ անխուսափելի: Արշակը առերևույթ բարեկամ էր ձևանում նրանց, բայց չէր դառնում նրանց կամակատարը. վարում էր ինքնուրույն քաղաքականություն՝ նեքրուստ կոիվ մղելով և՛ արտաքին ճակատով, և՛ երկրի ներսում:

Դրությունը գնալով լարվում էր: Զեյթունցյանը ընթերցողին տեղափոխում է իրադարձությունների կիզակետը՝ բացառիկ խորությամբ պատկերելով Արշակի հոգում ծավալվող երկվության դրաման: Դրաստամատի խորհրդով նա պիտի բռներ որևէ մեկի կողմը:

-Իսկ ինչու՞ պիտի որևէ մեկի կողմը բռնեմ, -Դրաստամատի ճշմարիտ խոսքերից և ստույգ տրամաբանությունից արյունը խփեց արքայի երեսին: -Ես ուզում եմ ի՛մ կողմը լինել: Բնքս ինձ հետ:

-Դու քո ուժը չունես, արքա՛:

- Ունեմ, աստված՝ վկա, ունե՛մ: Մարդկային մի հոծ բազմություն...Մի ահռելի ծով... Մի ամբողջ հրաբուխ...Եվ նրանք իմ կողմնակիցները կդառնան.../ԱԵ-21/

Այդ ուժը արշակավանդներն էին լինելու, նրանցից էր ձևավորելու իր բանակը... « ... և նրանք աստամներով կպաշտպանեն իրենց քաղաքը, իրենց ազատությունը...մինչև վերջին շունչը կկռվեն, և ինքն այլևս ստիպված չի լինի սողալու մեկ պարսիկի, մեկ բյուզանդացու առաջ, իսկ պատերազմի ժամանակ այլևս գործ չի մուրա իր նախարարներից...»:/ԱԵ-55/

Արշակ Երկրորդին, սակայն, պատմիչները մեղադրել են ոչ միայն Արշակավանդ կառուցելու, այլև Գնեղին սպանելու ու նրա կնոջ՝ Փառանձեմի հետ ամուսնանալու համար, նախարարների նկատմամբ նրա դաժանության համար և ոչ միայն: Խորենացին գրել է. «Գնեղին սպանելու համար Արշակը չզոջաց, չապաշխարեց, այլ անամոթաբար սպանվածի գանձերին ու ժառանգությանը ազահեղով, դեռ նրա կնոջը՝ Փառանձեմին էլ իրեն կին առավ, որից ծնվեց մի տղա, որ կոչվեց Պապ»:² Բուզանդն էլ է Արշակին մեղադրում Գնեղին սպանելու և նրա կնոջը՝ Փառանձեմին, կին առնելու համար: Պ. Զեյթունցյանի ընթերցողը չի զարմանում արքայի այդ քայլերից ու չի մեղադրում նրան. պատմությունը ցույց է տալիս, որ շատ արքաներ են վերացրել իրենց գահին հավակնողին: Ինչ վերաբերում է Փառանձեմի հետ արքայի ամուսնանալուն, արձակագիրը, ակնհայտ համակրանք տածելով Փառանձեմի

¹ Լ. Խեչոյան, Երրորդ որդին./Պատմվածքներ/, Արշակ արքա, Դրաստամատ ներքինի, Եր., 2002, էջ 298:

² Մ. Խորենացի, նույն տեղում, էջ 220:

նկատմամբ, արդարացնում է արքայի արարքը՝ ցույց տալով նրա ահագնացող բուռն սերը այդ կնոջ հանդեպ. այդ հազվագյուտ հայուհին չքնաղ էր, համարձակ, կամային, խելացի. Արշակը չէր կարող անտարբեր լինել նրա հմայքի ու ուժի հանդեպ. հայոց թագուհին հենց այդպիսի՝ն, ու հենց նա՝ պիտի լիներ...

Արշակի՝ երկրի անկախության ու ինքնուրույնության երազանքը եղել և մնում հայի երազանքը՝ տեսնել Հայաստանը *ամուր ռոքերի վրա կկանգնած, հարկերից ազատ, հարուստ և հզոր երկիր, որ կունենա միջազգային բարձր հեղինակություն, կունենա իր գիրն ու գրականությունը*:/ԱԵ-191/ Այս ցանկությունը իրականություն էր դառնալու միայն հարյուրամյակներ հետո...

Վեպում միայն մի հոգի է արքայի պաշտպանն ու կողմնակիցը՝ Գնելը /պատմավեպում նա չի սպանվում/, որը արդարացնում է Արշակին՝ չնայած իրեն սպանելու նրա հրամանին. Նա աստում էր Արշակ մարդուն, արդարացնում արքա Արշակին, ժողովրդից էլ պահանջում, որ կանգնի թագավորի կողքին, եթե ուզում է ամուր պետականություն ու միաբանությամբ հզոր երկիր ունենալ, գաղափար, որ բոլորի համար վեր պիտի լինի անձնական բոլոր զգացումներից ու սրբություններից:

Արշակը սիրով ու համերաշխությամբ ստեղծված կենտրոնաձիգ պետություն ունենալու համար պատրաստ էր դաժանորեն ու անխնա պատժել բոլոր նրանց, ովքեր հավակնում էին գահին, ովքեր խարդախ էին ու դավաճան, և գիտեր առանց խնայելու սպանիչ ծաղրի ենթարկել նրանց: Նա հայրենասեր էր, հանդուգն ու համարձակ, օտարատյաց, ազատատենչ, ինքնիշխան, ու այդ ուժը նրան հայոց հողն էր տալիս... Բայց այդ հզոր անհատականությունը ժամանակից առաջ անցավ, գերագնահատեց շինականի ուժն ու գիտակցական մակարդակը և մնաց մենակ, մինչդեռ ուզում էր, որ սիրեն իրեն ու իր մեջ արքային ու մարդուն տեսնեն միաժամանակ, սակայն ուժի և իշխանության դեպքում դա անհնարին է. կա՛մ մարդ, կա՛մ արքա...

Արշակը զգում էր, որ վտանգը դամոկլյան սրի պես կախվել էր երկրի գլխին, ժողովուրդը չգիտեր՝ որ կողմը կհաղթի, որ նրա՝ կողմն անցնի: Պարսկաբյուզանդական մոտալուտ պատերազմի հոտն առած՝ երկրի կեսը պարսկավարի էր հագնվում, կեսը՝ բյուզանդավարի: Կեսը Բյուզանդիայի կողմնակիցն էր, կեսը՝ Պարսկաստանի: Իշխանական տներում խոսում էին հունարեն կամ պարսկերեն: Դեռ պատերազմը չսկսված՝ երկիրը բաժանվել էր երկու մասի, լցվել պարսիկներով ու բյուզանդացիներով, որոնք հայի տեսք ունեին, հայի քիթ, հայի աչքեր ու թեև օտար լեզվով էի խոսում, բայց հայիոյելիս անցնում էին հայերենին... Պարսկաստանն ու Բյուզանդիան էլ իրար մեջ բաժան-բաժան էին անում Հայաստանը...

Ո՞րն էր ելքը..., ընդունել պարտությունը և տեսնել, թե ինչպե՞ս է կործանվում երկիրը, գնալ պարսից շահի՞ ոտքը, թե՞ բյուզանդական կայսեր:

Արշակը մնաց անդդովելի. **ելքը միայն արշակավանքիների երկրապաշտպան ուժն էր ...**

Պ. Զեյթունցյանի ընթերցողը արդարացնում է **մարդ և արքա Արշակին**, հասկանում նրա հոգու դրաման, նրա զայրույթն ու անգործությունը, անելանելի վիճակից ելք չգտնելու անհնարինությունը...

Ահա՝ Բյուզանդիայից պատգամավորություն է եկել. կայսրը իր ողջուններն է հղում հայոց արքային և հույս հայտնում, որ կարող է վստահ լինել իր դաշնակցությանը, և որպես հաճելի անակնկալ՝ նրան կնության է ուղարկում իր մեռած եղբոր՝ Կոստասի նշանածին՝ Օլիմպիային... Զսպելով ներքին զայրույթը՝ Արշակը պիտի պատասխաներ, որ միշտ պատրաստ է ծառայելու **իր մեծ եղբորը**, իսկ Արշակավանի կառուցումը քաղաքական նպատակ չի հետապնդում: Ուրիշ մեկը իր փոխարեն կբռներ այդ կնոջ թևից և դուրս կշարտեր, բայց այդ մեկը այդ կնոջ մեջ միայն կին կտեսներ՝ տգեղ, բայց բարեձև մարմնով, իսկ ինքը նրա մեջ տեսնում է լայնածավալ ու հզոր մի երկիր, նրա կայսրին, տեսնում է սահմանագլխին շարված օտար բերդերի ամուր շղթան, հունական ընտիր հետևակ ու հեծելազոր ու հազարավոր հայեր փլատակների տակ...

Հիմա էլ պարսիկ պատգամավորներն են ժամանել՝ Շապուհից հղված ողջուններով և պահանջով՝ հաստատ մնալ ուխտին և իր գնդով օգնության գնալ նրան: Իսկ Արշակավանը ինչու՞ է կառուցվում՝ հզորանալու՞ նպատակով. *«Թշնամին առել էր փտանգի հոտը և ուզում էր սիրաշահել իրեն, իսկ յուրայինը օգուտը չէր տեսնում»* /ԱԵ-256/, այդ դեպքում ինչու՞ չի ապավինում իր օգնությանը, կամ գուցե դա արվում է հունասեր խմբակցության դեմ ուժ ստեղծելու՞ համար, այնուհանդերձ, ազատության այդ քաղաքը վատ օրինակ կլինի հարևան երկրների ժողովուրդների համար: Իսկ իրենց ուխտը ավելի ամրապնդելու համար Շապուհը նրան կնության է ուղարկել իր քրոջը՝ Ուրմիզդուխտին...

...Արշակի հոգում փոթորիկ էր. բանակների փոխարեն ընդամենը մեկական կին են ուղարկել՝ պալատում խարդավանքներ լարելու, բայց արտաքուստ հանգիստ ձևանալով՝ նա պիտի ասեր, որ, շոյված ու շնորհակալ է արքայից արքային՝ կրտսեր եղբոր հանդեպ ունեցած հոգատարության ու մեծ պատվի համար և պարտավոր է մինչև մահ սիրել ու հարգել իր կնոջը... /Զեյթունցյանի վեպի հանդեպ ընթերցողների անհագուրդ հետաքրքրությունը պայմանավորված է մասնավորապես Արշակ-Օլիմպիա-Փառանձեմ-Ուրմիզդուխտ դրամատիկ կապի հոգեբանորեն համոզիչ, խորունկ ու բարձրարվեստ, լավագույնս արդարացված մեկնաբանություններով և զեյթունցյանական հայտնի վերջաբանով.../

Աքցանը նեղանում էր. պարսից արքան և Բյուզանդիայի կայսրը բռնել են իր կոկորդից. մի կողմը կրակ, մյուսը՝ ջուր: Ինչքա՞ն կարող է պահմտոցի խաղալ.

ի վերջո մի օր կպահանջեն գունդը և ուխտը, և ում էլ միանա, մյուսը քարուքանդ կանի երկիրը: Իսկ եթե երկուսն էլ իմանան, որ ինքը երկու կանանց էլ սուսուփուս ընդունել է, կամ ձևացնեն, թե տեղյակ չեն և երկու կանանց միջոցով են ուզում քայքայել երկիրը... /269/

Երկիրը ձեռից գնում էր: Ազդեցիկ նախարարները, փոխանակ վտանգի դեմ միասնական ճակատով հանդես գալու, երես էին թեքել թագավորից: Ապստամբել էին ևս մի քանի նախարարներ, դավաճանել էին Վասակի եղբայրները...

Զեյթունցյանը արդարացնում է Արշակի անաչառ քննադատությունը Ներսեսին, որը ևս հակառակվում ու քննադատում էր արքային, խառնվում արքունիքի գործերին, նրանից գաղտնի նամակներ ուղարկում Կեսարիա, որ հայոց կաթողիկոսները այնտեղ ձեռնադրվեն, որը երկիրը լցրել էր կանացահանդերձ տղամարդկանցով, որոնց տեղը բանակը պիտի լիներ: Իր բարեգործություններով նա բարձրացնում էր եկեղեցու հեղինակությունը՝ որպես փրկություն միակ միջոց: Արշակը չէր խնայում նրան. նրա նպատակները մնացին գուտ աշխարհական. ինչու՞ է նա հարկեր վերցնում ժողովրդից, եթե հոգում է ռամիկի բարեկեցության մասին, եթե քարոզում է, որ շինականին չճնշեն, ինչու՞ է դատում Արշակավան փախչողներին, եթե հոգևորական է, ի՞նչ գործ ունի քաղաքական հաշիվների հետ, ինչու՞ է հանդուրժում թագավորի բազմակնությունը. չէ՞ որ դա հեթանոսություն է, ի՞նչ է, թագավորի համար մի կրոն կա, մյուսների համար մի ա՞յլ: /279-280/

Վտանգը մեծանում էր նաև արտաքին աշխարհում. Ատրպատականում էլ մարերն էին գլուխ բարձրացրել: Շապուհն էլ հրովարտակ է ուղարկել և Վասակի հետ հրավիրում է Տիգրոն՝ հաշտության:

Արշակն զգում էր իրականության օրհասական լինելը:

Իսկ պալատի առջև էլ ահա արշակավանցիների հսկայական բազմություն է հավաքվել. հաց ու ջուր է պահանջում ու թշնամու դեմ կռվող զորք. չէ՞ որ արքան անձեռնմխելիությունն է խոստացել իրենց, մինչդեռ արքան զորք չունի:

Արշակն ապշած էր ժողովրդի նման հանդգնությունից. դա խռովություն էր, ըմբոսություն իր դեմ. խարխլվում է հայոց աշխարհը, և ինքն է միակ մեղավորը:

«Ուրեմն նրանք փոխանակ իրեն պաշտպանելու, փոխանակ իրենց քաղաքը ատամներով պահելու՝ ուզում են, որ արքա՞ն զորավիգ լինի իրենց՝ հավատարիմ իր՝ նրանց խոստացած անձեռնմխելիությա՞նը, ուրեմն նրանք հույսը միայն ի՞ր վրա էին դրել, **բայց չէ՞ որ իր միակ հույսն էլ նրանք էին...**» /ԱԵ-470/ Ու ծնվող բոլոր ինչուները տանում են դեպի ժամանակի բարդ ու անլուծելի հանգույցները...

Պ. Զեյթունցյանը հետ է քաշում դարերի ծանր վարագույրները և երկրի հոգսերը իր ուսերին վերցրած արքային ցուցադրում իր ողջ դրամատիզմով ու ողբերգականությամբ: Արշակը կանգնած էր արշակավանդիների մեծագույն երախտամոռության, իր անպտուղ, ավերված երազանքների առջև. էլ ինչո՞ւ տեղահան արավ նրանց, գծտեցրեց իրենց տերերի դեմ. որ այդ նույն ամբոխը որպես պատասխան առաջարկի տանել իրեն ու հանձնել նախկին տերերի՞ն... Մա՞ էր վերջը բոլոր տառապանքների, այսքան անփառունակ ու խղճալի վերջը...

Իսկ հայ-պարսկական միացյալ բանակի զինվորները ներխուժեցին Արշակավան, ու սկսվեց երեք օր տևած սպանդը: Արշակավանը մեռնում էր առանց դիմադրելու:

Հավատարիմ պատմական տվյալներին՝ Պ. Զեյթունցյանը ևս ցուցադրել է Արշակի անապատմելի դաժանությունը սեփական երկրի նախարարների հանդեպ, որը բխում էր նրանց հանդեպ լեռնացած զայրությանից, խոցված արժանապատվությունից, վիրավորանքից, կործանվող երկիրը փրկել չկարողանալու անգործությունից...

Պ. Զեյթունցյանը գեղարվեստական ու հոգեբանական բացառիկ վարպետությամբ է ներկայացրել Արշակի դրաման նաև Անհուշ բերդում, նրա մտորումները իր անցյալի, իր մեծ սիրո ու մեծ ատելության, իր զղջումների ու դժբախտության մասին: Նա մտովի ինքն իրեն պատմում էր նո՛ր Արշակավանի մասին, մտքով թռչում խոր ձորերի ու բարձրիկ լեռների, գարնանը հարսնացող ծիրանենիների իր երկիրը, որտեղ

-Երևի այնտեղ շարունակում են նախնիների սխալը գործել: Անագնվության դեմ կռվում են ազնվությամբ՝ **միամտաբար կարծելով, թե այդ հակասության մեջ է հայի ուժը: Մինչդեռ դա մեր թուլությունն է, սպարապե՛տ: Վկա՝ ես ու դու, Անհուշ բերդը, իմ շղթաներն ու քո պաճուճապատանքը: Առնականության պակասն է խանգարում բոլորիս, ատելության անկարողությունը, մարդկայնության գերառատությունը, բարոյական հաղթանակների աստվածացումը: Երևի ոսոխը շարունակում է քանդել, իսկ հայը՝ կառուցել.....» /518/**

Նա մտովի կառուցում էր իր երկիրը, ստեղծում միավորված ու ուժեղ հայրենիք, ամրացնում նրա սահմանները, խորտակում ներքին ու արտաքին թշնամիներին, հյուսում ներդաշնակ հանրություն, որն արդեն ունի իր գիրն ու գրականությունը, իր դպրոցներն ու բարձր մշակույթը, ու նրա զավակներն այլևս օտար երկրներ չեն գնում ուսում ստանալու: Իր ազատ քաղաքի գաղափարից, սիրո, հավասարության ու աշխատանքի գաղափարից կհառնի երկիրը, բայց ինչո՞ւ՝ մենակ մնաց...Ո՞րն էր իր սխալը ...

-**Դու հանդգնեցիր առաջ անցնել քո ժամանակից**, արքա, քեզ ոչ ոք չէր կարող հասկանալ: Անգամ ժողովուրդը: Դու մենակ մնացիր: Դու միայն գլխով առաջ անցար քո ժամանակից, արքա՛, միայն գլխով: Իսկ հոգով ու մարմնով

կապված էիր քո ժամանակին: Որպես բիրտ և դաժան մի բռնապետ: Այս հակասության մեջ էր քո ողբերգությունը, արքա՛ .../530/

Ընթերցողը կհսում է այս կարծիքը...

Արշակ Երկրորդ» պատմավեպում անթաքույց է Պ. Զեյթունցյանի համակրանքը Արշակի հանդեպ, և այդ համակրանքը փոխանցվում է ընթերցողին, ով հասկանում է, արդարացնում ու գնահատում Արշակ Երկրորդ արքային՝ հայոց անկախ ու ինքնուրույն պետականություն ունենալու, սահմաններին անխորտակ բերդեր կառուցելու, երկիրը հարուստ ու հզոր դարձնելու, նրա միջազգային հեղինակությունը բարձրացնելու, սեփական գիրն ու գրականությունն ունենալու համար, օտարների առաջ ունեցած արժանապատիվ ու հպարտ կեցվածքի համար ու չի մեղադրում նրան ո՛չ Գեղի սպանության ու Փառանձեմի հետ ամուսնանալու, ո՛չ նախարարների հանդեպ ցուցաբերած դաժանության, ո՛չ Ներսեսին պաշտոնանկ անելու համար... Նա ուժեղ էր, սկզբունքային, ինքնուրույն, հայրենասեր ու օտարատյաց, թող որ նաև անհանդուրժող ու վրեժխնդիր...

Բանալի բառեր-պատմություն, 4-րդ դար, Արշակ Երկրորդ, արտաքին և ներքին թշնամիներ, պատմիչ, ազգապահպան ծրագիր, ինքնուրույն քաղաքականություն, ավերված երազանքներ

Աիդա Սարհատյան, Արշակ Երկրորդի զեյթունցյանական կերպավորումը - Հոդվածը վերաբերում է պատմաքաղաքական իրադարձություններով հարուստ 4-րդ դարին, երբ երկրի թագավորն էր Արշակ Երկրորդը: Հայոց այս արքայի մասին հայ պատմիչները բազում վկայություններ են թողել, որոնց անդրադարձները կան պատմության մեջ, գրականության ու արվեստների: Արշակի կերպարին անդրադարձել է նաև Պ. Զեյթունցյանը, ով, պատմական փաստերին հավատարիմ լինելով հանդերձ, Արշակ արքայի և Արշակ մարդու դրաման ներկայացրել գեղարվեստական բացառիկ վարպետությամբ, հոգեբանորեն արդարացված թարմ ու ինքնատիպ մեկնաբանություններով:

Аида Саргатын, Зейтунцянское изображение Аршака II - Статья касается богатого историко-политическими событиями IV века, когда страной правил Аршак II. Об этом армянском царе армянские историографы оставили множество свидетельств, отклики которых есть в истории, литературе и искусстве.

Образ Аршака II коснулся также П.Зейтунцяна, который, оставаясь преданным историческим фактам, с исключительным мастерством представил драму Аршака как царя и человека с психологическими и своеобразными интерпретациями.

Aida Sarhatyan, Arshak the Second represented as from Zeytun - The article refers to the rich 4th century which was full of historical and political events when Arshak the Second was the king of the country. Armenian historians have left a lot of evidences about this Armenian king, the signs of which are in the history, literature,

arts. With being loyal to the historian facts, P. Zeytuncyan has also touched upon the image of Arshak. He has presented the drama of the king and the human being of Arshak with the exceptional artistic skill and with the latest and unique comments.

**ՄԻՐՈ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՐՈՒԽԱՆԻ
ՆՈՎԵԼՆԵՐՈՒՄ
ՀԱՍՄԻԿ ՎԱՅԱՆ**

Նորավելայի՝ նովելի ժանրը (իտալերեն “novella” - նորություն), անցնելով զարգացման երկար ճանապարհ, 19-րդ դարում հանդես եկավ որպես գեղարվեստական փոքր արձակի գլխավոր դրսևորում: Մեզանում այն կայացավ արևմտահայ գրական համապատկերում 1880-1910-ական թվականների միջակայքում և դարձավ բացարձակ տիրապետող ժանր: Սա պատճառաբանվում է այդ շրջանում ոչ միայն հասարակական-քաղաքական գործոնների (1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմ, Հայկական հարց, ազգային կուսակցությունների ակտիվ գործունեություն, ազատագրական պայքար և այլն), այլև մշակութաբանական երևույթների հազեցվածությամբ՝ ութսունականների շարժում (իրապաշտություն), բնապաշտության, սիմվոլիզմի ինչ-ինչ տարրերի ներթափանցում, «հեթանոս շարժում», վելյի և գեղարվեստական փոքր արձակի զարգացում, տեսական մտքի առաջընթաց և այլն:

19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին մեր ազգային-հասարակական կյանքում տեղի ունեցած փոփոխություններն իսկապես ազդեցին գրականության ժանրային կազմի վրա: Բանաստեղծական ժանրերն ստացան բացահայտ գերակշռություն, արձակի մեծ ձևը՝ վեպը, իր տեղը զիջեց փոքր ձևերին (պատմվածք, նովել, ակնարկ և այլն). «Երկու դարերի սահմանագլխին սոցիալական և ազգային կյանքում տեղի ունեցած մեծ ցնցումները մեր արձակագիրներին մի պահ զրկեցին իրականությունն իր էպիկական ամբողջության մեջ տեսնելու, նրա բազմազան կողմերը գեղարվեստորեն համադրելու հնարավորությունից: ... Եվ արձակագիրները գերադասում էին փոքր ձևերի մեջ որսալ հարափոփոխ կյանքի առանձին տիպական պահերը»¹:

Այս շրջանում արևմտահայ գրականության մեջ արձակի փոքր ձևերը, մասնավորապես՝ նովելն ու պատմվածքը, հասան աննախադեպ զարգացման: Իր սեղմ ծավալով, մեկ իրադարձության կենտրոնացմամբ, գործողության շարժում, սրընթաց զարգացմամբ և անսպասելի հանգուցալուծմամբ նորավելայի ժանրը լիովին համապատասխանում էր ժամանակի իրականությունն իր բազմակերպ կողմերով, կտրուկ շրջադարձերով արտացոլելու գեղարվեստական ձգտմանը: Ընդ որում՝ արվեստագետի տեսադաշտից դուրս չէր մնում գրեթե ոչ մի երևույթ՝ իր գեղեցիկով ու տխրեղով, մանր դեպքերով ու թվացյալ աննշանի նշանավորությամբ:

«Մեծ պատահարները զիս անտարբեր կը թողուն, - խոստովանել է Նորավելայի իշխան Գրիգոր Զոհրապը, - բայց մանր դեպքերը՝ չնչին ուրիշներու

¹ Էդ. Զրբաշյան, Գեղագիտություն և գրականություն, Եր., 1983, էջ 304:

աչքին, լուրջ խորհրդածություններու նյութ են ինձի: Դասերը, որ կը քաղեմ անոնցմէ, վրդովիչ՝ պայմանադրական կարգ ու սարքի կուսակիցներուն, թանկագին են ինձի համար...»¹:

Սա էր արևմտահայ ութսունականների (Արփիար և Տիգրան Արփիարյաններ, Լևոն Բաշալյան, Տիգրան Կամսարական, Արշակ Չոպանյան, Երուխան, Գրիգոր Զոհրապ, Զապել Եսայան և այլք) առաջադրած «կյանքն ինչպես որ է» իրականության արտացոլման սկզբունքը:

«Ստեղծագործության կենտրոնացման շրջանակը, - հատկանշում է Գր. Հակոբյանը, - սևեռվեց անհատի հոգեբանության «անկախ և ինքնավար» պատմությանը: Նորավեպն ընդգրկեց արևմտահայ իրականության ամբողջ խորապատկերը, «փոքր մարդու» տիեզերքը»²:

Այս դիտանկյունից առանձնանում է Երուխանը (Երվանդ Սրմաքեշխանյանը), առանձնանում է հենց իսկ արևմտահայ ութսունականներից՝ տարբերության իր այն առավելությամբ, որ ինքը քննում է մարդու հոգեբանությունը՝ անկախ դասակարգային պատկանելությունից: Երուխանը անկողմնապահ կերպով ներկայացնում է իրողությունը՝ անտեսանելիորեն թափանցելով նկարագրվող երևույթի էության մեջ, մարդկային հոգու գաղտնախորշերի մեջ. «Գորոզը նորավեպերի զարգացումը տանում է մարդկային հոգեբանության ներքին ծալքերի բացահայտմամբ, որ մինչ այդ անհայտ էր թվում, և դրանով ցույց տալիս, թե ինչպիսի բարդություններ ունի մարդկային ներաշխարհը: Այդտեղ տեղի են ունենում այնպիսի կրքերի և զգացումների ներքին պայթյուններ, որոնք բերում են ավերածություն կամ կործանում»³:

Խորն են սիրո հոգեբանության ոլորտում Երուխանի արած ընդհանրացումները: Նրա հերոսները՝ «ծովի ալիքների մեծաժխոր փշրումներին» ունկնդիր ձկնորս, թե նավավար, «թակույկին վրա կորաքամակ, լաթերի աղտը հանելու մոլեգնությամբ մը համակված» լվացարարուհի, թե վաճառականի գեղանի դուստր, հերկուլեյան կերպարանքով հաճի Մանուել, թե պարզապես պչրուհի օրիորդ Ատրինե, առանձին անհատականություններ լինելով, սիրո ապրումի տիրություն ունեն ընդհանրություն. եթե նրանց մեջ կա սիրո ապրումը, ապա այն կա բուռն կերպով, նրան տրվում են անմնացորդ նվիրումով ու սևեռված բանականությամբ, երբ նույնիսկ դա լինում է չգիտակցված:

Սերը նրանց համար ինչ-որ թեթև, մակերեսային զգացում չէ, այլ նրանց կյանքի առանցքն ու իմաստը: Ահա թե ինչու երբ հայտնվում են փակուղու առջև, երբ վտանգվում է սիրեցյալի կյանքը (ինչպես «Հյուծախտավորը» նովելի Աննիկի կամ «Մեռելներուն ջրկիրը» նորավեպի Բերուզի կյանքը), նրանք դիմում են

¹ Գր. Զոհրապ, ԵԺ, հ. 2, Եր., 1962, էջ 389-390:

² Գր. Հակոբյան, Արևմտահայ նորավեպը, Եր., 1996, էջ 60:

³ Լ. Ստեփանյան, Երուխան: Կյանքը և ստեղծագործությունը, Եր., 2007, էջ 73:

անգամ իրե՛նց համար անսպասելի, իրենց վարքագծին հակացուցող արարքների, օրինակ՝ գողության, որպեսզի փրկեն իրենց սիրո օբյեկտին, որ միաժամանակ և իրենց փրկությունն է՝ հոգեբանական իմաստով: Չհաջողվելու դեպքում (որ բնորոշ է Երուխանի հերոսներին) աղետն անխուսափելի է, որովհետև սիրեցյալի կորստից հետո էլ նրանք շարունակում են սիրել նույն, անգամ ավելի բուռն սիրով իրենց կորցրածին, որին, սակայն, իրենք չեն կորցնում՝ իրենց խեղաթյուրված գիտակցության մեջ նրան կորցրած չհամարելով: Հենց այստեղ է խելագարությունը, որը գրեթե անբաժան է Երուխանի հերոսների կիսատ մնացած, ուրեմն և անանց սիրո հոգեբանական դրսևորումներից:

Սիրուց խելագարություն անցումը Երուխանի տարբեր նովելներում տարբեր կերպ է դրսևորվում, բայց կարելի է նկատել այն ընդհանուր օրինաչափությունը, որ այդ խելագարությունն առաջ է գալիս սիրո մեջ կտրուկ շրջադարձի (մեծ մասամբ՝ մահվան) դեպքում, և այն առաջ է գալիս սիրո խորին նվիրվածությունից: Այս իմաստով բնորոշ են հատկապես Երուխանի «Հաճի Մանուել», «Ծովափին աղջիկը», «Մեռելներուն ջրկիրը», «Կժպտի» նովելները:

Հաճի Մանուելի վարքագծում չկա սովորական իմաստով խելագարության դրսևորում. նա բացահայտ, մարդկանց ի տես, անհեթեթ արարքների չի դիմում, Ինչպես «Թաշկինակը» նորավեպի հերոսուհին՝ Ատրինեն, կամ «Մեռելներուն ջրկիրը» նովելի Թումիկը: Հաճի Մանուելի դեպքում խնդիրն այլ է. այդ վաթսուևամյա ածղահայի «վիթխարի պատյանին տակ հեզ և բարի սիրտ մը կբաբխեր, և անձնվիրության անհուն գանձեր լռիկ կհանգչեին անոր զրահանման կուրծքին ներքև»: Սակայն կա ինչ-որ խորհրդավորություն, ինչ-որ գաղտնիք, որն առնչվում է այդ առատաշնորհ մարդու միակ թերության՝ անհագորեն խմելու հակվածության պատճառի հետ. «Անպատճառ բան մը ունենալու էր այդ մարդը: Այո, խմելու այդ կատաղի մոլությունն, որ վերջապես պիտի կործաներ զայն, պատճառե մը հառաջ կուգար անշուշտ: Ի՞նչ էր»¹:

Այդ մարդն իր հոգու տիեզերքում էր պարփակել իր վիշտն ու ցավը, երեսուն տարի ի վեր ապրում էր իր վշտի հետ, իր վշտով և ասես իր վշտի համար, որովհետև նրանից դուրս իր գոյությունն անհեթեթ էր համարում: Իր անխախտ ուխտատեղին՝ սրբավայրը, իր Վարդուկի գերեզմանն էր, որի վրա, իր տիտան հասակը կքելով, ամեն առավոտ կանուխ ծնրադրում-աղոթում էր, իսկ գիշերն իր վշտի հետ խմում ու խմում: Սա իր սահմանած միակ կերպն էր ապրելու, և անխախտ էր ապրելու այդ կերպը, որն ամփոփվում էր իր միակ Վարդուկին սիրելու, նրա գերեզմանը պաշտելու մեջ: Այստեղ է Հաճի Մանուելի խենթությունը. «Ա՛խ, Վարդուհի... Հոգիիս է՛ն խոշոր փարչան... Ասկե էռսուն

¹ Երուխան, Երկեր, Եր., 1981, էջ 417:

տարի առաջ... Վարդուհին կար... հրեշտակի պես ախճիկ մը... Ան ինծի կսիրեր...
Էս անիկա խենթի պես կսիրեի... իրար պիտի առնեինք... Ասված չուզեց... մեռա՛վ
Վարդուկս... մեռա՛վ ճիւղերիս քեռշեն... ամա սիրտս քաշեց փրցուց, հետը
տարավ... Էս ալ պիտի մեռնեի ամա, ասված չուզեց... Էս ապրեցա, քի՛ ... անոր
ձգած տերտը դեսելլի մը ընեմ ինծի, անով չարչարվիմ... անով սատկիմ... Հիմակ
ամեն առտու Վարդուկիս կերեզմանին վրա կերթամ... Էյեր մեկ առտու մը չերթամ
նե, կմեռնիմ»¹:

«Օովափին աղջիկը» նորավեպի հոգեբանական տիրույթում սիրո և խելագարության հետ անցնում է նրանց օժանդակող երրորդ բաղադրիչ՝ բնությունը, որն ասես փակագիծ լինի այդ երկուսի համար՝ բացող ու փակող: Նորավեպի սյուժետային առանցքում «ծովափին անվեհեր ու կտրիճ ձկնորս» Հովակի ու «անոր չափ խիզախ, մթաշող աչվըներով» Վարդուկի հովվերգական թվացող սերն է: Օովը, լայն իմաստով՝ բնությունը, օժանդակել է այդ սիրո ծննդին. «Համբույրը, զոր ծփանուտ ջուրերն հարածամ կուգային տալ ափունքին, մեղմ մրմունջը, որ առտվընե մինչև իրիկուն և մինչև արշալույս կթրթռար ծովեզրին երկայնությամբը, անսահման հեռանկարներուն ու այլազան հորիզոններուն անջինջ ներկայությունը, սիրո անմերժելի թելադրիչներն էին արդեն, որոնցմե անգիտակցաբար կազդվեին Հովակ ու Վարդուկ» (էջ 439):

Այստեղ հետաքրքրական է սիրողի հոգեբանության վերաբերյալ Երուխանի արած դիտարկումը՝ սիրո մեջ սիրողի կանգ չառնող ձգտումը «ամենա»-ին, իր սիրեցյալին ինչ-որ բան ապացուցելու, իր առավելություններով նրան դյուրեւելու ջանքը:

Հատկանշական է, որ Հովակին մահվան հանգեցրեց այդ ձգտումը, որը պիտի իրացվեր ծովի (բնության) միջոցով: Եվ նրա անկենդան մարմնի ամփոփատեղին էլ դարձավ նույն այդ ծովը:

Իսկ Վարդուկը... Խելագարվում է Վարդուկը, և ինչպե՞ս է դա արտահայտվում Վարդուկի դեպքում: Ասես խոր տրամաբանություն ու մտասնեռում կա Վարդուկի խելագարության մեջ. պատասխան պահանջել իր Հովակին տարած նույն ծովից, ավելի ստույգ՝ նրա շնչավոր էակներից՝ ձկներից, թե ուր է Հովակը, և չստանալով պատասխան՝ անշնչացնել նրանց ու ոտքով թափել իրենց նախաստեղծի՝ ծովի գիրկը:

«Մեռելներուն ջրկիրը» նովելում ձկնորս Թումիկի խելագարությունն արտահայտվում է իր սիրեցյալի՝ Բերուզի վերջին ցանկությունը կատարելու մեջ. «Բերուզս ջուր կուզեր կոր, աման ձգեցեք, որ ջուր մը տամ, վերջին ջուր մը, ամա՛ն, ձգեցե՛ք... Խմե՛, անուշս, խմե՛, չըսես, որ վերջին ջուրդ չտվի...» (էջ 527):

¹ Երուխան, Երկեր, Եր., 1981, էջ 419-420 (Երուխանի Երկերից մյուս մեջբերումների հղումները կտրվեն տեղում՝ փակագծի մեջ, կնշվի միայն էջը):

«Կժպտի» նորավեպում էլ հոգեխառնություն երևույթը երկկողմանի դրսևորում է ունենում՝ ընդգրկելով և՛ երիտասարդին, և՛ ջահել կնոջը: Ի տարբերություն երիտասարդի, որն ուղարկվում է հոգեբուժարան, ջահել կինը՝ «ղիմացն էլնող երիտասարդն իր սիրահարը կարծելով, քմծիծաղով մը կնայի անոր երեսը: ... Օրը տասն երիտասարդ տեսնե՝ տասին ալ կժպտի» (էջ 590-591):

«Մարդկային անծայրածիր ողբերգության միջից Երուխանի հերոսների համար սերը բարձրանում է արևի նման, - բնութագրել է Ստ. Թովչյանը: - Ջերմացնելով ու փրկելով մարդուն միայնության սպանող զգացումից՝ սերը ասես հավերժությունից եկած աշխարհի անխախտ մի նախասկիզբ, իրականության դժնդակ քառսի մեջ հնչում է որպես կորսված հարմոնիայի մեղեդի»¹:

Խորն ու բազմաշերտ են սիրո հոգեբանական դրսևորումները Երուխանի նովելներում այնպես, ինչպես կյանքում: Առանձին անհատականություններ են նրանք, այդուհանդերձ սիրո տիրույթում Երուխանի հերոսները, անկախ իրենց դասային պատկանելությունից, հանգամանքների դասավորությունից, թե վարքագծային տարբերություններից, ընդհանուր են այն ամենով, ինչը բնորոշ է առհասարակ մարդ տեսակին, նրա մարդկային էությանն ու հոգեբանությանը:

Բանալի բառեր - Նովելի ժանր, սիրո հոգեբանություն, մարդկային ներաշխարհ, խորին նվիրվածություն, սեր և խելագարություն, բնություն:

Հասմիկ Վանյան, Սիրո հոգեբանական դրսևորումները Երուխանի նովելներում - Հոդվածում դիտարկվել են սիրո հոգեբանական դրսևորումները Երուխանի (Երվանդ Սրմաքեշխանյան) մի քանի նորավեպերում («Հաճի Մանուել», «Ծովափին աղջիկը», «Մեռելներուն ջրկիրը», «Կժպտի» և այլն): Խորն են սիրո հոգեբանության ոլորտում Երուխանի արած ընդհանրացումները: Նրա հերոսները՝ ձկնորս, թե նավավար, լվացարարուհի, թե վաճառականի դուստր, Հերկուլեսի կերպարանքով հաճի Մանուել, թե պչրուհի օրիորդ Ատրինե, առանձին անհատականություններ լինելով, սիրո ապրումի տիրույթում ունեն ընդհանրություն. եթե նրանց մեջ կա սիրո զգացմունքը, ապա այն կա բուռն կերպով, նրան տրվում են անմնացորդ նվիրումով ու սևեռված բանականությամբ: Սերը նրանց համար ինչ-որ թեթև, մակերեսային զգացում չէ, այլ նրանց կյանքի առանցքն ու իմաստը: Երուխանի հերոսների կիսատ մնացած, ուրեմն և անանց սիրուց գրեթե անբաժան է խելագարությունը, որը նրա տարբեր նովելներում տարբեր կերպ է դրսևորվում:

Асмик Ванян, Психологические проявления любви в новеллах Ерухана - В статье рассматривались психологические проявления любви в некоторых новеллах Ерухана (Ерванд Срмакешханян): («Хаджи Мануель», «Девушка с побережья», «Водонос для мертвых», «Улыбнется» и др.). Очень глубоки обобщения, сделанные

¹ Ստ. Թովչյան, Անհունի անդրադարձը, Եր., 1982, էջ 14:

Еруханом в сфере психологии любви. Его герои: рыбак или лодочник, прачка или купеческая дочь, хаджи Мануель в образе Геркулеса или барышня-кокетка Атрине, будучи отдельными личностями, имеют общность в сфере любовных переживаний: если у них есть чувство любви, то оно проявляется бурным образом, ему отдаются полностью и с включенным разумом. Для них любовь не легкое, поверхностное чувство, а стержень и смысл их жизни. От незаконченной, а значит, непреходящей любви почти неотделимо безумие, которое в его разных новеллах проявляется по-своему.

Hasmik Vanyan, The Psychological Manifestations of Love in Yerukhan's Short Stories - In the present article psychological manifestations of love have been observed in several short stories by Yerukhan (Yervand Srmakeshkhanyan), namely "Hachi Manuel", "The Girl on the Seashore", "The Deads' Water-carrier", "Will Smile", etc. The generalizations in the sphere of love psychology done by Yerukhan are very deep. His characters - a fisherman, a captain, a laundress, a salesman's daughter, Hachi Manuel appearing as Hercules, maiden Atrine, being different personalities have generality in the sphere of love: in case they have the feeling of love, it is very tempestuous, they give themselves up to it with everlasting devotion and importune reason. For them love is not a light and superficial feeling, it is the axis and meaning of their lives. Unfinished and thus endless love of Yerukhan's characters is almost always inseparable from madness which is manifested differently in his different short stories.

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ԱՆՑՈՒՄԸ
ՍՓՑՈՒՌՔՅԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ
ՏԱԹԵՎԻԿ ԱՇՁՅԱՆ

Մփյուռքահայ բանաստեղծության զարգացման օրինաչափություններն ի սկզբանե առանձնահատուկ բնույթ ունեին: Լինելով արևմտահայ քերթության ժառանգորդը և ձգտելով վերականգնել եղեռնով ընդհատված բանաստեղծական թռիչքների շարունակականությունը՝ սփյուռքահայ բանաստեղծությունը կարճ ժա-մանակ անց առաջադրեց իր խնդիրները և իրականությամբ պայմանավորված՝ նոր գեղագիտական առաջադրույթներ սկսեց մշակել: Մփյուռքյան հայտնի տաղնապներն իրենց կնիքը դրեցին թե՛ նոր ասպարեզ մտած, թե՛ արդեն ճանապարհ անցած բանաստեղծների ստեղծագործությունների թեմատիկ-գաղափարական հարցադրում-ների ու պատկերային իրացումների վրա՝ ստիպելով վերանայել բազմաթիվ հարցեր առաջնայնության տեսանկյունից:

«Նախկին արևմտահայը այժմ ֆրանսահայ էր, լիբանանահայ, ամերիկահայ, սփյուռքահայ և պարտադրված էր ապրել նոր ապրելավայրի օրենքներով,- նկատում է Վազգեն Գաբրիելյանը:- ...Գրականության հերոս պիտի դառնար իր գոյատևության համար տքնող, անկամորեն ուժացող կամ ուժացման վտանգի դեմ պայքարող, կորցրած հայրենի տան կարոտից տառապող ու վերադարձի հույսը փայփայող տա-րագիր հայը՝ իր ճակատագրի մասին մտատանջող խոհերով»¹:

Այս առումով Սուրեն Դանիելյանը վերջերս շրջանառեց մի հետաքրքիր ձևակերպում, որն արժանի է ուշադրության և թերևս նաև քննարկումների: ««Մփիւռ-քահայ գրականութիւն» հասկացութիւնը,- գրում է նա,- ըստ էութեան, «արեւմտահայ նորագոյն գրականութիւն» բնորոշումի հոմանիշն է: ...Մփիւռքը պարտադրուած գոյավիճակ է, իսկ «այստեղ»յայտնուած, ստեղծագործող, լեզուն պահպանած արձակագիրների ու բանաստեղծների մեծագոյն մասը հենց արեւմտահայ նորագոյն շրջանի գրական ներկայացուցիչներ են»²:

Ուշագրավ են Ալբերտ Կոստանյանի դատողությունները վերոհիշյալ երևույթի մասին. Կոստան Զարյանի ստեղծագործությունը քննելիս նա ընդհանրացնում է մտավորականների՝ եղեռնով ընդհատված ստեղծագործական կյանքի համայնապատկերը ու նրանում տեղ գտած նոր որակները, Կոստան Զարյանի նոր առաջնորդությամբ «Բարձրավանքը» հիմնադրած խումբը այն միտքն էր փայփայում, թե շարունակելու է արևմտահայ

¹ Գաբրիելյան Վ., Մփյուռքահայ գրականություն, Եր., ԵՊՀ հրատ., 2008, էջ 13, 14:

² Դանիելյան Ս., Միջուկիտրոհումը: Մփիւռքահայ գրականութեան պատմութիւն: Գիրք 1. Ներածութիւն, Եր. Զանգակ-97, 2011, էջ 8:

գրական առաջընթացը, բայց սթափ գիտակցությունը շուտ վրա հասավ և հասկանալի դարձավ, որ այլևս արևմտահայ գրականությունը կանգնած է սփյուռքի անստուգության առջև»¹:

Արևմտահայ ավանդույթներից նորագույն փուլի բանաստեղծության անցման յուրահատկությունները հասկանալու իմաստով բնութագրական է Վահան Թեքեյանի օրինակը: Եվ առաջին հերթին այն առումով, որ վերջինս յուրօրինակ ավանդույթ ապահովեց ոչ միայն իր բանաստեղծության ազդեցությամբ, այլև իր պոեզիայի զարգացման ընթացքի տրամաբանությամբ, որ շատերի մոտ պարզապես կրկնվեց: «Վ. Թեքեյանը կտակում է արևմտահայ բանաստեղծության յետագայ զարգացման կենսական հիմերը,- գրում է Սուրեն Դանիելյանը,- որի դրօշն այլևս գիտակցում է՝ իր ձեռքին է»²:

Բանաստեղծական ուղին մեկնարկելով արևմտահայ այնպիսի հսկաների կողքին, ինչպիսիք են Սիամանթոն, Վարուժանը, Ռուբեն Սևակն ու Մեծարենցը՝ Թեքեյանը ողբերգական հանգամանքների բերումով դարձավ յուրօրինակ կամուրջ արևմտահայ և սփյուռքահայ բանաստեղծների միջև: Եվ եթե նրա «Կէս գիշերէն մինչեւ արշալոյս» (1919) ժողովածուն, ինչպես Արծրուն Ավագյանն է նշում, «նախահեղեոյան, եղեոյան ու ետեղեոյան հայ կյանքի ապրումների ու տրամադրությունների ուշագրավ մի խտացում է և իրենով բնութագրում է մի ողջ սերնդի ունեցած ոգեղեն որոնումները»³, ապա դրան հաջորդած ժողովածուները («Մէր», 1933, «Հայերգութիւն», 1943, «Տաղարան», 1944), հատկապես «Հայերգութիւն»-ը ամբողջովին սփյուռքյան իրողությունների բանաստեղծականացում է, որ ներառում է ամենատարբեր զգացողություններ: «...Ո՛չ մէկ բանաստեղծ, մեր հին ու նոր ամբողջ գրականութեան մէջ, տուած է գործ մը այնքան համապարփակ ու լրիւ, որքան ձերինն է,-գրել է Վահե-Վահյանը Թեքեյանին ուղղված 4 Յունուար 1944 թվակիր նամակում՝ նկատի ունենալով «Հայերգութիւն» ժողովածուն: - Եւ հունձքին այս նկարագիրը արդիւնք է ո՛չ միայն «ազնիւ սերմին», այլ՝ գուրգուրացող մատներով խղճամիտ պարտիզպանին լայն ժամանակի մը վրայ երկարող յարատեւ ու ներշնչեալ ջանքերուն»⁴:

Ու որքան էլ Հակոբ Օշականը պնդեր, թե «**Հայերգութիւնը** Սփիւռքի վերել անարձագանգ, անկշիռ վկայութիւն»⁵ է, այնուամենայնիվ, առավել ստույգ,

¹ ԶարյանԿ., Երկեր, «Սովետականգրող» հրատ., Եր.-1985, էջ 6:

² Դանիելյան Ս., Միջուկի տրոհումը: Սփյուռքահայ գրականութեան պատմութիւն: Գիրք 1. Ներածութիւն, Եր., «Զանգակ-97», 2011, էջ 133:

³ Ավագյան Ա., Վահան Թեքեյանի «Կեսգիշերէն մինչև արշալոյս» ժողովածուն, տե՛ս «Վահան Թեքեյանի 125-ամյակին նվիրված գիտաժողովի զեկուցումներ» գրքում, Եր., 2004, էջ 68:

⁴ Վահե - Վահեան, Բանաստեղծին սիրտը, նամակներ, կազմեց, խմբագրեց եւ ծանոթագրեց Արամ Սեփեթեան, Պէյրուս, 2012, էջ 76:

⁵ Օշական Յ., Համապատկեր արևմտահայ գրականութեան, հատոր 9, Արուեստագէտ սերունդ, Անթիլիաս, 1980, էջ 468:

հավասարակշռված ու ըստ էության է Շահան Շահնուրի կարծիքը. «Իր **Հայերգությունը** բաց վերք մըն է,- գրում է նա,- բայց նաև գրավականը՝ դողդոջուն և համառ հավատքի: Հոն կա պրկված վիճակ մը, համոզումով և հույսով հորդուն, թե մոտ է փրկությունը ծանուցանող հրովարտակր: Թեքեյան կվկայե, թե Հայը պիտի հասնի իր իտեալին, հանգրվանե հանգրվան երթալով, իյնալով և ելլելով, միշտ հարվածյալ և միշտ հարվածող»:¹

Շահնուրյան այս ճշմարիտ ձևակերպումը կարելի է տալ Սփյուռքում հատկապես 1920-30-ական թվականներին ստեղծված քնարերգության ամբողջ նկարագրին: Պետք է նշել, սակայն, որ ինչքան էլ Թեքեյանի ազդեցությունը մեծ էր այդ շրջանի բանաստեղծության վրա, ճիշտ չէր լինի գրական ընթացքի օրինաչափությունները միայն այդ հանգամանքով պայմանավորել: Կար ընդհանուր մտահոգությունների ու տագնապների դաշտ, որը հարազատ էր դարձնում ամենատարբեր մտածողությունների տեր հեղինակների:

Ընդհանրապես սփյուռքահայ բանաստեղծության վրա սկզբնավորման շրջանում շատ մեծ էր արևմտահայ դասական և «վերապրող»բանաստեղծների ազդեցությունը, սակայն հետզհետե ավելի ընդգծվեցին հենց սփյուռքյան պայմաններում ասպարեզ իջնող երիտասարդ ուժերը: Իրավացի է այն նկատումը, թե «Սփյուռքահայ բանաստեղծության դիմագիծը ստեղծում ու ամբողջացնում են 1920-30-ականին գրական ասպարեզ իջած նոր բանաստեղծները»:²

Պետք է նշել, սակայն, որ սփյուռքահայ գրականության հայտնի տագնապներ ասելով՝ նախևառաջ ընդգծվում էին խորհրդային գրականագիտության կողմից գնահատված հայրենասիրական դրսևորումներն ու որակները: Այս առիթով Գրիգոր Հակոբյանն իր «Դարձ» հոդվածում գրում է. «Գաղտնիք չէ, որ խորհրդային շրջանում Սփյուռքի գրականության չափանիշը միշտ չէ, որ արվեստի հրամայականն էր, բազմաթիվ հեղինակներ ու գրքեր էին տպագրվում արտագեղարվեստական պատճառներով ու դեռ փորձում էին հրամցնել իբրև ներկայանալի գրականություն, արտերկրի մշակույթի այցեքարտ: Միտալները տարբեր դահլիճներում փառաբանվում էին, իսկ Հակոբ Օշականն ու Նիկողոս Սարաֆյանը, Շավարշ Նարդունին ու Կոստան Զարյանը, Արամ Հայկազն ու Էդուարդ Պոյաճյանը, Նշան Պեշիկթաշյանը, Ղևոնդ Մելոյանը, Կարապետ Փոլատյանը, Ահարոն Տատուրյանը և շատ շատերը արգելված էին, մոռացված և որ ամենաահավորն ու նողկալին է, ընթերցողի փոխարեն որոշել էին, որ կարդալու, հրատարակելու չեն»:³

Այս դիտարկումից տարիներ անց պատկերը փոխվել է իհարկե, բայց էլի շատ հեղինակներ և նրանց արժեքավոր գործեր հայաստանյան ընթերցողին

¹ Շահան Շահնուր, Երկեր 2 գրքով, գիրք 2, «Սովետականգրող», Եր., 1985, էջ 202:

² Գաբրիելյան Վ., Սփյուռքահայգրականություն, Եր., ԵՊՀ հրատ., 2008, էջ 99:

³ Հակոբյան Գ., Հոդվածներ և ուսումնասիրություններ, Ս.Էջմիածին, 2007, էջ 492:

անծանոթ են մնում: Այս երևույթն ունի իր տարամաբանական պատճառները. նախ լեզվի խնդիրը, որ դեռևս Վահան Թեքեյանն էր բարձրաձայնում իր հայտնի «Լեզուն, որով գրեցի» բանաստեղծության մեջ, և ապա նաև տեխնիկական հարցերը, որոնք արհեստական խոչընդոտներ են առաջացնում հետազոտողի համար: Չէ որ արևմտահայ և նրան տրամաբանորեն շարունակող սփյուռքահայ գրականության մի սովոր մասը մամուլի էջերում է, ցիրուցան եղած, և հաճախ դժվար է լինում ձեռք բերել այդ գրանյութը:

Հարկ է նշել նաև, որ սփյուռքահայ գրականության նախկին կադապարային բանաձևումները, որ պայմանականորեն այն բաժանել էին «կարոտի» և «նահանջի» գրականությունների, այժմ կորցրել են իրենց արդիականությունը, քանի որ նեղացնում են գրողի ներառած խնդիրների և հետաքրքրությունների շրջանակը:

Հետևաբար պահանջ է առաջանում սփյուռքահայ գրականությունը նախկին սխեմաների փոխարեն քննել նոր հարցադրումների տեսանկյունից: Այդ գրականության արժեքայնության լավագույն չափանիշը ազգային խնդիրների բարդությո՞ւրը հաղթահարած ու համաշխարհային խնդիրների առջև դարպասները բացած, համաշխարհային գրականության լավագույն ավանդույթներին ասելիք հավելող և արևմտահայ գրագետների հույսերն արդարացնող Սփյուռքի գրական նոր որակներն են:

Այժմ սփյուռքահայ գրականության ուսումնասիրությունը ենթադրում է նաև արևմտաեվրոպական գրականության իմացաբանական հենք, որովհետև Հակոբ Օշականը, Շահան Շահնուրը, Կոստան Զարյանը, Վազգեն Շուշանյանը, Զարեհ Որբունին այլևս չեն կարող քննվել նախկին ձևաչափում, հայ գրականության իմացության սահմաններում միայն: Այդ գրողների գործերի ներփակ քննությունը սահմանափակում է նրանց աշխարհայացքի շրջանակը, և առաջ է գալիս համեմատական քննության պահանջարկ: Ասվածը հիմնավորվում է այն հանգամանքով նաև, որ արևմտահայ ապա նաև սփյուռքահայ գրականության մեջ առավելապես գերակայում են արևմտաեվրոպական, մասնավորապես ֆրանսիական գրականության հարուստ ավանդույթներն ու ազդեցությունները: Այս իրողությունը նկատում է Սուրեն Դանիելյանը. «Սփյուռքահայ և օտարագիր գրական ընթացքները 20-րդ դարում լաւ հնարաւորութիւն ընձեռեցին հայ գրականութեան ընկերային մտածողութիւնը շրջել նոր հուն, ճանաչողութեան նոր ոլորտներ, որոնց մէջ ամէնից կենսականը հայ ընդհանուր գրականութեան հիմնահարցերի փորձաքննութիւնն է համաշխարհային գրական համապատկերում: Նման տեսանկիւնով աշխատանքներ մեզանում այնքան էլ մշակուած չեն կարծես, եւ գրական հայեացքի գլխաւոր ուղղութիւնը մնացել է ներհայական պատուհանը»: Սփյուռքահայ գրականության ուսումնասիրողն ահա այս նոր լույսի ներքո թերևս պետք է քննի Շահան Շահնուրի, Հակոբ Օշականի, Զարեհ Որբունու և

այլոց գործերը՝ հաշվի առնելով արևմտահայ գրականության և եվրոպական գրականության աղերսների անհերքելի իրողությունը:

Բանալի բառեր - սփյուռքահայ գրականություն, սփյուռքյան տազնապներ, արևմտահայ գրողներ, թեմատիկ-գաղափարական հարցադրումներ, հայ գրականության ընդհանուր հիմնահարցեր, գեղագիտական առաջադրություններ:

Տաթևիկ Աշչյան, Արևմտահայ գրական որակների անցումը սփյուռքյան որակների - Սփյուռքահայ բանաստեղծության զարգացման օրինաչափություններն ի սկզբանե առանձնահատուկ բնույթ ունեին: Լինելով արևմտահայ քերթության ժառանգորդը և ձգտելով վերականգնել եղեռնով ընդհատված բանաստեղծական թռիչքների շարունակականությունը՝ սփյուռքահայ բանաստեղծությունը կարճ ժամանակ անց առաջադրեց իր խնդիրները և իրականությամբ պայմանավորված՝ նոր գեղագիտական առաջադրություններ սկսեց մշակել: Սփյուռքյան հայտնի տազնապներն իրենց կնիքը դրեցին թե՛ նոր ասպարեզ մտած, թե՛ արդեն ճանապարհ անցած բանաստեղծների ստեղծագործությունների թեմատիկ-գաղափարական հարցադրումների ու պատկերային իրացումների վրա՝ ստիպելով վերանայել բազմաթիվ հարցեր առաջնայնության տեսանկյունից:

Татевик Ашчян, Переход качеств западноармянской литературы в литературу диаспоры - С самого начала поэзия армянской диаспоры проявила особые закономерности развития. Являясь приемником западноармянской поэзии и пытаясь возобновить непрерывность поэтического полета, прерванное геноцидом, литература диаспоры за короткое время проявила свои проблемы и стала вырабатывать новые эстетические приоритеты связанные с реальностью. Известные тревоги диаспоры оставили свои следы на тематико-идейные вопросопоставления и на изобразительное восприятие произведений как новоиспеченных, так и прошедших путь писателей, заставляя пересмотреть ряд вопросов с точки зрения значимости.

Tatevik Ashchyan: Transition from Western Armenian literature qualities to Diaspora qualities - Initially, the nature of development patterns of the poetry of the Armenian Diaspora was too specific. Being the successor of the Western Armenia creation and striving to recover the rise of the poetry terminated by the Armenian Genocide, in a short while the poetry of the Armenian Diaspora promoted its key issues and started to develop new aesthetic suggestions and points conditioned by the reality. The well-known anxieties of the Armenian Diaspora left their trace on thematic-ideological inquiries and image demonstrations of creations of both new poets, as well as the famous ones forcing to review many issues from the priority point of view.

ՀՐԱՉՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆՆ ՌԻ 1960 - ԱԿԱՆՆԵՐԻ
ԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ
ՏԱԹԵՎԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

Սկսած 1950-ական թթ. կեսերից, պայմանավորված հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող մթնոլորտային փոփոխություններով, գրական զարգացումը մտավ առաջընթացի նոր հուն ու ծավալվեց գեղարվեստական մտածողության թարմացման, թեմատիկ շրջանակների ընդլայնման, նախորդ շրջանի գրականության << ավգյան ախոռների>> մաքրման ուղղություններով:

Շարժմանն ուղղություն էին տալիս միջին սերնդի բանաստեղծները՝ Պ. Սևակը, Հ. Սահյանը, Ս. Կապուտիկյանը, Վ. Դավթյանը, Գ. Էմինը, Հր. Հովհաննիսյանը, Մ. Մարգարյանը, ովքեր ոչ միայն իրենց ստեղծագործություններով, այլև տեսական – քննադատական հոդվածներով, ելույթներով ներկայացնում էին նոր ծրագրեր, մշակում նոր ժամանակների պոեզիայի տեսական- գեղագիտական հիմքերը, հանդես գալիս ուշագրավ դիտարկումներով:

Գ. Մահարին գրում էր, որ սկսած 1950-ականների կեսերից, գրական զարգացմանն ուղղություն էին տալիս միջին սերնդի ներկայացուցիչները. << Հենց միայն Պ. Սևակի ներկա բանաստեղծական բոյ – բուսաթին նայելիս բավական է համոզվել, թե ինչն է վերջին տասնամյակի բնորոշ գիծը. մինչև 1953-54 թթ. դժվարությամբ աճող այս բանաստեղծը բացվեց և հարստացրեց մեր բանաստեղծությունը նոր, թարմ գույներով, խորացավ և բյուրեղացավ Վ. Դավթյանը և իր <<Թնդրակեցիներով>> ու նոր գործերով դարձավ հիրավի մեր բանաստեղծության ամառային ամպրոպը, ամրացավ և խոր արմատներով կանգնեց Հ. Սահյանը՝ ծանր ու կառուցիկ>>:¹

Բավական բեղնավոր էր <<ձնհալի>> տարիների բանաստեղծական հունձքը. լույս տեսան Հ. Սահյանի <<Բարձունքի վրա>> (1955), Գ. Էմինի <<Որոնումներ>> (1955), Ս. Կապուտիկյանի <<Սրտաբաց զրույց>> (1955), Պ. Սևակի <<Նորից քեզ հետ>> (1957), Մ. Մարգարյանի <<Լուսաբաց>> (1957), Վ. Դավթյանի <<Լուսաբացը լեռներում>> (1958), Հր. Հովհաննիսյանի <<Հրաշալի այգեպան>> (1956) ժողովածուները: Սրանք <<ձնհալի>> առաջին ձնծաղիկներն էին, գրականության <<նոր հերթական երկունքի>> առաջին դրսևորումները , որոնք առիթ հանդիսացան աշխույժ քննարկումների ու բանավեճերի համար:

Գրական ընթացքը գտնվում էր սևեռուն ուշադրության կենտրոնում, երիտասարդ քննադատներ Է. Ջրբաշյանը, Ս. Աղաբաբյանը, Հ. Թամրազյանը, Ս. Արզումանյանը, Ա. Զաքարյանը, նախորդ շրջանի քննադատության

¹ Մահարի Գ., Անավարտ պատասխաններ, <<Սովետական գրականություն>>, 1969, N 2, էջ՝ 116:

պահպանողականությունն ու վախվորածությունը համարձակորեն հակադրում էին երիտասարդական որոնող միտքը՝ նոր օրերի պոեզիայում տեսնելով ինչպես տպավորիչ առաջընթաց, այնպես էլ թերություններ ու վրիպումներ, որոնց մասին բարձրաձայնում էին ոչ թե կանխակալությամբ, այլ դրանք վերացնելու ազնիվ շահախնդրությամբ»:¹

Առանձնացնելով պոեզիայի ավանդական ու նորորական թևերը՝ քննադատությունը Պ. Սևակին յուրահատուկ էր համարում <<առաջընթացի մետաֆորական հեռավոր վերաձևումը>>, Գ. Էմինի պոեզիայում առանձնացնում էր <<զննողական տարերքը, սովորական դեպքերի պատկերման արժեքի ըմբռնումը, մտքերի աֆորիզմային խորացումը, երևույթների մակերեսից նրանց խորքն անցնելու հարցասիրությունը>>, Հ. Սահյանի աշխարհզգացողությունը հենվում է <<ամեն օր նոր է թվում աշխարհը>> սկզբունքի վրա, Վ. Դավթյանի քնարին բնորոշ էր <<սովորական, առօրեական կենցաղից դուրս նետվելու հակումը>>, Հր. Հովհաննիսյանն <<այգու և այգեպանի հիանալի կապակցությամբ հայտնաբերում է մեր օրերի պատմության տարբեր դրվագները>>:²

<<Ոճական այս երկու սկզբունքները խաչավորվելով իրար ու հեռանալով իրարից՝ հավասարապես մասնակցում են պոեզիայի նոր որակի ձևավորմանը>>³- գրում է Ս. Աղաբաբյանը:

Պոեզիայի հարցերի շուրջ բանավեճերին ակտիվորեն մասնակցում էին նաև գրողները՝ արժեվորելով միմյանց ստեղծագործությունները, հանդես գալով հետաքրքիր դիտարկումներով ու հարցադրումներով, առաջադրելով նոր ծրագրեր:

Առաջնագծում Պ. Սևակն էր, ում պայքարը հեքիաթանաղլական, թոնրատնային, ջանգյուլումային պոեզիայի դեմ էր:

Վ. Դավթյանին մտառոգում էին թեմատիկ ընդգրկումների նեղ շրջանակները, Հ. Սահյանին՝ երիտասարդ բանաստեղծների՝ արմատներից կտրելու խնդիրը, Գ. Էմինին՝ <<քնարական համակրանքների>>, <<Մասուն-սմբուլիզմի>> դրսևորումները, ինչպես նախորդ, այնպես էլ երիտասարդ սերնդի մի շարք բանաստեղծների ստեղծագործություններում:⁴

¹ Գիլավյան Ս., Վ. Տերյանից Պ. Սևակ և մինչև մեր օրեր, Եևան, 2017, էջ՝ 69:

² Տես՝ Աղաբաբյան Ս., Ոգևորություն և վարպետություն, <<Գրական թերթ>>, 1959, N 52, Ճանապարհը շարունակվում է, <<Գրական թերթ>>, 1961, N 42, Ժամանակը և պոեզիան, <<Գրական թերթ>>, 1965, N 1965, N 10, Արզումանյան Ս., Պոեզիայի ժամանակագրական պայթույթ, <<Գրական թերթ>>, 1959, N 10, Հեռուների ու բարձունքների երազանքով, <<Սովետական գրականություն>>, 1961, N 3, Գաբրիելյան Վ., Քնարական հերոսը և արդիականությունը, <<Գրական թերթ>>, 1961, N 12, Թամրազյան Հ., Մեծ բովանդակության, բաժր արվեստի համար, <<Սովետական գրականություն և արվեստ>>, 1954, N 4, Սարինյան Ս., Պոեզիայի մեծ բարդության համար, <<Գրական թերթ>>, 1964, N 16:

³ Աղաբաբյան Ս., Պոեզիան և ժամանակը, <<Գրական թերթ>>, 1965, N 8, 10.

⁴ Տես՝ Դավթյան Վ., Զրույց մեր պոեզիայի մասին, <<Գրական թերթ>>, 1958, N 29, Ժամանակակից պոեզիան և ռեալիզմի նախահիմքերը, <<Գրական թերթ>>, 1965, N 50, Էմին Գ., Ստորումներ պոեզիայի ճամփին, <<Սովետական գրականություն>>, 1965, N 1, Սահյան Հ., Մեծ պոեզիայի համար, <<Գրական թերթ>>, 1958, N 37, Տողը, բառը, տառը, <<Գրական թերթ>>, 1969, N 13, Սևակ Պ., Ազգային

Բանաստեղծների առաջնահերթ խնդիրը անհատի պաշտամունքի տարիներից ժառանգություն մնացած բարոյությունների՝ կասկածամտության, վախվորածության հաղթահարումն էր: Ճիշտ է, ժամանակները փոխվել են, բայց շատերն այդ փոփոխությունները ժամանակավոր էին համարում ու սպասում էին <<հին ու լավ օրերի>> վերադարձին:

1960-ականների պոեզիան քննադատության կողմից բնութագրվում էր առաջին հերթին որպես մարդերգություն. իր բանաստեղծություններում Հ. Սահյանը մարդուն տանում էր դեպի լեռներն ու ձորերը և փորձում վերականգնել մարդու և բնության խաթարված կապերը, Պ. Սևակը մարդուն ներկայացնում էր ավիի մեջ ու տեսանելի դարձնում բոլոր կողմերից, Վ. Դավթյանն ու Հր. Հովհաննիսյանն երգում են արարման ոգին ու աշխատանքի հիմնը>>:¹

Պոեզիայի զարգացումը մտնում էր նոր՝ բնականոն հուն. <<Ժամանակն իր բոլոր չափումներով, իրականությունն իր բարդ ու բազմազան դրսևորումներով, մարդը ժամանակի ու այդ իրականության մեջ, նրա ապրումների հակասական , հաճախ ողբերգական աշխարհը,- ահա գեղարվեստական բեղմնավոր որոնումների այն տարածքները, որոնք հերկվում էին լայնքով ու խորքով, լուրջ նախաշրջաններ ստեղծում գրական շարժման հետագա զարգացման համար>>:²

Գրական զարգացման այս ընդհանուր համապատկերում առանձնանում էր Հր. Հովհաննիսյանը:

1970 թվականի <<Ավանգարդ>> թերթին տված հարցազրույցում նա այսպես է ներկայացնում բանաստեղծության ծնունդը. << Ծնվում է երգով, նույնիսկ՝ շատ երգով խմորումից հետո, դժվարությամբ է ստեղծվում բանաստեղծության նյութը, նրա էությունը: Բանաստեղծն իր օրերի , երբեմն՝ ամիսների ապրած տպավորություններից, մտքերից, հույզերից, հոգեկան և գիտակցական ռեակցիաներից է ձևավորում բանաստեղծության նյութը, որ ավելի սուր, ամբողջական է արտահայտում իր վիճակը: Մի խոսքով՝ դժվար է գտնել ասելիքը, գրելիքը համեմատաբար հեշտ է>>:³

Քննադատությունը Հր. Հովհաննիսյանի համար ամենաբնորոշը համարում էր ժամանակի սրված զգացողությունը, ձեռքը ժամանակի զարկերակին պահելու, նրա տրոփյունն զգալու ընդգծված յուրահատկությունը: Դա կարելի է տեսնել դեռևս 1940-ին հրատարակած <<Իմ կյանքի երգը>> առաջին ժողովածուում, որտեղ գետեղված բանաստեղծությունները, ճիշտ է, դեռևս նկարագրական են, որոշակի ազդեցությունների արդյունք, սակայն

սնապարծություն և ազգային արժանապատվություն , երկ-ժող. 6 հատորով, հ. 3 , Երևան, 1973, <<Հանուն և ընդդեմ ռեալիզմի նախահիմքերի>> (նույն տեղում) և այլն:

¹ Գիլավյան Մ., Ժամանակը և պոեզիան, Երևան, <<Հայաստան>> հրտ., 1996, էջ՝ 39:

² Նույն տեղում, էջ՝ 202:

³ <<Ավանգարդ>>, 1970, 25 հունվարի:

արծածում են բանաստեղծի միտումները , խորքային ներթափանցումներով իր զգացմունքներն արտահայտելու ձգտումները , որոնք արդեն ակնառու կերպով դրսևորվեցին <<ձնհալի>> շրջանում ու հետո գրված բանաստեղծություններում: Այդ բանաստեղծությունները Հր. Հովհաննիսյանի ապրած կյանքի ու զգացմունքների ազնիվ արտացոլումն են, ավելին՝ այդ բանաստեղծություններով կարելի է վերականգնել մի ամբողջ սերնդի կենսագրությունը, բարոյահոգեբանական նկարագիրը:

<<Հր. Հովհաննիսյանի պոեզիան առաջընթացի բնական հուն մտավ 1956-ին հրատարակված <<Հրաշալի այգեպան>> ժողովածուով, որը միանգամայն նորորական եղավ 50-ական թվերի հայ պոեզիայի գեղարվեստական որոնումների ճանապարհին>>¹ - գրում է Ս. Մարինյանը:

Նորարարությունը դրսևորվում է ժամանակի <<գրական միտումներով և դասական ավանդույթների գեղարվեստական փորձով>>, դրանց համադրմամբ: Բանաստեղծի <<ինքնագիտակցության արթնացումները ներշնչվում էին Չաբենցի, Մահարու ներկայությամբ>>, իսկ երբ << վրա է հասնում տեղատվությունը և հոգևոր կեցությունից օգտվում են սիրո, բնության, թախծի ու կարոտի , երազի ու հույսի մարդկային արժեքները, գրական կյանքը հանձնվում է <<քաղաքական աշուղների>> աղքատիկ հանգերի, երկարաշունչ ներբողների ձանձրությին>>: ² Հրաչյա Հովհաննիսյանը <<այդ ծանր մղձավանջային առեղծվածին դիմակայելու ապաստան է գտնում>> հայ և համաշխարհային դասականների երկերում և երկար ժամանակ լռությունից հետո է միայն 1964 թվականին հրատարակում <<Ծովի լռությունը>>, <<Վայրի վարդ>> (1968) , <<Սուրբ դափնու վրա>> (1970) , <<Անմահություն>> (1970) ժողովածուները:

Տեղատվության այդ շրջանում բանաստեղծի մոտ մշակվում են անհատ-հասարակություն, անհատ- բնություն, անհատ- ժամանակ հարաբերությունների արժևորման նոր մոտեցումներ, աշխարհընկալման նոր եղանակներ ու մեթոդներ: Վերոնշյալ ու հետագա շրջանում հրատարակած ժողովածուներում բանաստեղծը գրականություն է բերում իր սերնդի դրամատիկ ապրումները, բարոյահոգեբանական նկարագիրը: Այն սերնդի, որի մանկությունն անցել է ստալինյան բռնաճնշումների ու հալածանքների շրջանում, պատանեկությունը՝ պատերազմի տարիներին.

Ինձ բախտը կյանքում շատ հեռու տարավ,

Ու ես ծերացա հենց ճանապարհին:

Այո, ծերացա, երբ արևի տակ

Նոր էր լրացել իմ քսան տարին...

.....

¹ Մարինյան Ս., Բանաստեղծության ակունքը, Հուշարձան Հրաչյա Հովհաննիսյանին, Երևան, <<Արևիկ>> հրտ., 2015, էջ՝ 410:

² Նույն տեղում, էջ՝ 411:

Ծերացա, այն էլ մի գիշերվա մեջ:¹

Բայց քանի որ <<հոգնած չի սիրտդ, և սիրտդ լիքն է դիմանալու, հիասթափություններին դիմադրելու ավյունով, մինչ այդ քեզ անծանոթ աշխարհի գեղեցկությունները մտովի ընկալելու>>,² բանաստեղծը հայտնաբերում է սիրո ու բարության, արարումի ու ոգեկոչումի մի նոր աշխարհ՝ իր հրաշալի այգին, ուր ամեն ինչ հարազատ է ու մտերմիկ.

Բայց ես լավ գիտեմ ամեն մի ծառի,
Իմ ամեն մի թփի կյանքը՝ դեռ փոքրուց,
Գիտեմ, երբ պիտի նա պտտուղ բերի
Եվ ինչ ջրեր են հոսում իմ այգուց:

Իմ ծաղիկների լեզուն ես գիտեմ,
Հասկանում եմ ես ամեն մի շրշյուն,
Գիտեմ, նրանցից երեկոյան դեմ
Ո՞րն է սոխակի սիրերգը հիշում:

Կամ օրորվելով հովի երազում՝
Ո՞րն է հեքիաթներ պատմում նրանցից,
Ո՞րն է իմ մասին գովեստով խոսում:
Ո՞րն է բամբասում միշտ իմ հետևից :(98)

Ընդլայնվում են Հր. Հովհաննիսյանի թեմատիկ ընդգրկումների շրջանակները, ավելի լիարյուն է սկսում բաբախել մեր պոեզիայի մայր երակը, հայրենիքի անցյալն ու ներկան հանդիպադրվում են բանաստեղծի հրաշալի այգում, մարդն ու բնությունն ապրում են հրաշալի ներդաշնակության մեջ, տխրում և ուրախանում են միասին, միասին արարում են ու ոգեկոչում են իրար:

<<Ձնհալի>> բարերար շունչը նոր որոնումների մղեց Հր. Հովհաննիսյանին, ով մինչև իր կյանքի ողբերգական ավարտը հավատարիմ մնաց մարդու և բանաստեղծի վեհ կոչումին:

Բանալի բառեր - Աշխարհընկալում, արմատներ, վերադարձ, ձև, կառուցվածք, միտումներ ու օրինաչափություններ:

Տաթևիկ Պողոսյան, Հրաչյա Հովհաննիսյանն ու 1960-ականների գրական շարժումը - Հռոկածում քննարկվում են <<Ձնհալի>> տարիների պոեզիայի առաջընթացին վերաբերող հարցեր: Փորձ է արվում Հրաչյա Հովհաննիսյանի այդ շրջանի ստեղծագործություններն արժեվորել գրական զարգացման ընդհանուր համապատկերում, բացահայտել բանաստեղծի ջերմ գեղարվեստական

¹ Հովհաննիսյան Հր., Ծովի լռությունը, Երևան, 1964, էջ՝ 57:

² Հովհաննիսյան Հր., Ոսկե ամպ, Երևան, <<Սովետական գրող>> հրտ., 1984, էջ՝ 43:

մտածողության թարմացման, թեմատիկ շրջանակների ընդլայնման, գաղափարախոսական արգելքների հաղթահարման գործընթացներում :

Татеви́к Погосья́н, Гра́чья Оганни́сян и литературное движение 1960-ых годов - Обобщение В статье обсуждаются вопросы поэзии касающиеся развитию годов "Оттепел". Произведения того периода, Грачья Оганнисяна, намеревается оценивать в общей понараме литературного пазвития, раскрыть в процессах освежения тёплого художественного мышления поэта, расширения тематических кругов, преодолевания идеологических запретов.

Tatevik Poghosyan, Hrachya Hovhannisyan and the literary movement in 1960s - Conclusion In the article some things are beling discussed regarding the promotion of the poetry during the “Hhaw” years. Attempts are made to estimate Hrachya Hovhannisyan’s works of that period in the general imagery of literary development, to discover the processes of refreshment of poet’s warm fictional thinking, expansion of thematic frames, overcoming the ideological barriers.

ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ «ՇԱՐԱԿՆՈՑ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ՆԻՆԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ

Հողվածում քննարկվում են շարականի բովանդակային ու ձևակառուցվածքային նորովի դրսևորումները Ա. Մարտիրոսյանի «Շարակնոց» ժողովածուում: Մասնավորապես նշվում է, որ Ա. Մարտիրոսյանը փորձում է ընդլայնել շարականների թեմատիկ ընդգրկումների շրջանակները, համադրել աստվածաշնչյանն ու աշխարհիկ թեմաները:

Ի տարբերություն 1960-ականների բանաստեղծներից շատերի՝ Ա. Մարտիրոսյանի ստեղծագործություններում որոշակիորեն զգացվում է միջնադարյան բանարվեստի շունչը: «Միջնադարյան բանարվեստը,- գրում է բանաստեղծը,- իմ բանաստեղծությունների լարերից մեկն է: Միջնադարյան հոգևոր գանձերը ես ընկալում եմ իբրև մեր օրերում շարունակվող և ապագայում շարունակելի ընթացք, և այդ լարի ներկայությունն իմ ստեղծագործություններում ձևական ռճավորում չէ, այլ ապրելու, մտածելու, ժամանակակից մարդուն ու միջավայրին նայելու կենսական ու ժառանգաբար որդեգրած արյան շնչառություն»¹:

Գրող, գրականագետ Հր. Սարիբեկյանի հարցին, թե «ավանդույթը որոշակի զարգացում է ենթադրում, որն է ձեր խոսքի նորարարությունը, ձեր բանաստեղծությամբ ինչպե՞ս է զարգանում շարականի ավանդույթը», - բանաստեղծը պատասխանում է. «Շարականները մինչև այժմ մեծ մասամբ եղել են Աստծո, սրբերի, սրբացած մարդկանց, հրեշտակների բանուգործի յուրօրինակ հիմներ ներբողներ: Հասարակ մարդու հոգեբանությունն ու ապրումները կամ իսպառ բացակայել են, կամ էլ եթե տեղ են գտել գտել երբեմնակի, ապա զուտ խնկարկողի, փառաբանողի սահմանափակ իրավունքով և կրավորական կեցվածքով... Առաջիններից մեկը երևի Գրիգոր Նարեկացին էր, ով փորձ արեց մարդկային նկարագիր ու հոգեբանություն հաղորդել սխեմատիկ ու չոր կառույցին, հարստացնել կենդանի գույներով, պատերներով ներքին շարժումով լայնացնել անվանդական շարականի սահմանները: Ավանդական պարտադիր կանոններից շեղվելիս հայտնագործությունը նա արեց ուրիշների համար կանխագուշակելով ընթանալու նորանոր տարածությունների առկայություն: Ինձ մնում էր միայն քայլ անել-գնալ հայտնագործություններից բխող ենթադրելի շավիղներով՝ խորացնելով մարդկային ապրումների հոսքը այդ տարածքում»²

Պահպանելով շարականների կառուցվածքային յուրահատկությունները՝ Ա. Մարտիրոսյանն արտահայտում է նորօրյա տրամադրություններ, ինչը,

¹ Մարտիրոսյան Ա., Ներկայում հանգրվանած, անցյալ, Եր: ՀԳՄ հրտ: 2010, էջ 192:

² Նույն տեղում, էջ 193:

սակայն, բոլորովին էլ չի նշանակում, թե բանաստեղծը, ինչպես ասում են, նոր գինին լցնում է հին տակառների մեջ:

Ժողովածուն բացվում է «Շարական ինձ համար» բանաստեղծությամբ.

Այնտեղ, ուր ապրում է Արմեն Մարտիրոսյանը,

երկու աչք լցվում է ողբերգությամբ,

երկու ձեռք ժամանակի փոշուց լվանում է

երեսն անցյալի,

որը իբրև սերմ ընկնում է

ներկայի սևահողը՝

ապագայի դաշտում ծաղկելու համար»¹

Բանաստեղծը փորձում է բացահայտել գոյի իմաստը, փնտրում է գաղտնիքը Հարության: Բանաստեղծի էությունը «արթնացում է դեպի արեգակը, միամիտ անկում է դեպի վիրապը խոր և ջրհեղեղը Նոյյան»: Բանաստեղծը անցյալից եկած «ներկայի սերմնացանն է հմուտ» ու ներկայում է փնտրում «Հարության գաղտնիքը».

- Որոնիր, որ գտնես գաղտնիքը Հարության,

Որոնիր, որ տեսնես քո մեջ արթնացող

անքնության բուն կեսգիշերային,

Որ տեսիլները մղձավանջի մեջ՝

քո արյան հոսող վայրկյանների միջից

կարմիր գնդիկներ է հանում կացնահարելու (4):

Աշխարհի վրա թևածում է Քրիստոսի բարությունը, նրա երկար, արդար մատներից հրեշտակներ են կաթկթում երկիր, «անձրևի տեղակ սերովբեներ են թափվում միալար» և՝

Արքայությունը այնքան է մոտիկ.

որ այս կատարյալ դժոխքի միջից պարզ երևում է:

Քրիստոսի շուրթերով բանաստեղծը պատգամում է բոլոր մեղավորներին՝ «Գթասրտության սերմեր ցանեցեք // դաշտերում անծայր, // իբրև աշխարհի միակ հագուստը նախասահմանված»:

Բարության սերմեր է ցանում բանաստեղծը մեղավոր հոգիներում, ու այդ սերմերից «արտեր են ծփում // հանապազօրյա կորեկի, հացի», ու ընդամենը մի քանի քայլ է մնում մինչև արքայություն.

Բայց դու ինձ ասա,

Թե քանի քայլ է մնում անելու

Արքայությանը հասնելու համար:

Եվ հրեշտակն է ժպտում վերևից,

Եվ ես տեսնում եմ՝ նա իր թևերին

¹ Մարտիրոսյան Ա.: Շարակնոց, Եր:1997, էջ 3; Այսուհետ շարադրանքում կնշվի միայն էջը:

Արքայություն է բերում ինձ համար,
Եվ արքայության կանաչ դռներից
լույս սանդուղքներ են կախվում անհամար,
Եվ ընդամենը մի քայլ է մնում
լույսի սանդուղքից բռնելու համար (9):

Հավատացյալի ջերմեռանդությամբ է բանաստեղծն իր աղոթքը հղում առ Աստված, նրա հետ մերձենալ է ուզում, նրա լույսով լվացվել ու մաքրվել է ցանկանում... Դրանից հետո այս դաժան աշխարհին անգամ դառնում է սիրելի.

Լավն է, ասում եմ ես, լավն է այդ դժոխքը,
Որովհետև իմն է ամբողջովին:
Իմ ծննդյան օրից մինչև ծերունական
տաք ու հովը դողդոջ
Նա ինձ ուղեկցել է անդավաճան(14)

Բանաստեղծը տիրոջ իրավունքով է ապրում «Թզաչափ այս երկրում»: Ճիշտ է՝ դժվար է, դաժան է, բայց «այս է միակ կանչող ծաղիկը», և մերն են նաև այս երկրի հոգսերն ու ցավերը.

Թե ինձ դրախտ տրվեր անակնկալ,
չէի ապրի օտար այդ դրախտում,
անգո այդ դրախտի հիշողությունն անգամ՝
վաղուց հանգած ասուպ...
Իմն է այս դժոխքը,
Իմն է, իմ միակը, իմ սերը, իմ տարփուհին
չեմ զիջելու նրան այլևս ոչ ոքի:
Իմն է այս հնոցը, հար եռացող կուպրով... (14)

Բանաստեղծը փնտրում է մարդկության ճանապարհի առեղծվածը: Համանուն հոդվածում Ա. Մարտիրոսյանը գրում է. «Մարդկությանը պարբերաբար հարկավոր է եղել հագնել Աստծո բարկության ու պատժի՝ այսպես կոչված Ահեղ Դատաստանի մոտալուտ ու իրական գոյության զսպաշապիկը, այլապես ծովածավալ մեղքը, որի մեջ սուզվել-թաթախվել են դար ու դարեր, կմոլեգնի համատարած, կփոթորկի աջ ու ահյակ, իր անսանձ խրախճանքը կանի՝ չճանաչելով բարության, սիրո, գթասրտության, մայրասիրության, առաքինության ու ապաշխարելով զիջումի կաշկանդիչ չափ ու սահմանը»¹:

Փողոցների վրա ճերմակիրան
և տների վրա, և ձայների
ընկել է ստվերը մոռացության,
այնպես փափուկ հարմար
օրորվում է քնկոտ:

¹ Մարտիրոսյան Ա. Ներկայում հանգրվանող անցյալ, էջ 149:

Մոռացության ստվերը քնել է փողոցներում
Եվ ճյուղերը ծառի էլ չեն մտաբերի
Իրենց կորցրած տերևների
նախկին անկողինը (16):

Նարեկացու հանգույն դարերի ընթացքում մարդկության շալակած մեղքը բանաստեղծը համարում է լեռնակուտակ, և Արարատ լեռն անգամ չի կարող չափվել նրա հետ: Չարի և չարիքի արմատները մարդու էության մեջ են, նրա մարմնի կավահունց շաղախում, որն իրենով ստվերել է նաև հոգին ու հոգեկան աշխարհը:

Բանաստեղծը ինչ-որ տեղ չի հավատում կամ չի ուզում հավատալ, թե իբրև հոգու սովը գալու է ճոխ սեղանների առկայության ժամանակ, երբ մարմնական պահանջը լիովին բավարարված է, իսկ ոգին քաղցած դեգերում է ճոխությունից հղիացած մարմնում:

Ուրեմն՝
-Ամեն ինչ սուտ է,
Ամեն ինչ աշխատանք է քամու:
Կեսգիշեր է խաղաղ,
Դու հատակի մարդ ես,
Գնա, ննջիր փոշոտ փողոցում,
Առանց հոգսի, ողբի, առանց ուրախության,
Այդպես մենակ և լուռ, և անտարբեր,
և ձեռքերդ դրած քո գրպանում դատարկ,
իբրև մոռացության մի գետնաքարշ ստվեր,
գնա, հանգիստ ննջիր
կարծես կանչել են քեզ
վերերկրային հեռու ժամերգությա (17)

1980-ականների վերջերի հոգևոր զարթոնքը, ոգևորության աննախադեպ պոթրթկումները ցավալիորեն շուտ մարեցին, և ինչքան ուժգին էր այդ ոգևորությունը, նույնքան համարժեք էր նրան հաջորդած հուսալքությունը, որ պարուրեց բոլորին: Խորն է նաև բանաստեղծի հուսալքությունը. «Ոգու սովը գալու է մարմնական քաղցի հետ միաժամանակ, երբ մարդկությունը ի վերջո հասնի այլասերվածության, անբարոյականության գագաթնակետին, ուր մեղքն ու մեղսագործությունը ինքնիշխան թագավոր են և երբ, մանավանդ, իրական սով է, հանապազօրյա հացի տաժանալի չգոյություն ու փնտրտուք»¹:

Դարձյալ Նարեկացու հանգույն բանաստեղծը կատարած հանցանքների համար խորապես զղջալու հորդոր է կարդում մարդկությանը՝ փորձելով

¹ Նույն տեղում, էջ 151:

անհատին փրկել ինքնամաքրման ճանապարհով: Մեծ է բանաստեղծի ցավը, որը միայն իրենը չէ.

Մենք դար ու դարեր
վարժվել ենք, քույր իմ, անբախտ ապրելուն:
Եկ, մեկտեղ փակվենք
հույսի, հավատի դատարկ խեցու մեջ,
ուր մեզնից բացի
ուրիշ ոչ մեկը չի բնակվելու,
քանի որ, իմ սեր,
մեզանից բացի ուրիշ ոչ մեկը
չի հավատալու,
թե բախտը, իբրև իր ոտքերով է
մեզ այցի գալու,
Թե ծնվելու են աշխարհում նորից
մի Նոյ՝ հավատի օղազրահով
Եվ հուրհեր մանուկ մի վիշապաբաղ:

Եկ մեկտեղ փակվենք
հույսի, հավատի դատարկ խեցու մեջ,
ինչպես խեղդվողն է կառչում փրփուրից(18)

Մարդու էություն մեջ են և սատանան, և հրեշտակը, և երանելի Աստծո պատկերը, այսինքն՝ դժոխքը, քավարանն ու դրախտը: Պարտադիր չէ այդ ամենը զգալու համար անպայման հանդերձյալ աշխարհ ուղևորվել: Դրանք մարդու մեջ Աստված ի վերուստ կանխորոշել, կանխագծել-տեղավորել է: Խորն է բանաստեղծի հիասթափությունն ու ցավը, հատկապես այն պատճառով, որ ոչ ոք այլևս չի գնահատում արվեստը, որ «արվեստի առավել նշանավոր գրքերը, որ ընդամենը մեկ- երկու տարի առաջ մարդիկ խլում էին իրարից՝ պետական գնից բազմապատիկ ավելի վճարելով, այժմ ընթերցողի պակասից սառցակալել-մրսում են գրախանութներում: Քիչ է մնում վերջնականորեն հավատամ ինձ համար ամենասարսափելիին, թե ակամա չարչիացած այս ժողովրդին մշակույթ առհասարակյան պետք չէ, թե մեր կյանքում չեն եղել Գրիգոր Նարեկացիներն ու Մատենադարանը, թե այդ ամենը հորինվել է մեր՝ այսպես կոչված «հերոսական անցյալն ավելի տաք ու կատարյալ դարձնելու միտումով, թե այս ժողովուրդը չէ Նարեկացի ու Մատենադարան ծնողը»¹

Բանաստեղծը կոչ է հղում երկրի «նորօրյա տերերին».

Բաց արեք բարության առազաստները,
որոնք լողում են դեպի մայրամուտ ձեր աչքերի միջով...

¹ Նույն տեղում, էջ 173:

Բարության ճերմակ առագաստները
լողում են դեպի կարմիր մայրամուտ
և քաշում են նավը արեգակի,
որ շարժվելով ճեղքում է
ձեր աչքերի սառը, խոնավ ապակին(23):

Բացեք ձեր աչքերը ու նայեք դեպի այն կողմ, ուր «քիչ է լույսը և
ջերմությունը քիչ է, նայեք, որովհետև երբ նայում են լույսին՝
հավատացյալ են դառնում բոլորը,
մարդիկ, ձկները և գազանները
և ժամանակը, և շարժումը օդի,
բացեք, լայն բացեք

ձեր բարության բոլոր առագաստները (24)

Ահավոր մեր ժամանակներում մենք անկախ մեզանից կորցրել ենք մեր
քրիստոնեական հավատը: Եվ եթե «քրիստոնեական հավատը առաջ ստիպում էր
ապաշխարելով մաքրվել գործած մեղքերից, աստծո պատժի, ահեղ դատաստանի
սարսափից զսպել չար հակումները»¹ ապա այսօր ամեն ինչ խառնվել է իրար,
ձևավորվել են նոր արժեհամակարգեր, գնահատման-արժևորման նոր
չափորոշիչները:

Միջնադարյան բանարվեստի լարերը հնչյում են նաև բանաստեղծի
ՖԺամերգություն! (2001) և Տերաշխարհի լություն! (2008) ժողովածուներում:

Բանալի բառեր - Շարակնոց, ծրագրային, ժողովածու, աստվածաշնչյան,
աշխարհիկ, շարական, արքայական պալատ, շինականի խրճիթ:

Նինել Սարգսյան, Արմեն Մարտիրոսյանի «Շարակնոց» ժողովածուն -
Հողվածում քննարկվում են շարականի բովանդակային ու ձևակառուցվածքային
նորովի դրսևորումները Ա. Մարտիրոսյանի «Շարակնոց» ժողովածուում:
Մասնավորապես նշվում է, որ Ա. Մարտիրոսյանը փորձում է ընդլայնել
շարականների թեմատիկ ընդգրկումների շրջանակները, համադրել
աստվածաշնչյանն ու աշխարհիկ թեմաները:

Нинел Саргсян, Сборник Армена Мартиросяна «Шаракноц» - В статье
обсуждаются новые содержательно и форменно-структурные проявления жанра
шараканов в сборнике А. Мартиросяна Шаракноц. В частности, отмечается, что А.
Мартиросян стремится расширить рамки тематического охвата жанра, сочетать
библейские и мирские темы.

Ninel Sargsyan, Armen Martirosyan's «Sharaknots» collection - In article are
discussed new content and structure of sharakan genre in Armen Martirosyan's
«Sharaknots» collection. Mainly it is mentioned that A. Martirosyan tries to enlarge
includings of genre theme, to combine religious and earthly themes.

¹ Նույն տեղում:

**ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՇՆՁՅԱՆ ՄՈՏԻՎՆԵՐԻ ՈՐՈՇ
ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐ ՉԱՐԵՆՑԻ ՎԱՂ ՇՐՋԱՆԻ ԳՈՐԾԵՐՈՒՄ
ԱՆԻ ՇԻՐԻՆՅԱՆ**

Բարդ ու հակասական էին Չարենցի՝ դեպի ստեղծագործության բարձունքները տանող ճանապարհները: Դեռևս վաղ շրջանից էր բանաստեղծի բախումը միջավայրի հետ: Նա կորցրել էր մանկությունը, ծննդավայրը, ընկերներին: Հոգին այլևս խոցված էր իրական հայրենիքի որոնման ճանապարհին: Տավիղը ծարավ էր հնամյա ավանդություններով ու առասպելներով հյուսված վիրավոր հայրենիքին: Հայրենի հնամյա թախիծը բանաստեղծին ավելի խորաթափանց ու նրբազգաց էր դարձրել: Տրտում ու անլույս օրերը Չարենցի մեջ հիասթափություն են ծնում: Նա ապրում էր ճշմարտությունը գտնելու անհանգիստ ձգտումներով, որոնում էր կյանքի հետ մերձավորություն գտնելու ուղիներ, ձգտում էր վերադառնալ ակունքներին:

Չարենցի պոեզիան համակվում է կյանքն օրհներգող հնչյուններով. «...Ու պե՛տք է քայլե՛լ ու քայլե՛լ համառ՝ // Ապրելու հսկա տենչը բեռ արած»: Բանաստեղծը արարում է իր հոգևոր աշխարհը՝ կախարդական ու գունագեղ: Կենսական փաստերը ձուլվում են կարդացածին՝ բոցավառելով պատանու ոգին: Չարենցը հասկանում է, որ իրական գեղեցկությունները ծածկված են ստվերներով: Նա ամբողջ հոգով, իր ամբողջ էությամբ ձգտում էր տեսնել ստվերների այն կողմը: Ու նա կարդում էր, կարդում՝ նվաճելով ու սեփականացնելով ուրիշ աշխարհներ. «-Օ՛, գրքերի աշխարհը-տիեզերք է անեզր»:

Չարենցի առաջին կուռքը գիրքն էր, որին չդավաճանեց մինչև կյանքի մայրամուտ: Նա միանգամից կոփվեց ու հասունացավ և, բարձրանալով միջավայրից, սկսեց փնտրել «հավերժականի ուրվականին»: Առանց երկմտելու նա նետվեց հորձանքի մեջ՝ ստեղծելով մեծ ու մնայուն կտավներ (այդ է՝ բ՛նա հասցրեց թրծվել):

Վաղ շրջանի բանաստեղծական շատ պատկերների համար բնորոշ է երազանքների և իրականության հակասությունը: Էդ. Թոփչյանը շեշտում է, որ վաղ շրջանի «Չարենցի պոեզիան կյանքից հեռանալու երգ չէր, այլ լուսավոր կյանքի անհագուրդ կարոտ, իսկական բերկրանքի որոնում: Նա երագում էր արևի ոսկին, կապուտայա երջանկության առասպելը, նա անցնում է հարդագողի ճամփան՝ երագած աշխարհը հասնելու համար, բայց բուրժուական բիրտ ու անմարդկային կյանքի պայմաններում նրա երագները խորտակվում էին, և բանաստեղծի հոգին լցվում էր թախիծով և հուսահատությամբ»¹:

Հոգեկան երերուն տրամադրությունները նախադրյալներ են ստեղծում, որպեսզի Չարենցն արձագանքի սիմվոլիստների բանաստեղծական

¹ Գրական թերթ, 1957, թիվ 37:

զգացողություններին: Բնութագրելով այս ժամանակաշրջանի պոեզիան՝ Մ. Գորկին գրում է. «Պեսիմիզմ և լիակատար անտարբերություն իրականության նկատմամբ, կրքոտ պոռթկում դեպի վեր՝ դեպի երկինք և սեփական անգործության գիտակցություն: Բանաստեղծների մոտ թևերի բացակայության որոշակի զգացողություն, նրանց սրտերի մեջ սուրբ հոգու բացակայություն, - ահա մեր նոր պոեզիայի հիմնական նոտաներն ու թեմաները¹»:

Չարենցի պատանեկան լիրիկան լի է միստիկական նախազգացումներով: Հենց սկզբից նրա պոեզիայում զգացվում է հեթանոսական շունչը: Սակայն հենց սկզբից էլ երևացող է բանաստեղծի երկվությունը.

*Ես ուզեցի երգել զովքը աստծու,
Երգել փառքը պայծառ սիրո ու հացի,
Միրտս լցվեց... բայց չգիտեմ, թե ինչու
Գորշ օրերի տաղտկությունը երգեցի: (I, 24)*

Չարենցի վաղ շրջանի ստեղծագործությունը հարուստ է դիցաբանական վերաիմաստավորված կերպարներով, որոնց դիմելու համար բանաստեղծն ուներ իր շարժառիթները: Գրականության մեջ իշխող սիմվոլիստիկական բանաստեղծին ստիպում է նայել ավելի խորքերը. այդպիսին էր նա բնույթով՝ ամեն ինչ ուսումնասիրել խորությամբ, ամեն ինչ՝ կատարելության մեջ: Լինելով միշտ մարդու հետ ու մարդու մեջ, լինելով մշակույթի անհրաժեշտ օղակներից մեկը՝ դիցաբանությունը կարող էր տալ բանաստեղծի առաջ ծառացած մի շարք հարցերի պատասխաններ: Չարենցին դեպի մարդկության ակունքներն են տանում ես-ի ինքնաճանաչման մղումը, իրական աշխարհում հոգեպես անպաշտպան լինելու զգացողությունը: Կարևորագույն շարժառիթ էր մահահոտ ու արնավառ ժամանակաշրջանը, երբ կողմնորոշվելը բերում էր լինել-չլինելուն, երբ օրերն իրենք են մարդուն տանում այնաշխարհ կամ այնաշխարհը բերում ծառացնում մարդու առաջ՝ որպես արևածագ՝ փշրված հայելու մեջ: Դիցաբանության՝ որպես ժողովրդի միասնական ստեղծագործության մեջ է բանաստեղծը փորձում հաղթահարել իր «անհատապաշտությունը»:

Կյանքն ինքնին հակասական ու անբնական ընթացք ուներ, ինչը չէր կարող չանդադառնալ բանաստեղծի տրամադրություններին: Երագների ու տեսիլների պատկերային համակարգը տեղ է գտել «Երեք երգ»-ում, որն ունի «...Եվ այդ վերջին սերն է վաղնջական գիշերվա» („Et c'é tait le dernier amour du soir antique...") բնաբանը՝ քաղված ֆրանսիական բանաստեղծ Ալբերտ Մամենի «Անավարտ պոեմներ» շարքի «Ամենտի» բանաստեղծությունից: Չարենցն «Ամենտի» բառի բացատրությունը տվել է որպես մայրամուտային,

¹ М. Горкий, Соч. т. 23, стр. 122.

անդրշիրիմյան եզերք՝ եգիպտական միֆոլոգիայում¹: Հենրիկ Էդոյանն այն մեկնաբանում է որպես «հին եգիպտացիների դիցաբանական «դրախտը», ուր մարդը գտնում է «կյանք» և «հանգստություն»»²: Չարենցի ստեղծագործություններից մեկում անդրշիրիմյան «Ամենտի»-ն գտնվում է երկնքում.

*Բայց շուրջս թող որքան կուզե աշխարհը այս խնդա, ցնդի -
Ես - հաշմանդամ ու խելագար ու հավիտյա՛ն վտարանդի՝
Դեպի երկի՛նք պիտի գնամ, դեպի եզերքը Ամենտի -
Իմ բա՛րձր, հին ու աստղային երազների ճանապարհով... (I, 298)*

«Ամենտի եզերքը» նաև բանաստեղծի ստեղծագործություններում հիշատակվող «Կապույտ երկիրն» է, «Բարձրագույն ոլորտը», «այն Կայանը», ուր ձգտում է հասնել մինչև անգամ «անմարմին, անտես», մահվան ու զոհաբերության միջոցով: Սա երկնային այն ոլորտն է, որտեղ պիտի իրականանա բանաստեղծի երազները.

*Քեզ կհասնեմ, քո՛ւյր իմ, ես - Ամենտի երկրում,
Երբ հուշ դարձած կքնես - Ամենտի երկրում...*

*Կհամբուրեմ, ջի՛նջ այնպես, շրթունքներդ ես, -
Կհամբուրեմ, քո՛ւյր իմ, քեզ - Ամենտի երկրում...*

*Մեռած աստղի լույսի պես, որ ժպտում է մեզ -
Դու իմ հարսը կլինես - Ամենտի երկրում... (I, 122)*

«Երեք երգ»-ի բանաստեղծական այուժեն ունի ինքնակենսագրական-ինքնամեկնաբանական հիմք: Ե՛վ ժամանակագրական առումով, և՛ հոգեբանական անդրադարձումներով սրա շարունակությունն է կազմում «Հրո երկիր» շարքը: Բոլոր դեպքում սերն է մնում մարմնի և հոգու միասնության, բնության հավերժությանը ձուլվելու միակ հնարքն ու եղանակը: Բանաստեղծը չի ցանկանում, որ իր ցնորք-աղջիկը աննյութական վիճակից մարմնանա ու մնա այդպես՝ մարմնեղեն, երկրային: Նա հմայված է հրաշքով, թող որ՝ անհասանելի... Բանաստեղծը երագում է մարմնի և հոգու միասնություն՝ մի մարմին ու մի հոգի.

Ու միանա՛ն սեզ մարմի՛նը ու հոգի՛ն...

¹ Եղիշե Չարենց, Ծիածան, Մ., 1917, «Գազելներ» բաժնի նախավերջին գազելի (24) ծանոթագրությունը:

² Հ. Էդոյան, Եղիշե Չարենցի պոետիկան, Երևանի համալս. հրատ., Եր., 1986, էջ 176:

Մարմնի և հոգու պառակտվածության ու միավորման չարենցյան բանաձևը միֆոլոգիական տեսանկյունից հանգամանորեն մեկնաբանել է Հ. Էդոյանը. ««Ողջակիզումը» կապված է «մարմնի ու հոգու» հետ, որոնք, որպեսզի «ողջակիզվեն», պետք է անցնեն իրենց հակադիր վիճակներին՝ մարմինը «աննյութանա» և հոգին՝ «նյութանա». այսինքն՝ մարմինը դառնում է «հոգի», և «հոգին» դառնում է «մարմին»: Հոգին «վերամարմնավորվելով» ձգտում է աշխարհ, մարմինը ձգտում է աշխարհից դուրս: «Կերպարանափոխությունների», «հրաշք դառնալու», «նյութանալու» և «աննյութանալու» արժեքավորումը կատարվում է «լուսավոր» մակդիրով, որը կապված է «Արևի» հետ»¹: Մարմնի և հոգու փոխակերպումը գրականագետը դիտարկում է հեթանոսական տեսանկյունից: Բանաստեղծը ձգտում է հոգու և մարմնի ներդաշնակության, հաշտության: Հոգին մարդու կամքի դրսևորման տարածքն է: Քրիստոնեական պատկերացմամբ մարմնի և հոգու պառակտվածությունը մեկնաբանվում է որպես մեկը մյուսի ժխտումը. «Որովհետեւ մարմինը ցանկանում է հոգուն հակառակ, եւ հոգին մարմնին հակառակ. եւ սորանք իրար հակառակ են, որ մի գուցէ այն որ դուք կամենում էք՝ այն անէք» (Պօղոս առաքեալի թուղթը առ Գաղատացիս, Ե - 17): Աստվածաշունչը մահը սահմանում է, երբ բաժանվում են հոգին ու մարմինը: Ազատ կամքը հնարավորություն է տալիս, որ մարդը ճիշտ ընտրություն կատարի: «Բայց տեսնում եմ ուրիշ օրէնք իմ անդամներումը՝ որ իմ մտքի օրէնքի դէմ պատերազմում է, եւ ինձ գերի է բռնում այն մեղքի օրէնքովը, որ իմ անդամներումն է (Պօղոս առաքեալի թուղթը առ Հռովմայեցիս, Է - 23):

Շարքի վերջում երկուսը դառնում են երեք: Երրորդը՝ դա հենց երկուսի միասնությունն է, դա հենց բանաստեղծի երազն է, որին, սակայն, դեռ չի հասել, դեռ փնտրում է: Այս փնտրումներն անցնում են «Տեսիլաժամեր» շարքը: Մանուկ Աբեղյանի ուսումնասիրությամբ հնում կար այն կարծիքը, որ «մարդու հոգին կարող է բաժանվել մարմնից և թափառել, «տեսիլք գնալ», շատ բաներ տեսնել»: Մա չի վերաբերում ուրվականներին՝ մեռելների հոգիներին, որոնք, ի տարբերություն նախորդների, «կարող են ընդունել զանազան տեսանելի կերպարանքներ՝ մարդու, կենդանու, թռչունի»: Տեսլային կերպարները երևակայվում են իբրև հուր և լույս, որտեղից՝ «լուսահոգի», «լույս դառնա հոգին» արտահայտությունները²: Հենց Աստվածաշնչի մեջ էլ Եհովայի հրեշտակը Մովսեսին «երևում է» կրակի կամ լուսեղեն ամպի տեսքով. «Եւ Եհովայի հրեշտակը կրակի բոցով երևեցաւ նորան մորենու միջից. եւ նա տեսաւ, որ ահա մորենին կրակով վառվում էր, բայց մորենին չէր սպառվում» (Ելից, Գ - 2): Իսկ

¹ Հ. Էդոյան, Եղիշե Չարենցի պոետիկան, Երևանի համալս. հրատ., Եր., 1986, էջ 254:

² Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ա, Եր., 1966, էջ 30-31:

մեկ այլ տեղում ընթերցում ենք. «Եւ Եհովան գնում էր նորանց առաջին ցերեկը ամպի սիւնով նորանց ճանապարհ ցոյց տալու համար, եւ գիշերը՝ կրակի սիւնով, որ նորանց լոյս տայ, որ ցերեկ և գիշեր գնան» (Ելից, ԺԳ - 21):

Ժամանակի հետ տեսիլը, որպէս երևոյթ, տարբեր ձև ու տարբեր բովանդակություն ստացավ՝ առավել բեղմնավոր դրսևորվելով հատկապէս գրականության մեջ: Հետզհետե թողնելով երբեմնի կրոնական տարածքը՝ տեսիլը հոգեբանական նոր խորհուրդների սկիզբ դարձավ: Չարենցի առաջին գործերում, որպէս տեսիլք, երևում են «մի լուսե աղջիկ, լուսե մի մեռել», մի «լուսավոր քոյր»... Իրենց ստեղծագործություններում տեսիլներին տեղ են հատկացրել Սիամանթոն, Դանիել Վարուժանը, Վահան Տերյանը, Հովհաննէս Թումանյանը և այլք: Գրողների երկերում ծանրակշիռ են այն տեսիլները, որոնք ունեն հասարակական-քաղաքական բովանդակություն, ինչը ժամանակի թելադրանք էր, քանի որ աշխարհի տերությունների առաջ մորթվում էր մի ամբողջ ժողովուրդ, մարմնավորվում էին ամենաահավոր տեսիլները: Մեծ եղեռնի վկաներից մեկի հիշողություններում ընթերցում ենք. «Երբ այսօր կը մտաբերեմ այդ արհաւիրքի օրերը, ինծի անանկ կուգայ, որ վերադարձ մը կ'ընեմ դէպի դժոխք, ո՛չ այն դժոխքը, որուն սարսափները աւելի զահանդական դարձնելու համար կրօնական մատենագիրներ իրար գերազանցելու ճգնեցան, -այլ անհունապէս աւելի ահաւոր բան մը, որուն զարհուրանքը անո՛նք միայն պիտի գիտնան, որ այդ դժոխքը ապրեցան, և որոնք երբեք չպիտի կրնան նկարագրել զայն, որովհետեւ մարդկային բարբառը անկարող է ատոր»¹:

Ահա թե ինչպիսի մթնոլորտում կոփվեց բանաստեղծը: Բազմաթիվ խնդիրների շարանում օղակ է կազմում «Եվ ո՞վ է լարում այսպիսի դավեր- // Կյանքը դարձնում նգովյալ գեհեն» հարցը: Վարպետն, իհարկէ, գիտեր դրա պատասխանը.

*Կույր ու գուլ մարդի՛կ, առանց երազի, առանց լսելու հեքիաթն այս վսեմ,
Իրար կոկորդից պատառ եք հանում և դարձնում աշխարհն՝ ահավոր ջեհնեմ²:*

Մա՛րդը, իհարկէ, մա՛րդն է աշխարհը դժոխք դարձնողը: Զե՞ որ Աստված անիծեց երկիրը հենց մարդո՛ւ պատճառով. «անիծեալ լինի երկիրը քո պատճառովը, նեղութիւնով ուտես նորանից կեանքիդ բոլոր օրերումը: Եւ նա փուշ ու տատասկ բուսցնէ քեզ համար, եւ դաշտի խոտն ուտես» (Մննդոց, Գ - 17-18):

¹ Ա. Անտոնյան, Մեծ ոճիրը, Եր., 1990, էջ 78:

² Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 2, Եր., «Հայաստան», 1974, էջ 61:

«Կապուտայա հայրենիք»-ում, թեև հեթանոսական են տրամադրությունները, այնուամենայնիվ, քրիստոնեական խաչը բանաստեղծին ստիպում է մի պահ կանգ առնել.

*Ու լուռ էր այնպես: Հեռու-հեռում
Մի հազարամյա վանք էր երևում:
Փայլում էր ոսկին հնամյա խաչի-
Եվ ես կանգ առա նրա առաջին: (II, 10)*

Անապատային հին լուսնի մեջ կար մի սպասում. «Կարծես թե մեկը այցի պիտի գար»: Ու այդ «անիմանալի գոյության ճախրումը» ստիպում է բանաստեղծին ծնկի գալ՝ աղոթքներով լցված, հավատալ, «որ կա, կգա, կլինի...»: Նշենք նաև, որ նման պատկեր կա «Դանթեական առասպելի» նախնական տարբերակում ևս.

*Տեսանք հեռում ոսկի գմբեթներ՝
Արևի պես վառ, Արևի պես հին,
Խաչակնքեցինք բաց կրծքերը մեր
Եվ նորից խնդաց մեր ջահել հոգին: (II, 316)*

Խաչակնքման սովորությունն այնքան հին է, որքան քրիստոնեությունը: Խաչակնքումը հոգու աղոթքն է՝ ուղղված Արարչին, խաչի գորությունը Քրիստոսն է: Պողոս առաքյալն ասում է. «Որովհետեւ խաչի խօսքը կորածների համար յիմարութիւն է, բայց մեզ՝ փրկուածներիս համար Աստուծոյ զօրութիւն է» (Կորնթացիս Ա, Ա-18): Ինչպես մի շարք այլ գործերում, «Կապուտայա հայրենիքում» ևս զուգահեռվում են հեթանոսականն ու քրիստոնեականը: Տեքստային տարբերություններում հեռավոր վանքի ոսկեկատար խաչը ցավ ու հառաչանք է խորհրդանշում՝ ամենուր խավար ու լուսնություն սփռելով: Եվ ահա պայթում է սպասումը. պատկերված է Արևի ու Խավարի հակադրությունը.

*Եվ այդ լուսավոր ձեռքը Արևի
Պատռեց խավարի մորթին անթափանց.
Առանց արցունքի, առանց բարկի
Հեռացավ այն գող Խավարը վաղանց... (II, 312)*

Այն հանգամանքը, որ այս շրջանում Չարենցն առանձնապես տարված չէր քրիստոնեական հավատով, թույլ է տալիս մեզ ենթադրելու, որ Արևը հեթանոս աստվածությունն է, տվյալ դեպքում՝ Վահագնը, որի հետ իր հույսերն է կապում բանաստեղծը, իսկ Խավարը, որը նույնպես մեծատառով է գրված,

քրիստոնեական աստծոն է վերաբերում: Իսկ հինավուրց Վանքը, որի գմբեթին ոսկեփայլ խաչ է, իրականում «Հայրերի բազիլեն» է՝ հեթանոսական տաճարը: Ո՞ւմ է աղոթում Չարենցը տաճարում... Բազմաթիվ օրհնություններից նա փառաբանություն է ուղղում նաև «գթառատ Աստծուն», իսկ այնտեղից դուրս է գալիս՝ լցված «Հավատով, սիրով ու հույսով հսկա»: Այս եռամիասնության մասին ընթերցում ենք Պողոս առաքյալի թղթերում. «Ապա ուրեմն մնում է հաւատք, յոյս, սէր. այս երեքը եւ սորանցից մեծը սէրն է» (Կորնթացիս Ա, ԺԳ - 13): Բանաստեղծին այստեղ է բերել «Մեծ Հույսը».

*Ողջո՛ւյն, Վանահայր... Եկել եմ ահա
Վանքիդ մեջ հոգուս Հին աղերսելու... (II, 312), (ընդգծումը մերն է)*

Զգալով «Նրա շունչը» վանքի մեջ՝ բանաստեղծը խոստովանում է. «Հսկել է Նա իմ երագներիս Էն»: Աստծո ներկայությունն, առհասարակ, միշտ արտահայտվում է գոյության, լինելիության հարաբերակցության մեջ: Սուրբ Գրքում Աստծո ներկայությունը միշտ առնչվում է մարդու գոյության հետ, ուստի անվան իմաստն էլ պետք է որ բխի այդ էությունից: Զանազան հին գրություններում (ուղերձներ, նամակներ, կոնդակներ) սկզբում գրվում էր գլխատառ է, որ նշանակում էր Աստված, Աստծով, հանուն Աստծու: Ուրեմն՝ Աստծու անունն է է կամ ԵՄ՝ իբրև միշտ եղողի, այսինքն՝ ինքնագոյություն, աստվածային անսահմանություն: Իսկ ընդհանրապես պե՛տք էր Աստծուն անուն ունենալ. չէ՞ որ նա միակն է, եզակին, անկրկնելին: Ու հենց «անուն» բառի ստուգաբանության մեջ ինչ-որ չափով կա դրա պատասխանը: Հակոբ Գաբրիել Ավետիքյանը տալիս է *այն ուն* կամ *էն ուն* ստուգաբանությունը՝ որպես էություն ունեցող, գոյացած, կենդանի, քանի որ ըստ նրա՝ անուն դրվում է գոյացած բանին և ոչ թե չեղածին: Գաբրիել Ավետիքյանը, հիմնվելով «Յաճախապատում ճառք»-ի հետևյալ հատվածի վրա՝ «Բնութեանցն երկուց՝ երկու անուանք պիտոյանան, որ որոշեն գնոսա ի միմեանց, և անուանցն՝ բնութիւնքն պիտոյ են՝ որ կային ունեին զանուանսն», նշում է, որ մարդիկ հնարեցին անունը երկու պատճառով՝ «մեկ մը գոյացած եղած բանը նշանակելու, մեկ մալ բան բանէ որոշելու, զատելու համար»¹: Ուրեմն, տվյալ պարագայում Աստված իր անունը հայտնում է ոչ իրեն զանազանելու միտումով, այլ բացահայտելու իր բուն էությունը:

20-րդ դարասկզբի հեթանոսական շարժման կարկառուն առաջնորդ Դ. Վարուժանն իր ստեղծագործություններից մեկում անդրադարձել է Է-ի խորհրդանշական իմաստին.

Կ'ուզեմ ծովուն հետ սիրտ սրբտի ես հարիլ,

¹ Հ. Գ. Ավետիքեան, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815, էջ 191:

*Իմ անհունիս մեջ այդ անհունը թաղել,
Բուռն իղձն ունիմ մըրըրկին հետ մաքառիլ,
Եվ գլուխս՝ էին գաղտնիքներուն դեմ բախել՝:*

Հետաքրքրական են 19-ամյա Վարուժանի գրառումները. «Սկսյալ հյուլէե մը, նշանախեցիե մը ավելի մեծ չափով և ավելի ընդարձակությամբ մարմիններ կը պարփակե այս տառն իր մեջ: Թե կենդանի և թե անկենդան բնությունք հոն են՝ իրենց ամեն փներովն ու գույներովը»²: Ապա նա մեջբերում է Շաթոպրիայի խոսքերը. «Ամեն ջանք ընդունայն պիտի ըլլա զԱստված բացատրելու, բավական է ըսել՝ Է...»³:

Է-Աստծուն հանդիպում ենք նաև Գրիգոր Նարեկացու տաղերում: Նարեկացու «Ի յարութիւնն Ղազարու» տաղում ընթերցում ենք. «Էն է ինքնէն ի միշտ Էէն է»⁴: Ի վերջո, բացենք Աստվածաշունչը. «Եւ Աստուած ասեց Մովսէսին. Ես եմ ՈՐ ԵՄ. Եւ ասեց. Այսպէս ասիր Իսրայէլի որդիներին. Ինձ ԵՄը ուղարկեց ձեզ մօտ: Նաեւ Աստուած ասեց Մովսէսին. Այսպէս ասիր Իսրայէլի որդիներին. Ձեր հայրերի Եհովայ Աստուածը՝ Աբրահամի Աստուածը, Իսահակի Աստուածը եւ Յակոբի Աստուածը ինձ ձեզ մօտ ուղարկեց, այս է իմ անունը յավիտեան, եւ այս է իմ յիշատակը ազգից ազգ» (Ելից, Գ - 14-15):

Բայց ահա նորից հեթանոսականը գալիս է՝ խառնվելու մոտիվներին. «Ունեմ հազար զոհաբերում ու բարիք // Քո գրկառատ ու հեթանոս Աստծուն»: Ստեղծագործության ուսումնասիրությունը թույլ է տալիս ենթադրելու, որ այն դարձի յուրահատուկ մի կոչ է դեպի հեթանոսություն. «մեզ աստվածներն են կանչում...»: Բոլոր դեպքում պոեմն ավարտվում է հեթանոս հարսանիքով:

Չարենցի վաղ շրջանի ստեղծագործություններում նորից ու նորից մարմնի և հոգու, կյանքի և մահվան հավերժական պայքարն է: Մահն իր անդիմակ երեսով դարձել էր սարսափելի իրականություն, առօրյա: Գունագրկվում էին բարոյական արժեքները: «Մի սպանիր»-ի հետևորդը կարծես ինքնարդարացում է փնտրում՝ ստանձնելով պաշտպանվողի դերը՝ «Մեռցնում էինք - ապրելու համար...»: Այս շրջանում ծնված «Ազգային երագ»-ում բանաստեղծը տեսնում է.

*Կախվել է հոգիս, որպես աչք հրկեզ
Ու վարը իշխող խավարն է դիտում: (II, 43)*

¹ Դ. Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Եր., ՀՍՍՀ ԳԱ, 1986, էջ 13:

² Դ. Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Եր., ՀՍՍՀ ԳԱ, 1987, էջ 17:

³ Դ. Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Եր., ՀՍՍՀ ԳԱ, 1987, էջ 18:

⁴ Գ. Նարեկացի, Տաղեր, Եր., 2013, էջ 59:

Կա մարմնի աչք, մտքի, սրտի և հոգու աչք, որոնք կարող են պատմել մարդու էության բովանդակությունը: Քրիստոնեական գաղափարախոսության մեջ «հոգու աչքը» հավատի, հույսի, սպասումի զորավոր մենակետ է, ուր ննջում է աստվածային լույսը: Հոգու անմարմին աչքը, նրա չըմբռնվող իմաստը տարրալուծված է աստվածաբանական ծածկույթներում, ուր իշխում է «Բանն երկնային», որի մասին մտորելիս մարդուս մեջ զարթնում են մտքեր, կարծիքներ, տարաբնույթ զգացումներ, որոնք մեզ այնպես են մասմասում, որ մենք հայտնվում ենք փոթորկոտ ծովի բերանն ընկած անառագաստ խարխուլ նավակի դերում, որ անծուփ ափեր է երագում:

Այս նյութին մոտենալը, նույնիսկ փոքր-ինչ հոտոտելը միտքդ քաշում-տանում է անվերջության եզերքները: Աչքը մարդուն, կենդանուն, թռչին և այլոց ծառայում է որպես աշխարհընկալման նախապայման և իր մեջ է փնջում ոչ միայն արտաքին ինֆորմացիայի ազդակները, այլև ներքին «հնոցներում» եփում է այդ հում նյութը, ապա դուրս ցայտում սրտի, հոգու, ենթագիտակցության միջով: Աստծո ձեռքով ծեփված արարածներս միշտ էլ ձգտել ենք հասկանալ այդ լուսեղեն երևույթում ծվարած մարմնավոր և հոգևոր գաղտնիքները: Մակայն միայն հոգու աչքն է ի զորու թափանցելու Ես-ի անընդգրկելի տարածքները, լուսավորելու այն վիհը, որի մուօ դատարկությունը սարսափեցնում է իր սահմոկելի անորոշությամբ: Չարենցի հոգին, «որպես աչք հրկեզ», հենց ժամանակների դիտակայանն է, որ պարզորոշ տեսնում էր անվերջության հետևից գնացող դարերի համար քայլքը:

«Ազգային երազ»-ում մերթ ընդ մերթ լսելի է եկեղեցու զանգերի ձայնը, ինչը մեր հոգևոր կյանքում հստակ առաքելություն ունի. այն մեզ համար արթնության, զգաստության կոչ է:

Հնուց ի վեր եկեղեցու զանգերը նախատեսված են ժողովրդին ժամերգության կամ պատարագի հրավիրելու, կարևոր իրադարձություններն ազդարարելու համար: Զանգերի կանչը հայոց ժողովրդին փրկելու գնացող հոծ բազմություն է հավաքում:

*Ու գնում էին նրանք անձնվեր,-
Ոնեի՛ն կարծես քաջության թներ...
Նույնիսկ գիշերի միգում անթափանց
Ես տեսնում էի թները նրանց,
Որ տանում էին թափորն անվեհեր -
Աստվածաընծա, սրբազա՛ն թներ:
Խավար գիշերի գրկում ահավոր
Քայլում էր նրանց խումբը թնավոր,
Գնում էր դեպի երկիրը հրի -
Մի խումբ էր կարծես հրեշտակների... (II, 57)*

Աստվածաշնչյան հատվածներում խոսվում է մարդկային տեսքով հայտնված հրեշտակների մասին, որոնք, սակայն, առանձնանում են ոչ թե թևեր ունենալու հատկությամբ, այլ նրանով, որ սպիտակ հանդերձներով են, ու նրանցից լույս է ճառագում. «Եւ դէռ որ նորանք աչքերը ուղղած մտիկ էին տալիս դէպի երկինքը նորա գնալիս, ահա երկու մարդիկ երեւեցան նորանց սպիտակ հանդերձներով» (Գործք Առաքելոց, Ա-10): Վստահաբար կարելի է ասել, որ լուսեղեն լինելու պարագան կապված է նաև նրանց ճերմակ հանդերձների հետ. «Եւ եղաւ երբոր նորա համար շատ հիացել էին, ահա երկու մարդ հասան նորանց լուսաւոր հանդերձներով» (Ղուկաս, ԻԴ-4): Մեկ այլ կարծիքի համաձայն հրեշտակների արարումը տեղի է ունեցել առաջին օրը՝ լույսի հետ. «Եւ Աստուած ասեց, Լոյս լինի. եւ լոյս եղաւ» (Ծննդոց, Ա-3), ինչի համար էլ հրեշտակներին երբեմն անվանում են «լույսի որդիներ» (Ղուկաս, ԺԶ-8):

Սուրբ Գրքում, թեև ոչ այնքան առատորեն, հանդիպում են «հրեշտակ» բառի այլիմաստ կիրառություններ. ևս: Աստվածաշնչում նրանց երբեմն անվանում են «Աստծո հրեշտակ» (Յոք Ա-6), «սուրբ» (Դանիէլ, Ը-13), «երկնաբնակներ» (Մատթէոս, ԺԸ-10), «հոգիներ» (Եբրայեցիս, Ա-14, Յայտնութիւն Ա-4), ինչպես նաև՝ «երկնային զորքեր» (Ղուկաս, Բ-13): Այս վերջին բնորոշումը աղերսվում է Զարենցի՝ «քաջության թևեր» ունեցող հրեշտակների թափոքի հետ: Դրանք այստեղ ձեռք են բերում պաշտպան ու պահապան լինելու հատկանիշներ: Աստվածաշնչում առատ են տվյալները, որոնք խոսում են մարդու՝ իր պահապան հրեշտակն ունենալու օգտին: Մարդկանց պահպանության գաղափարը Նոր Կտակարանում առաջինը տվել է Հիսուսը՝ ականարկելով մանուկներին. «Զգոյշ կացէք, որ այս փոքրներից մէկին չ'անարգէք. որովհետեւ ասում եմ ձեզ, որ նորանց հրեշտակներն երկնքումը միշտ տեսնում են իմ Հօր երեսը, որ երկնքումն է» (Մատթէոս, ԺԸ-10): Հրեշտակի հովանավորությանն է արժանացել նաև Պետրոս առաքյալը. «Եւ Պետրոսի ձայնը ճանաչեց, ուրախութիւնիցը դուռը բաց չ'արավ. ներս վազեց եւ պատմեց, թէ Պետրոսը դռանը կանգնած է: Նորանք էլ ասեցին նորան՝ գծուել եւ. իսկ նա հաստատում էր, թէ այսպես է. եւ նորանք ասում էին թէ Նորա հրեշտակն է» (Գործք առաքելոց, ԺԲ-14-15):

Հրեշտակների պահապան լինելու մասին ականարկում է նաև Սաղմոս ԼԴ-7-ը. «Տիրոջ հրեշտակը բանակ է շինում նորանից վախեցողների չորս կողմովը եւ փրկում է նորանց»: Հրեշտակի պաշտպանությունը գտնում են նաև Նաբուգոդոնոսորի գերած երեք մանուկները՝ հնոցում այրվելիս (Դանիէլ, Գ - 49-50), Դանիէլ մարգարեն՝ առյուծների գրում (Դանիէլ, Զ-22), Տիրոջ առաքյալները՝ Երուսաղեմում (Գործք առաքելոց, Ե-19) և այլն:

Պոռնոմ բանաստեղծը հայ ժողովրդի մասին նշում է որպես «Թորգոմյան որդիք»: Աստվածաշնչում տեղ գտած հիշատակումների առնչություն ունենալը

Հայաստանի և հայերի հետ ուսումնասիրվել է տարբեր դիտանկյուններից: Մուրբգրային որոշակի հիմքեր թույլ են տվել հայ և օտարագգի ուսումնասիրողներին Հայաստանը կոչելու «Թորգոմա տուն»: Թորգոմն Աստվածաշնչում հիշատակվում է որպես ձիավաճառ ժողովուրդ. «Թորգոմայի տունից ձիեր եւ ձիաւորներ եւ ջորիներ էին բերում քեզ մօտ իբրեւ առուտուրի ապրանք (Եզեկիէլ, ԻԷ-14): Ապա հայերն անվանվում են «ասպարակիր եւ սաղաւարտաւոր» (Եզեկիէլ, ԼԸ-6):

Այս ամենով հանդերձ, տեսնելով «Լեգեոնի» «սուրբ եռանդը», Չարենցը բացականչում է.

*-Օ, սաղամանդրա առասպելական,
Հայր իր փառքով քեզ է պարտական.- (II, 59)*

Ըստ լեգեոնի՝ սաղամանդրան (սալամանդրա) կարող է կրակը մարել իր սառած մարմնով: Այս արարածի ներգործությունը մարդկային ճակատագրին կարելի է համարել չեզոք: Ենթադրվում էր, որ առանց այս արարածի երկրի վրա ջերմություն գոյություն չէր ունենա: Միջնադարյան ավքիմիկոսները սրան անվանում էին կրակի ոգի: Նրանք հավատում էին, որ սաղամանդրայի մարմինը կազմված է հնագույն կրակի կարծրացած մասերից:

Այդպիսին էր Չարենցի մտահորիզոնը՝ անպարագիծ ու սահմաններ չհանդուրժող: Նա աղոթում էր Քրիստոս-Աստծուն՝ խոստովանելով հանդերձ, որ Ջուսի թագավորության մասին մեծ պոեմ է գրելու՝ «մի քիչ փիլիսոփայական, մի քիչ գյոթեական, մարդկային որոնող մտքի ու ոգու խորհուրդները բացահայտող...»¹:

Բանալի բառեր - Հոգեկան երերուն տրամադրություններ, հեթանոսական շունչ, դիցաբանություն, տեսիլ, փնտրումներ, քրիստոնեական խաչ, Աստված, հոգու աչք, լուսաթև հրեշտակներ, էություն, սուրբգրային հիմքեր:

Անի Շիրինյան, Հեթանոսական և աստվածաշնչյան մոտիվների որոշ գուգահեռներ Չարենցի վաղ շրջանի գործերում - Չարենցի վաղ շրջանի ստեղծագործություններում գերակշռող են հեթանոսական և խորհրդապաշտական թեմաները, սակայն, կան գործեր, որտեղ դրանք գուգահեռվում են աստվածաշնչյան մոտիվների հետ: Իրական աշխարհում հոգեպես անպաշտպան լինելու զգացողությունը, երազանքների և իրականության հակասությունը, ես-ի ինքնաճանաչման մղումը բանաստեղծին տանում են դեպի մարդկության ակունքները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրիստոնեության նախահիմքերում առկա են հեթանոսական որոշակի

¹ Հուշեր Եղիշե Չարենցի մասին, «Սովետական գրող», Եր, 1986, էջ 428:

դրվագներ, տարրեր, պատահական չեն բանաստեղծի երկերում դրանց միասին ու իրար կողքի հանդես գալը:

Ани Ширинян, Некоторые параллели языческого и библейского мотивов в ранних произведениях Чаренца – В ранних произведениях Чаренца доминируют языческие и мистические темы, но есть работы, где эти темы пересекаются с библейскими мотивами. Чувство духовной незащитности в реальном мире, противоречие мечты и реальности, стремление познать собственное "я" приводят поэта к истокам человечества. Принимая во внимание тот факт, что в христианстве присутствуют некоторые языческие компоненты и элементы, неслучайно, что в произведениях поэта эти темы находятся в тесной взаимосвязи.

Ani Shirinyan, Some parallels of pagan and biblical motives in Charents's early works - The pagan and mystical topics dominate in Charents's early works, but there are works where they are paralleled with biblical motives. The desire to be spiritually defenseless in the real world, the desires of the reality and the contradiction of the reality, the self-awareness of the poet leads to the origins of humanity. Taking into consideration the fact that certain episodes and elements of pagan times are present in early basis of Christianity, their side by side presence is not coincidental in the writings of the poet.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, հհ. 1-4, Եր., 1962-1968:
2. Եղիշե Չարենց, Անտիպ և չհավաքված երկեր, Եր., 1983:
3. Հուլեթ Եղիշե Չարենցի մասին, «Սովետական գրող», Եր., 1986:
4. Աստվածաշունչ, Ստոկհոլմի Աստվածաշնչի թարգմանության ինստիտուտ, 1989:
5. Հ. Էդոյան, Եղիշե Չարենցի պոետիկան, Երևանի համալս. հրատ., Եր., 1986:
6. Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ա, Եր., 1966:
7. Ա. Անտոնյան, Մեծ ոճիրը, Եր., 1990:
8. Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 2, Եր., 1974:
9. Հ. Գ. Ավետիքեան, Քերականություն հայկական, Վենետիկ, 1815:
10. Դ. Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Եր., 1986:
11. Դ. Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Եր., 1987:
12. Գ. Նարեկացի, Տաղեր, Եր., 2013:
13. М. Горкий, Соч., т. 23, М., 1975:
14. <https://hy.wikipedia.org>:

**ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՌԻՍՈՒՑՄԱՆՆ ՕԺԱՆԴԱԿՈՂ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ,
ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ, ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԳԱՅԱՆԵ ԽԱՆԱԹՅԱՆ, ՌՈՒՋԱՆ ՋՈՒԼՖԱՅԱՆ**

Դարձվածքը՝ որպես լեզվական երևույթ, շատ հին ավանդույթներ ունի: Նրա արմատները գնում են դարերի խորքերը: Որպես խոսքի ոճավորման կարևորագույն միջոց՝ դարձվածքները հիմնականում ժողովրդական մտածողության արդյունք են, որոնք սկզբում առաջանում են խոսակցական լեզվում, ապա անցնում գրականին:

Դարձվածքները վերաիմաստավորված կայուն բառակապակցություններ են, որոնց շնորհիվ խոսքն ազատվում է չորությունից ու միօրինակությունից, դառնում դիպուկ, կենդանի և հյութեղ՝ այլաբանորեն ներկայացնելով ասելիքը:

Ելնելով մեր մանկավարժական երկարատև աշխատանքային գործունեությունից՝ բազմիցս համոզվել ենք, որ դարձվածքները ուշագրավ են որպես բազմազան ոճական լիցքեր կրող միավորներ և ծառայում են ոճական տարբեր խնդիրների լուծմանը՝ սեղմություն, հուզականություն, պատկերավորություն, կերպարների խոսքի անհատականացում, բառապաշարի հարստացում: Նկատել ենք, որ ուսանողները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում վերոնշյալ թեման ուսուցանելու գործընթացում:

Փորձ ենք արել մեր հոդվածում զետեղել դարձվածքներին վերաբերող տեսական հետաքրքրաշարժ նյութերից բխող հետաքրքրաշարժ կադապարներ, գծապատկերներ, առաջադրվող վարժությունների ինքնատիպ համակարգ: Հստակ մեզ՝ հոդվածը մասնավորաբար կարող է ծառայել մասնագիտական ֆակուլտետների ուսանողներին, ինչպես նաև դասախոսներին, ուսուցիչներին, ավագ դպրոցի աշակերտներին:

Դարձվածքների կարևոր հատկանիշները

- ✓ իմաստային ամբողջականություն
- ✓ փոխաբերականություն
- ✓ կայունություն
- ✓ պատրաստի վերարտադրելիություն
- ✓ պատկերավորություն

Դարձվածքների ձևավորման ոճական հնարները

- փոխաբերություն
- չափազանցություն
- շրջասություն
- փոխանունություն
- համեմատություն

**Դարձվածքների իմաստի և բովանդակության համար
հիմք հանդիսացող պայմանները**


- լեզուն կրող ժողովրդի հոգեբանությունը
- պատմությունն ու ազգագրությունը
- աշխարհագրական տարածքն ու բնակլիմայական պայմանները
- տնտեսական կյանքն ու կենցաղը
- հավատալիքները
- մշակութային կյանքը
- արհեստը և այլն

**Դարձվածքների հիմնական բաղադրիչներն
ըստ իրենց ընդհանուր նշանակության**

- գյուղատնտեսությանը վերաբերող բառեր
- գույների անուններ
- դպրությանը վերաբերող բառեր
- լուսատուների անուններ
- զենքերի անուններ
- կենդանիների անուններ
- հանածոների անուններ
- հավատալիքներ ցույց տվող բառեր
- մարմնի անդամների կամ մասերի անուններ
- տարբեր բառեր

Դարձվածքների առաջացման ուղիները

- ժողովրդական բանահյուսությունից
- ✓ հեքիաթ
- ✓ էպոս
- ✓ առած
- ✓ ասացվածք
- ազգային ավանդույթներից
- հավատալիքներից
- հին հունական դիցաբանությունից
- Աստվածաշնչից
- ✓ Հին Կտակարան
- ✓ Նոր Կտակարան
- համաշխարհային գրականությունից
- ազգային գրականությունից
- պատմական իրադարձություններից



1. *Գրե՛ք գիտության և մշակույթի ներքոնշյալ ոլորտներին վերաբերող դարձվածքներ:*

- ✓ գրականություն
- ✓ նկարչություն
- ✓ թատրոն և կինո
- ✓ լեզվաբանություն
- ✓ մաթեմատիկա և ֆիզիկա
- ✓ բժշկություն և բնագիտություն
- ✓ ռազմագիտություն և ռազմական արվեստ
- ✓ հասարակագիտություն և քաղաքականություն

2. *Գրե՛ք դարձվածքներ, որոնք պարունակեն*

ա/ գյուղատնտեսությանը վերաբերող բառեր / ալյուր, բամբակ, կաթ, մեղր, հող .../,

բ/ գույների անուններ / սև, սպիտակ, կանաչ.../,

գ/ դպրությանը վերաբերող բառեր / այբ, գիր, տառ, հաշիվ.../,

դ/ լուսատուների անուններ / արև, աստղ/,

ե/ զենքերի անուններ / թուր, թվանք, նիզակ, կացին.../,

զ/ կենդանիների անուններ / աղվես, էշ, լու, ուղտ.../,

է/ հավատալիքներ ցույց տվող բառեր / Աստված, սատանա, դժոխք, դրախտ.../:

3. *Բացատրե՛ք աստվածաշնչյան տրված դարձվածքների իմաստները՝ նշելով ծագումը.*

Նոյի ժամանակներից, Բաբելոնյան աշտարակաշինություն, սողոմ – գոմոր, ավետյաց երկիր, նոյի ագռավ, երեսուն արծաթ, Հուդայի համբույր, փշե պսակ, Գողգոթայի տանջանքներ, Աստծու գառ:

4. *Բացատրե՛ք հայ, ռուս և համաշխարհային գրականությունից առաջացած տրված դարձվածքների իմաստները՝ նշելով ծագումը.*

ազգային ջոջեր, ախորժակը բացվում է ուտելու ժամանակ, կարմիր թելի նման անցնել, աղջիկ մարդու տալն էլ մի փեշակ է, Աբու հասանի մաշիկներ, ճիտին պարտք, մեռած հոգիներ, էշի հարսանիք, հողմաղացների դեմ կովել, Նազարի բախտ, լինե՞լ թե՞ չլինել, սիրամարգի փետուրներով զարդարված ագռավ, վերջին մոհիկան, անբան Հուռի, պատիվ ունեմ:

5. Օգտվելով դիցաբանական բառարանից՝ բացատրե՛ք տրված դարձվածքների իմաստները՝ նշելով ծագումը.

աքիլլեսյան գարշապար, դանայան տակառ, տրոյական ձի, ատտիկյան աղ, պյուրոսյան հաղթանակ, սիզիֆոսյան աշխատանք, ավգյան ախոռներ, բաքոսյան խնջույք, դամոկլյան սուր, պենելոպեի աշխատանք, տորիչելյան դատարկություն, տանտալոսյան տանջանքներ:

6. Օգտվելով Պ. Բեդիրյանի << Հայերեն շրջասությունների բառարանից >>՝ գրե՛ք տրված շրջասությունների համարժեք բառերը:

ա/ Ալբիոնի երկիր, Անդրկովկասի մարգարիտ, բուրգերի երկիր, երեք հազար կղզիների երկիր, երեք կրոնների քաղաք, երկրորդ Աթենք, թափառող մայրաքաղաքներով տերություն, թխկատերևի երկիր, Ծագող արևի երկիր, ծաղիկների թագավորություն, հազար լճերի երկիր, մայրիների երկիր,

բ/ արդարության մունետիկ, երգեհոնի արքա, երկրորդ Լուսավորիչ, կենսախիռո՞ հայ, վալսերի արքա, հայ Աքիլլես, Հարդագողի ճամփորդ, հայոց Մոլիեր, նորավեպի իշխան, մեծ աղոթասաց, Կամիշինի աքսորյալ, նոր շրջանի Նարեկացի,

գ/ անտառի նահապետ, անտառի պոետ, արևի զավակ, երկնային կանթեղ, կատունների թագուհի, ծաղիկների նվագերգու, ծովերի տիրակալ, կանաչ բարեկամ, կապույտ ոսկի, կրակե բզեզ, հատապտուղների թագուհի, ոսկե նեկտար, սավաննայի արքա, սեղանի թագուհի, սև ոսկի, աստծո գոտի, երկրորդ հաց:

Մենիմաստ դարձվածքներ ❖ ականջին օղ անել - մտապահել ❖ բաց ճակատ – արդար ❖ գետնի երես դուրս գալ – բացահայտվել ❖ դուռուկի տակ պարել – հնազանդվել ❖ երես առնել – շփանալ, հղփանալ ❖ թեթև ձեռք – հաջողակ	Բազմիմաստ դարձվածքներ երես դարձնել – 1. անտեսել, արհամարհել, 2. խռովել, խուսափել ❖ հետ գալ – 1. նախկին վիճակը վերստանալ, ❖ 2. վերակենդանանալ ❖ գլուխ բարձրացնել – 1. զարթնել, հառնել, 2. աշխուժանալ, 3. բմբոստանալ, ընդվզել ❖ կյանք տալ – 1. կենդանացնել, 2. ծնել ❖ հայտնի անել – 1. իմացվել, ի հայտ գալ, 2. իմացնել, իրազեկ դարձնել
--	--

Դարձվածքների տեսակներն ըստ իմաստի

Դարձվածքների տեսակներն ըստ ձևի և իմաստի հարաբերության

Համանուն դարձվածքներ

- | | |
|---|--|
| ❖ աչք փակել – անտեսել | ❖ աչք փակել – քուն մտնել |
| ❖ բերանին նայել – լսել, հնազանդվել | ❖ բերանին նայել - ակնկալել, սպասել |
| ❖ գետնով տալ – տապալել, գլորել | ❖ գետնով տալ – ջարդել, ոչնչացնել |
| ❖ թները փռել – տարածվել, ձգվել | ❖ թները փռել – հովանավորել |
| ❖ լեզվին տալ – անտեղի խոսել | ❖ լեզվին տալ – ճաշակել, փորձել |
| ❖ մատը մատին չխփել – չաշխատել, անգործ մնալ | ❖ մատը մատին չխփել – անտարբեր լինել մեկի կարիքների նկատմամբ |
| ❖ ձեռք քաշել - հրաժարվել | ❖ ձեռք քաշել – ստորագրել |

Դարձվածային հականիշներ

- ❖ ախորժակը **գրգռել** – ախորժակը **կապել**
- ❖ յոթ սարից **այն կողմ** – քթի **տակ**
- ❖ բանը **զուլխ բերել** – բանը **գետին մնալ**
- ❖ շունչը **կտրել** – շունչ **տալ**
- ❖ սայլը **տեղից շարժել** – սայլի **առաջ քար դնել**
- ❖ **առյուծի** կաթ խմել – **մկան** ծակը մտնել

Դարձվածային հոմանիշներ

- ❖ սիրտը **փորն ընկնել** – **լեղաճաք լինել**
- ❖ ականջի **ծայրով լսել** – ականջի **տակով անցնել**
- ❖ աչքերին **թոգ փչել** – աչքերը **կապել**
- ❖ բախտից **գանգատվել** – բախտն **անիծել**
- ❖ նազ **անել** – նազ **ծախել**
- ❖ նամուսը **գետնով տալ** – նամուսը **շները ուտել**

Դարձվածային տարբերակներ

Տարաբաղադրիչ տարբերակներ

1. Հարադրավոր բայերի

- ✓ **անուն հարադիրի հոմանիշ գույգերով կազմվող ճանապարհ** բացել – **ճամփա** բացել – **ուղի** բացել
ճամփան պահել – **ճամփա** պահել
իրար ուտել – **մեկմեկու** ուտել

✓ **անուն հարադիրի և նույնարմատ հարադրությամբ կամ կրկնավոր բարդությամբ կազմվող**

համ առնել - համ-հոտ առնել

ուշքը տալ - ուշք ու միտքը տալ

տուն դնել - տուն ու տեղ դնել

✓ **հոմանիշ բայ-հարադրյալով կազմվող**

դարն անցնել - դարն ապրել

հալած յուղի տեղ ընդունել - հալած յուղի տեղ դնել

թնդանոթի բերանը գցել - թնդանոթի բերանը տալ

✓ **համադրական բայ և հարադրավոր բայ հոմանիշ գույգերով կազմվող**

երեսին նայել - երեսին մոտիկ անել - երեսին մոտիկ տալ

աչքերից կայծեր թռչել - աչքերից կայծեր դուրս թռչել

քիթը տնկել - քիթը վեր տնկել

2. Բառապաշարի գրական և խոսակցական կամ բարբառային շերտի բառերով, արևելահայերենի և արևմտահայերենի բառերով կազմվող

այտը դեմ տալ - թուշը դեմ տալ

ճակատը համբուրել - ճակատը պաշել

դատարկությունը լցնել - պարապը լցնել

ատամները սրել - ակռաները սրել

Ձևաբանական տարբերակներ

1. Հարադրավոր բայի անուն հարադիրի քերականական փոփոխությամբ կազմվող

✓ **անհոդ և հոդով ձևերի հակադրությամբ**

կյանք տեսած - կյանքը տեսած

ձեռք գցել - ձեռքը գցել

ձեռք բռնել - ձեռքը բռնել

✓ **եզակիի - հոգնակիի հակադրությամբ**

կամուրջ գցել - կամուրջներ գցել

կոկորդիլոսի արցունք թափել - կոկորդիլոսի արցունքներ թափել

սանձը բաց թողնել - սանձերը բաց թողնել

✓ **հոլովական տարբեր ձևերով**

ոտքը թեթև - ոտքից թեթև - ոտքով թեթև

երեսին շարտել – երեսով շարտել
երկու ոտքով կաղալ – երկու ոտքից կաղալ

2. Հոմանիշ կապային կառույցներով կամ կապային կառույցով և համապատասխան հոլովաձևով կազմվող

փոշու մեջ մնալ – փոշու տակ մնալ
դարակների վրա մնալ – դարակներում մնալ
իր ուսերի վրա տանել – իր ուսերին տանել

3. Բայածանցագուրկ և բայածանցավոր ձևերի կամ տարբեր բայաձևերի հակադրությամբ կազմվող

դեմքը թթվել – դեմքը թթվեցնել
վզով/ա/ թոկ գցես – վզով թոկ գցեն
ունեմ – չունեմ – ունեցած – չունեցածս/ը/

Բառի անկումով կազմվող տարբերակներ

1. Բայի անկումով

աչքը դռանը մնալ – աչքը դռանը
ականջը ձայնի պահել – ականջը ձայնի
գլխիդ մատաղ լինեմ – գլխիդ մատաղ

2. Գոյականի անկումով

ձեռքը նեղ տեղը – ձեռքը նեղ
կյանքի ուղեգիր ստանալ – ուղեգիր ստանալ
սայլի հինգերորդ անիվ – հինգերորդ անիվ


Կապակցական տարբերակներ

համ – հոտ առնել – համ ու հոտ առնել
քիթ – մոուրթը կախ – քիթ ու մոուրթը կախ
հիսուն – հիսուն – հիսուն առ հիսուն

Փոխատեղական տարբերակներ

կախ գլուխ – գլուխը կախ
ոտքով թեթև – թեթև ոտքով
ճակատը պարզ – պարզ ճակատով¹

¹ Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2008, էջ 301-317:



Վարժություններ և առաջադրանքներ

1. Գրե՛ք տրված

ա/ բայերի հոմանիշ դարձվածքները.

չհանդուրժել, սգալ, դավաճանել, միաբանվել, ենթարկվել, զգաստանալ, ապշել, զղջալ, փախչել, չհավանել, ընտրել, շփացնել, համոզել, զայրանալ, զարհուրել, խրատել, հուսահատվել, բորբոքել, ամուսնացնել, հոգնել, հանդիմանել,

բ/ գոյականների, ածականների և մակբայների հոմանիշ դարձվածքները.

տգեղ, անհաջողակ, խեղճ, բացահայտ, երագող, աղետ, ճարպիկ, ներզգացողություն, փոխզիջում, մենակյաց, հոգատարություն, գոռոզ, փորձառու, ուրախությամբ, օգնող, հաջողություն, անգութ, դավաճանություն, խորամանկ, զիջող:

2. Օգտվելով Պ. Բեդիրյանի «Հայերեն լեզվի դարձվածքների ընդարձակ բացատրական բառարանից»՝ գրե՛ք տրված դարձվածքների հականիշ դարձվածքները.

ոտքը թեթև, գլխին դնել, աչքի սուրմա թոցնող, յոթ սարի հետևում, առյուծի կաթ կերած, բերանը ջուր առնել, առյուծ կտրել, ջրի գին, աչքը ծակ, մեղր ու կարագ դառնալ, աստղը դուրս գալ, խելքի շտեմարան, խելքը գլուխը հավաքել, երկինք հանել, ձվից նոր դուրս եկած, լու քերթող, հոգին տալ, դարձի գալ, երկու քայլի վրա, իրար տակ փորել, հողին հավասարեցնել, ձայն խնդրել, ձեռք ձեռքի տալ, ձեռքից գնալ, շարքից դուրս գալ, ոտ ու ձեռ ընկնել, ոտքի ելնել, ոտքի վրա, տաք անկյուն, ուշքի գալ, քար քաշել, քթի տակ:

3. Բացատրե՛ք տրված դարձվածքների իմաստները.

աչքը փակել-	աչք փակել-
ճամփան կտրել -	ճամփա կտրել -
կյանքը տալ -	կյանք տալ -
հացը կտրել -	հաց կիսել -
սիրտը առնել-	սիրտ առնել-
դեմը առնել -	դեմ առնել -
գլուխը դնել -	գլուխ դնել -
ձեռքը տալ -	ձեռք տալ -
հոգին տալ -	հոգի տալ -
ձեռք քաշել -	ձեռքը քաշել -

4. Տրված դարձվածքներում ընդգծված բառը փոխելով՝ կազմե՛ք դրանց դարձվածային տարբերակները.

լեզվի տակ փուշ չլինել -----
 սիրտը *նսքերն* ընկնել -----
ձեռքից հոտ քաշել -----
ատամի տակ մի բան լինել -----
ականջի ծայրով լսել -----
լեզուն կծել -----
ափերից դուրս գալ -----
 երկու *կրակի* արանքում -----
 շունը շան թաթ չի ծամի -----
 էս *սպուրը* շատ ջուր կվերցնի -----
 ժամանակը *նսկի* է -----
 սիրտը *մղկտալ* -----
սոխ ու հաց, սիրտը բաց -----
 աստծո *պատիժ* -----
 սիրտը *ասել* -----

**5. Կազմե՛ք տրված գոյականական դարձվածքների ձևաբանական կադա-
սթրները, բացատրե՛ք դրանց իմաստները.**

ծաղիկ հասակ, էշի հարսանիք, գայլի ախորժակ, Ձենով Օհան, կոկորդիլոսի ար-
ցունքներ, չոր գլուխ, ցամաք աղբյուր, սև ագռավ, կարմիր արև, եղեմական
խնձոր, ավգյան ախոռներ, տանտալուսյան տանջանքներ, առաջին ջութակ,
երկրորդ երիտասարդություն, երկու տոդ, մատաղ ուտոդ, շուն բռնոդ, կատվի

դրախտ, Աստծու պատիժ, սատանի խելք, անջուր ջրաղաց, անդուռ բերան, եղեմական խնձոր, սև բիծ, քամած լիմոն, կոտրած տաշտակ:

Նմուշ՝ ծոխ կաթ – գոյական (եզակի սեռական) + գոյական (եզակի ուղղական):

6. Պ. Բեդիրյանի «Հայերեն լեզվի դարձվածքների ընդարձակ բացատրական բառարանից» դո՛ւրս գրեք **սատանա** և **աստված** բառերով կազմված երկանդամ դարձվածքներ, որոնցում նշվածները դիտվեն կա՛մ գերադաս անդամ (ածականական դարձվածք), կա՛մ ստորադաս անդամ (գոյականական դարձվածք):

Նմուշ՝ աստծու դուռ – եկեղեցի (գոյականական),
սատանի ճուտ – ճարպիկ (ածականական):

7. Օգտվելով Պ. Բեդիրյանի «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարանից»՝ բացատրե՛ք տրված ածականական դարձվածքների իմաստները.

օգոստոսի աղվես, լույսի կտոր, օձի շապիկ, մածնի մերան, խոտը բերանին, մաղը ծակ, շունչը ծանր, երեսը բաց, մարմանդ ջուր, ծեր աղվես, հին ոսկոր, գիժ մոզի, առու թռած, ծամը կտրած, անհոտ ծաղիկ, թղթե վագր, ասեղ մաշոդ, ջրի տարած, սատանա հեծնող, խելքից հեռու, տակը դատարկ:

8. Օգտվելով Պ. Բեդիրյանի «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարանից»՝ բացատրե՛ք տրված բայական դարձվածքների իմաստները.

աստղերը հաշվել, գլուխը ծեծել, քթերից բերել, բերաններում չիր չթրջվել, քարը ճաքել, այծերը գալ, ծոծրակը քորել, քարին քսել, ճրագով փնտրել, անդանակ մորթել, դափնիների վրա ննջել, փշերի վրա նստել, սառույցի վրա գրել, հորով-մորով անել, կռնակը ցույց տալ, բուրդը քամուն տալ, կտուցը մեղր քսել, ցեխ քսել երեսին, այծին բանջարանոց թողնել, սրտի յուղը հալվել, լեզուն ծոծրակով հանել, սազը պատից կախել, քարը գոգից թափել, աչքում մազ բուսնել:

9. Տրված բայական կապակցությունները գործածե՛ք տարբեր խոսքային միջավայրերում՝ մի դեպքում՝ սովորական, մյուս դեպքում՝ դարձվածային արժեքներով:

Կապակցություն	Սովորական իմաստ	Դարձվածային իմաստ
սև կատու անցնել ճամփին քար գցել հին երգը երգել		

եկած ճամփան մոռանալ բերանը ջուր առնել նոր էջ բացել առաջին ծիծեռնակ երկու կրակի արանքում		
---	--	--

10. Որոշե՛ք տրված մակբայական դարձվածային կապակցությունների ձևաբանական կաղապարները և նշե՛ք իմաստները.

Ադամի թվին, Եվայի զգեստով, ատամի տակ, խելքից դուրս, կրիայի քայլերով, արտասուքն աչքերին, կայծակի արագությամբ, տարին բոլոր, են գլխից, հագար բերան, ծտի թևով, Բախտի բերմամբ, գրողի ծոցը, էշի գատկին, աչքերը չորս, մաքուր հոգով, դատարկ ձեռքով, կոտրած սրտով:

11. Տրված բառերի և բառակապակցությունների դիմաց գրե՛ք նրանց համապատասխան մակբայական դարձվածային կապակցությունները.

շատ արագ, չափազանց դանդաղ, անմիջապես, մեծ պատվով, շատ հեռու, մոտիկ, վաղուց, իմիջայլոց, մեծագույն ջանքերով, շատ ուշադիր, անընդհատ, միանգամից, շատ մոտիկ, անթիվ, Բարեկամաբար, խաղ ու պարով, միասնաբար:

12. Դասդասե՛ք տրված դարձվածքներն ըստ գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության՝ բացատրելով դրանց իմաստները.

ականջը կախ, տա աստված, խունկ ծխել, աղ ու հացով, խղճի ձայն, ջուր ծեծել, անջուր ջրաղաց, զենքը ձեռքին, թանկ ու կրակ, բերանից թույլ, մինչև ուղն ու ծուծը, խելքից դուրս, թևերը փռել, կարապի երգ, սև գործ, ուր որ է, ընկած-ելած, լուսնից ընկած, աչքը ճամփին, մի բերան, աջ ձեռք, երես դարձնել, ի խորոց սրտի, արևը վկա, առաջին ջութակ, կրակի գին, սատանի ականջը խուլ, գետնի երես դուրս գալ, երկու խոսք, աստված չանի, բաժակը լցվել, սև կատու, ծակ գրպան:

Բանալի բառեր - իմաստային ամբողջականություն, փոխաբերականություն, պատրաստի վերարտադրելիություն, պատկերավորություն, մենիմաստ դարձվածքներ, բազմիմաստ դարձվածքներ, համանուն դարձվածքներ, դարձվածային հոմանիշներ, դարձվածային հականիշներ, դարձվածային տարբերակներ, տարաբաղադրիչ տարբերակներ, ձևաբանական տարբերակներ, կապակցական տարբերակներ, փոխատեղական տարբերակներ

Гаяне Халатян, Рузан Джульфаян, Несколько теоретических вопросов и упражнений вокруг фразеологизмов - В нашей статье мы имеем теоретический увлекательный материал, уникальную систему упражнений, шаблоны и графики, связанные с фразеологизмами. Мы затронули семантические группы видов

оборотов речи, варианты оборотов речи, типы оборотов речи в соответствии с основными ингредиентами.

Gayane Khalatyan, Ruzan Julfajan, Number of theoretical issues and exercises over phrases - The following article features some theoretical materials on phrases, patterns and charts resulting from them, as well as a unique system of proposed exercises. We have reflected on the semantic and formal-semantic groups of phrases, their varieties and the types of phrases upon the word class distinction of their key components.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բաղիկյան Խ., Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., 1986:
2. Գևորգյան Ե., Հայերենի դարձվածքները, Ե., 1969:
3. Բեղիրյանի Պ., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Ե., 2011:
4. Մուրվալյան Ա., Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն, Ե., 1959:
5. Ջահուկյան Գ., Աղայան Է., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, 1 մաս, Ա պրակ, Ե., 1980:
6. Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975:
7. Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու (ինչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն), Ե., 2008:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՈԳԵԿԱՆԻ ՕՆՏՈԳԵՆԵՏԻԿ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԻՐՆ ԹՈՒՖԵՅԼԻ «ՀԱՅՅ ԻՐՆ ՅԱԿԶԱՆ»՝ «ԱՐԹՈՒՆԻ ՈՐԴԻ ՈՂԶԸ» ԳՐՔՈՒՄ ԴԻԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ, ՆԱՐԵ ՓԱՐԵՍՈՒԶՅԱՆ

Իրն Թուֆեյլը (արաբերեն ամբողջական ունունը *Abu Bakr Muhammad ibn Abd al-Malik ibn Muhammad ibn Tufail al-Qaisi al-Andalusi*) XII դարի (1110-1185թթ.) արաբ Անդալուսի մուսուլման է՝ գրող, նովելիստ, իսլամական փիլիսոփա, աստվածաբան, բժիշկ, աստղագետ, վեզիր և դատարանի պաշտոնյա։¹ Նրա աշխատություններից միակը, որը պահպանվել է մինչ այսօր և լայն տարածում ուներ ոչ միայն ուշ միջնադարում, այլ նաև հայտնի է մեր օրերում, կոչվում է «Հայ Իրն Յակզան» («Հայայի պատմությունը, Յակզանի որդին», լատինական թարգմանությունը «*Philosophus autodidactus*»²):

Հոդվածում փորձել ենք վերլուծել այս աշխատության հոգեբանական կողմերը, առավելապես ուշադրություն դարձնելով մարդու զարգացման տարիքային ստորաբաժանումներին և յուրաքանչյուր տարիքում տեղի ունեցող հոգեբանական փոփոխություններին, հոգեկանի օնտոգենետիկական զարգացմանը։ Կարծում ենք, որ Իրն Թուֆեյլի այս ստեղծագործությունը մեծարժեք է ոչ միայն փիլիսոփայության, այլ նաև հոգեբանության գիտության համար, քանի որ այն իր մեջ ներառում է մարդայնացման գործընթացի լուրջ վերլուծություններ, մարդու ֆիզիոլոգիական և հոգեբանական զարգացման ընթացքը։

Իրն Թուֆեյլն այս ստեղծագործության մեջ նախ և առաջ նշում է, թե ինչպես է ստեղծագործության հերոսը հայտնվել անմարդաբանկ կղզում։

«Պատմում են մեր բարի նախնիները(թո՛ղ Ալլահը գոհանանքանցով), որ կա մի կղզի Հնդկական հասարակածի տակ գտնվող կղզիներից, և այդ կղզում ծնվեց մարդ առանց հոր և առանց մոր։ Եվ դա այն պատճառով, որ այն ունի օդի ամենաչափավոր ջերմաստիճանը և ամենամեծ կենսական զգայունությունը երկրի բոլոր այլ կողմերի մեջ, քանի որ նրա վրա է ընկնում բարձրագույն լույսը»։³ Ինչպես տեսնում ենք իրն Թուֆեյլը այստեղ ներկայացնում է պրենատալ շրջանը, կյանքի ծագման սաղմնային սկիզբը, որը հետագայում զարգացավ որպես պանսպերմայի տեսություն։

Այս կղզու դիմաց կար ևս մեկ կղզի, որտեղ, ըստ առասպելներից մեկի, ծնվել է Հայ Իրն Յակզանը՝ թագավորի քրոջից և Յակզան անունով մեկից։ Քանի


¹ https://en.wikipedia.org/wiki/Ibn_Tufail

² Общая история философии. Под ред. А. И. Введенского и Э. Л. Радлова, Москва : Директ-Медиа, 2009., стр. 102.

³ Abu Bakr Ibn Tufayl, The History of Hayy Ibn Yaqzan, Trans. By Simon Ockley, New York, p. 39.

որ թագավորը դեմ էր իր քրոջ և Յակգանի հարաբերություններին, երեխայի ծնվելուց հետո թագավորի քույրը, երեխային դնելով արկղի մեջ, նետում է նրան ծովը, և ծովի ալիքները բերում են երեխային վերը նշված կղզին: Ըստ մյուս առասպելի՝ այս կղզում, տարիներ շարունակ հղկված կավից, սկսվեց ծնման գործընթացը: Նրա (կավի) մեջ սկսեցին առաջանալ պղպջակներ: «Այդ ժամանակ հոգին(լույսը, Ն.Փ.)՝ Աստծուց եկող, միացավ նրան(պղպջակին) և այնպես ամուր կպավ, որ հնարավոր չէր առանձնացնել նրանից ո՛չ զգայությունը, ո՛չ գիտակցությունը»:¹ Ինչպես նկատում ենք Իբն Թուֆեյլն անդրադառնում է նաև կյանքի սուբստանցիաների հիմնախնդրին (հող, օդ, ջուր, կրակ), կարևորել դրանց կենսական դերը, իսկ հոգին և մարմինը դիտում էր անբաժանելի, ինչը վկայում էր նրա մատերիալիստական հայացքերը:

Իբն Թուֆեյլը Հայյի զարգացումը նկարագրում է յոթնամյակներով: Առաջին յոթնամյակի 2-րդ տարում Հայյն արդեն կարողանում է քայլել, ատամ է հանում: Բոլոր կենդանիների ձայնային նմանակումներ է կատարում, հատկապես եղնիկների, որոնց շրջապատում նա մեծանում էր: Ապա, ինչպես նշում է Թուֆեյլը, «նրա հոգում ամրացել էին առարկաների ձևերը, նույնիսկ այն ժամանակ, երբ նրանք իր աչքի առջև չէին, նրամոտ առաջանում էր որոշների



Նկ.1 Մարդ-գիտելիք հարաբերությունները կյանքի առաջին

¹ Նույն տեղում, էջ 46:

նկատմամբ հիացմունք, որոշների նկատմամբ զգվանք»¹: Այսօր ժամանակակից տարիքային և զարգացման հոգեբանության մեջ այս հիմնահարցներն առավել խորությամբ ուսումնասիրվում են, և գիտնականների զգալի մասը (Ժ. Պիաժե, Գալպերին, Դավիդով, Օզգուն և ուրիշներ) հենց պատկերավոր մտածողության և երևակայության գործընթացներն են դիտում որպես մարդու մտավոր զարգացման և աշխարհաճանաչման բարձրակարգ գործընթացներ: Այստեղից կարելի է հետևություն անել, որ Հայլի մոտ կենդանական խոսքի ձևամորման հետ մեկտեղ զարգանում է նաև պատկերավոր մտածողությունը, ինչպես նաև արտահայտվում են արդեն իսկ ձևավորված հույզերը: Խոսքի և մտածողության զարգացման արդյունքում արդեն 3 տարեկանում երեխայի մոտ ձևավորվում է «ես»-ը: Արդեն 7 տարեկանում Հայլի մոտ ձևավորվում է նրա բարոյականի զարգացման և ճանաչողական ոլորտի զարգացման պահանջմունքները: Նա փորձում էր հասկանալ, թե ինչու՞ է տարբերվում իր հասակակիցներից: Իր հասակակիցներից ունեին պոչ, լավ խիտ մազածածկույթ, որոշները թռչում էին: Սրանք էին Հայլին տանջող հարցերը այդ տարիքում: Իբն Թուֆեյլն այս կերպ ընդգծել է նաև անձի տարիքային զարգացման ճգնաժամները, դրանցում կատարվող հոգեբանական փոփոխությունները: Այն, որ հոգեբանության մեջ արդեն աքսիմ է դարձել 3 և 7 տարեկանի ճգնաժամը, և որ ես – կոնցեպցիան և անձի արժեքային համակարգի, ինքնագնահատականի խնդիրներ են դիտարկվում որպես զարգացման նախադրյալ, դեռևս իրենց մեկանություններն ունեցել «Հայլ Իբն Յակզան» աշխատության մեջ:

Արդեն 2-րդ յոթնամյակում(առավել հակիրճ տե՛ս նկ. 1),որը հոգեբանության մեջ համահավասար է դեռահասության ճգնաժամի հետ,և նկարագրվում է որպես պուբերտանտային կամ սեռահասունացման (ըստ Զ. Ֆրեյդի՝ գենիտալ) շրջան:

Հետագայում Իբն Թուֆեյլն անդրադառնում է մարդու օրգանիզմի զարգացմանը և դրանց հոգեկան աշխարհի հետ ունեցած կապին: Ավելի վաղ նրա հերոսը նկատել էր, որ մարմնի բոլոր մասերը տափակ են և միայն գանգը, կուրծքը և փորն են խոռոչավոր, և որ վտանգավոր օրգանը(մոր,ինչպես նաև այլ կենդանիների մահվան համար պատասխանատու) այս երեքից մեկում՝ դրանց մեջտեղում, կարող է գտնվել: Հայլը գալիս է այն եզրակացության, որ այդ օրգանը պետք է գտնվի կրծքում, սիրտում, որին, ըստ նրա, լքել էր ինչ-որ բան, ենթադրեց, որ եղնիկի սիրտը լքել էր կրակը: Նա, ուսումնասիրելով մնացած օրգանները, գալիս է եզրակացության, որ ինչքան էլ, որ մարմնի տարբեր մասերը տարբեր ձևով շաժվեն, նրանց մեջ միասնականը հոգին է: Թուֆեյլը նշում է, որ յուրաքանչյուր առանձին օրգանի ենթարկվում է իրեն համապատասխան գործողությունը: Բայց յուրաքանչյուր գործողություն տեղի է ունենում այն

¹ Նույն տեղում, էջ 53:

Ժամանակ, երբ օրգանին հասնի հոգու մասը ուղիներով, որոնք կոչվում են նյարդեր: Այս նյարդերը ստանում են հոգի միայն ուղեղի խոռոչից, իսկ նա ստանում է սրտից: Ուղեղում կան շատ հոգիներ՝ բաժանված մասերի: Եթե չկա օրգանը, ուրեմն հոգին էլ չկա, և եթե այս հոգին ինչ-որ ձևով հեռանում է մարմնից, վրա է հասնում մահը:

Մեկնաբանելով վերջին գրվածները՝ նշենք, որ Իբն Թուֆեյլը շատ մոտ էր իրականությանը, հոգու (հոգեկանի) գտնվելու վայրի մասին: Դեկարտը իր ժամանակին (XVI-XVII դդ) նույնպես խոսել է արա մասին ասելով, որ «Մարմինը մեքենա է, որի գլխավոր «բաղադրիչը» հոգին է: Այստեղից Դեկարտի համար այնքան կարևոր էր այն տեղի մասին հարցը, թե որտեղ է այն (հոգին, Ն.Փ.) կապված և հաղորդակցվում օրգանիզմի հետ: Այդպիսի միջանկյալ օրգան է ուղեղային ցանցը, մարմնի և հոգու կապը իրականացնող, որտեղ «կենսական հոգիների» շարժումները փոխվում են հոգու զգայության և ընկալման: Եվ հենց նրանում տեղի է ունենում հետադարձ փոխակերպումը. հոգու շարժումները վերաձևավորվում են մարմնական ցանցի շարժումների, որը հոգևոր ապրումները դարձնում է «կենսական հոգիների», օրգանիզմի գործունեությունը որոշող շարժումներ»:¹ Ենթադրվում է, որ նա լավ է ուսումնասիրել արաբական փիլիսոփայությունը և հենց Թուֆեյլի ստեղծագործությունից է օգտվել հոգու նման մեկնաբանման համար:

Այսպիսով արդեն 21 տարեկանում Հայյի ստեղծարարությունը շատ տարբեր ձևերով է դրսևորվում: Հենց այս տարիքում է մարդու գիտակցությունը հասնում իր գագաթնակետին:

Հայյ իբն Յակգանի չորրորդ յոթնամյակը ավարտվում է Արաբչի գոյության մասին գիտելիքի ձեռքբերմամբ: Այս ժամանակահատվածում Հայյ իբն Յակգանի մոտ առաջանում է աշխարհի միասնականության վերաբերյալ առաջին պատկերացումները, ապա նա իր եզրակացությունների միջոցով կարողանում է հասնել մատերիայի և առաջնային մատերիայի գաղափարին, որը նրան ուղղորդում է դեպի ստեղծող պատճառի, ապա Արաբչի մասին գիտելիքի ձեռքբերմանը:

Իբն Թուֆեյլը չի ընդունում ո՛չ աշխարհի հավերժությունը, ո՛չ նրա ժամանակավոր արարումը: Այս անտինոմիան ² պարզորեն ցույց է տալիս կանտյան դիրքորոշումն այն մասին, որ բանականությունն ունի իր սահմանները և որ նրա փաստերն առաջնորդում են դեպի հակասությունների լաբիրինթոս³:

¹ Б. В. Марков, Философия, Питер, 2009, էջ 210.

² Կանտյան փիլիսոփայության մեջ օգտագործվող եզրույթ, որ նշանակում է իրար հակասող երկու այնպիսի դատողություններ, որոնք հավասարապես կարող են ապացուցվել:

³ Siddiqi B. H., Ibn Tufail, p. 533.

Հետևելով Իբն Սինային՝ Իբն Թուֆեյլը տարբերություն է դնում գոյության և ժամանակի հավերժության միջև և ցույց է տալիս, որ Աստված գոյության տեսանկյունից նախորդել է աշխարհը, սակայն ոչ ժամանակի տեսանկյունից¹:

Այսպիսով, Հայր իբն Յակզանի կյանքի հինգերորդ յոթնամյակն ավարտվում է Արարչի գոյության անհրաժեշտության բացահայտմամբ: Նա սկսում է Արարչին դիտարկել որպես պատճառ, իսկ աշխարհը՝ նրա հետևանք: Իրեն բնորոշ բանական եզրահանգումներ անելու կարողության շնորհիվ Հայր իբն Յակզանը հանգում է Արարչի՝ Անհրաժեշտ գոյ լինելու մասին եզրակացությանը, որով ավարտվում է նրա կյանքի հինգերորդ յոթնամյակը:

Նա ուսումնասիրության է ենթարկում այս բարձրագույն էությունը՝ ջանալով հասկանալ, թե կարող է արդյոք այն մահանալ, կամ փչանալ և քայքայվել, թե՞ այն հավերժ գոյություն ունի: Նա տեսնում է, որ փչանալը և քայքայումը բացառապես մարմնի հատկություններ են և կայանում են նրանում, որ մարմիններն իրենց վրայից գցում են մի կերպարը և մյուսն են հագնում: Սակայն ոչ մի կերպ հնարավոր չէ պատկերացնել, որ այն, ինչ անմարմին է և գոյության համար մարմնի կարիք չունի, կարող է քայքայման ենթարկել»²(արար. թարգմանությունը ըստ Հասմիկ Փարեմուզյանի): Կատարելով այսպիսի դատողություններ՝ նա գալիս էեզրահանգման, որ իր սեփական կատարելությունն ու հաճույքը միայն Անհրաժեշտ գոյին մշտապես տեսնելու մեջ է: Այսպիսով, Հայր իբն Յակզանը ամբողջությամբ մեկուսանում է աշխարհից, որպեսզի կարողանա հասնել Անհրաժեշտ գոյի հետ նմանությանը՝ սահմանափակելով իր բոլոր շարժումներն ու մտքերը և հրաժարվելով մարմնական բոլոր հատկություններից:


Այսպիսով, կարելի է ասել, որ Իբն Թուֆեյլի հերոսի համար summum bonum-ը ³ երկրային երջանկությունը չէ, այլ Աստծու հետ ամբողջական միավորումը և բացարձակ ճշմարտությանը հասնելը, ինչը հաջողվում է նրան երկար փորձերի և տանջանքների արդյունքում, որի ընթացքում նա ոչ միայն ձեռք է բերում անտիկ փիլիսոփաներին բնորոշ գիտելիքների ամբողջությունը, այլև հասնում է միստիկ գիտելիքի ձեռքբերմանը, որը հանգեցնում է երջանկության: Նա հասնում է իր բաղձալի գիտելիքին մոտ հիսուն տարեկանում(առավել հակիրճ տե՛ս նկ.2): Սրանից կարելի է ենթադրել, որըստ

¹ Siddiqi B. H., Ibn Tufail, p. 533.

² Ibn Tufayl, Hayy ibn Yaqzān, Al-Dūka, s. a., p. 63-64.

³ Լատիներենից թարգմանաբար նշանակում է բարձրագույն բարիք: Հելլենիստական էթիկան summum bonum-ը սահմանում է որպես նպատակ, որին պետք է ուղղված լինեն բոլոր ջանքերը, եթե մարդը ցանկանում է ապրել լավ և երջանիկ կյանք: Մանրամասն տե՛ս Thorsrud H., Ancient Greek Skepticism, Internet Encyclopedia of Philosophy, <http://www.iep.utm.edu/skepanci/>, (25.04.2017).

Իբն Թուֆեյլի՝ մարդը կարող է հասնել բացարձակ գիտելիքի իր կյանքի յոթերորդ յոթնամյակի ավարտին:



Նկ.2 Արաբիչ-բարձրագույն (ճշմարիտ) գիտելիք


Այժմ խոսենք Հայյի և հասարակության միջև հարաբերությունների մասին: Ինչպես արդեն նշվել է կար նաև մեկ այլ՝մարդաբնակ, կղզի: Այդ կղզում էին մեծացել երկու երիտասարդ Աբսալ և Սալման անուններով: Աբսալը գիտեր այն կղզու մասին, որտեղ ապրում էր Հայյ Իբն Յակգանը, գիտեր նրա մեղմ կլիմայի, բերրիության մասին: Նա մտածում է, որ կգտնի այդ կղզում այն ինչ փնտրում է, ուստի որոշում է մեկուսանալ մարդկանցից և տեղափոխվում է այդ կղզի:

Հայյը տեսնելով Աբսալին հասկանում է, որ գտնվել է այն մեկը, որը նմանություն ունի իր հետ: Այդ իսկ պատճառով Հայյը ցանկանում է ուսումնասիրել, մոտիկից շփվել Աբսալի հետ: Հայյը շատ ընկալունակ էր և շատ հեշտորեն է սովորում մարդկային լեզուն, նույնիսկ այդ տարիքում, որը հոգեբանության տեսանկյունից անհնար է: Սովորելով լեզուն Հայյը պատմում է կղզում՝ իր ձեռք բերած գիտելիքի մասին, փորձում է կղզու բնակիչներին ցույց տալ ճշմարիտ գիտելիքի ճանապարհը: Այս ընթացքում Հայյի մոտ երկու հարց է առաջանում.

- ինչու՞ են մարգարեն մեծ մասամբ օգտվում առակներից,
- ինչու՞ են կղզու բնակիչները հասնում Աստծուն ծեսերի և զգայություններ փիջոցով:

Սկզբում մարդկանց հետաքրքրում էր, թե Հայրը ինչպես է պատմություններ պատմում, այն մասին, թե ինչպես է ապրել իր կզոլում: Մական, երբ Հայրը սկսեց խոսել ճշմարիտ գիտելիքի մասին, մեկնաբանել մարգարեի առակները, նրան ոչ ոք չի հասկանում: Ուստի նա և իր ընկեր Աբսալը վերադառնում են Հայր կղզի և մենանում այնտեղ:

Հոգեբանության տեսանկյունից կարելի է նկատել, որ Հայրը ուղղակի սոցալիզացիայի չի ենթարկվում: Հետագայում հոգեբանության մեջ սա անվանել են մաուզլիի համախտանիշ:¹ Եթե փորձենք Հայր Իբն Յակզանի շփվելու փորձը գուցահեռ տանել Շեննոնի ² «տեղեկատվական տեսության» հետ ապա կստանանք հետևյալ պատկերը.



Նկ.3 Անհատական գիտելիքի մերժում (Շեննոնի տեսություն)

¹ «Մաուզլի», «Ֆերալային մարդիկ», լատ. Fera բառից՝ վայրի կենդանի, http://www.wolfnight.ru/forum/wolf_theme.php?theme=107

² Կլոդ Շեննոն ամերիկացի ինժիներ և մաթեմատիկոս, ով 1948թ.-ին ստեղծել է տեղեկատվական տեսությունը: Այս տեսության մեջ ներկայացվում է տեղեկատվության փոխանցման հետևյալ հաջորդականությունը. տեղեկատվության աղբյուր, փոխանցող, խողովակ, ստացող, վերջնական ստաց: Տեղեկատվության աղբյուրը տեղեկատվությունը փոխանցողի միջոցով ուղղորդում է դեպի կայի խողովակ, որի միջոցով այն հասնում է ստացողին, ապա վերջնական ստացիին: Կարևոր է այն, որ խողովակն ունի տեղեկատվության փոխանցման սահմանային արագություն, ինչպես նաև նրա վրա ազդող աղմուկ, որը երբեմն խեղաթյուրում է տեղեկատվության որակը, որի պատճառով էլ երբեմն սխալ տեղեկատվություն է հասնում տեղ: Սխալ տեղեկատվություն է ստացվում նաև այն ժամանակ, երբ տեղեկատվության փոխանցողի կողմն անձանոթ կամ քիչ ծանոթ է ստացողին, որը բարդացնում է ապակողովորումը, չնայած երբեմն հնարավոր է լինում ճիշտ ապակողովորել այն: Ըստ այս տեսության՝ աղմուկը հաշվի առնելով տեղեկատվությունը կարելի է այնպես կողավորել, որ այն բոլոր ստացողները հասկանան: Մանրամասն տե՛ս Shannon C. E., A Mathematical Theory of Communication, <http://math.harvard.edu/~ctm/home/text/others/shannon/entropy/entropy.pdf>

Ամփոփելով Իբն Թուֆեյլի մոտեցումները և նրա գաղափարները գետեղված «Հայ Իբն Յակգան» աշխատության մեջ՝ հանգում ենք այն եզրակացության, որ 12-րդում արաբական փիլիսոփայությունը արտացոլում էր հոգեկանի զարգացման հիմնախնդիրները, մարդու ֆիլոգենետիկ և օնոտոգենետիկ զարգացումը, քննարկում էր անհատի սաղմնային և հետագա տարիքային փուլերը և դրանցում առկա նորագոյացությունները, մարդու՝ որպես անձնավորության պահանջմունքները, հույզերը, ապրումները, ինչպես նաև տրվում էր դրանց մեխանիզմները ու օրինաչափությունները:

Բանալի բառեր - Իբն Թուֆեյլ, «Հայ Իբն Յակգան», հոգեկանի արտացոլում, մարդու տարիքային ստորաբաժանում:

Դիանա Սարգսյան, Նարե Պարեմուզյան, Հոգեկանի օնոտոգենետիկ զարգացման նկարագիրը Իբն Թուֆեյլի «Հայ Իբն Յակգան» «Արթունի որդի ողջը» գրքում - Հոդվածում ներկայացված է 12-րդ դարի արաբ փիլիսոփա Իբն Թուֆեյլի «Հայ Իբն Յակգան» աշխատության հոգեբանական կողմերը: Իբն Թուֆեյլն այն հեղինակներից է, որն ամենաքիչն է ուսումնասիրվել հոգեբանության ոլորտում, սակայն, որի մտքերն ու գաղափարները ամբողջապես վերաբերում են մարդու հոգեկանի զարգացմանը, աշխարհընկալմանն ու ինքնաճանաչմանը: Նա իր գրքում անդրադառնում է այնպիսի հարցերի մանրակրկիտ քննարկմանը, որոնք վերաբերում են մարդու տարիքային զարգացմանը, հոգեկանի ճանաչողական գործընթացներին, մարդու պահանջմունքներին և հետաքրքրություններին, մարդկային փոխհարաբերություններին: Կարծում ենք, որ Իբն Թուֆեյլի՝ մարդու և նրա հոգեկանի զարգացման մոտեցումները արդիական են և արժանի հոգեբանական խորքային վերլուծություն:

Диана Саргсян, Наре Паремужян, Описание онтогенетического развития психики в книге Ибна Туфейла «Хай Ибн Ягзан» - «Живой, сын бодрствующего» - В статье представлены психологические аспекты арабского философа 12-го века Ибна Туфаила «Хай Ибн Ягзан». Ибн Туфаил - один из тех авторов, кто наименее был изученным в области психологии, но чьи мысли и идеи полностью связаны с развитием психики человека, мировоззрения и самосознания. Он ссылается на тщательное обсуждение вопросов, касающихся возраста, когнитивных процессов, потребностей, интересов и человеческих отношений. Мы полагаем, что подходы Ибн Туфаила к человеку и его психическое развитие актуальны и достойны психологического углубленного анализа.

Diana Sargsyan, Nare Paremuzyan, Description of mental ontogenetic development on the book Ibn Tufeil's "Hayy Ibn Yagzan" - "Alive, Son of awake" - The article presents the psychological aspects of the 12th-century Arab philosopher Ibn

Tufail's "Hayy Ibn Yaqzan". Ibn Tufail is one of those authors who was slightly studied in the field of psychology but whose thoughts and ideas completely relate to the development of a person's psychology, worldview and self-awareness. He refers to a thorough discussion of issues relating to age, human cognitive processes, needs, interests and human relationships. We believe that Ibn Tufail's approaches of a human and his mental development are actual and worthy of psychological in-depth analysis.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Марков Б. В., Философия, Питер, 2009, 352 с.
2. Общая история философии. Под ред. А. И. Введенского и Э. Л. Радлова, Москва : Директ-Медиа, 2009., ст. 544 с.
3. Abu Bakr Ibn Tufayl, The History of Hayy Ibn Yaqzan, Trans. By Simon Ockley, New York, 1246 p.
4. Ibn Ṭufayl, Ḥayy ibn Yaqz ān, Al-Dūḥ a, s. a., p. 63-64.
5. Shannon C. E., A Mathematical Theory of Communication,
<http://math.harvard.edu/~ctm/home/text/others/shannon/entropy/entropy.pdf>
6. Siddiqi B. H., Ibn Tufail, 2015, 533 p., *Siddiqi, B.H.* "From Hayy bin Yaqzan to 'the Children of Light,' " Pakistan Philosophy Journal, 7 (1963), pp. 57-70. "Ibn Tufayl," in A History of Muslim Philosophy, edited by M.M. Sharif (Wiesbaden: Otto Harrossowitz, 1963), I, 526-40. "The Philosophy of Hai Ibn Yaqzan," Pakistan Philosophy Journal, 2 (1965), pp. 69-75.
7. https://en.wikipedia.org/wiki/Ibn_Tufail

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ

ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՄԱՅՐԵՆԻ

ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԿՋԲՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

ԲԱԺԻՆԼԵՐՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐՈՒՄ

ԼԻԴԱ ԲԱԼԱԲԵՎՅԱՆ

Լսողության խանգարում ունեցող երեխաների ուսուցումը հատուկ կրթահամալիրում ունի մի շարք առանձնահատկություններ: Նախապատրաստական դասարանում խոսքի ուսուցման սկզբնական շրջանն ունի իր խնդիրները, ուսուցման բովանդակությունը, հատուկ մեթոդական հնարները: Ուսուցման սկզբնական շրջանում լսողության խանգարում ունեցող երեխաները կարողանում են արտահայտվել միայն որոշ բառերով՝ որպես ինքնատիպ նախադասություններ, կամ դրանց աղավաղված միացություն:

Մայրենի լեզվի ուսուցման գործընթացում հաշվի են առնվում լսողության խանգարում ունեցող երեխաների խոսքի զարգացման առանձնահատկություններ: Նախապատրաստական դասարանում լեզվի ուսուցումը հիմք է հանդիսանում առաջինից մինչև վերջին դասարանի ուսումնական նյութը յուրացնելու համար: Մայրենիի ուսուցման սկզբնական փուլում լսողության խանգարում ունեցող երեխաների մոտ ձևավորվում են խոսքային շփման առաջնահերթ հմտություններ, ուսուցանվում է խոսքը՝ որպես հաղորդակցման միջոց¹:

Նախապատրաստական դասարանի մայրենի լեզվի ուսուցման սկզբնական շրջանի խնդիրները կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

- Հաղորդակցման հմտությունների և բառային մտածողության զարգացում,
- Խոսքի ուսուցում՝ վերբալ և ոչվերբալ եղանակներով,
- Գրաձանաչության ուսուցում (կարդալ, գրել)

Նշված խնդիրները լուծելու համար նախ և առաջ լսողության խանգարում ունեցող երեխաների մեջ պետք է դաստիարակել խոսելու ցանկություն, որպեսզի երեխան զգա միջավայրի ջերմությունը, հոգատարությունը, ուշադրությունը, սերը, որտեղ բոլորը զբաղվում են որևէ գործունեությամբ, մտքեր են փոխանակում:

Մայրենի լեզվի հաջողուսուցման կարևոր պայման է սովորեցնել և անհրաժեշտության դեպքում շփման ժամանակ օգտագործել հաղորդակցման համակարգը, որը դպրոցական ուսուցման պայմաններում իրականացվում է

¹ Եղիազարյան Ն., «Օրագիր-ձեռնարկ լսողության խանգարում ունեցող երեխաների նախապատրաստական դասարանի համար», Երևան, 2010 թ. էջ 15-20:

աշակերտների գործունեության տարբեր տեսականների կազմակերպման և խոսքային հիմք ստեղծելու համար¹:

Նախապատրաստական դասարանի սկզբնական շրջանը լուծում է ինչպես բուն գրաձանաչության՝ կարդալու և գրելու կարողությանը հաջողությամբ տիրապետելու մի շարք խնդիրներ, այնպես էլ մի շարք շտկող մանկավարժական խնդիրներ, որոնք նպաստում են ամբողջ հետագա աշխատանքներին: Այս շրջանի խնդիրներն են՝

1. Աշակերտներին ծանոթացնել դպրոցի կարգ ու կանոնին,

- դպրոցի շենքին, պայմաններին,

- դասարանում իրենց պահելու կարգին,

- աշակերտներին ծանոթացնել միմյանց հետ:

2. Ուսուցիչն ուսումնասիրում է աշակերտական կազմը՝ համագործակցելով դպրոցի սուրդումանկավարժի, հոգեբանի, սոցիալական աշխատողի, բժշկի հետ:

3. Ուսումնական գործունեության հմտությունների ձևավորում՝ նկարում են, խաղում, սովորում են հասկանալ դիմացինի խոսքը և այլն:

4. Խոսքի զարգացում (խոսքի ընկալում, խոսք կառուցելու լեարողության զարգացում):

5. Շրջակա միջավայրի մասին պատկերացումների ճշգրտում, ընդլայնում:

6. Լսողական ընկալման զարգացում, հնչյունային վերլուծություն և համադրություն կատարելու հմտությունների ձևավորում:

7. Տեսողական ընկալմանն տարածական կողմնորոշման զարգացում:

8. Արտաբերական ապարատի մկանների մարզում:

9. Ձեռքը գրելուն նախապատրաստում. մանրմոտորիկայի զարգացում:

10. Հոգեկան գործընթացների՝ մտածողության, հիշողության, ուշադրության զարգացում:

11. Վերլուծահամադրական գործընթացների զարգացում²:

Նախապատրաստական դասարանի սովորողների հետ աշխատանքը հաճախ սկսվում է ձայնի կարգավորումից, հնչյունի դրումից: Առաջին իսկ դրված հնչյունները անմիջապես ներմուծվում են բառի մեջ, որոնք երեխաները սովորում են ընկալել լսողատեսողությամբ և բանավոր արտաբերում են դրանք: Հետագայում յուրաքանչյուր նոր հնչյուն տրվում է բառի մեջ: Երեխաները սովորում են արտասանել հնչյունը առանձին, հետո՝ վանկում, իսկ վերջում՝ բառի մեջ:

¹ Пелымская Т. В., Шмотко Н. Д., „Формирование устной речи дошкольников с нарушением слухом“, Москва, 1995 г. էջ 87-94

² Речицкая Е. Г., Пархомина Е. Б., „Готовность слабослышащих детей дошкольного возраста к обучению в школе“, Москва, 2000 г. էջ 102.

Մայրենի լեզվի ուսուցումը նախապատրաստական դասարանում իրականացվում է հատուկ դասերի, ինչպես նաև բոլոր ուսումնական առարկաների և պարապմունքների ժամանակ: Բացի այդ, խոսքի զարգացման աշխատանքներ են տարվում նաև արտադասարանական պարապմունքներին, որտեղ կազմակերպում է խաղեր, էքսկուրսիաներ, կենդանիների և բույսերի դիտումներ և այլն:

Այդ պարապմունքների նպատակն է զարգացնել լսողության խանգարում ունեցող աշակերտների առօրյա-խոսակցական խոսքը՝ որպես օժանդակ միջոց օգտագործելով մատնախոսությունը: Ուսուցչի խնդիրն է դասի ժամանակ ձեռք բերած խոսքային հմտությունների և կարողությունների ամրապնդումը՝ տարաբնույթ գործունեությունների միջոցով նոր խոսքային նյութը ներմուծելով¹:

Նախապատրաստական դասարանի չլսող երեխաների մայրենի լեզվի ուսուցումը կազմված է երեք բաժիններից.

1. Մատնախոսության ուսուցում,
2. Բանավոր խոսքի ուսուցում,
3. Գրաճանաչության ուսուցում,

Մայրենի լեզվի ուսուցումը տեղի է ունենում նաև ուսումնական, աշխատանքային, խաղային գործունեության ժամանակ: Ընդհանուր և խոսքի զարգացում առավել շատ տեղի է ունենում առարկայագործնական դասերի ուսուցման և խմբային աշխատանքների ժամանակ:

Նախապատրաստական դասարանում ուսուցանվող երեխաների հետաքրքրությունները և հաղորդակցման կրիքները բավականին բազմազան են, դրա համար անհրաժեշտ է հնարավորինս կարճ ժամանակահատվածում ապահովել հաղորդակցման համար անհրաժեշտ խոսքային նյութով: Մակայն հաճախ կարող է նաև բարդություններ առաջանալ (մտքերն արտահայտելու անկարողություն, բառերի բացթողումներ և այլն), դրա համար մատնախոսությունը շատ է օգնում՝ որպես օժանդակ միջոց: Մատնախոսությունը նպաստում է երեխային հասկանալ իրեն ուղղված խոսքը: Խոսքային նյութը երեխաները սկզբում կարդում են բանավոր – մատնախոսությամբ, իսկ հետո հետզհետե մատնախոսությունը դուրս է մղվում և օգտագործվում է միայն բանավոր խոսք: Իսկ բանավոր խոսքի ձևավորման համար անհրաժեշտ է՝

- Խոսքային շնչառության զարգացում,
- Ձայնի ձևավորում
- Հնչյունների և հնչյունակապակցությունների ձևավորում,
- Բառերի վրա տարվող աշխատանք
- Նախադասության վրա տարվող աշխատանքներ:

¹ Зыков С. А., „Методика обучения глухих детей языку“, Москва, 1977 г էջ 48-50.

Այս աշխատանքներից հետո տեղի է ունենում կարգալու որակական հատկանիշների զարգացում, որին օգնում է մատնախոսությունը: Մատնախոսության օգտագործման պայմաններում ճշտող երեխաները արագորեն կուտակում են որոշակի բառապաշար, հիմնավորապես յուրացնում են բառի կառուցվածքը: Սա բացատրվում է նրանով, որ մատնախոսության միջոցով լսողության խանգարում ունեցող երեխաները վերլուծում են բառերն ու «առանձին մասերի» այսինքն՝ կատարում են բառի հնչյունային վերլուծություն և համադրություն, որը շատ կարևոր է¹:

Մատնախոսությանը տիրապետելը մեծապես օգնում է կարգալու և գրելու հմտությունների ձևավորմանը: Չլսող երեխաները մատնախոսության շնորհիվ կարողանում են գրել և կարդալ: Երեխաները այն սովորում են գրաձանաչության դասերին և յուրացնում նախապատրաստական դասարանի վերջում: Մատնախոսությունն օգնում է նաև լեզվի տիրապետման գործընթացին:² Գրաձանաչության ուսուցումը սկսվում է բանավոր խոսքի հետ տարվող աշխատանքից հետո, քանի որ հնչյունը հնարավոր չէ նշանակել տառով, որն երեխան դեռ չգիտի: Սկզբում պետք է սովորեցնել հնչյունի արտաբերումը, հետո այն նշանակել համապատասխան տառով՝ կապ ստեղծելով արտաբերված հնչյունի և նրա տառի միջև: Բայց սխալ կլինի գրաձանաչության ուսուցումը սկսել այն բանից հետո, երբ բավականաչափ զարգացած կլինի բանավոր խոսքը կամ դրված կլինեն բոլոր հնչյունները: Այս դեպքում գրաձանաչության ուսուցումը հետ է մղվում: Մինչդեռ մեր խնդիրն է լսողության խանգարում ունեցող երեխաներին հանրավորինս արագ ուսուցանել գրել և կարդալ: Հենց որ աշակերտները սովորում են արտաբերել հնչյունն առանձին և բառի մեջ, կարելի է անցնել տվյալ հնչյունի գրաֆիկական նշանի ցուցադրմանը՝ գրաձանաչության ուսուցմանը: Մայրենիի ուսուցման համար անհաժեշտ է ունենալ զանազան գունազարդ խաղալիքներ, նկարներ, բառաքարտեր: Յուրաքանչյուր պարապմունք պետք է անցկացնել ինքնատիպ խաղերի կիրառմամբ: Միայն այս դեպքում հինգ, վեց տարեկան երեխաների համար ուսուցումը կլինի հաճելի, մատչելի, հետաքրքիր ու արդյունավետ:

Նախապատրաստական դասարանում մայրենի լեզվի ուսուցման ընթացքում շատ կարևոր է սուրդումանկավարժի դերը, նրա խոսքը պետք է լինի հստակ, կանոնակարգված, առանց ավելորդ բառերի, մյուսևողմից էլ չի կարելի շատ պարզեցնել, աղքատացնել խոսքը քանի որ լսողության խանգարում ունեցող երեխան սովորում և ընդօրինակում է հենց ուսուցչի խոսքից³:

¹Быкова Л. М., Горбунова Е. А., Зыкова Т. С., Носкова Л. П., “Методика обучения русскому языку в школе для глухих детей”, Москва, 1991 г. էջ 186.

² Зикеева А. Г., „Обучение учащихся подготовительного 1-4 классов школы глухих”, Москва, 1984 г. էջ 96-99.

³ Назарова Л.П., “Методика развития слухового восприятия у детей с нарушением слуха.”, “Москва, 2001 г. էջ 144.

Բանալի բառեր – լսողության խանգարում, խոսքի զարգացում, սուրդոմանկավարժ, տեսողական ընկալում, մատնախոսություն, տարածական կողմնորոշում, մանր մոտորիկա, ձայնի ձևավորում, գրաճանաչության ուսուցում:

Լիդա Բալաբեկյան, Լսողության խանգարում ունեցող երեխաների մայրենի լեզվի ուսուցման սկզբնական շրջանի խնդիրները. բաժիններն ուսուցման առաջին տարում- հոդվածումներկայացված է լսողության խանգարում ունեցող երեխաների մայրենի լեզվի ուսուցման սկզբնական շրջանի խնդիրները: Մայրենիլեզվիուսուցումը տեղի է ունենում, ինչպես նշել ենք մատնախոսության, բանավոր խոսքի և գրաճանաչության ուսուցմամբ, առանց այս ամենի գրեթե անհնար է նախապատրաստական դասարանում մայրենի լեզվի ուսուցումը:

Այսպիսով՝ նախապատրաստական դասարանի մայրենի լեզվի ուսուցման սկզբնական շրջանի խնդիրները բազմազան են, սակայն առաջնահերթ խնդիրը լսողության խանգարում ունեցող երեխայի ընդհանուր զարգացումն է, որը առանց սուրդոմանկավարժի հնարավոր չէ:

Лида Балабекян, Проблемы, возникающие у детей с нарушениями слуха на начальной стадии обучения родному языку разделы первого года обучения - В своей статье о проблемах, возникающих у детей с нарушениями слуха на начальной стадии обучения родному языку и о разделах первого года обучения описывает проблемы, которые возникают у детей с нарушениями слуха на начальной стадии обучения родному языку. Как уже было отмечено обучение родного языка происходит через сурдоперевод, обучение грамоте и устной речи без, которых практически не возможно обучение родного языка в подготовительных классах. Таким образом, проблемы обучения родного языка в подготовительных классах разнообразны. Однако первоочередной остается общее развитие детей с нарушениями слуха, что не возможно без помощи сурдопедагога.

Lida Balabekyan, The problems and sectors of teaching the mother tongue to children with hearing disorders in the first year of the course - The article touches upon the problems of teaching the mother tongue to children with hearing disorders. Teaching the mother tongue is carried out as we have already noted through gesture, oral speech, and teaching of literacy, without all the above mentioned it is almost impossible to teach the mother tongue in the preparatory course. Thus the problems of teaching the mother tongue in the preliminary stage of the preparatory course are various, but the most primary thing is the general development of the child with hearing disorder which is impossible without surdopedagog.

**ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ԿԻՐԱՌՈՒՄԸ ՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ
ՀԱՍՄԻԿ ՄԿՐՏՑԱՆ**

Ձեռքբերովի նյարդաբանական խնդիրներ ունեցող անձանց մոտ պարտադիր իրականացվում է բանավոր և գրավոր խոսքի վերականգնում: Այդ հմտությունների վերականգնումը նրանց անհրաժեշտ է կրթական, մասնագիտական և սոցիալական ակտիվության վերականգնման համար: Կախված նյարդաբանական խնդրի ծանրության աստիճանից նման անձիք երբեմն աստիճանաբար կամ միանգամից կորցնում են խոսքը և ստիպված են լինում հաղորդակցվել այլընտրանքային լրացուցիչ հաղորդակցման (ԱԼՀ) տարբեր համակարգերի միջոցով: Բացի խոսքային հաղորդակցման կորստից, հիվանդների մոտ որպես կանոն դրսևորվում է ընդհանուր ակտիվության և տարբեր գործընթացներում նրանց ակտիվ մասնակցության նվազում: Արդյունքում հիվանդները աստիճանաբար սահմանափակվում է իրենց սոցիալական շփումների ծավալը:

Վերջին երեք տասնամյակների ընթացքում ԱԼՀ տեխնոլոգիաները նշանակալի զարգացում են ապրել՝ նպատակ ունենալով փոխհատուցել հաղորդակցման մեջ ի այտ եկող պակասը: Հետազոտողների մոտ անհրաժեշտություն ծագեց հստակեցնել ԱԼՀ տեխնոլոգիաներին վերաբերվող որոշ հարցեր՝ դրանց ընդունելիության չափը, կիրառման առանձնահատկությունները, սահմանափակումները, ինչպես նաև ԱԼՀ տարբեր համակարգերի համապատասխանեցումը տարբեր նյարդաբանական խնդիրներ ունեցող անձանց կարիքներին:

Մասնագիտական գրականության խորը վերլուծությունը¹ հնարավորություն է տալիս առանձնացնելու այն հիվանդությունները, որոնք մանկական հասակում դառնում են խոսքի և հաղորդակցման ծանր խանգարումների պատճառ: Նման հիվանդությունների շարքին կարելի է դասել մանկական ուղեղային կաթվածը, աուտիստիկ սպեկտրի խանգարումները, գանգուղեղային վնասվածքները, Գուլիան Բարի համախտանիշը, տեսողության և լսողության ծանր խանգարումները, ուսումնական ունակությունների յուրահատուկ խանգարումները, Դաունի համախտանիշը, Անգելմանի համախտանիշը, Հենթինգտոնի հիվանդությունը, Պրադեր Վիլիի հիվանդությունը, Ռետի համախտանիշը, Վիլիամսի համախտանիշը, Լեյի հիվանդությունը, մկանային

¹ Fombonne, E., Simmons, H., Ford, T., Meltzer, H. and Goodman, R., 2001, Prevalence of pervasive developmental disorders in the British Nationwide Survey of Child Mental Health. *Journal of the American Academy of Child and Adolescent Psychiatry*, 40, 820–827.

դիստրոֆիան, MERRF համախտանիշը, միտոխոնդրիալ ցիտոպաթիաները և այլն: Նշված հիվանդությունների մեծ մասը համարվում են հազվադեպ հանդիպող համախտանիշներ կամ հիվանդություններ, և ունեն ցածր տարածվածություն: Նշված հիվանդություններից ամենատարածվածներն են մանկական ուղեղային կաթվածը, աուտիստիկ սպեկտրի խանգարումները, գանգուլեղային վնասվածքները և որոշ համախտանիշներ:

Պատմականորեն մանկական ուղեղային պարալիզի (ՄՈԻՊ) սահմանումը կենտրոնացած է հիմնականում շարժողական ֆունկցիայի խանգարումների վրա, սակայն առավել ուշ կատարված բնորոշումները ներառում են նաև այլ համակցված խանգարումներ՝ ուսումնական ունակությունների խանգարումներ, խոսքի և հաղորդակցման խանգարումներ¹²: Հաղորդակցման ցանկացած խանգարում կարող է ունենալ բազմագործոնային էթիոլոգիա: Խոսքի զարգացման վրա ազդում են մտավոր ֆունկցիաների խանգարումները և լսողության խանգարումը: Ժեստերի գործածման վրա կարող են ազդել շարժողական խանգարումները: Խոսքի վրա կարող են ազդել արտաբերական համակարգի մկանների փոխված տոնուսը, դեֆորմացիաները, մկանային կծկումների վերահսկման պակասը:

Նշված բոլոր խանգարումները ազդում են խոսքային շնչառության, ձայնառաջացման և հնչարտաբերման վրա: Արդյունքում ի հայտ եկող խոսքային խանգարումը կոչվում է դիզարթրիա: Դիզարթրիայի ժամանակ կարող է դրսևորվել կլման ակտի խանգարում: Դիզարթրիան կարող է ունենալ ծանրության տարբեր աստիճաններ, որոնք նկատվում են նաև ՄՈԻՊ-ի դեպքում: Ըստ տարբեր հեղինակների ՄՈԻՊ-ով երեխաների 38-88% մոտ նկատվում է խոսքի խանգարում: Խոսքի խանգարման ծանրության աստիճանը կախված է ՄՈԻՊ-ի ենթատեսակից: ՄՈԻՊ-ի դիսկինետիկ տեսակի դեպքում խոսքի խանգարում առավել հաճախ է նկատվում, նկատվում են լուրջ շարժողական խանգարումներ (IV և V աստիճանի ըստ GMFCS դասակարգման), իսկ նրանց 60–80%-ի մոտ նկատվում է նաև խոսքի ծանր խանգարումներ: ՄՈԻՊ-ով երեխաների մոտ դրսևորվում են հաղորդակցման լուրջ խանգարումներ: Նման երեխաների շփումը սահմանափակվում է հարցերին «այո» կամ «ոչ» պատասխանելով³:

¹ Ganz JB, Earles-Vollrath TL, Heath AK, Parker RI, Rispoli MJ, Duran JB. Ameta-analysis of single case research studies on aided augmentative and alternative communication systems with individuals with autism spectrum disorders. *J Autism Dev Disord*. 2012 Jan;42(1):60-74

² Parkes, J., Hill, N., Platt, M. J. and Donnelly, C., 2010, Oromotor dysfunction and communication impairments in children with cerebral palsy: a register study. *Developmental Medicine and Child Neurology*, **52**, 1113–1119.

³ Pennington, L., Pearce, M., 2012, The communication difficulties of children with cerebral palsy at two years of age. 4th International Cerebral Palsy Conference, Pisa, Italy, October pp. 10–13

Հնայած որ դիզարթրիա ունեցող երեխաների ծնողները ակնկալում են, որ լոգոպեդը պետք է կենտրոնանա անմիջականորեն խոսքի արտաբերման վերականգնման վրա, նման մոտեցումը ներկայումս ապացուցողական չի համարվում: Ինչնիցե, գրականության տվյալները վկայում են (հեղինակներ ճիշտ կլինի ավելացնել), որ մեծանում է փոքրծավալ նկարագրական հետազոտությունների թիվը, որոնք հիմնավորում են շնչառության վերահսկմամբ, ձայնի և պրոսոդիկ առանձնահատկությունների վերականգնմամբ ընթացող ինտենսիվ վերականգնողական թերապիյի արդյունավետությունը: Մասնագետների կողմից առաջարկվել է այդ նպատակով այլընտրանքային լրացուցիչ հաղորդակցման մեթոդների կիրառումը, որը նախատեսում է նաև երեխայի ընտանիքի անդամների ծանոթացում ԱԼՀ մեթոդի հետ և այդ մեթոդով հաղորդակցելու համար անհրաժեշտ հմտությունների յուրացումը:

ԱԼՀ համակարգը կարող է ներառել.

- տեխնիկական օժանդակություն չպահանջող միջոցներ (ժեստեր, ազդանշաններ և այլն),

- ոչ տեխնոլոգիական օժանդակություն պահանջող միջոցներ, (նկարներ, քարտեր և այլն),

- ժամանակակից բարդ համակարգչային ծրագրեր, որոնց մի մասը ունի նույնիսկ ձայնային վերարտադրության հնարավորություն:

ԱԼՀ մեթոդները բարելավում են երեխայի ոչ միայն էքսպրեսիվ, այլև իմպրեսիվ խոսքը: ՄՈՒՊ-ը ունեցող երեխաների հետ ԱԼՀ մեթոդների արդյունավետության գնահատման նպատակով դեռևս լայնամասշտաբ հետազոտություններ չեն իրականացվել: Սակայն շատ են այն հետազոտությունները, որոնք կենտրոնացած են հիվանդների փոքրաթիվ խմբերի վրա և գնահատում են կոնկրետ որևէ ԱԼՀ մոտեցման արդյունավետությունը անկախ ՄՈՒՊ-ի առաջացման պատճառից, երեխաների ֆիզիկական և մտավոր կարողությունների միջև եղած տարբերություններից: Վերջին տասնամյակում կատարվել են որոշ հետազոտություններ ¹ ² (հեղինակներ ճիշտ կլինի ավելացնել), որոնք նպատակ ունեն գնահատել ՄՈՒՊ-ով հիվանդների մոտ ԱԼՀ արդյունավետության երկարաժամկետ արդյունավետությունը: ԱԼՀ կիրառող բազմաթիվ անձանց հաղորդակցման հմտությունների վերլուծությունը ի հայտ բերեց միանման արդյունքներ անկախ մասնակիցների տարիքի, միջավայրի պայմանների և շրջապատող անձանց

¹ Pirila, S., Van der Meere, J., Pentikainen, T., Ruusu-Niemi, P., Korpela, R., Kilpinen, J. and Nieminen, P., 2007, Language and motor speech skills in children with cerebral palsy. *Journal of Communication Disorders*, 40, 116–128.

² Stone, W.L., Ousley, O.Y., Yoder, P., Hogan, K.L., & Hepburn, S.L. (1997). Nonverbal communication in two- and three-year-old children with autism. *Journal of Autism and Developmental Disorders*, 27, 677–696.

կազմի, քանի որ առանց օժանդակ միջոցների հաղորդակցման պարագայում փոխներգործությունը հիվանդի և զրուցակցի միջև կրում է ասիմետրիկ բնույթ՝ ԱԼՀ կիրառող հիվանդը «խոսում» է առավել հազվադեպ և կարճ, ինչպես նաև հազվադեպ է հաղորդակցման մեջ անցնում նոր թեմայի, ի տարբերություն խոսացող զրուցակցի:

Չնայած որ վերջին 25 տարիների ընթացքում ԱԼՀ միջոցները դառնում են առավել հասանելի ՄՌԻԿ-ով հիվանդների համար, դրանց ֆունկցիոնալ կիրառումը դեռևս սահմանափակ է¹:

Երեխաները կարող են կիրառել միայն մեկ բառից կազմված հաղորդագրություններ, չկարողանալով կազմել երկար բառակապակցություններ, մասնավորապես մտավոր խանգարումներ ունեցող երեխաները: Անդերսենը և համահեղինակները հայտնաբերել են, որ խոսքի ծանր խանգարում կամ խոսքի բացակայություն ունեցող ՄՌԻԴ-ով հիվանդ երեխաների 54%-ն է կիրառում որևէ տեսակի ԱԼՀ տեխնոլոգիա: Մեծ կարևորություն է տրվել ՄՌԻԿ-ով հիվանդ երեխաների մոտ ճանաչողական ֆունկցիաների, խոսքի և ընկալման գնահատմանը, որպեսզի նրանց կարիքները ճիշտ գնահատվեն²:

Աուտիստիկ սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաների 25%-ի մոտ ֆունկցիոնալ խոսք չի զարգանում: Այսպիսի երեխաների վերբալ ունակությունները նվազագույն են, քանի որ նրանք ունեն աղքատ բառապաշար, կիրառում են սակավաթիվ բառեր և/կամ բառակապակցություններ, գերակշիռ մասը ունեն էխոլալիաներ և կիրառում են իրենց խոսքային հնարավորությունները սահմանափակ իրավիճակներում: ԱՄԽ ախտորոշում ունեցող երեխաների մեծ մասը կիրառում է ԱԼՀ տարբեր տեխնոլոգիաներ: Չնայած որ բազմաթիվ հետազոտական աշխատանքներ ուսումնասիրել են ԱԼՀ կիրառման արդյունավետությունը ԱՄԽ ունեցող հիվանդների մոտ դեռևս հստակ և հավաստի չէ այս միջամտությունների՝ հաղորդակցման վերականգնմանը թիրախային կերպով ազդելու հնարավորությունը և դրանց ազդեցությամբ կայուն արդյունավետություն ապահովելու հնարավորությունը:

ԱՄՀ ունեցող երեխաների մոտ ԱԼՀ կիրառման հնարավորությունը ուսումնասիրող մասնագետները նշում են օժանդակություն պահանջող միջոցների կիրառման առաջնայնության մասին, ի տարբերություն առանց օժանդակության կիրառվող մեթոդների: Նման պնդումը հիմնավորվում է նրանով, որ օժանդակություն պահանջող ԱԼՀ միջոցները հիմնվում են տեսողական վերլուծչի վրա, չեն պահանջում մանր մոտորիկայի կիրառություն,

¹ Geytenbeek, J. J., Mokink, L. B., Knol, D. L., Vermeulen, R. J. and Oostrom, K. J., 2014, Reliability and validity of the C-BiLLT: a new instrument to assess comprehension of spoken language in young children with cerebral palsy and complex communication needs. *Augmentative and Alternative Communication* 30(3):252–266.

² Clarke, M. and Wilkinson, R., 2007, Interaction between children with cerebral palsy and their peers 1: Organizing and understanding VOCA use. *Augmentative and Alternative Communication*, 23, 336–348.

ինչպես նաև առավելություններ են տալիս հաղորդակցման մեջ. հաղորդակցվողը հեշտությամբ կարողանում է կարդալ կամ ճանաչել գրված տեքստային հաղորդագրությունը կամ սիմվոլները¹:

Իրլես Վոլրաթը և համահեղինակները, կիրառելով բազմաթիվ հետազոտությունների մետավերլուծություն ցույց տվեցին ԱԼՀ միջամտության բարձր արդյունավետությունը ԱՍԽ ունեցող երեխաների մոտ: Սակայն ԱԼՀ միջամտությունների ելքը տարբեր էր, կախած ԱԼՀ մեթոդի տեսակից, սակայն առավել դրական արդյունք էր գրանցվել խոսող սարքերի և նկարների փոխանակմամբ հաղորդակցման համակարգի (PECS կամ ՆՓՀՀ) կիրառման արդյունքում:

Գանգը և համահեղինակները նշում են, որ հետագա առավել մանրակրկիտ հետազոտություններ են անհրաժեշտ ԱԼՀ տարբեր մեթոդների արդյունավետությունը գնահատելու համար՝ շեշտելով նաև երեխայի հետ տարվող աշխատանքի հետ կապված տարբեր գործոնների գնահատման կարևորությունը, քանի որ այդ գործոններով է հաճախ պայմանաված ԱԼՀ միջամտության ելքի և արդյունավետության անկայունությունը տարբեր հիվանդների մոտ:

Գրականության մեջ ԱԼՀ/ԱՍՀ մեթոդական մոտեցումները տարբեր են, սակայն ընդհանուր առմամբ հիմնված են վարքի կիրառական վերլուծության (ՎԿՎ) սկզբունքների վրա: ԱԼՀ միջամտությունների շրջանակում ՎԿՎ-ի օրինակ է հանդիսանում ՆՓՀՀ-ն և ֆունկցիոնալ հաղորդակցման մարզումը:

Որոշ դեպքերում, հիմնվելով ԱԼՀ միջոցների վրա, ՎԿՎ-ի տեխնիկան (օրինակ դիսկրետ ուսուցումը) կիրառվում է հիվանդին որոշակի հաղորդակցվելու վարքագիծ սովորեցնելու համար: Անկախ կիրառվող մոտեցումից շարունակվում է կարևորվել ԱԼՀ մեթոդի «նատուրալիստական» լինելու ենթատեքստը՝ իրականացնել հաղորդակցություն իրական զրուցակցի հետ, իրական կամ նույնիսկ պատահական և ինքնաբերական ստեղծվող իրավիճակներում:

Նման նատուրալիստական միջամտության տարրերի կիրառումը ունի որոշիչ նշանակություն հիմնական սոցիալական և հաղորդակցային դժվարությունների դեմ պայքարելու գործընթացում՝ հնարավորություն տալով ԱՍՀ ունեցող երեխաներին մասնակցել առօրյա սոցիալական շփումներում անհրաժեշտ ինքնաբերական և ճկուն հաղորդակցման մեջ:

Սոցիալական հաղորդակցման հմտությունների խանգարումը ԱՍԽ ունեցող երեխաների մոտ կարող է դրսևորվել հաղորդակցման ֆունկցիաների

¹ Ganz JB, Earles-Vollrath TL, Heath AK, Parker RI, Rispoli MJ, Duran JB. Ameta-analysis of single case research studies on aided augmentative and alternative communication systems with individuals with autism spectrum disorders. J Autism Dev Disord. 2012 Jan;42(1):60-74

սահմանափակումով (հաղորդակցման միջոցով հետաքրքրությունների, հույզերի և խնդիրների արտահայտում):

Այս տեսանկյունից, Միգաֆոսը¹ և համահեղինակները նկարագրել են ԱՄԽ ունեցող երեխաների կողմից հաղորդակցման հաճախակի կիրառումը վարքային կարգավորումներ իրականացնելու նպատակով (օրինակ՝ խնդրանք, կամ բողոք), և մինչև ժամանակ սոցիալական շփման համար հաղորդակցման հազվադեպ կիրառություն (օրինակ՝ ողջույն, թույլատվության հայցում, ծանոթություն և այլն): Հետագա ուսումնասիրությունները հաստատեցին այս կարծիքը: Նկարագրվածը տարբերվում է բնականոն զարգացող երեխաների վարքագծի. հաղորդակցման ֆունկցիաները նրանց մոտ զարգանում են համաչափ, անգամ մինչև խոսքի ձևավորվելը:

Բավականաչափ ապացուցողական տվյալներ են կուտակվել, որոնք վկայում են վարքային կարգավորման նպատակով հաղորդակցման գործընթացին ուղղված ԱԼՀ տեխնոլոգիաների արդյունավետության մասին, որոնք երեխաներին սովորեցնում են կիրառել ԱԼՀ այլ անձանց գործողությունները կարգավորելու նպատակով՝ խնդրանքներ կամ պահանջներ ներկայացնելու միջոցով: Որպեսզի ԱԼՀ միջոցները թիրախային կերպով ուղղված լինեն աուտիզմ ունեցող երեխաների սոցիալական հաղորդակցման դժվարությունների հաղթահարմանը, դրանք պետք է ապահովեն սոցիալական շփման և գրուցակցի հետ համատեղ ուշադրության կենտրոնացման գործընթացի ակտիվացում: ԱՄԽ ունեցող երեխաներին հաղորդակցվել սովորեցնելիս տարբեր գործառնություններ կարող են նպաստել առավել հեռուն հասնող նպատակների իրականացմանը, օրինակ կրթական հնարավորությունների ստեղծմանը: Դրանք չպետք է սահմանափակվեն միայն առարկաներ պահանջելով կամ խնդրանքներ ներկայացնելով: Հորների կողմից անցկացված շարունակական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գրաֆիկական սիմվոլների կիրառությունը ԱԼՀ գործընթացում նպաստում է ԱՄԽ ունեցող երեխաների կրթական ակտիվության մեծացմանը²: Սակայն այս ուսումնասիրությունների մեջ չի մասնավորեցվում, թե ուրիշ ինչ կրթական կարիքների կամ գործընթացների ակտիվության բարձրացում է նկատվում նման երեխաների մոտ: Հետևաբար հնարավոր չեղավ տալ նման միջամտության արդյունավետության բացարձակ գնահատականը: Նմանատիպ հիմնահարց առկա է նաև այլ հետազոտական վերլուծություններում, որոնցում կոնկրետ ԱԼՀ միջամտության կրթական արդյունավետությունը ակնհայտ է, սակայն

¹ Sigafoos, J., Lancioni, G.E., O'Reilly, M.F., Achmadi, D., Stevens, M., Roche, L., ... Lang, R. (2013). Teaching two boys with autism spectrum disorders to request the continuation of toy play using an iPadVR -based speech-generating device. *Research in Autism Spectrum Disorders*, 7, 923–930. doi:10.1016/j.rasd.2013.04.002.

² Horner, R.H., Carr, E.G., Halle, J., McGee, G., Odom, S., & Wolery, M. (2005). The use of single-subject research to identify evidence-based practice in special education. *Exceptional Children*, 71, 165–179.

հնարավոր չէ գնահատել միջամտության ազդեցությունը ընդհանուր հաղորդակցման գործառույթի վրա¹:

Անհրաժեշտ է ԱԼՀ համակարգի արդյունավետությունը գնահատելու գործընթացում հաշվի առնել դրա սոցիալական «պիտանելիությունը», թերապևտիկ միջամտության վերջնարդյունքի նշանակությունը անհատի և հասարակության համար՝ գնահատելով հիվանդի, խնամողի, միջամտություն իրականացնող մասնագետի, մանկավարժի և հանրության կարիքները և ցանկությունները: Հորները 2005թ-ին առաջարկեց կիրառել ԱԼՀ միջամտությունների սոցիալական վավերականացման գնահատում, որպեսզի համոզվել իրական կյանքում դրանցարդյունավետ լինելու մեջ: Թեև սոցիալական վավերականացման հիմնահարցը ընկալվում է շատ մասնագետների կողմից, դրա գործնական իրականացում միշտ չէ որ կատարվում է:

ԱԼՀ միջամտության ելքը ուսումնասիրելիս սովորաբար գնահատվում է թիրախային հմտությունների փոփոխումը: Օդոմը և Շտրեյնը իրենց աշխատության մեջ նշում են, որ առավել էական է գնահատել ԱՄՄ ունեցող երեխաների մոտ ԱԼՀ միջամտության ոչ միայն կայունությունը, այլ նաև ազդեցության լայն սպեկտրը և սոցիալական միջավայրում կիրառման աստիճանը:

Գանգուդեդային վնասվածք (ԳՈԻՎ) ունեցող անձանց մեծ մասը ընդունում է ԱԼՀ տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունը²: Եթե նույնիսկ հաղորդակցության պակաս ունեցող հիվանդներից ոմանք դադարեցնում են ԱԼՀ կիրառումը, ապա պատճառը սովորաբար ոչ թե տեխնոլոգիայի մերժումն է, այլ համապատասխան համակարգողի (օգնողի) բացակայությունը: ԳՈԻՎ-ի հետևանքով ի հայտ եկող խոսքի խանգարումները շատ բազմազան են և ներառում են նաև իմացական/լեզվաբանական և խոսքի շարժողական խանգարումներ: Երկու խումբ հետազոտողներփորձել են պարզել, թե ԳՈԻՎ ունեցող հիվանդների որ մասն է առավել հաճախ ունենում կայուն հաղորդակցման խանգարումներ, որոնք պահանջում են ԱԼՀ տեխնոլոգիաների երկարատև կիրառում³:

Այս երկու հետազոտությունները ունեցան գրեթե նույն արդյունքը և եզրակացությունները: Այն հիվանդների խումբը, որի մոտ վերականգնման վաղ շրջանում չէր արձանագրվել բնականոն խոսքի միջոցով հաղորդակցման վերականգնում, ունենում է այլընտանքային մեթոդների միջոցով

¹ Flippin, M., Reszka, S., & Watson, L.R. (2010). Effectiveness of the picture exchange communication system (PECS) on communication and speech for children with autism spectrum disorders: A meta-analysis. *American Journal of Speech-Language Pathology*, 19, 178–195.

² Dongilli, P., Hakel, M., & Beukelman, D. (1992). Recovery of functional speech following traumatic brain injury. *Journal of Head Trauma Rehabilitation*, 7, 91 – 101.

³ Horner, R.H., Carr, E.G., Halle, J., McGee, G., Odom, S., & Wolery, M. (2005). The use of single-subject research to identify evidence-based practice in special education. *Exceptional Children*, 71, 165–179.

հաղորդակցման վերականգնում (55-59%) միջանկյալ փուլում (Rancho Levels V and VI)¹: Այն հիվանդները, ովքեր չեն վերականգնվում միջանկյալ փուլում, չեն կարողանում վերականգնել ֆունկցիոնալ խոսքը նաև ուշ շրջանում՝ պայմանավորված խոսքի քրոնիկ, ծանր, շարժողական խանգարումներով: Այս անձանցից շատերը երկարաժամկետ օգտվում են ԱԼՀ տեխնոլոգիաներից, սակայն նրանցից ոմանց մոտ (գրականության մեջ հայտնի են նման դեպքերի նկարագրություններ) նկատվում է խոսքային հաղորդակցման մասնակի, իսկ հազվադեպ դեպքերում նաև լիարժեք խոսքային հաղորդակցման վերականգնում¹:

Հաշվի առնելով նոր բժշկական հայտնագործությունները, շարունակաբար նոր ուսումնասիրությունների կարիք է զգացվում, որոնք կկարողանան գնահատել ԳՈՒՎ ունեցող հիվանդների, այդ թվում նաև երեխաների մոտ, ԱԼՀ տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտությունը: Բավականին մեծ է մանական կամ պատենական տարիքում ԳՈՒՎ ստացող հիվանդների թիվը և ըստ գույություն ունեցող տվյալների ԱԼՀ կիրառող հիվանդների կյանքի տևողությունը առավել երկար է, ի տարբերություն ԱԼՀ չկիրառող անձանց: ԱԼՀ գնահատում իրականացնելուց հետո ԳՈՒՎ ստացած հիվանդների 68%-ին խորհուրդ է տրվել կիրառել բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված ԱԼՀ մեթոդներ, և այդ հիվանդների 94%-ը ընդունել է մասնագետների առաջարկը²³:

Երեք տարի անց այդ հիվանդների խմբի 81%-ը դեռևս շարունակում էր կիրառել առաջարկված ԱԼՀ մեթոդը, ընդ որում մնացած հիվանդների 6%-ը չէր կիրառել ԱԼՀ ֆինանսական խնդիրների պատճառով: 12%-ին չէր հաջողվել գտնել համապատասխան ԱԼՀ մասնագետ իրենց բնակավայրում: Վերը նշված խմբի 32%-ին առաջարկվել էր ցածր տեխնոլոգիաների վրա հիմնված ԱԼՀ միջոցներ: Այս ենթախմբում բոլոր հիվանդները (100%) ընդունել են առաջարկված մեթոդը⁴: Երեք տարի անց այս ենթախմբի 63%-ը շարունակում էր կիրառել ԱԼՀ, իսկ մնացած 37%-ը դադարեցրել էր ԱԼՀ կիրառությունը, քանի որ նրանց մոտ նկատվել էր խոսքի գործառնության նշանակալի վերականգնում: ԱԼՀ տեխնոլոգիաներ կիրառվում են նաև խոսքի լուրջ խանգարումների պատճառ հանդիսացող, հազվադեպ հանդիպող համախտանիշների դեպքում: Այս

¹ Ladtkow, M., & Culp, D. (1992). Augmentative communication with the traumatically brain injured population. In K. Yorkston (Ed.), *Augmentative communication in the medical setting* (pp. 139 – 243). San Antonio, TX: Pro-ed.

² Kagohara, D.M., van der Meer, L., Ramdoss, S., O'reilly, M.F., Lancioni, G.E., Davis, T.N., Green, V.A. (2013). Using iPods# and iPads# in teaching programs for individuals with developmental disabilities: A systematic review. *Research in Developmental Disabilities*, 34, 147–156.

³ Odom, S.L., & Strain, P.S. (2002). Evidence-based practice in early intervention/early childhood special education: Single-subject design research. *Journal of Early Intervention*, 25, 151–160.

⁴ Enderby, P., & Crow, E. (1990). Long-term recovery patterns of severe dysarthria following head injury. *British Journal of Disorders of Communication*, 25, 341 – 354.

համախտանիշներից է Ռետի համախտանիշը, որը հանդիպում է 100 000 բնակչից 0.4 մոտ: Այս համախտանիշով ախտորոշված անձանց մոտ, որպես կանոն նկատվում է հաղորդակցման ծանր խանգարում՝ հիմնականում դիզարթրիայի դրսևորմամբ: Սակայն բացի դիզարթրիան այս հիվանդների մոտ առկա է հաղորդակցում սկսելու (մեկնարկելու) խնդիր¹: ԱԼՀ փորձագետների կարծիքով խոսքի խանգարում ունեցող անձիք, որոնց մոտ ախտորոշվել է Ռետի համախտանիշ, կարող են ունենալ հաղորդակցման նշանակալի վերականգնում ԱԼՀ տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ: Անգելմանի համախտանիշը հանդիպում է 100000 բնակչից 10-ի մոտ: Հիմնվելով հետազոտությունների ընթացում փորձագետների կողմից իրականացված վերլուծության տվյալների վրա Անգելմանի համախտանիշ ունեցող 100000 անձանցից 0.2-ը ունեն ԱԼՀ տեխնոլոգիաների կիրառման կարիք և դրանց կիրառությունը կարող է նշանակալի արդյունավետություն ունենալ²:

Բանալի բառեր - այլընտրանքային լրացուցիչ հաղորդակցում, խոսքի խանգարումներ

Համալիկ Մկրտչյան, Այլընտրանքային լրացուցիչ հաղորդակցման միջոցների կիրառումը նյարդաբանական խնդիրների դեպքում - Որոշակի նյարդաբանական խնդիրներ ունեցող երեխաների մոտ լինում են խոսքի և հաղորդակցման խանգարումներ: Նման խանգարումների դեպքում տուժում է երեխայի խոսքային հաղորդակցումը և կիրառվում են այլընտրանքային լրացուցիչ հաղորդակցման մեթոդներ, որոնք հեշտացնում են հաղորդակցման գործընթացը: Այլընտրանքային հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառումը կարող է կրել ժամանակավոր բնույթ՝ ուղղված լինելով խոսքի վերականգնմանը խթանելուն, ինչպես նաև լինել մշտական միջոց և կիրառվել հաղորդակցման իրականացման կամ հեշտացման նպատակով:

Асмик Мкртчян, Применение альтернативных методов коммуникации при неврологических заболеваниях - Дети с определенными заболеваниями нервной системы имеют нарушения речи и общения. В случаях, когда речь ребенка не развивается нормально, и пациент не может общаться из-за патологии нервной системы, применяются дополнительные и альтернативные коммуникационные технологии. Альтернативные коммуникационные технологии могут использоваться временно, поддерживая восстановление речи или на постоянной основе, улучшая общение пациента.

¹ Workinger, M., & Netsell, R. (1992). Restoration of intelligible speech 13 years post head injury. Brain Injury, 6, 183 – 187.

² Fager, S., Hux, K., Beukelman, D., & Karantounis, R. (2006b). Augmentative and alternative communication use and acceptance by adults with traumatic brain injury. Augmentative and Alternative Communication, 22, 37 – 47.

Hasmik Mkrtchyan, Application of Augmentative alternative communication systems in patients with neurological conditions - Children with certain neurological disorders have speech and communication impairment. In cases when the child's speech is not developed normally and the patient can't communicate through speech due to neurological conditions, augmentative and alternative communication technologies are used to support the communication. The alternative communication technologies can be used temporary to support the speech recovery or on a permanent basis, enhancing the patient's communication.

**ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ ԱՐԴԻ
ՏԱՐԲԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ
ՆԱԻՐԱԹՈՌՈՒՅԱՆ**

Երեխային սովորեցնել խոսել, նշանակում է նրան սովորեցնել մտածել: Լեզվական նյութի յուրացմամբ, որ սկսվում է տարրական դասարաններից, պայմանավորված է աշակերտի մտքի գոյության ձևը, նոր մտքերն անկաշկանդ ու պարզ արտահայտելու հնարավորությունը: Հայտնի է, որ աշակերտներն առավել դյուրությամբ արտահայտվում են բանավոր, քան գրավոր եղանակով: Մակայն համապատասխան մտքերը ձևակերպելու համար սովորողներին անհրաժեշտ են լեզվական տարրական գիտելիքներ, բառապաշար և բառեր կազմելու հմտություններ, որոնք, իհարկե, պայմանավորված են ոչ միայն երեխայի տարիքային առանձնահատկություններով, այլև կարիքներով:

Տարրական դպրոցում բառապաշարի հարստացումը կատարվում է միմիայն տեքստային մակարդակում՝ բնագրում անձանոթ բառերն առանձնացնելով և դրանց իմաստները բացատրելով, բառակազմական վերլուծությամբ, հոմանիշների և հականիշների յուրացմամբ, բառիմաստի բացատրությամբ՝ կռահման ճանապարհով, առարկայի կամ նկարի՝ որպես դիդակտիկ նյութերի ցուցադրությամբ և այլն: Բառային աշխատանքի բոլոր ուղղությունները տարրական դասարաններում պետք է իրականացնել գործնական ճանապարհով՝ առանց տեսական տեղեկություններ, սահմանումներ, քերականական եզրույթներ հաղորդելու¹:

Մայրենիի դասագրքերում զետեղված բնագրերի վերլուծության բառային աշխատանքներից մեկն էլ, ինչպես նշեցինք, բառակազմական վերլուծությունն է: Տարրական դպրոցում բառակազմական աշխատանքը կատարվում է երկու նպատակով՝

- ✓ բացահայտելու անձանոթ բառի իմաստը,
- ✓ սովորողներին հայտնի դարձնելու բառակազմական միջոցները:

Այս խնդրի լուծման գործընթացում էական է ուսուցչի դերը այն առումով, որ նա բառի շուրջ վերլուծական աշխատանքի ժամանակ աշակերտների ուշադրությունը հրավիրի մեր լեզվում նոր բառեր կազմելու հնարավորությունների և նշանակության վրա, ընդգծի դրանց՝ ոչ միայն որպես բառապաշարի հարստացման կարևորությունը, այլև հայոց լեզվի բառապաշարի հարստությունը՝ սեր և հետաքրքրություն առաջացնելով լեզվի նկատմամբ ընդհանրապես, բառի նկատմամբ մասնավորապես: Այս գիտակցումը առաջին

¹Գյուլամիրյան Ջ. Հ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Զանգակ-97, Երևան, 2009, էջ 283:

հերթին կարևորվում է՝ նկատի ունենալով ուսումնական գործընթացում աշակերտական նպատակի առաջնայնությունը. «Նպատակահարույց ուսուցման դեպքում առաջին քայլը աշակերտի համար տվյալ նպատակը որոշելն է, հանուն որի հասնելու՝ նա պետք է ընդգրկվի ուսուցչի նախատեսած ուսումնական գործունեության մեջ, որպեսզի մանկավարժին հաջողվի իրականացնել իր նախատեսած փոփոխությունները աշակերտի անձնավորության մեջ կամ ֆիզիկականում: Որպեսզի ապահովվի այդ ընդգրկվելը, այսինքն՝ սովորողն ինքնակամ, սեփական ցանկությամբ սկսի ուսումնական գործունեությունը, անհրաժեշտ է, որ աշակերտի համար ուսուցչի որոշած դասանպատակը ձևավորվի սովորողի գիտակցության մեջ, այնտեղ ծագի ու զարգանա՝ որպես նրա սեփականը...»¹: Կարծում ենք, որ այս կապակցությամբ դիպուկ է նաև Ջոն Դյուիի խոսքերը ևս. «Տեղեկությունները՝ որպես հենց տեղեկություններ, չեն ենթադրում մտավոր ընդունակությունների դաստիարակություն, այսինքն՝ իմաստություն, որը դաստիարակության լավագույն արգասիքն է: Դպրոցում տեղեկությունների սոսկ կուտակումը հանգեցնում է իմաստության իդեալից և ճիշտ դատելուց հեռացնելուն»²:

1-4-րդ դասարանների մայրենիի գործող դասագրքերում գետեղված բնագրերը սովորողների բառապաշարն ընդլայնելու և հարստացնելու լեզվական հարուստ նյութ են պարունակում, որի յուրացումն ու սերտումը աշակերտների կողմից աստիճանաբար կատարվում է մի քանի ուղղությամբ ծավալվող նպատակային աշխատանքներով:

Ընդհանրապես երեխայի կողմից մայրենի լեզվի բառապաշարի յուրացումը բարդ գործընթաց է, որն ընդգրկում է երկար ժամանակաշրջան: Բառապաշարի հարստացման հետ միաժամանակ երեխան գործնականորեն՝ ընդօրինակման ճանապարհով տիրապետում է մայրենի լեզվի քերականական կառուցվածքին և խոսքի առավել պարզ, մատչելի տեսակին՝ երկխոսությանը³:

Կրտսեր դպրոցականի բառապաշարը հարստացնելու ուղղություններից մեկն էլ նրա ընթերցած կամ ունկնդրած գեղարվեստական ստեղծագործություններում առկա բառերի բառակազմական քննությունն է:

Անշուշտ, բազմիցս խոսվել է այն մասին, որ տարրական դասարաններում լեզվական նյութի ուսումնասիրումը կատարվում է ոչ թե տեսական սահմանումներ սերտելու, այլ միայն գործնական ճանապարհով: Նպատակ չունենալով աշակերտից պահանջելու բառակազմական միջոցների՝

¹ Մանուկյան Ս. Պ., Ընդհանուր մանկավարժություն: Նոր դասընթաց /Ուսումնական ձեռնարկ: Երկրորդ բարեփոխված հրատարակություն/, Զանգակ-97, Երևան, 2005, էջ 49:

² Дьюи Д., Психология и педагогика мышления, Москва, 1988, стр. 35.

³ Կովալյով Ա. Գ. և ուր., Հոգեբանություն, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1970, էջ 355:

արմատի, ածանցի ու դրանց տեսակների, հոդակապի սահմանումները, այնուամենայնիվ դրանց մասին տարրական գիտելիքներ ձեռք բերելու, բառակազմական միջոցները գործնական ճանապարհով ճանաչելու և յուրացնելու անհրաժեշտություն ևս առաջանում է: 1-ին դասարանում «Այբբենարանի» հենց առաջին էջերից նկար-բառերի, նկար-գրույցների միջոցով սկսվում է աշակերտների՝ խոսք կառուցելու կարողության մշակումը, սեփական միտք հյուսելու և այն հստակ արտահայտելու մշակույթի ձևավորումը: Հենց այդ ընթացքում էլ նրանք աստիճանաբար ծանոթանում են բառին՝ որպես ամենափոքր իմաստային միավորի, ուսումնասիրում բառը՝ որպես հնչյունների կայուն կապակցություն, որն իմաստ է արտահայտում, տարրալուծում են բառերը՝ ըստ վանկերի, այնուհետև՝ ամենափոքր, այլևս չտրոհվող լեզվական միավորների՝ հնչյունների, ճանաչում են բառերը՝ որպես կարդալու միավորներ, դրանցով կազմում են բառակապակցություններ և նախադասություններ՝ առնչվելով խոսք կառուցելու գործընթացին: Ա. Քյուրքյանի, Լ. Տեր-Գրիգորյանի հեղինակած 1-ին դասարանի մայրենիի դասագրքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում գործնական վարժությունների ճանապարհով հայերենի բաղաձայն և ձայնավոր հնչյունները հստակ, անխառն արտաբերելուն, տարբերակելուն, դրանց գրային նշանները՝ տառերը յուրացնելուն: Այս կապակցությամբ հատկապես շահեկան են մեկ ձայնավորի կամ բաղաձայնի փոփոխմամբ նոր բառեր կազմելու առաջադրանքները ¹ · ² : Սրանց արդյունավետությունն ակնհայտ է, և աշակերտներն այդ վարժությունները կատարում են առանց դժվարության և հաճույքով, երբ հանդես են գալիս տարբեր զուգորդումներ: Օրինակ՝ Երևանի Գ. Չաուշի անվան հ. 188 դպրոցի 1^ա դասարանում, երբ դասի բովանդակության բաղադրիչ դարձավ հանելուկ-բառախաղը՝ 1 տառը փոխելով՝ *հայ* բառը դարձնել *շատ*՝ *հայ-հատ-շատ*, ապա լրացրին բառերում բաց թողած տառերը՝ *հօր, նօր, կօր, լօր, շօր, օայր, սրաօ, օատել, օյուր, օուլ, օարկ, օուր*³, աշակերտները միանգամից աշխուժացան, և մասնակցությունը նպաստեց ուսուցչի նպատակի իրականացմանը:

Այնուամենայնիվ, մեր դիտարկումները ցույց տվեցին, որ բառակազմական վերլուծություններ կատարելիս նորածանոթ կամ հայտնի բառի իմաստը բացատրելու համար հնարավոր չէ խուսափել և չանդրադառնալ տվյալ բառում առկա նախածանցների և վերջածանցների: Փաստորեն, հենց առաջին դասարանում արծարծվող թեմաներում առկա բառամթերքը աշակերտներին գործնականորեն ծանուցում է հայերենում գործող բառակազմական միջոցների և օրինաչափությունների մասին (առանց

¹ Քյուրքյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Մայրենի 1, Էդիթպրինտ, Երևան, 2010, էջ 10, 11, 12, 22, 49:

² Սարգսյան Վ. Ա., Այբբենարան, Մանուկ, Երևան, 2010, էջ 102, 103, 113, 117, 123, 131:

³ Քյուրքյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Մայրենի 1, Էդիթպրինտ, Երևան, 2010, էջ 100:

անունները տալու): Ուստի հաջորդ տարիներին երեխաների լեզվական գիտելիքների հնարավորություններն ապահովելու համար պետք է կարևորել աշակերտի՝ բառում նախածանցները և վերջածանցները նկատելու անհրաժեշտությունը և անդրադառնալ բնագրում առկա թե՛ ածանցավոր, թե՛ բարդ բառերի բառակազմությանը՝ դրանք գործածելով իբրև բառիմաստը բացահայտող միջոցներ, անընդհատ վերլուծելու ճանապարհով հասնել նրան, որ աշակերտն ինքնուրույն բացահայտի և տարանջատի արմատն ու ածանցը կամ ածանցները, որից հետո բացատրի բառիմաստը: «Ասա՛ մեկ բառով» խորագրով տրված առաջադրանքները երեխային մղում են մտածելու և մասնավոր իմաստ արտահայտող բառերից դրանց ընդհանուր իմաստ արտահայտող բառը ստանալու, այսպես՝ *աքցան, կացին, սղոց, ուրագ, հարթիչ, դուր, մուրճ* > *գործիք*¹:

Ածանցումը, որը հայերենում նոր բառեր կազմելու միջոց է, լեզվական բառակազմական հնագույն իրողություն է: Այն պատմական երկարատև զարգացում ունեցող լեզվական երևույթ է, և ածանցներն էլ առաջացել են լեզվի սեփական նյութի հիման վրա²: Հայերենում ածանցման երևույթին անդրադարձել են Մ. Աբեղյանը, Գ. Սևակը, Ս. Գալստյանը, Ա. Սուքիասյանը, Էդ. Աղայանը և այլք: Ժամանակակից հայերենի ածանցները ծագումով կա՛մ առանձին բառեր են, կա՛մ էլ քերականական այլևայլ մասնիկներ՝ ձևույթներ: Հայերենի բնիկ ածանցներն առաջացել են բարդ բառերի բաղադրիչների իմաստների մթագնման, հոլովական, խոնարհման, հոգնակի վերջավորությունների փոխարկման, ինչպես նաև պարզ բառերի արհեստական ձևափոխման միջոցով³: Անշուշտ, գիտական այս բացատրությունն ամենևին պետք չէ տարրական դպրոցում սովորողին, սակայն այն պետք է ուսուցանողին, որն ածանցի պատմական ծագման, իմաստաբանական դասակարգման, կենսունակ և անկենսունակ լինելու ելակետից էլ պետք է բառիմաստի բացատրությունն ընկալելի դարձնի աշակերտներին: Աստիճանաբար զարգացնելով երեխայի գիտելիքները բառակազմության օրինաչափությունների և բառակազմական միջոցների մասին՝ պետք է փուլ առ փուլ հասնել աշակերտի՝ բառի կազմության մասին ունեցած մնայուն պատկերացումների ձևավորմանը և այդ երևույթի ընկալմանը: Այդ ճանապարհով բառիմաստն աշակերտների համար հասկանալի, ըմբռնելի կդառնա, ինքնուրույն, հասկանալով կգործածի խոսքում, ու կընդլայնվի անհատական բառապաշարը: Սա տարրական դպրոցի մայրենիի դասագործընթացում բնագրի շուրջ աշխատանքում բառակազմական վերլուծության իրական և վերջնական նպատակը պետք է լինի: Ուսուցման

¹ՔյուրքչյանԱ., Տեր-ԳրիգորյանԼ., Մայրենի 1, Էդիթպրինտ, Երևան, 2010, էջ 26, 33, 47, 54:

² ՍուքիասյանԱ., Ժամանակակիցհայոցլեզու, Երևանիհամալս. հրատ., Երևան, 1982, էջ 321:

³ Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, հ. Զ:

հետագա տարիներին, ըստ մայրենիի ծրագրի [9], կգարգանան և առավել խորքային կդառնան աշակերտների պատկերացումներն ածանցման և ածանցների վերաբերյալ, սակայն, ինչպես նշվել է բազմիցս, մեր խորին համոզմամբ ևս ուսուցման և ուսուցողական յուրաքանչյուր թեմայի հիմնաքարը դրվում է տարրական դասարաններում:

Այսպիսով, տարրական դպրոցում կրտսեր դպրոցականները նախնական գիտելիքներ են ձեռք բերում բառակազմական միջոցների՝ արմատի, ածանցների, հոդակապի, անհոդակապ և հոդակապով բարդ բառերի մասին: Բառակազմական աշխատանքը դասագործընթացում ուսուցիչները կատարում են հընթացս բնագրի շուրջ կատարվող վերլուծական բոլոր աշխատանքների: Այսպես, Երևանի հ. 196 հիմնական դպրոցի 2^ա դասարանում «Իմ անուշիկ Հայաստան» բաժնի ամփոփումն էր¹, և ուսուցիչը (ուսուցիչ՝ Գայանե Պետրոսյան) ամփոփիչ գրույցում հարցրեց նաև *թևածել* բառի բառակազմական պատկերը: Աշակերտն անսխալ ներկայացրեց՝ *թև+ած+ել*, ապա բացատրեցին, թե ինչ է արմատը, ինչ է բառակազմությունը: 2^բ դասարանում դասի թեման էր Վ. Վարդունու «Ծաղիկը՝ օրորոց»²: Ուսուցչի (ուսուցիչ՝ Էմմա Հովհաննիսյան) հանձնարարությամբ աշակերտները ներկայացրին բնագրում առկա *օրորոց*, *մայր+ա+մուտ*, *լուս+ա+բաց* բառերի բառակազմական պատկերը: Բառային աշխատանք կատարվեց նաև գրատախտակին. աշակերտները գրեցին *օրորել* և *օրորոց* բառերը: Ուսուցիչը դիպուկ հարց տվեց՝ կապ ունե՞ն արդյոք *օրոր* և *օր* բառերը: Ուսուցչի կողմնորոշումը միանգամայն գնահատելի է, քանի որ անհրաժեշտ էր, որ աշակերտները նկատեին տրված արմատների տարբեր լինելը. դրանց նմանահնչունությունը կարող է շփոթության տեղիք տալ և հանգեցնել թե՛ բառերի անբացատրելի լինելուն, թե՛ ուղղագրական սխալների: Աշակերտները միաձայն ճիշտ բացատրեցին բառիմաստները, շեշտեցին այդ արմատների տարբեր լինելը, բացատրեցին նաև ուղղագրությունը:

Լեզվական որոշակի փաստերով և գործնական վարժությունների կատարման ճանապարհով աշակերտը պետք է համոզվի, որ բառը լեզվական իմաստակիր միավոր է: Կարելի է գրատախտակին շարքերով գրել միավանկ, երկվանկ, եռավանկ բառեր և ամրապնդել բառի հասկացողությունը: Այդ աշխատանքին օգնում է նաև **խառնագիրը**, որի դեպքում բառում խառնված է տառերի հաջորդականությունը, և առաջարկվում է, որ տառերը դասավորելով՝ աշակերտը բառ կազմի: Երևանի հ. 188 հիմնական դպրոցի 2^ա դասարանում ուսուցիչը (ուսուցիչ՝ Կարինե Մկրտչյան) բառի վերաբերյալ աշակերտների իմացությունը ամրապնդելու համար նրանց առաջարկեց կարդալ *կնու* և *կիլու* հնչյունախումբը: Աշակերտները կարդացին և եզրակացրին, որ դրանք իմաստ

¹ Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Մայրենի 2, Էդիթ պրինտ, Երևան, 2010, էջ123-142:

² Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Մայրենի 2, Էդիթ պրինտ, Երևան, 2010, էջ150-151:

չեն արտահայտում, ուրեմն՝ բառեր չեն, ապա վերադասավորեցին տառերը և ստացան բառեր՝ *կնու – ունկ* և *կիլու – ուլիկ*: Նշենք, որ խառնագրով առաջին առաջադրանքները գործածվում են դեռևս այբբենարաններում¹,² և 1-ն դասարանի մայրենիի գործող դասագրքերում: Այսպես, «Մայրենի 1» դասագրքում³ տրված *հյրա, դրոպ, ծակիդ, սրա, ըկներ, փիքրոկ* տառախմբերից առաջարկվում է տառերը դասավորել այնպես, որ բառեր ստացվեն: Շահեկան է, որ **խառնագիրը** տարրական դասարաններում դառնա դասի բաղադրիչ:

Աշակերտների շրջանում բառակազմական վերլուծության հմտություններ և ձևութաբանական հիմքի գիտակցում ձևավորելու առումով անվանի մեթոդիստ Ջ. Գյուլամիրյանն առաջարկում է ԽԻԿ մեթոդի կիրառմամբ աշխատանքը կատարել 4 քայլով.

- **Առաջին քայլ.** նախապատրաստական ուսումնասիրություններ, որոնք իրականացվում են նույնարմատ բառերի շուրջ կատարվող աստիճանաբար բարդացող վարժությունների ճանապարհով (**խթանման փուլ**):
- **Երկրորդ քայլ.** համեմատությունների և վերլուծությունների միջոցով երեխաները բացահայտում են նույնարմատ բառերի և արմատի առանձնահատկությունները (**իմաստավորման I փուլ**):
- **Երրորդ քայլ.** բառի մեջ արմատի և նրա առանձնահատկությունների, արմատի և ածանցի՝ ուղղագրության և բառակազմության միջև գոյություն ունեցող կապի, բառերի ուղղագրության ուսումնասիրում (**իմաստավորման II փուլ**):
- **Չորրորդ քայլ.** բառի ձևութաբանական կառուցվածքի մասին երեխաների ունեցած գիտելիքների ընդլայնում, խորացում, ամրակայում, բառակազմական ունակությունների զարգացում, հոլովական վերջավորությունների ուղղագրության յուրացում, բայի ժամանակային և եղանակային վերջավորությունների իմաստների գիտակցում և ուղղագրական կարողությունների ամրակայում (**կշռադաստման փուլ**)⁴:

Մեր դասալսումներում և փորձարկումներում, առաջնորդվելով վերը նշված մեթոդական մոտեցմամբ, համոզվեցինք, որ այսպիսի աշխատանքը արդյունավետ է և վերջնարդյունքում նպաստավոր աշակերտների բառապաշարն ընդլայնելու հարցում:

¹ Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Այբբենարան, Էդիթ պրինտ, Երևան, 2010, էջ 39, 47, 48:

² Սարգսյան Վ. Ա., Այբբենարան, Մանմար, Երևան, 2010, էջ 73, 88, 100, 106, 115:

³ Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Մայրենի 1, Էդիթ պրինտ, Երևան, 2010, էջ 39:

⁴ Գյուլամիրյան Ջ. Հ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Ջանգակ-97, Երևան, 2015, էջ 213:

Ներկայացնենք մեր դիտարկումները: Ըստ Ջ. Գյուլամիրյանի նշած երկրորդ քայլի՝ մեր խնդրանքով խթանման փուլում ուսուցիչը բառ կազմելիս աշակերտների ուշադրությունը հրավիրեց *արմատի* փոփոխության վրա, այսինքն՝ գաղափար հնչյունափոխության մասին: Խոսափելով լեզվական եզրույթից՝ ուսուցիչն աշակերտներին այն հասու դարձրեց *փոփոխվող արմատ* պայմանական հասկացությամբ. բառեր կազմելիս շատ արմատներ փոփոխվում են: Գրատախտակին աշակերտները իմաստավորման I և II փուլերում գրեցին ուսուցչի հանձնարարած արմատները, իսկ դրանց դիմաց՝ նույն արմատով կազմված բառեր՝ ընդգծելով թե՛ հնչյունափոխված, թե՛ անհնչյունափոխ արմատները՝

1. *գիր – գիրք, գրքեր, գրքային, գրքասեր, գրքակալ, գրքակող,*
2. *գույն – գունավոր, գունակար, գունային, գունավորել, գունազարդ, գունագեղ,*
3. *ծաղիկ – ծաղկեփունջ, ծաղկել, ծաղկանկար, ծաղկաթափ, ծաղկավաճառ, ծաղկակաղամբ, Ծաղկաձոր, ծաղկաման, ծաղկանախշ, ծաղկաշղթա:*

Այս բառաշարքերի բառերը համեմատելով՝ աշակերտները կարևոր եզրահանգումներ արեցին, որ յուրաքանչյուր շարքում կա կրկնվող բառ՝ *գիր, գույն, ծաղիկ*, որ այդ բառերն ընդհանուր են իրենց շարքում առկա բառերի համար, և միաժամանակ ըմբռնում են թե՛ նույնարմատ հասկացողությունը, թե՛ արմատի հնչյունափոխվելու լեզվական իրողությունը, թե՛ ուղղագրական ու բառակազմական առանձնահատկությունները:

Միաժամանակ եկանք այն համոզման, որ միայն նման բառաշարքերի կազմումը և վերլուծական աշխատանք կատարելը բավարար չէ: Մեր կարծիքով ուսուցիչը նախապես պետք է պատրաստվի այս աշխատանքին, մշակի արմատների բառացանկ, օգտվի բառարաններից, որպեսզի աշակերտների կազմած բառերին ավելացնի նորերը՝ նպաստելով աշակերտների բառապաշարի զարգացմանը: Այնուհետև պարտադիր է բառերի իրացումը բառակապակցություններում և նախադասություններում: Երեխաներին պետք է նկատելի դարձնել, թե որ իրողության մեջ նույնարմատ հոմանիշներից որը պետք է գործածել՝ *հյութեղ-հյութալի, ծաղկանախշ-ծաղկավոր, անձրևային-անձրևոտ*:

Ինչպես նշում է Ջ. Գյուլամիրյանը, ածանցի ուսումնասիրումը ևս շահեկան է սկսել նույնարմատ բառերի ուսումնասիրումից, մասնատումից¹: Ռ. Խարազյանը ածանցը տարբերակելու և ճանաչելու համար առաջարկում է, որ աշակերտները ուսուցչի հանձնարարությամբ գրատախտակին գրեն պարզ և ածանցավոր բառերից կազմված բառասյունակներ (մայր- անմայր, մայրական, մայրենի, մայրություն, մայրաքար): Դրանց համեմատությունից երեխաները կնկատեն, որ նույն արմատից կազմված յուրաքանչյուր բառ նոր իմաստ է

¹ Գյուլամիրյան Ջ. Հ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Ջանգալ հրատ., Երևան, 2015, էջ 214:

արտահայտում մայր արմատի վրա ավելացած մասնիկի շնորհիվ, որը կոչվում է **ածանց**¹։ Միանգամից կարելի է հավելել, որ արմատի սկզբից ավելացած մասնիկը կոչվում է **նախածանց**, իսկ արմատի վերջից ավելացած մասնիկը կոչվում է **վերջածանց**։ Միաժամանակ պետք է գաղափար տալ *ա հոդակապի* և նրա բառակազմական նշանակության մասին։ Մենք այն համոզման ենք, որ առավել պատկերավոր լինելու համար շահեկան է, որ ուսուցիչը աշակերտների բառակազմական ունակությունների ձևավորումն ու զարգացումը սկսի բառակազմական կաղապարային բանաձևերից՝ **արմատ+արմատ, արմատ+ա+արմատ, ածանց+արմատ, ածանց+ա+արմատ, արմատ+ածանց, արմատ+ա+ածանց, ածանց+արմատ+ածանց, ածանց+ա+արմատ+ածանց**։

Մեր դիտարկումները ցույց են տվել, որ կաղապարային եղանակով բառակազմական վերլուծությունները նպաստում են աշակերտների կողմից բառիմաստի յուրացմանը, հստակեցնում բառ կազմելու կառուցողական մոտեցումը, խորացնում բառակազմական ունակությունների դրսևորումը, ճկում և խթանում արագ մտածելու ունակությունը, ճկունացնում միտքը, հղկում զանազան արմատներ և ածանցներ կիրառելու կարողությունը, ինչպես նաև մշակվում են ուղղագրական կարողությունները, արմատը վերջավորությունից տարբերելու և դրանք ըստ նշանակության գործածելու կարողությունը։ «Մա հետապնդում է ոչ միայն լեզվական գիտելիքների ուսուցման, այլև, որ ավելի կարևոր է, բառակազմական միջոցների յուրացման և այդ հիմքի վրա նորանոր բառեր կազմելու նպատակ։ Այդ բառաստեղծումը երեխաներին տալիս է նոր բառեր կազմելու հնարավորություն իրենց իմացած արմատների շրջանակներում, որի շնորհիվ նրանց համեմատաբար սահմանափակ բառապաշարը միանգամից բազմապատկվում է»²։

Աշխատանքին գործնական բնույթ հաղորդելու և աշակերտների ըմբռնումը արդյունավետ դարձնելու համար շահեկան է ըստ կազմության խմբավորել գրատախտակին գրված բառերը և ավելացնել նորերը.

արմատ	արմատ+արմատ	արմատ+ա+արմատ	արմատ+ածանց
թագ	ծաղկ+աման	թագ+ա+ժառանգ	ծաղկ+անոց
հյուր	ջր+ավազան	դիմ+ա+նկար	թագ+ուհի
անձրև	շաքար+ավազ	անձրև+ա+բեր	հյուր+ալի
ածանց+արմատ	ածանց+ա+արմատ	արմատ+ա+ածանց	
ան+օգուտ	ենթ+ա+կա	մայր+ա+բար	
ընդ+արձակ	համ+ա+կարգ	նվազ+ա+գույն	
դժ+գույն	հակ+ա+դիր	կարոտ+ա+գին	

¹ Խարազյան Ռ., Հայոց լեզու և դասավանդման մեթոդիկա, ՎՄՎ-պրինտ հրատ., Երևան, 2016, էջ 226:

² Խարազյան Ռ., Հայոց լեզու և դասավանդման մեթոդիկա, ՎՄՎ-պրինտ հրատ., Երևան, 2016, էջ 227:

ածանց+արմատ+ածանց

ան+զգուշ+ություն

մակ+երես+ային

համ+աշխարհ+ային

ածանց+ա+արմատ+ածանց

արտ+ա+գր+ություն

հակ+ա+հարձակ+ում

վեր+ա+նորոգ+ում

Այս գործընթացում ամենից կարևորը աշակերտների այն եզրակացությունն է, թե ինչ նշանակություն ունեն ածանցները բառակազմության մեջ. դրանք իմաստային փոփոխություն են առաջացնում, այսինքն՝ փոխում են բառի իմաստը: Աշակերտների գործուն մասնակցությամբ վերլուծելով մի քանի բառեր և դրանք բաղադրիչների վերլուծելով՝ մեր դասալսման ուսումնասիրությամբ պարզ դարձավ, որ աշխատանքի սկզբից եթե նրանք նկատեցին բառի հիմնական իմաստ արտահայտող մասը՝ արմատը կամ արմատները, և բառի իմաստը փոխող մասնիկները՝ ածանցը կամ ածանցները:

Այսօրինակ վերլուծությունից հետո աշակերտներն ուսուցչի օգնությամբ կարող են ձևակերպել բառերի սահմանումը՝ ըստ կազմության՝ **պարզ** են այն բառերը, որոնք կազմված են մեկ արմատից, **ածանցավոր** են այն բառերը, որոնք կազմված են մեկ արմատից և մեկ կամ մեկից ավելի ածանցներից, **բարդ** են այն բառերը, որոնք կազմված են մեկից ավելի արմատներից, **բարդածանցավոր** են այն բառերը, որոնք կազմված են մեկից ավելի արմատներից և մեկ կամ մեկից ավելի ածանցներից:

Կարդացած բնագրի շուրջ կատարվող բառակազմական աշխատանքի միջոցով լուծվում են մի քանի խնդիրներ.

1. Աշակերտն առավել խորությամբ է ընկալում և մտապահում բառը, քանի որ բառի իրացումը նա ընկալում է խոսքաշարում:
2. Աստիճանաբար, սակայն հաստատապես է ընդլայնվում սովորողի բառապաշարը:
3. Առավել դյուրին է դառնում բառի յուրացումը՝ նրա ակտիվ կիրառությունը:
4. Բավականաչափ հաղթահարվում են ուսումնական այլ առարկաների յուրացման դժվարությունները, քանի որ ընդլայնված բառապաշարը ևս հնարավորություն է տալիս յուրացնելու տվյալ առարկայի ուսումնական նյութը՝ յուրահատուկ ձևակերպումներով և եզրույթներով:

Բանալի բառեր - բառապաշար, բառակազմություն, խառնագիր, բառակազմական կաղապար, վերլուծություն, բառիմաստ:

Նախրա Թոռունյան, Բառակազմության ուսումնասիրման պրակտիկան արդի տարրական դպրոցում - Երեխային սովորեցնել խոսել, նշանակում է նրան սովորեցնել մտածել: Լեզվական նյութի յուրացմամբ, որ սկսվում է տարրական դասարաններից, պայմանավորված է աշակերտի մտքի զոյության ձևը, նոր մտքերն անկաշկանդ ու պարզ արտահայտելու հնարավորությունը: Հոդվածում

նշվում են տարրական դպրոցի սովորողների բառապաշարի հարստացման մեթոդական հնարներ բառակազմական գիտելիքների միջոցով:

Наира Торунян, Практика изучения словообразования в современной начальной школе - Учить ребенка говорить – значит научить его думать. С освоением лингвистического материала, который начинается с начальных классов, обусловлена форма сознания ученика, возможность свободно и ясно выражать новые мысли.

В статье излагаются методические навыки по обогащению лексики учащихся начальной школы методом знаний словообразования.

Naira Torunyan, The practice of studying word formation in modern elementary school - To teach a child to speak is to teach him to think. With the mastering of linguistic material, which begins with the primary classes, the form of the student's consciousness is conditioned, the possibility to freely and clearly express new thoughts.

The article outlines the methodological skills for enriching the vocabulary of primary school students by the method of knowledge of word formation.

**ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱԶՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ
ԴԻՄԱՆԿԱՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՇՈՒՐՋ
ԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՎԱՐԴԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ**

Բարսեղ Կանաչյանի ստեղծագործական դիմանկարը հանրակրթության մեջ ըստ ամենայի ուսումնասիրված չէ: Սույն աշխատանքի նպատակն է լուսաբանել սփյուռքահայ անվանի կոմպոզիտոր Բ. Կանաչյանի ստեղծագործական աշխարհը, և ուղիներ բացել դրա ներառումը միջին դպրոցի «Երաժշտության» դասագործընթացում:

Մեզ համար հատկապես կարևոր են Բ. Կանաչյանի ստեղծագործությունների դերն ու նշանակությունը՝ հաշվի առնելով նրա ներքին հզոր ներուժը սովորողների մեջ ազգային երաժշտական մտածողություն դաստիարակելու, ինչպես նաև ստեղծագործական կարողություններ և հմտություններ ձևավորելու և զարգացնելու գործում:

Բ. Կանաչյանի ստեղծագործությունն ընդգրկում է 23 խմբերգ, 7 մեներգ, 19 մանկական երգեր դաշնամուրով, ինչպես նաև «Աբեղա» օպերան: Կանաչյանը երգեր է գրել Ռ. Պատկանյանի, Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի, Դ. Վարուժանի, Լ. Շանթի, Վ. Միրաքյանի, Ս. Շահազիզի և ուրիշ հայ գրողների խոսքերով: Կոմպոզիտորը բառերը երաժշտականացրել է նուրբ հուզական մեղեդիներով, որոնք, միահյուսվելով բանաստեղծությանը, մի ամբողջություն են կազմում:

Կոմիտասյան շնչով վերահայտնված հայ երգը Բ. Կանաչյանի արվեստով, երաժշտական բեղուն վաստակով և հատկապես սփյուռքահայ կենտրոններում կազմակերպված շքեղ համերգներով վերստին կյանք առավ հայի հոգում և ծաղկեց հայի շրթունքներին: Երգը վերջ չունի. երգը հոգուց է խում և արվեստի հրաշագործ գործությամբ հոգիներ գրավում: Կանաչյանը հայ երգը ապրեցրեց իր ողջ կյանքի ընթացքում: Այժմ հայ երգն է, որ իրեն կապրեցնի իր ձայնեղեն կյանքով...

Կոմիտասի իսկական աշակերտ և նրա գործը շարունակող երգահան Բ. Կանաչյանը կես դար շարունակ եղավ հայ երաժշտական մշակույթի ամենաջերմեռանդ գործիչներից մեկը: Ամենուրեք, ուր եղավ Կանաչյանը, անմիջապես բացեց իր թևերը, գրկեց մի խումբ հայորդիների, հայ երգով կայծ տվեց հայրենասիրական զգացումներին և բոցավառեց մի ոգեղեն բազին:

Անդրադառնալով Բ. Կանաչյանի և՛ մեներգերին, և՛ խմբերգերին՝ պետք է նշել, որ նա կարողացավ ստեղծել երաժշտություն, որ արտահայտությամբ և արտահայտչականությամբ լինելով տարբեր, ոգով, ներքին բովանդակությամբ և էությամբ շարունակում էր Կոմիտաս վարդապետի մեծագործությունը: Կանաչյանի լավագույն խմբերգերը՝ «Տալիլոն», «Հոյ Նարը», «Վարդերի հետը»,

սքանչելի մեներգերը՝ «Ուռին», «Ալվարդի երազը», «Պճիկոն» և մյուսները, մեր երգարվեստի վավերական արժեքներ են: Դրանք կատարյալ ստեղծագործություններ են, սակայն, կարծում ենք, այլ է «Օրորը»: Այս երգի մոգական ուժն ու անկրկնելի հմայքը թվում են այլևս անվախճան և անվերջանալի:

Բ. Կանաչյանը՝ անմահ Կոմիտասի արժանավոր այս սանը, երգեց հայ ժողովրդի սերը, իդեերը: Ձայներով «պատմեց» իր ժողովրդի սրտի բաբախումները և հաղորդակից դառնալով նրա վշտին, տրտմությանն ու հաղթանակին՝ «պատմագրեց» իր ժամանակաշրջանը: Կոմիտաս վարդապետը գտավ հայ երգը և բազմաձայնեց այն: Կանաչյանը Կոմիտասի հայտնաբերած երգի հետքերով գնաց՝ նոր նվաճումներ արձանագրելու:

1939 թվականին Բեյրութում «Կրան Թեաթրի» բեմում տեղի ունեցավ կոմպոզիտոր, խմբավար և մանկավարժ Բ. Կանաչյանի «Աբեղա» օպերայի պրեմիերան, ինչը համարվեց երևույթ մեր «գեղարուեստին մեջ, և պատիվ կը բերե ոչ միայն Բ. Կանաչեանին, այլև հայ համայնքին»: Կանաչյանն իր երգային օպերայի լիբրետոն կազմել էր ըստ Լ. Շանթի (1869-1951) «Հին աստվածներ» դրամայի¹:

«Աբեղա» օպերան Բ. Կանաչյանը նվիրել է իր տիկնոջը՝ Քրիստինե Կանաչյանին: Հենց նա էլ օպերայի առաջնախաղի ժամանակ կատարեց գլխավոր հերոսուհու՝ Սեդայի դերերգը:

«Աբեղան» ջերմ ընդունելություն է գտնում: Թեև ներկայացման մեջ ընդգրկված էին սիրողներ և ոչ պրոֆեսիոնալ երգիչներ. միակ բացառությունն էր Արման Թոքատյանը, սակայն «ժողովուրդը սիրով պիտի ուզե երկրորդ, երրորդ անգամ տեսնել զայն, որքան ալ ծանոթ ըլլան բեմադրութեան նիւթական ու բարոյական թեքնիք դժվարութիւնները»²:

«Աբեղայի» լիբանանյան բեմելից ճիշտ քառորդ դար անց օպերայի հնչյուններն առաջին անգամ հնչեցին կոմպոզիտորի հայրենիքում: 1964թ. հոկտեմբերին Միհրան Թումաճյանը Հայաստանի կոմպոզիտորների միության դահլիճում զեկուցումով ներկայացրեց Կանաչյանի «Աբեղա» ստեղծագործության հեղինակային առաջին տարբերակը: Երաժշտությունը դաշնամուրով չորս ձեռքով ցուցադրում էին դաշնակահարուհի Մարջան Մխիթարյանն ու Ռոբերտ Աթայանը: Ստեղծագործությունն արժանանում է ունկնդիրների ջերմ հավանությանը:

Այդ օրվանից անցել է շուրջ հիսունհինգ տարի, իսկ «Աբեղան» այդպես էլ շարունակում է անձանոթ մնալ հայ հանդիսատեսին ու երաժշտասերին, որովհետև այն ցայսօր հայրենիքում չի բեմադրվել: Մինչդեռ Կանաչյանը

¹ Լ. Շանթի «Հին աստվածներ» պատմական դրաման գրվել էր 1909-ին և հրատարակվել 1912-ին:

² Ձայնի եւ ճիպոտի վարպետը («Աբեղայի» ներկայացման առթիւ). Օփերա Աբեղան՝ Պէյրութի մէջ, ԳԱԹ, Բ. Կանաչյանի ֆոնդ, N 12, Լրագրային կտրտուկներ, 34 փաթեթ, 42 թերթ:

երագում էր, որ իր ստեղծագործությունները հնչեն հայրենիքում, տպագրվեն: 82-ամյա կոմպոզիտորը պատրաստվում էր այցելել հայրենիք, բայց ... չհասցրեց:

Բարսեղ Կանաչյանը վերադաշնակել է Հայաստանի Հանրապետության օրհներգը: Նրա անունով Բեյրութում կոչվել է երաժշտանոց, Երևանում՝ արվեստի դպրոց: Բ. Կանաչյանի արխիվը այժմ գտնվում է Երևանում:

2017թ. «Առաջին անգամ համաշխարհային բեմում» ձեռնարկի շրջանակներում Նյու Յորքում Գոշ Սարգսյանի և Մարիա Սահակյանի ջանքերով բեմադրվել է Բ. Կանաչյանի ստեղծագործությունների գլուխգործոց «Աբեղա» օպերան: Ուրախալի էր այն հանգամանքը, որ օպերայի բեմականացմանը մասնակցում էին ոչ միայն հայ, այլև այլազգի երեխաներ: Այդ առթիվ Բ. Կանաչյանի դուստրը՝ Սեդա Կանաչյանը, որ ապրում է Բոստոնում, գրել է. «Համոզված եմ, որ այս յուրահատուկ ձեռնարկը մեծ արձագանք կգտնի աշխարհի սրտում՝ Նյու Յորքում, և կթևածի աշխարհով մեկ՝ տարածելով կանաչյանական քաղցրահունչ և ինքնատիպ երաժշտությունը»¹:

Նշելի է, որ Բ. Կանաչյանի երաժշտական ստեղծագործությանը բնորոշ են հատկանշական գծեր: *Առաջինը պարզությունն է*: Բ. Կանաչյանի երգերը պարզ են, երկնի կապույտի պես խորունկ, աղբյուրների ջրերի պես ջինջ: Պարզություն, որ չի շփոթվում հասարակի հետ: Արվեստն ունի իր ներքին օրենքները, որոնց հնազանդ՝ Բ. Կանաչյանը ստեղծագործել և դաշնավորել է պարզորեն, գեղեցկորեն:

Երկրորդ հատկանիշն իր ստեղծագործությունների խաղաղ երգայնությունն է: Նրա ցանկացած մեղեդի ամենից առաջ արժնորվում է իր երգային լինելու հատկանիշով:

Երրորդ հատկանիշը բառերի և երաժշտական արտահայտության սերտ միությունն է: Բ. Կանաչյանը երկար ու խորն ուսումնասիրում է բանահյուսական բովանդակությունը, իր մեջ ստեղծում ձայնային ընդհանուր մթնոլորտ, ապա իր մանրամասնությամբ խորացնելով, հասունացնելով՝ վերածում երգի այնպես, որ բառերն ու երաժշտությունը միասնություն ստեղծեն:

Բ. Կանաչյանը, երկար և բժախնդիր աշխատելով իր երգերի վրա, ցանկանալով իր հասունացած ապրումները փոխանցել ունկնդրին, ներշնչումի թարմություն է տալիս երգերին, որն անմիջապես վարակում է և հոգում մնում իբրև հուր անշեջ, որովհետև պարզ են նրա երգերը, անբռնազբոս՝ երգային մեղեդայնության և ձայնի ներդաշնակ միությամբ, հատկապես ըստ ամենայնի հայեցի ոճով մշակված և հորինված:

Ելնելով մեր աշխատանքային փորձից և մանկավարժական պրակտիկայում կուտակած փաստերից՝ կատարել ենք որոշակի առաջարկներ Բ.

¹ Premiere in NEW YORK, First time on the World scene, BARSEGH KANACHIAN, MONK OPERA.

Կանաչյանի ստեղծագործություններից հիմնական դպրոցի «Երաժշտություն» առարկայի դասընթացում ներառելու ուղղությամբ:

Հայտնի է, որ Բ. Կանաչյանի՝ մանուկների համար գրված մեներգերը և խմբերգերը աչքի են ընկնում հայ ազգային երաժշտական լեզվին յուրահատուկ հնչերանգով: Դրանցից մեկը «Ծընկըլը» ժողովրդական խմբերգն է՝ գրված քառաձայն երկսեռ երգչախմբի համար: Այն իր բովանդակությամբ և կառուցվածքով համապատասխանում է IV դասարանի առաջին կիսամյակի «Իմ ժողովրդի երաժշտությունը» առաջին թեմային: Խմբերգը կարելի է օգտագործել որպես ունկնդրման նյութ: Չորրորդ դասարանցիները կարող են նաև երգել սուպրանոյի ձայնախմբի մեղեդին՝ որպես մեներգ:

Հայկական ժողովրդական խոսքի կատակային բովանդակությանը համապատասխան՝ կոմպոզիտորն ստեղծել է երաժշտական այնպիսի կերպարներ, որոնք ունեն դաստիարակչական և խրատական արժեք:

Խմբերգի ունկնդրումը երեխաների մեջ առաջ կբերի հնչող կերպարներին համապատասխան շարժումներ կատարելու ցանկություն: Շահեկան է այս խմբերգը բեմականացնել: Խմբերգի հիմնական մեղեդին հնչում է սուպրանոյի ձայնախմբում: Կարելի է երաժշտական կերպարները բնութագրող երգերը սովորեցնել երեխաներին և ստեղծել դրամատիկական փոքրիկ ներկայացում: Այն դասագործընթացը կդարձնի հետաքրքիր և յուրօրինակ:

IV դասարանի II կիսամյակի ընթացքում «Երաժշտությունը սահման չի ճանաչում» թեմայի շրջանակներում աշակերտներն ունկնդրում են հայ կոմպոզիտորների այն ստեղծագործությունները, որոնք օգտագործվել են այլ ժողովուրդների երաժշտության մեջ, ինչպես նաև ծանոթանում են Հայաստանից դուրս, աշխարհի տարբեր երկրներում հանդես եկած հայ կոմպոզիտորներին, ովքեր իրենց արվեստով ծառայել են այդ երկրների մշակութային կյանքին:

Այս թեմայի շրջանակներում առաջարկում ենք աշակերտներին ներկայացնել նաև Բ. Կանաչյանի ստեղծագործական ուրույն ուղին:

Բ. Կանաչյանը, լինելով Կոմիտասի լավագույն աշակերտներից մեկը, ողջ կյանքի ընթացքում շարունակեց իր ուսուցչի գործունեությունը՝ ծառայել ժողովրդին, լինել նրա մշակը: Այս իմաստով Բ. Կանաչյանը լավագույն օրինակներից մեկն է: Հայաստանի սահմաններից դուրս ստեղծագործելով իր մայրենի լեզվով՝ Բ. Կանաչյանը սփյուռքահայ մշակութային կենտրոններում կազմակերպեց շքեղ համերգներ: Նա իր երգչախմբով շուրջ կես դար ապրեցրեց հայ երգը՝ վերստին կյանք տալով նրան հայի հոգում և հայի շուրթերին:

Բ. Կանաչյանի «Օրոր» երգը (խոսք՝ Ռ. Պատկանյանի), կարծում ենք, համապատասխանում է V դասարանի I կիսամյակի «Երաժշտությունը և գրականությունը» թեմայի երգ-ռոմանս բաժնին, որտեղ երեխաներն ունկնդրում և երգում են Ռ. Մելիքյանի «Վարդը», Ալ. Հարությունյանի «Հայրենիք» կանտատից «Օրորոցայինը»:

Կարծում ենք՝ Բ. Կանաչյանի «Օրոր» երգ-ռոմանսն ավելի կհարստացնի V դասարանցիների հուզաշխարհը, երաժշտալսողական պատկերացումները, և սովորողներն ավելի լավ կհասկանան «Ռոմանս» թեման:

Մանկավարժական պրակտիկայի ընթացքում մենք V դասարանի աշակերտներին ծանոթացրի Բ. Կանաչյանի «Օրոր» երգ-ռոմանսին. նրանք ռոմանսը լսեցին Լուսինե Զաքարյանի կատարմամբ: Երգի հնչման ժամանակ մենք հրահանգեցին, որ աշակերտները փակեն իրենց աչքերը և լսեն մեղեդին: Վերջում նրանց բաժանեցինք քարտեր, որպեսզի լրացնեին աղյուսակը (տե՛ս աղյուսակ 1).

Աղյուսակ

1

Ի՞նչ էի տեսնում մեղեդին լսելիս:	Ի՞նչ էի զգում մեղեդին լսելիս:	Ի՞նչ մտքեր ծնվեցին:
Հոսող գետակ, կանաչ դաշտ, կարմիր կակաչներ, պայծառ երկինք	Հանգստություն, հպարտություն	Մայրիկիս մոտ լինեի. կարծես Ծիծեռնակաբերդի բարձունքին լինեի. կարծես եկեղեցում լինեի. կարծես ճախրում էի թռչունի նման. դառնայի փոքրիկ մանուկ օրորոցում

Մեթոդական այս հնարը կիրառելուց հետո աշակերտների հետ փորձեցինք զրույց վարել և եկանք այն եզրահանգման, որ միայն հայ մայրը կարող է այսպես զգացմունքային երգել:

Այնուհետև թեման ամփոփելու նպատակով աշակերտներին ներկայացրինք մեր կողմից կազմված խաչքառ.

1. Ո՞ւմ երգչախմբում է երգել Բ. Կանաչյանը: Կոմիտաս
2. Ինչպե՞ս է կոչվում Բ. Կանաչյանի հայտնի երգ-ռոմանսը: «Օրոր»
3. Բ. Կանաչյանի միակ օպերան: «Աբեղա»
4. Ինչպե՞ս է կոչվում 1936թ. Բ. Կանաչյանի հիմնած երգչախումբը: Գուսան
5. Կանաչյանի անունը: Բարսեղ

Վերջում աշակերտներին առաջադրեցինք հետևյալ հարցը. «Երբևէ պատահե՞լ է, որ հայրենիքից հեռու գտնվես: Վերհիշի՞ր և նկարագի՞ր զգացմունքներդ» (այս միտքը զուգահեռեցինք Բ. Կանաչյանի ստեղծագործական ուղու հետ՝ հայրենիքից հեռու, հայրենիքի հետ):

Այնուհետև աշակերտներն իրենք փորձեցին ներկայացնել «Օրորը»: Մեր կողմից նշվեց, որ հոգեկան կյանքի, հույզերի և ապրումների արտահայտության և հասկացողության լավագույն միջոցներից մեկը երգն է: Արվեստներից ոչ մեկն այնքան պարզ չէ և իր ներգործությամբ անմիջական, ինչպես երգը: Թովիչ է մարդկային ձայնը, ազդեցիկ և ներգործող, որովհետև հոգեկան շարժումների և հուզումների անմիջական արտահայտությունն է և այլ հոգիներին հաղորդիչը:

Արվեստների մյուս տեսակները՝ նկարչություն, ճարտարապետություն, քանդակ, ինչպես նաև գործիքային երաժշտություն հասկանալու համար որոշակի պատրաստվածություն է հարկավոր, մինչդեռ երգն ավելի ազդեցիկ է և մատչելի, որովհետև բխում է անմիջապես մարդկային հոգուց և անցնում ունկնդրի հոգուն: Այստեղից էլ երգի դաստիարակչական ընդհանուր մեծ նշանակությունը հոգիների ազնվացման և բարձրացման գործում:

Բ. Կանաչյանի «Բամ, փորոտան» խմբերգը (խոսք՝ Ղ. Ալիշանի) յուրօրինակ քայլերգ է՝ նման հիմնի: Այն գրված է քառաձայն երկսեռ երգչախմբի համար: Խմբերգն իր բնույթով, կառուցվածքով, կարծում ենք, համապատասխանում է VI դասարանի «Երաժշտական կերպարի զարգացում» թեմային:

«Բամ, փորոտան» խմբերգը հաղթական գեղեցիկ քայլերգ է՝ հարուստ երաժշտական կերպարներով, որոնք մեկը մյուսի հետ տրամաբանական կապի և զարգացման ընթացքով ունկնդրի մեջ ստեղծում են հաղթական և հերոսական կերպարի զգացողություն: Դպրոցականները, լսելով «Տղամարդկանց քայլերգի» «Լինենք միշտ կուռ» խմբերգը Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ» օպերայից, համեմատության մեջ կոնեն «Բամ, փորոտան» խմբերգի հնչողության հետ և կկատարեն հետաքրքրական զգայական մեկնաբանություններ:

Բ.Կանաչյանի ստեղծագործությունները աշակերտներին ներկայացնելիս բոլոր միջոցները, ձևերը ծառայում են մեկ նպատակի. անել ամեն հնարավորը, որ կոմպոզիտորի երաժշտությունը դառնա երեխաների սեփականությունը, որ նրանք ճանաչեն և սիրեն սփյուռքահայ կոմպոզիտորի արվեստը, ինչպես նաև գնահատեն նրա դերը հայ երաժշտական մշակույթը պահպանելու, զարգացնելու և տարածելու գործում:

Բ. Կանաչյանն իր երկարատև և շրջուն կյանքի ընթացքում հավատարիմ մնաց Կոմիտասին, հայ հոգուն և ինքն իրեն: Անտրտունջ ընդունեց Սփյուռքում իրեն ընծայված պայմանները՝ Պոլսից մինչ Լիբանան, Կիպրոս, Եգիպտոս... Խանդավառեց հարազատ հայ երգով հայրենաբաղձ և հայրենագուրկ ժողովրդին:

Բ. Կանաչյանի անունն ու գործը անջնջելի կմնան հայ երաժշտության պատմության մեջ իբրև Կոմիտասի՝ հայոց երգի Մեսրոպ Մաշտոցի գործի մեծ ջատագով, երաժշտական գործիչ և ստեղծագործող:

Բանալի բառեր - Բարսեղ Կանաչյան, արվեստ, ստեղծագործություն, խմբերգ,

պրակտիկա, դասագործընթաց, մեթոդ:

Աննա Հարությունյան, Վարդան Գալստյան, Հիմնական դպրոցում Բարսեղ Կանաչյանի ստեղծագործական դիմանկարի ուսումնասիրման շուրջ - Բարսեղ Կանաչյանի ստեղծագործական դիմանկարը հանրակրթության մեջ ըստ ամենայնի ուսումնասիրված չէ: Սույն աշխատանքի նպատակն է լուսաբանել սփյուռքահայ անվանի կոմպոզիտոր Բ. Կանաչյանի ստեղծագործական աշխարհը, և ուղիներ բացել դրա ներառումը միջին դպրոցի «Երաժշտության» դասագործընթացում:

Анна Арутюнян, Вардан Галстян, О преподавании творческого образа Барсега Каначяна в основной школе - Творческий образ Барсега Каначяна в общеобразовательной сфере полностью не изучен. Целью настоящего труда является пролить свет на творческий мир знаменитого западноармянского композитора Барсега Каначяна и проложить путь для его вовлечения в учебный процесс «Музыки» средней школы.

Anna Harutiunyan, Vardan Galstyan, About teaching the creative image of Barsegh Kanachian in the fundamental school - The creative image of Barsegh Kanachian is not completely studied in the sphere of general instruction. The goal of this work is to throw light on the creative world of Barsegh Kanachian, a renowned Western Armenian composer, and to find ways to introduce it in the teaching process of “Music” in the middle school.

**«ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ» ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐԶ
ՀԱՍՄԻԿ ՄԻՄՈՆՅԱՆ**

Վերջին ժամանակակից աշխարհը ցույց տվեց, որ հնաոճ և անարդյունավետ են դարձել հին մեթոդներն ու միջոցները: Հարկավոր է նոր շունչ հաղորդել և բարձրացնել կրթական համակարգի արդյունավետությունը, որը կախված է ուսուցիչ-դասախոս մասնագիտական գործիմացությունից, հատկապես մանկավարժական խնդիրների լուծման գործընթացում, նրա դրսևորվող մոտեցումներից: Որոնք ինքնին որոշում են մանկավարժական գործընթացների բովանդակությունը, իսկ նրանց լուծման տեխնոլոգիաներն ու տեխնոլոգիական համակարգերը ուսուցիչ-դասախոս մասնագիտական իմացության և մանկավարժական գործունեության արդյունավետությունն ապահովող միջոցներն են համարվում¹:

Շատ կարևոր է այսօր աշակերտ-ուսանողի մոտ զարգացնել քննադատական մտածողությունը, որն իրենից ներկայացնում է կարդալու, գրելու, խոսելու և լսելու մի բարդ գործընթաց: «Քննադատական մտածողություն» տերմինը տարիներ շարունակ օգտագործվել է կրթական համակարգում և տարբեր խմբերի համար ձեռք բերել տարբեր իմաստ: Հիմնական դպրոցի ուսուցիչների համար քննադատական մտածողությունը բարձր կարգի մտածողություն է, բարձր նկատի ունի ճանաչողական հմտությունների դասակարգման աստիճանական զարգացումը: Այսինքն, ճանաչողական պրոցեսը, որը պրոբլեմային ուսուցման հիմքն է, այն ենթադրում է այդ պրոցեսը խթանող մի ինչ-որ բան: Դա պահանջում է գիտակցումն է: Ցանկացած մարդու հնարավոր չէ սովորեցնել կամ նրա մեջ մշակել որևէ բան, եթե նա հանդես չի բերում ակտիվություն²: Քննադատական մտածողությունը, դա տրամաբանության և փաստարկման հմտություններն են, որոնք ուսանողներին հնարավորություն են տալիս ուշադիր կարդալ, վերլուծաբար քննադատել և հստակ գրել: Իսկ տեսաբանների և նրանց գործընկերների համար՝ մոտեցման ամփոփումն է, որի համաձայն տեքստերը բաժանվում են ըստ իրենց բաղկացուցիչ մասերի: Ինչ վերաբերում է Պաոլո Ֆրեյրեի՝ այն գիտակցության բարձրացման հրամայականն է, որը մեծացնում է ուսանողների՝ սեփական ճակատագիրը հարթելու ուղղին:

Հաշվի առնելով «Մայիսյան հերոսամարտեր» թեմայի կարևորությունը Առաջին Հանրապետության ստեղծման գործում, և վերջինիս 100-ամյակի կապակցությամբ, որոշեցինք ներկայացնել այս թեման: Պատմաբան ուսուցիչ-դասախոսներին խորհուրդ ենք տալիս այն ներկայացնել, քննադատական

¹ Մանուկյան Ա., Պրոբլեմային իրավիճակներում մանկավարժական խնդիրների լուծման ժամանակակից տեխնոլոգիաներ և տեխնոլոգիական համակարգեր, Ե., 2013, էջ 3:

² Ամիրջանյան Յու., Պրոբլեմային ուսուցումը և ուսուցիչը, Ե., 1985, էջ 8:

մտածողության տեսանկյունից՝ կիրառելով «Խ Ը Կ» համակարգը, որպես ուսուցման արդյունավետ միջոց: Բացի այդ, այն հնարավորություն է տալիս աշխատել և աշխատացնել յուրաքանչյուր աշակերտ-ուսանողի: «Խ Ը Կ» համակարգի ընթացքում պետք է իրականացվի ուսուցիչ-դասախոսի վերահսկողությունը, որն ունի կրթական և զարգացնող նշանակություն: Այն նպաստում է ուսուցիչ-դասախոսի կողմից աշակերտ-ուսանողների համակողմանի ուսումնասիրությանը, գիտելիքները, կարողություններն ու հմտությունները ծավալելուն, խորացնելուն և կատարելագործելուն, աշակերտ-ուսանողների իմացական հետաքրքրությունները զարգացնելուն: Յուրաքանչյուր աշակերտ-ուսանող, ակտիվորեն մասնակցելով վերահսկողության պրոցեսին, ոչ միայն պատասխանում է իրեն տրված հարցերին, այլ նաև իմաստավորում է իր ընկերների պատասխանները, նրանց մեջ շտկումներ է մտցնում, լրացուցիչ աշխատանք է կատարում ոչ բավարար յուրացված նյութի վրա:


Այս թեման կարելի է իրականացնել ավագ դպրոցի աշակերտների հետ կամ ուսանողների գործնական պարապունքների ժամանակ՝ նախօրոք հանձնարարելով նրանց թեման և համապատասխան գրականություն: Դասը, արդյունավետ և բովանդակալից դարձնելու համար, կարելի է կազմակերպել նախօրոք այցելություն պատմության թանգարան: Լսարանը պետք է նաև կահավորել համապատասխան քարտեզով:

1-ին Խթանման, այսինքն գրելու նախապատրաստական փուլում ուսուցիչ-դասախոսի առաջնահերթ խնդիրն է թույլ տալ աշակերտ-ուսանողին բացահայտել իր սեփական մտքերը և պատկերացումները, որպեսզի սեփական ասելիքը մինչ գրելը պարզ դառնա:

Այս փուլում նպատակահարմար է կիրառել «Խմբավորման» (կլաստեր) կամ «Քարտեզագրման», ինչպես նաև «Պրիզմա» մեթոդները, որոնք խթանման և մտքերի ու գիտելիքների բացահայտման ամենահուսալի միջոցներից են¹: Կարելի է նաև կիրառել թեմային համապատասխան՝ նախօրոք ընտրված տեսաֆիլմ: «Խմբավորման» մեթոդի ժամանակ, պատահի կամ գրատախտակի կենտրոնում՝ շրջանագծի մեջ, մեկ կամ երկու բառով գրվում է թեմայի անունը: Ապա կենտրոնական թեմայի ենթաթեմաներն ավելի փոքր շրջանագծերի մեջ գրվում են մեծից որոշ հեռավորության վրա և միացվում են դրան գծերով: Այս ենթաթեմաները իրենց հերթին կարող են ունենալ իրենց շուրջը տեղադրված ենթաթեմաները: Ամեն թեմա կարող է ունենալ մի քանի ենթաթեմա, իսկ սրանք էլ կարող են ունենալ իրենց մի շարք ենթաթեմաները: Այսպես օրինակ՝

¹ Սթիվ Զ, Մերեդիթ Ք, Թեմիլ Զ, Քննադատական մտածողությանը նպաստող լրացուցիչ մեթոդներ, Պատրաստվել է «Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով» ծրագրի համար, ուղեցույց 7, մաս 1, ա. տ., 1988, էջ 21:

«Խմբավորման» (կլաստեր) մեթոդ



Աշակերտ-ուսանողները պետք է իրենց ակտիվ մասնակցությամբ բառեր, մտքեր արտահայտեն, որը գրի կառնվի պաստառին կամ գրատախտակին:

Կլաստեր կազմելուց, մեկ անգամ ևս կարևոր իրադարձությունները քննարկելուց հետո, կարելի է անցնել **2-րդ Իմաստի ընկալման փուլին**:

Ընկալման փուլը, դա ուսումնասիրվող առարկաների, երևույթների, պրոցեսների արտացոլումն է մարդու գիտակցության մեջ: Ընկալումը յուրացման պրոցեսի առաջին քայլն է, իսկ իմաստավորումը յուրացման պրոցեսի կարևոր օղակն է: Քանի որ այն օգնում է հայտնաբերել ուսումնասիրվող երևույթի, առարկայի ներքին և ատաքին պատճառահետևանքային կապերը և վերլուծել: Հետո դա էլ օգնում է սուբյեկտին ավելի խոր հասկանալ ուսումնական նյութը, հանգել կարևոր եզրակացությունների, ձեռք բերած գիտելիքները դարձնել ապացույցելի, վերածել համոզմունքների¹:

Այս փուլում կարելի է մեկ կամ երկու ուսանողի հարցնել դասը կամ լսարանին ուղղել հետևյալ հարցերը.

ա) Ներկայացնե՛լ, ինչպիսի՞ իրավիճակում էր գտնվում Հայաստանը տվյալ ժամանակաշրջանում:

բ) Նշե՛լ, ի՞նչ բացասական ազդեցություն ունեցավ Բրեստ-Լիտովսկու պայմանագիրը հայ ժողովրդի կյանքում:

գ) Վերլուծե՛լ, արդյո՞ք դրական նշանակություն ունեցավ Անդրկովկասի Ժողովրդավարական Դաշնային Հանրապետության ստեղծումը:

դ) Ներկայացնե՛լ Սարդարապատի ուղղությամբ ռազմական գործողությունները:

ե) Նկարագրե՛լ Բաշ Ապարանի ճակատամարտի ընթացքը և արդյունքները:

զ) Ինչպիսի՞ն էր ուժերի հարաբերակցությունը, թուրք - հայկական պատերազմի ժամանակ, Ղարաքիլիսայի ճակատում:

է) Ինչպե՞ս արտահայտվեց, Բաթումի բանակցություններում, հայ զինվորի մասին Վեհիբ փաշան:

ը) Ցույց տալ, քարտեզի վրա, թշնամու առաջ շարժվելու և հայկական զորքերի հակահարձակման ուղղությունները:

թ) Ներկայացնե՛լ, թե ի՞նչ հետևանքներ ունեցան մայիսյան հերոսամարտերը, Հայոց պետականության վերականգնման հարցում:

Եվ նորից հարց ողջ լսարանին. «Ո՞րն էր թուրքական բանակի գերնպատակը», պատասխան՝ «նրանք ցանկանում էին բնաջնջել նաև արևելահայությանը և ընդմիջտ լուծել իրենց կոկորդին կանգնած հայկական հարցը»:


Նմանատիպ մի շարք հարցեր ուղղելուց հետո անցում է կատարվում **3-րդ Կշռադաստման փուլին**: Այստեղ կարելի է կիրառել «Քառաբաժան», «Կմախք», ինչպես նաև «Վեննի դիագրամ» մեթոդները: Խորհուրդ է տրվում այս փուլում,

¹ Ամիրջանյան Յու., Ժամանակակից դիդակտիկա, Ե., 1990, էջ 89-90:

պատմաբան-ուսուցիչներին կիրառել «Վեննի դիագրամը», քանի որ այն կիրառվում է երկուս և ավելի հասկացություններ կամ իրադարձություններ համեմատելու համար, որոնք ունեն ինչպես տարբերություններ, այնպես էլ նմանություններ: Իսկ մեր պարագայում այն համահունչ է: Ուստի գծելով պատմադրանքի կամ գրատախտակին երեք իրար հատվող օվալներ, համեմատում ենք Սարդարապատի, Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերի տարբերությունները, իսկ հատման մասերում նշում նրանց նմանությունները:

Այսպես օրինակ՝

«Վեննի դիագրամ»



Սա նույնպես լրացվում է ընդգրկելով պասիվ և ակտիվ աշակերտ-ուսանողներին, նրանց թույլ տալով, անկաշկանդ արտահայտել իրենց մտքերն ու տեսակետները: Որից հետո կարելի է ամբողջացնել դասը և վերհանել Մայիսյան հերոսամարտերի պատմական նշանակությունը.

Եթե փորձենք հարյուրամյա հեռավորությունից հայացք ձգել մեր պատմության անցյալին, կարելի է հպարտորեն ասել, որ 1918 թվականի մայիսը, մեր պատմության ամենապայծառ էջերից մեկն է: Մայիսի 22-ի, վաղ առավոտյան, եկեղեցու զանգերի դողանջների ներքո սկսվում է Սարդարապատի ճակատամարտը: Եվ բոլորի շուրթերին գեներալ Թովմաս Նազարբեկյանի, Արամ Մանուկյանի՝ բանակին ու ժողովրդին ուղղված բոցաշունչ հայրենասիրական կոչերն էին: Հայրենիքի պաշտպանությունը կուսակցական պատկանելիություն և սոցիալական շերտավորում չէր ճանաչում, քանի որ այն դարձել էր համաժողովրդական: Դա հայերի հայրենական պատերազմն էր, կռիվը՝ հանուն հայ տեսակի գոյատևման և ազգային արժանապատվության: Թուրքերը զավթել էին ողջ Արևմտյան Հայաստանը, հայերի գլխին կախված էր ֆիզիկական բնաջնջման վտանգը: Մեկ քայլ էտ կնշանակեր անդառնալի կորուստ, բնաջնջում, ձուլում և վերացում ազգերի պատմության էջերից: Նույն օրերին այդ

ճակատագրական պահին ողջ ժողովուրդը ոտքի ելավ և հերոսական պայքար մղեց նաև Բաշ Ապարանում և Ղարաքիլիսայում: Հայ ժողովրդի աննկուն կամքի և հերոսական պայքարի շնորհիվ ազգը հաղթանակ տոնեց, տապալվեց երիտթուրքերի Արևելյան Հայաստանը զավթելու ծրագիրը, ստիպեցինք ճանաչել նրանց մեր անկախ ապրելու իրավունքը և ապացուցեցինք, որ կանք ու պիտի լինենք: Այն մեր ազգային ուժի հաղթանակն էր: Ինչպես Ե. Չարենցն է ասել. «Ով հայ ժողովուրդ քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»:

«Մայիսյան հերոսամարտերը» թեման կրթադաստիարակչական և ուսուցողական կարևոր նշանակություն ունի ապագա սերնդի համար, քանզի այն աշակերտ-ուսանողների մեջ դաստիարակում է անձնանվիրություն և հայրենասիրություն, վերջինս, ծագել է լատիներեն «պատրիոտ» բառից, որը նշանակում է՝ հայրենիքը սիրող: Հանրահայտ ճշմարտություն է, նաև այն, որ ուսուցման պրոցեսը դաստիարակության պրոցես է և հակառակը: Իզուր չէ ասված, որ ուսուցումը դաստիարակություն է, դաստիարակությունը՝ ուսուցում¹:

Կարելի է ասել, որ դաստիարակությունը ավագ սերունդների կողմից նոր սերունդներին հասարակական-պատմական փորձի փոխանցման պրոցեսն է նրանց կյանքի ու աշխատանքի նախապատրաստելու նպատակով, որն անհրաժեշտ է հասարակության հետագա զարգացումն ապահովելու համար²:

«Մայիսյան հերոսամարտերում», հայերի զանգվածային սխրանքը, հայրենիքի պաշտպանության միասնական կամքը ստիպեցին թուրքերին, և մասնավորապես նրանց պատվիրակության ղեկավար Ռաուֆ Բեյին, հաշվի նստել նրանց հետ: Հաղթանակը հայկական պետականությունը վերականգնելու, Հայաստանի Հանրապետություն ստեղծելու նախադրյալներ էր ստեղծում: Եվ հայ ժողովուրդը ավելի քան 500 տարի առաջ կորցրած իր պետականությունը հնարավորություն էր ձեռք բերում վերջապես վերականգնել: Դարեր շարունակ, հայ ժողովուրդը, պայքարել էր հանուն անկախության, սեփական լեզվի և մշակույթի պահպանման համար: Ահա թե ինչու՞ էր հայ ժողովուրդը պաշտպանում ազգային անկախ պետականության վերականգնման գաղափարը:

Հայկական պետականության վերականգնումը հայ ժողովրդի մեծագույն հաղթանակն էր, բեկումնային իրադարձություն նրա պատմության մեջ:

Ժամանակակից ինտերակտիվ մեթոդները, հնարավորություն են տալիս աշակերտ-ուսանողներին, լուսաբանելու և հասկանալու «Մայիսյան հերոսամարտերի» կարևորությունը և նշանակությունը, որը հենք է հանդիսացել, ինչպես Խորհրդային Հայաստանի, այնպես էլ ներկայիս՝ Հայաստանի Հանրապետության, արարման հարցում:

¹Ամիրջանյան Յու., Պրոբլեմային ուսուցումը և ուսուցիչը, էջ 132:

²Մանկավարժություն, խմբ. Յու. Բաբանսկի, Ե., 1986, էջ 9:

Բանալի բառեր - Մայիսյան հերոսամարտեր, քննադատական մտածողություն, կրթական համակարգ, խթանում, իմաստի ընկալում, կշռադատում, վերահսկում, հայրենասիրություն, ուսուցում, աշակերտ-ուսանող:

Համիկ Միմոնյան, «Մայիսյան հերոսամարտերը» թեմայի դասավանդման հարցի շուրջ - «Մայիսյան հերոսամարտեր» թեման կարևորվում է այն առումով, որ նախադրյալ էր ստեղծում վերականգնել՝ հայ ժողովրդի համար ավելի քան 500 տարի առաջ կորցրած պետականությունը: Իսկ ժամանակակից ինտերակտիվ մեթոդները, հնարավորություն են տալիս աշակերտ-ուսանողներին, լուսաբանելու և հասկանալու «Մայիսյան հերոսամարտերի» կարևորությունը և նշանակությունը, որը հենք է հանդիսացել, ինչպես Խորհրդային Հայաստանի, այնպես էլ ներկայիս՝ Հայաստանի Հանրապետության, արարման հարցում:

Асмик Симонян, По вопросу преподавания на тему «Майские сражения» - Тема “Майских сражений” важна тем, что создавала предпосылки для восстановления государственности армянского народа, которая была потеряна более 500 лет назад. А современные интерактивные методы дают возможность ученикам-студентам иллюстрировать и понять важность и значение “Майских событий”, что явилось фундаментальным в вопросе сотворения как Советской Армении, так и нынешней Республики Армения.

Hasmik Simonyan, Referring to the issue of teaching the topic of “May heroic battles” - The subject of "May Heroic Battles" is of high importance from the perspective of creating preconditions for restoring the statehood that the Armenian people lost more than 500 years ago. The modern interactive methods make it possible for pupil-students to illustrate and understand the importance and significance of the "May Events" which created grounds for the formation of both Soviet Armenia and the current Republic of Armenia.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու., Ժամանակակից դիդակտիկա, Ե., «Լույս», 1990, էջ 327:
2. Ամիրջանյան Յու., Պրոբլեմային ուսուցումը և ուսուցիչը, Ե., «Լույս», 1985, էջ 236:
3. Մանուկյան Ա., Պրոբլեմային իրավիճակներում մանկավարժական խնդիրների լուծման ժամանակակից տեխնոլոգիաներ և տեխնոլոգիական համակարգեր, Ե., «Զանգակ», 2013, էջ 352:
4. Մանկավարժություն, խմբ. Յու. Բաբանսկի, Ե., «Լույս», 1986, էջ 340:
5. Սթիվ Ջ, Մերեդիթ Բ, Թեմփլ Չ, Քննադատական մտածողությանը նպաստող լրացուցիչ մեթոդներ, Պատրաստվել է «Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով» ծրագրի համար, ուղեցույց 7, մաս 1, ա. տ., 1988, էջ 51:

**ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԳԱՂԱՓԱՐՆԵՐՆ ԱՆՁԻ ՀՈԳԵՎՈՐ-ԲԱՐՈՑԱԿԱՆ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ
ԱՐՄԻՆԵ ԵՓՐԻԿՅԱՆ**

Բագրատունյաց հարստության ժամանակաշրջանում Հայաստանում ստեղծվում են համեմատաբար բարենպաստ պայմաններ պետական-քաղաքական-հասարակական, տնտեսական ու մշակութային կյանքի զարգացման համար:

Այդ ժամանակներում՝ 10-րդ դարի երկրորդ կեսին, սկզբնավորվում է հայկական վերածնունդը, բայց այն, ինչպես եվրոպականը, վերընթաց կերպով չկարողացավ տոնել իր վերջնական հաղթանակը և դադարներով մի փոքր ավելի հարատևեց, քանի որ հետագայում երկրի բավականին խառնակ իրավիճակը խարխլել էր հայ կյանքի օրինաչափ զարգացման հնարավորությունները:

Վերածնունդը նոր կյանք էր, նոր միտք, այն ազդարարում էր անհատի ազատ մտածելակերպը. մարդը սկսեց ներթափանցել իր իսկ էության ճանաչման և բացահայտման մեջ, ճանաչեց ինքն իրեն և տեսավ ու զգաց իր արժանավոր տեղը մարդկային փոխհարաբերություններում, կույր հավատն ու լռելյայն հնազանդությունը, «ի վերուստ» սահմանված դրույթները տեղի էին տալիս կոռւքանականությանը, մարդը համարձակորեն թափանցում է բնության ու հասարակության օրենքների և օրինաչափությունների էության մեջ, բացահայտում դրանք ու ծառայեցնում իր պահանջներին:

Հայկական վերածննդի առաջին և ամենախոշոր դեմքն է ժամանակի ամենակրթված մարդկանցից մեկը՝ Գրիգոր Նարեկացին (961-1003թթ.), որն իր ցարդ անգերազանցելի «Մատենան ողբերգութեան» պոեմով ու նորաշունչ տաղերով նշում է կյանքի ու մշակույթի, արվեստի ու գրականության հետագա զարգացման վերընթաց ուղիները:

Չնայած Նարեկացին «Յիշատակարան մատենիմ դրութեան» վերջաբանում ինքն իր մասին համեստորեն գրում էր՝ «Ես՝ Գրիգոր կրօնաւոր քահանայ. յետին բանահիւսաց և կրտսեր վարժապետաց», բայց նա ժողովրդի մեջ, երկրով մեկ գիտունի. իմաստունի նախանձելի հռչակ, համբավ ուներ, և նրա հանաճարը համընդհանուր ճանաչման էր արժանացել, այնպես «որ քսանվեց տարուան առույգ հասակին՝ թագաւորներ իրենց տարակուսանացը լուծումը կըխնդրէին իրմէ: Բայց հանճարն ու սրբութիւնը իրեն դէմ յարոյց ժամանակին տգէտ ու ինքնահաւան գլուխները»¹, որոնք, փաստորեն գաղտագողի դավադրում էին մեծությանը՝

¹ Զարբհանալեան Գ. Հայկական հին դրութեան պատմութիւն (Դ-ԺԳ դար): Վենետիկ, 1897, էջ 538:

**Մանաւանդ զի որոգայթն՝ գաղտնի,
Եւ հնարադիրն աներեսակի²:**

Եվ, գուցե, հուսախաբված, բայց ոչ հուսալքված, նաշում է՝
«Անցեալն՝ անյայտ, եւ ապառնին՝ կարծողական»... (ՕԵ, Ե):

Բայց և՛ անվերապահորեն գիտակցելով իր անմեղսունակությունն ամեն ինչում, իր պատիվն, իրավացիորեն, վերստին արժանի բարձրության վրա է տեսնում՝

**«Ամմեղս եւ անբիծս ընդ հովանեաւ
սորին բազմեցո»... (ՀԵ, Բ):**

Եվ քանզի մեծ գործերը վիթժխարի տքնանքին ծնունդ են, միգուցե հենց այդ պատճառով էլ հուսահատ ճիգվերից՝

**«Վերստին յաւելուած կրկին հեծութեան
Նորին հսկողի առ նոյն աղերս մաղթանաց բանի,
Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ»**

գլխախորագրերով ծնվեց «Մատեան ողբերգութեան»-ը՝ որպէս ապտակ-պատասխան այդ ամբաստանությունների:

Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմի և որոշ բանաստեղծությունների բովանդակությունը, արտաքուստ, կրոնական է, սակայն ներթափանցելով դրանց էության մեջ, պարզորոշ կարելի է նակատել, որ դա կեղևն է, արտաքին ձևը և միջոց է հիմնական մտքի բացահայտման: Հիշված գործերի բուն էությունը կյանքն է, մարդը, շրջապատը, բայց, հաճախ, մեկնաբանված այլաբանորեն, հանրահայտ է, որ վերածննդի ժամանակներում այդպես էր և համաշխարհային գրականության (և ոչ միայն գրականության) մեջ:

Այնպես որ, Նարեկացին, հոգևոր շղարշով պարուրելով իր գործը, իդեալականացնելով աստծուն (այդպես է հասկացվել ամբողջ միջնադարում, ընդհուպ մինչև կապիտալիզմի զարգացման նախնական շրջանը), միաժամանակ և է՛լ ավելի, ինդեալականացնում է մարդուն իր կյանքով, իր գործերով, իր ողջ էությամբ:

«Մատեանի» շատ ու շատ տողերում և էլ առավել «տողերից դուրս» աշխարհիկ կյանքն է խոսում Նարեկացու մեջ, որի դեմ «ընդվզում է» նա, բայց և վայելքի ուղիներ փնտրում:

**«Գիրկս արկի կենցաղոյս սիրոյ
եւ ի քեզ թիկունս, փոխանակ դիմաց, դարձուցի,**

.....

Զանարատ հոգիս մարմնոյս, փափկութեամբ

² Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, Երևան, 1985, ՕԵ, Ե (այսուհետև մեջբերումներին կից կտրվեն գլուխները): Միայն, որպէս բացառություն, մեջբերումներում «աւ»-ը փոխարինված է «օ»-ի:

յաւետ վտտեցի...» (Ի. Ե)

և ապա արդեն ճարահատյալ՝

«... իբրեւ զհերքեալ առ իս ինքն ամփոփեցայ» (Ի. Ե):

Գրիգոր Նարեկացին իր ողջ հոգին է ներդնում պոեմում. այն «հոգւոյ ու մտաց հետ խօսող գերազանց երկասիրութիւն» է³ և ինչպես Հ. Թումանյանը կ'ասեր՝ «... Այստեղ արդեն հայի լեզուն չի, որ խոսում է, բերանը չի, որ պատմում է, կրակված սիրտն է, որ այրվում է երկիրը բռնած, տանջված հոգին է, որ մոնչում է մինչև երկինք», որ այդ մեծությունը, այդ «... հայ հանճարը կարողացել է խոսել մարդկային սրտի ամենանվիրական ու ամենաքնքրւոյշ զգացմունքների հետ... գլուխը բարձրացրել է մինչև երկինք ու զրույց է արել աստծո... հետ երես առ երես»⁴ և ահա, բարբառելով աստծու հետ, բազում անգամներ նրան «երկնքից իջեցնում է երկրի վրա» և պատկերում մարդկային կերպարով «երկրային մարդուն» բնորոշ հատկություններով... և. թէև

«Ձա՜յն հառաչանաց ողբաց սրտից աղաղակի

Քեզ վերընծայեմ, տեսողդ գաղտնեաց» (Ա. ա):

խոսքերով է դիմում աստծուն, և ապա փառաբանելով վեհացնում, պարզորոշ զգացվում է, որ այդ ամենը (իհարկե երեմն՝ վերապահումներով) վերագրվում է մահկանացու մարդուն, քանզի

«Որ արարեալ զիս ի քո պատկեր պանծալի՝

Ի ձեռն վեհիդ տպաւորութեան զտկարս օժանդակելով» (Ե, ք):

և կամ՝

«Որ յանարգ արգանդէ կոչես քեզ պատկերակիցս» (ԿԳ, ք)...

Իզուր չէ ընդունվում, որ երկնային աստվածն ու երկրային մարդը «Ժառանգակից են» և «Մատեննի» մեջ նույնանում են,

«Ահա դու ի յիս»... (ԽԳ, ա):

որ մարդն է՝

«... անգուգական հրաշակերտութեամբ

Եղական պատկեր Աստուծոյ...» (ԽԶ, գ)

որ աստված մարդու մեջ է մարդն աստծո: Փառաբանելով աստծուն, Նարեկացին սքանչացնում է մարդուն և ապավինում վերնայինի գլխությանը՝

«Ո՛չ կիզեր զբերանս, լցեալ հանրութեամբ, ի

Ժառանգակիցն կարդալ զքեզ.

Ո՛չ կշտամբեցեր զյանդգնեալս ի քո

Կցորդուցին...» (Ե, գ)

և ապա՝

«Բժշկութիւն հոգայս աղերսեմ» (ԺԸ, ե):

³ Զարբիանալեան Գ., նշված աշխատություն, էջ 544:

⁴ Թումանյան Հ., Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1969, էջ 241:

«Մատեան ողբերգութեան» պոեմում ուղղակի կամ շրջանցումներով բազում անգամներ անդրադառնում է մարդու էության, նրա եսի դաստիարակության, կրթության, ուսուցման, անձի ձևավորման հարցերին:

Բոլոր ժամանակների խոշոր հումանիստ-մտածողները մարդու մեջ ոչ միայն ակնկալել ենա, այլև հաստատապես տեսել են լավը, բարին, վեհը... այդպիսին պտք է լինի և է նա՝ մարդը, իր ողջ էությամբ... այդպես է մտածում ու գործում նաև Նարեկացին, չնայած վկայակոչում է Աստվածաշունչը, ուր գրված է՝

**«Միտք մարդոյ ի խնամս չարի եան առձանացեալ
ի մանկութենէ» (ԺԵ, Ե),**

որ նախախնամությունից՝

«Չար է արարն, եւ ընդաբոյս՝ չարութիւնն մեր» (ՀԹ, ա)

և որ մենք՝

«Եւ այդ բան՝ առ մեզ, որ միշտ ի բնուկթեան ունիմք

Բնաւորաբար ուղերձեալ զբիծս չարեաց

Անհամար բիւրոց նորոգ յայտնելոց...» (ԺԵ, Ե)

կյանքի ելեւջներում լինում է և այսպես՝

«Իսկ ոմանք, ի բուսոյ տհաս հասակին չարութեամբն

յերկարաձգեալ,

Ի կատարեալ տիս ժամանակին ոչ ի

բարձրութեանն կայից հոսեցան»

Քան թէ ի ստորնականաց թշուառութեանց դժնէից կենացս

Ի կամարն երկնից համբարձման. (ԺԱ, դ):

Թվարկելով մարդկային հոգու հոռի կողմերը (բարոյական բացասական գծերը) նա տեսնում է դրանց շտկման (դաստիարակման-վերադաստիարակման) ուղիները, և դա այն վերափոխումն է՝

«Որով կեանք և երանութիւն քաւութեամբ հանդերձ ընծայեալ

Ինձ՝ մեղապարտիս» (ԻԵ, Ե):

Բայց և այնպես Նարեկացին, ինչպես վերը նշեցինք, մարդու մեջ ի ծնե ընդունում է լավը, դրականը, մարդկայինը... և, եթե մենք՝

«... Ի մերս բնութեան» (Զ, Ե)

ականատես ենք վատին, բացասականին՝

«Որ ի մերս բնութեան պտուտկի ազգի ազգի

վրիպականութիւն (Զ, Ե)

«Որ մինչեւ յոսկեղէն նիւթ յեղանակեալ

հողոյս գոյութեան (ԺԱ, դ)

որոնցից մարդն իր կյանքում ոչ միշտ կարող է խուսափել, խուսանալվել և՝

«Տարակուսեալ հոգւոյ՝ նապաշիորի այր»-ը (ԻԶ, Բ)

հաճախ է ենթակա «ի վրիպակի» (ԻԶ, Բ), ապա դրանք հետևանք են շրջապատի անցանկալի ազդեցության, ներգործության: Հետևությունը մեկն է՝ պետք է վերա-փոխել, «առողջացնել» շրջապատը, բուժել հասարակության խոցերը... նման անադարտ պայմաններում հոգին պարարտ հող կգտնի բավարար ձևավորման ու զարգացման համար և չի նմանվի արտաքնապես շքեղ, ուղղաձիգ ու սաղարթախիտ այն ծառին, որ անպտուղ է՝

«Ծառս ամբարձուղէշ, ստուարաստեղն,

Տերեւալից՝ ունայն ի պտղոց» (Թ, Բ):

Նարեկացու տրամաբանական հետևությունն է՝ մարդը վերադաստիարակման-կերպափոխման ենթակա է, անցանկալի ճանապարհով, ապա, ամենևին չի բացառվում, որ միշտ դյուրությամբ, բայց հնարավոր է վերափոխել մարդուն՝

«Եւ թե այն ժամանակաց կանխաւ, զօրացեալ

ի չարեացն դարձ (ԺԱ, դ)

և, դեկավարվելով բարությամբ, պետք չէ՝

«Ոչ փոխատրել անդրէն չարի չար... (ԺԵ, ե).

այլ պետք է բազում անգամներ բարիք գործել, լավություն անել և մանկանը բարությամբ վերափոխել՝

«Այլ եւթանասնիցս եւթն թողուլ

Անդուստ ի յաւուր զիւրաքանչիւր մեղանաց զպարսոս» (ԺԵ. ե)

Ըստ Նարեկացու, դաստիարակը բարության մարմնացումը պետք է լինի, քանզի հանցավորից, վատից, մեղավորից սպասելիքներ հուսալ ավելորդ է՝

«Եւ արդ, որպէս զի ոչ վայել է օրհնաբանութիւն

ի բերան մեղաւորի» (Կ, ա):

Կյանքը հասկանալու, շրջապատը ճանաչելու համար Գրիգոր Նարեկացին կարևոր է համարում ինքնաճանաչումը՝

«Առ որ ծանուցեալ զբնութեանս չափ» (ԾԹ, ա)

Մարդը ներթափանցում է և՛ իր եսի էության, և՛ շրջապատի ընկալման մեջ և եթե զգում է իր թերությունը, ապա կարող է ըմբոստանալ ինքն իր դեմ և լինել՝

«...Մարտակիտց նմին իսկ ինքեան» (ԾԹ, ա):

Ճիշտ, անկողմնակալ ինքնաճանաչումը դաստիարակության (վերադաստիարակության) առավել արդյունավետ միջոց է. սեփական սխալների ճիշտ ընկալմամբ, ինքնախարազանմամբ, որը ոչ միշտ է հաճելի, դրանց շտկումը միաժամանակ խիստ ցանկալի է՝

«Քանզի, թե չար է անէծս յօտարէ,

Ապա անձամբ գանձն անիծանել՝ կրկին չարաչար» (Կ, Բ):

Նարեկացին բարձր է գնահատում նաև ինքնակրթության

կարևորությունը կյանքից ետ չմնալու, համաքայլ ընթանալու համար, առաջնահերթ է համարում հարատուրեն սովորելը: Եվ քանի որ մարդն ի վիճակի չէ սպառելու գիտությունը, բազմագիտուն հանճարը համեստորեն գրում է՝

«Միշտ ուսանիմ, եւ երբեք ի

գիտութիւն ճշմարտութեան ոչ հասանեմ» (ՀԱ, ք):

Դիմելով ասածուն, Նարեկացին գրում է՝

«Մի հատուցանեմ չարեացն իմ գործոց զնոյն փոխատրութիւն» (ԺԹ, ա)

«Եւ արդ, զքո արարեալս եւ զքեւ փրկեալս» (ԺԸ, բ):

կյանքից, շրջապատից, մարդկանցից սեր եմ հայցում, բայց ոչ մարդկային մտքի փոքրության համեմատ՝

«Այլ ոչ թէ առ փոխքրկութիւն մարդկային մտաց

Հայցեմ ներութիւն,

Այլ առ աննուագ լիութիւն փրկչիդ Յիսուսի

Քրիստոսի պաղատիմ մարդասիրութիւն» (ԺԸ, ա) ,

քանի որ միայն այդպիսով կարելի է փոխել, «դարձի բերել», մարդուն չէ որ ամենուր՝

«Այլ յաղթական են ահմայնից,

Հզոր, ամենակալ, քոյդ մարդասիրութիւն» (ՀԴ, դ):

Գրիգոր Նարեկացին գիտակցում է, որ վերադաստիարակության գործը, մարդուն վերափոխելն անչափ դժվար է, և եթե լավը վատով փոխակերպելը (անշուշտ, սա դաստիարակության նպատակ լինել չի կարող) դուրսին է և հաճախ գործել իսկ պետք չէ դրա համար, ապա պակառակը՝ վատը լավով կերպափոխելը հսկայածավալ աշխատանք է պահանջում և, ցավոք, միշտ չէ որ դրական արդյունքի է հանգեցնում՝

«Քանզի արդարեւ մեծ են չափք հրաշից,

Քան զանմաքրեալս հոգի սուրբ հաստել,

Զլուացեալս պատկեր անտիրելի աղտոյ ներգործել» (ԼԵ, ա):

Բայց և այնպես՝ բոլոր դեպքերում հավատում է մարդու վերափոխմանը և հավաստում, որ մարդը «դաստիարակվելով պատշաճապես» արժանի կլինի «իր նմանին»: Այս ամենը և՛ միջոց է, և՛ նպատակ, որին հասնելու համար պետք են ինքնատիրապետում, ինքնագսպում, որպեսզի նա ի վիճակի լինի (իմա՝ պարտավոր է) ինքնահսկմամբ սահմանափակել կամ արգելել անցանկալին՝

«...Թէ եւ առ մեղաց բազմութիւն

Դիւրապէս ունել կամ թողուլ դոյնպէս զօրեսցես

Որ զարուսեկին անզգա էութիւն իբր երասանու,

իմն դաստիարակես՝

... Թէ զբնութեանս չար դիմեցումն

Յորժամ եւ կամիս՝ հանդարտ առնիցես» (ԿԳ, բ):

և կամ՝

**«Հաւասարապէս անաչառութեամբ
Ընկալցին և քէն մասն երանութեան
պարտոց ազատութեան՝
Հաստեալ վերստին յանարատութիւն
նորոգ մաքրութեան»... (Դ, գ):**

Ամեն ոք պետք է կարողանա իշխել իր զգացմունքների վրա, կարգավորել իր գործողությունները, զսպել ոչ ընդունելի այլևայլ ցանկությունները. և եթե ոչ՝

**«Եւ զի ոչ զցանկականն խորխտականութիւն
սանձեցի (ԺԹ, գ):**

ապա, հակառակ պարագայում, դրանք կարող են հանգեցնել և հանգեցնում են անցանկալի հետևանքների, որից հետո արդեն մտադր ինքն իրեն պետք է մեղադրի: Թվարկելով բազում բացասական դրսևորումներ, նա եզրակացնում է.

«Ես միայն, եւ այլ ոչ ոք» (ՀԲ, գ)

հանցավոր եմ, դրա համար էլ

«Յարժանի կրեմ եղկելիս զանգովանալի զկիզումն» (ԿԹ, գ):

Մարդը (ուսուցիչ, դաստիարակ, խորհրդատու) ուսուցողադաստիարակչական իր գործունեության մեջ ասպարեզ պետք է ընտրի ոչ այնքան այնտեղ, ուր համեմատաբար բարվոք իրավիճակ է, այլ է՛լ առավել՝

**«Ահա անդ է ողորմելն իսկապէս,
Յորում հատաւ ակնկալութիւն վաստակոյն,
Անդ է բարեգործելն,**

Յորում տեսութիւն իմաստիցն խափանեցաւ» (ՀԴ, ա):

Եվ ապա, նա պետք է ներգործի ոչ այնքան խոսքով, որքան օրինակով, գործով՝

«Ազդեա՛ բանիւդ ամենագորաւ... (ՀԸ, բ):

Ահա այս դեպքում է, որ արդյունքը, հետևանքը սպասեցնել չի տա՝

«Եւ վաղվադակի փոփոխեալ զտայց ի լաւ անդր» (ՀԸ, բ):

Հենց սա է հոգատարությունը, քանզի և՛

«Այլ յաղթական են համայնից,

«Հզօր, ամենակալ, քոյդ մարդասիրութիւն» (ՀԴ, դ):

Օրինակն՝ օրինակ, սակայն և ստիպումը չի մերժում Նարեկացին, քանզի շատ դեպքերում պարտադրումն ևս ընդունելի միջոց է զսպելու անցանկալին՝

**«Որով անստամբակելի երասանու սանձաց կրթութեան
զստահակութիւնս իմ հանդարտեցոյց» (ՀԵ, ե):**

Համաշխարհային գրականության մեջ եզակի են այն հեղինակներն ու գործերը, որոնցում տրված են մարդկային ներքին, հոգեկան կերպարի խորախոր

մեկնությունը՝ ի դեմս երկնային (աստծո) գերդրական անհատավորման և երկրային (մարդու) կյանքի ու գործի պարսավելի կողմերի բացահայտման, պախարակման ու խարազանման: Տեսնելով, զգալով, ապրելով մարդու հոգեկան տառապանքները, Գրիգոր Նարեկացին միաժամանակ հավատում է մարդու ներքին ազատությանը:

Խոր դժգոհություն արտահայտելով իշխող անարդարության դեմ, դառնությամբ լցված, նա եզրակացնում է, որ աշխարհի հզորներին դիմելն ավելորդ է, որ ապահովվածներից գթություն հայցելը անիմաստ է, քանզի նրանք՝

«...զմահացուցանելն միշտ արուեստաւորեն,

քան զկենագործելն» (ՕՄ, ա)

բայց և միաժամանակ, ինչպես բոլոր խորաթափանց մտքի տեր մեծանձնությունները, Նարեկացին միշտ վեհանձնություն է ցուցաբերում և գտնում, որ մարդու, անհատի մեծությունն այն է, որ «անթերի մարդկութեամբն» (ԼԴ, ե) վեհորեն ներողամտություն ցուցաբերի նույնիսկ իր թշնամիներին՝

«Ի բովանդակ մտաց շնորհեցի իմոցն՝

Փակեալ առ ի քէն զանիծիցն դժնդակ

ըզձիցն չարաշուք ձայն.

Եւ դժնէից նենգողացն իմոց՝

Ընդ բարիսն ի բոլոր սրտէ

հաշտութեան արգահատեցի...» (ՕԵ, գ):

Գրիգոր Նարեկացին անառարկելիորեն հավատում է կյանքի ու բարու հաղթանակին, մարդու ուժերին, նրա հնարավորություններին.

«... ոչ ելանէ երբեք ըստ բանի քո իր անձեռնարկելի,

Որ եւ մտաց է անհնարաւոր...» (ՀԶ, ա):

մարդու միտքն արագաթռիչ է ու ամենագոր՝

«... յաղթողք և անպարտելիք,

Եւ ըստ ընթացից տեսութեան մտաց՝ արագունք» (ՁԱ, ա):

Ամեն գործի ցանկալի վախճանն է գովելին, իսկ դրան հասնելու համար պետք են և հնարավորություններ, և ազնիվ կամեցողություն: Եվ. եթե կարևոր է կարենալը, ապա էլ առավել՝ կամենալը.

«Ամենայն ինչ քեզ զօրելի է,

Նա զի եւ ընդ անտկար կարելոյդ եւ կամելդ է ախորժելի» (ՁԶ, բ):

Իսկ մարդը կարեկցող ու կամեցող պետք է լինի և ավելի շատ կարիքավորների նկատմամբ, քանզի նրանք են կատարյալները՝

Չի մի տնանկն կարօտասցի, և մի ընզեղն

Բարձրամտեսցի... զի

հաւասարապէս բաշխիր... փոքունցն առաւել, քան

մեծամեծացն» (ՂԳ, ժ):

Նա չի ընկրկում. այլ ընդվզում է հանուն մարդու հոգու ազատության: Այնպես որ Նարեկացին ըմբոստ, խռովահույզ ոգի ունի. նրա այդ ըմբոստությունը թվում է, նպատակային ու գիտակցված, հիմնավորված է. այլապես չէր գրի, թե՝

«Մպառնացար, եւ ոչ զարհուրեցայ,

Արգահատեցեր, եւ ոչ երբեք լուայ,

Որ է ապստամբութեան յայտնի նշանակ»... (Ի, ք)

և իզուր չէ, որ նա գոչում է՝

Զհամօրէն զվնասակարացն զգունդ գանեցից,

Զխոցողացն զինուորութեանց դատախազեցից»... (ԻԲ, դ)

Անսահմանության ոլորտներում ճախրող Գրիգոր Նարեկացու ըմբոստ եսը չի հաշտվում սահմանափակության, արգելակումների հետ, բողոքում է, որ կապկպում են իր՝

«... ամէնընթաց» (Ղ, ա)

թևերը, խոչընդոտում սավառնելու... և ընդվզում է նրա ոգին ու անսաստում՝

«Ի գուրն ինձ փորեալ ինքեա՛նք ընկնեսցին» (Ղ, դ)

Որքան էլ նա հաճախ «մերկացնում է» իրեն, միևնույն է, պարզ գիտակցում է իր մաքրությունը՝

«Եւ սուրբքն վարուք ապենիազ [անկարոտ] եւ

ողորմութեան» (ԾԹ, ք)

Հանճարները զգում են իրենց մեծությունը... այդպիսին է և Գրիգոր Նարեկացին:

«Մտօք ճոխացուցեր, իմաստիւք աճեցուցեր,

Հանճարով հաստատեցեր»... (Ե, ք)

և ապա՝

«Ամաչեմ ասել, թէ եւ երկրաւորիս գործոց

պատմութիւն զքոյզ յառաջեալ»...» (ԾԹ, ա)

Բայց և միաժամանակ զգուշանում է «անեղ դատաստանից»՝

«... Եւ մի զօրացե քան զքոյդ

աջ հողեղենի»...» (ԾԹ, ա)

Հսկաներին բնորոշել լավ է մեծերի խոսքով՝

«Նարեկ մյուզիկ է, սիմֆոնիկ մըն է...»

և համաշխարհային հանճարների նման՝

«Նարեկացին մեկն է, արևին կմոտենա»⁵:

⁵ «Անավարտ հարցազրույց» (ուսանողությանը պատասխանում է Վիլյամ Սարոյանը («Երեկոյան Երևան», 20.10.78, N 246 (6390)):

Ինչպես բոլոր մեծերը, հանճարեղ Գրիգոր Նարեկացին կանխագգացել է ու նախատեսել իր հոչակավոր «Մատենանոցերգութեան» պոեմի՝ անմահ «Նարեկի» անգերազանցությունն ու հարատևությունը ու ճիշտ կոտակել՝

«Եւ թէպէտ վախճան ընկալայց իբր զմահացու.

Այլ յարակայութեամբ բանի այսր սոփերի

Գրեցայց կենդանի» (ՁԸ, ք):

Բանալի բառեր – Գրիգոր Նարեկացին, «Մատենանոցերգութիւն», հոգևոր, գաղափար, անհատ, դաստիարակություն, բարոյականություն:

Արմինե Եփրիկյան, Գրիգոր Նարեկացու գաղափարներն անձի հոգևոր-բարոյական դաստիարակության վերաբերյալ - Գրիգոր Նարեկացու կյանքը հարուստ չէր իրադարձությունների բազմազանությամբ: Այնուամենայնիվ, նրա կյանքը հանգիստ և հանդիսավոր չէր, այն լի էր բուռն ցնցումներով: Իր աշխատանքը փակելով հոգևոր վարագոյրով՝ Նարեկացին իդեալականացնում է աստծուն, միննույն ժամանակ իդեալականացնում է մարդու կյանքը, աշխատանքը և էությունը: Նրա յուրահատուկ աշխատանքը՝ «Մատյան Ողբերգութիւնը», անսպառ երգի օրհներգ է, որը նշում է մարդու տիեզերական մեծությունը, ինչպես նաև մարդկության և տիեզերքի միասնությունը:

Арминр Еприкян, Идеи Григора Нарекаци о духовном и нравственном воспитании человека - Жизнь Григора Нарекаци не была насыщена разнообразными событиями. Она не была спокойной и торжественной, но была полна бурных потрясений. Окутывая свою работу духовной завесой, Нарекаци идеализирует бога, в то же время идеализируя жизнь, работу и сущность человека. Его уникальная работа «Книга скорби» - непревзойденный песенный гимн, который воспекает космическое величие человека и единство людей и вселенной. Правы те, кто пишет, что Нарекаци измеряется космическими масштабами.

Armine Eprikyan, The ideas of Grigor Narekatsi on spiritual and moral upbringing of a person - The life of Grigor Narekatsi wasn't rich with variety of events. However, it wasn't quiet and solemn and was full of stormy upheavals. Shrouding his work with spiritual veil, Narekatsi idealizes the god, at the same time he idealizes humans, their life, work and essence. His unequalled work "Book of Lamentations" is a unique song-anthem which glorifies men's cosmic greatness and the unity of men and the universe. Those who write that Narekatsi is measured by cosmic scales are right.

**ԱՎԱԳ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵՒԱՆԵՐԻ
ԱՊՐՈՒՄԱԿՑՄԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՍՅՈՒԺԵՏԱԴԵՐԱՅԻՆ ԽԱՂԵՐԻ
ԸՆԹԱՅՔՈՒՄ
ԻՐԻՆԱ ՊՈՆՈՄԱՐԵՆԿՈ, ԳԱՅԱՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Անցման դարաշրջանում, երբ կյանքի հին ձևերը սպառում են իրենց, ծայրահեղ հակասության մեջ մտնում ներկայի հետ, երբ հասարակության մեջ առաջանում է մշակութային վերափոխման և այլ աշխարհայացքի մշակման անհրաժեշտություն, առաջին պլան են մղվում աճող սերնդի կրթության և դաստիարակության հարցերը:

Ժամանակակից մանկավարժական տեսությունները և պրակտիկան մեծ ուշադրություն են դարձնում երեխաների միջանձնային հարաբերություններին, նրանց զգացմունքների կառավարման կարողությունների ձևավորմանն ու միմյանց հանդեպ ապրումակցման դրսևորմանը:

Դաստիարակության մեջ ամենաբարդ խնդիրներից մեկը երեխայի մեջ դիմացինի նկատմամբ բարյացակամ վերաբերմունքի, ընկերոջ նկատմամբ ապրումակցման դրսևորման կարողությունն է. հասկանալ դիմացինի զգացմունքները, մտքերը, ընկղմվել նրանց ներաշխարհ:

Քանի որ հենց նախադպրոցական տարիքում է դրվում անձի բարոյահուզական աշխարհայացքի հիմքը, այդ իսկ պատճառով, կարևոր է գտնել առավել արդյունավետ ուղիներ երեխաների մեջ ապրումակցման, մարդասիրական զգացումների ձևավորման համար:

Նախադպրոցական տարիքի երեխաների մարդասիրական զգացմունքների և վերաբերմունքի դաստիարակությանն են անդրադարձել նշանավոր մանկավարժներ Ռ. Ս. Բուրեն, Վ. Բ. Բեպինան, Մ.Վ.Վորոբյովան, Ս. Ա. Ուլտիկան, Վ. Ի.Դավիդովիչը և ուրիշներ: Նրանք առանձնացրել են նախադպրոցական տարիքի երեխայի վարքքագծիմարդասիրական ուղղվածությունը, նրանց համատեղ գործունեության ընթացքում համագործակցությունը, բարյացակամ փոխհարաբերությունների ձևավորումը, նախադպրոցականի պատասխանատվության, ինքնակառավարման դաստիարակությունը: Նախադպրոցական տարիքի երեխան նման է ամբողջական մի զգայարանի՝ ընկալում և զգում է ամեն մանրուք, միշտ պատրաստ է արձագանքելու և հուզականությամբ մասնակցելու շրջապատում տեղի ունեցող իրադարձություններին: Երեխան շրջապատող աշխարհն ընկալում է տպավորությունների և կերպարների միջոցով, որոնք խորը հետք են թողնում երեխայի կյանքում և երբեք չեն մոռացվում [2]:

Նախադպրոցական տարիքում խաղը առաջատար գործունեություն է, որի ընթացքում էլ զարգանում են երեխաների հոգեկան գործընթացները և անձի հոգեբանական հատկությունները:

Համաձայն Ջ. Ֆրոյդի տեսության՝ խաղը մարդուն բնորոշ գործունեություն է՝ պայմանավորված նրա հոգեկանի զարգացմամբ:

Նախադպրոցականի խաղային գործունեության միջոցով իրականացվում են հետևյալ հիմնական խնդիրները.

- Զարգանում են հոգեկան գործընթացները:
- Խաղի ընթացքում ստեղծվում են ինքնաարտահայտվելու հնարավորություններ:
- Խաղը՝ որպես իմացական գործունեություն նպաստում է աշխարհաճանաչմանը:
- Խաղի ընթացքում զարգանում են բարոյականային որակները և սոցիալական զգացմունքները [1]:

Ավագ նախադպրոցական տարիքում առաջատար են դառնում հատկապես դերային խաղերը: Մեծերի հետ հաղորդակցվելու, նրանց հետ համատեղ կյանքով ապրելու ավագ նախադպրոցականի պահանջմունքները սկսվում են բավարարվել հատկապես դերային խաղերի ընթացքում:

Ըստ Ս. Լ. Ռուբինշտեյնի խաղը ցույց է տալիս անհատի վերաբերմունքը իրեն շրջապատող միջավայրի նկատմամբ:

Ըստ Վ. Ի. Յադեշկոյի և Ֆ. Ա. Սոխինի երեխայի համար խաղը դիտվում է որպես արտաքին աշխարհի արտացոլանք՝ մեծահասակների գործունեությունը, նրանց փոխհարաբերությունները երեխաների «իրականության, երևակայության» մեջ [3]:

Խաղի էությունը կայանում է նրանում, որ խաղի ժամանակ ոչ թե կարևոր է ավարտը, այլ խաղի ընթացքը, այն զգացումները, որոնք կապված են խաղային գործողությունների հետ: Թեև երեխայի կողմից իրականացող սյուժետադերային խաղերը երևակայական են, բայց խաղի ժամանակ ապրումները, զգացումները իրական են:

Խաղի այս յուրօրինակ հատկությունը դաստիարակչական մեծ նշանակություն ունի, չէ որ ուղղորդելով այն, ներգրավելով համապատասխան դերեր, մանկավարժը կարող է երեխայի մեջ ծրագրավորել այնպիսի դրական հատկանիշներ, որոնք բնորոշ են տվյալ դերին:

Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների սյուժետադերային խաղերը իրենից ներկայացնում են մի գործընթաց, որտեղ երեխաները հանդիսանում են դերակատարներ՝ ցուցադրելով մեծահասակի դերը, նրանց միջև եղած փոխհարաբերությունները:

Սյուժետադերային խաղերի իմաստը շրջապատող աշխարհի դերային արտացոլումն է, դերային խաղարկումը: Սյուժետադերային խաղերի հոգեբանամանկավարժական իմաստը բազմազան սոցիալական դերերի յուրացումն է ու սոցիալական հմտությունների ձեռքբերումը[1]:

Սյուժետադերային խաղի կառուցվածքն է՝ սյուժե, բովանդակություն, խաղային գործընթաց, դերեր, կանոններ, որոնք սերտորեն կապված են միմյանց հետ, դառնալով երեխայի համար յուրօրինակ գործունեության ձև:

Խաղի կառուցվածքում կարևոր բաղադրիչ է դերը, որն իրականանում է երեխայի կողմից: Երեխան, մտնելով այս կամ այն դերի մեջ, նույնանում է հերոսի հետ, ապրում նրա կյանքով:

Ա. Ս. Սպիվակովսկայան սյուժետադերային խաղում կարևորում է խաղային գործընթացները՝ գտնելով, որ դերային խաղը առանց հատուկ մշակված գործողությունների չի կարող լիարժեք լինել:

Դերային խաղում կարելի է օգտագործել խաղալիքներ, այլ պարագաներ, որոնք կօգնեն երեխային իրականացնել այս կամ այն դերը:

Սյուժետադերային խաղում կարևորվում է նաև խաղին բնորոշ հատուկ կանոններ, որոնք ուղղորդում, կողմնորոշում են երեխայի վարքը, նրանց միջև եղած փոխհարաբերությունները խաղի ժամանակ: Դրանց շնորհիվ խաղը դառնում է կազմակերպված, կայուն՝ օգնելով ամոթխած երեխաներին դառնալ խաղի ակտիվ մասնակիցներ:

Խաղի ընթացքում, երեխաների մեջ առանձնացնում ենք հարաբերությունների երկու տասակ.

- Խաղային հարաբերություններ՝ պայմանավորված դերակատարմամբ որովհետև խաղի մեջ ընդգրկված երեխաների համար ամենակարևորը տվյալ դերն իրականացնելն է:

- Իրական հարաբերություններ, որոնք խաղային գործընթացում պահպանվում են:

Խաղի մեջ երեխաներն ավելի հեշտ են փոխզիջման մեջ մտնում՝ զիջելով իրար: Խաղի շնորհիվ երեխան սովորում է ընկալել իրական աշխարհը: Մ.Կ Կոզլովան խաղն անվանում է «իրականության արտացոլանք»:

Խաղի մեջ երեխան, ցուցադրելով իրական աշխարհը, ծանոթանում է նրա հետ, դառնում իրականության մի մասնիկ՝ անկեղծ վերապրելով այն ամենը, ինչը կապված է տվյալ դերի հետ: Սյուժետադերային խաղերում իրականացվում են փոխհարաբերությունները, համագործունեությունը, անհրաժեշտության դեպքում դրսևորվում է փոխօգնություն, փոխզիջում, ապրումակցում, հանդուրժողականություն, իսկ դաստիարակը հիմնականում հետևում է, ուղղորդում, անհրաժեշտության դեպքում դառնում խաղընկեր,

ստանձնում որևէ դեր և խթանում համագործակցությունը բարոյական հատկանիշների դրսևորումը:

Սյուժետադերային խաղերը հանդիսանում են ավագ նախադպրոցական տարիքի երեխաների ապրումակցման դրսևորման հիմնական միջոց: Այսպես օրինակ՝ խաղալով այս կամ այն դերը, խաղի միջոցով արտահայտելով մեծահասակների փոխհարաբերությունները, երեխաները ծանոթանում են իրենց համար հասանելի կանոններին, մեծահասակի այս կամ այն գործունեության հետ, որը դրսևորվում է սոցիալական փոխհարաբերությունների ժամանակ:

Երեխաների ապրումակցման ձևավորման և դրսևորման համար նպատակահարմար են հետևյալ սյուժետադերային խաղերը. «Երկու հայելիներ», «Քանդակագործը», «Հիվանդանոց», «Ընտանիք», «Ճանապարհորդություն», «Տխուր արքայադուստրը» և այլն:

Ստորև ներկայացված է այդ խաղերից մեկը.

Խաղ՝ <<Տխուր արքայադուստրը>>

Երեխաներից մեկը լինում է արքայադուստր, իսկ մյուսները փորձում են նրան ուրախացնել: (Կարելի է և՛ մնջախաղի, և՛ խաղի միջոցով):

Ում կհաջողվի ուրախացնել արքայադուստրը, նա է դառնում արքայադուստր կամ արքայագին:

Նպաստում է սոցիալական զգացմունքների ձևավորմանը, ինքնամփոփության հաղթահարմանը, հանուն դիմացինին գործելու ցանկության և կարողության ձևավորմանը, ինչպես նաև տազնապայնության վերացմանը:[7]

Այսպիսով, ժամանակակից մանկավարժական տեսությունը և պրակտիկան մեծ ուշադրություն է դարձնում միջանձնային փոխհարաբերություններին, երեխայի կողմից սեփական զգացմունքների կառավարման կարողության և ապրումակցման ձևավորմանը:

Հոգեբանամանկավարժական հետազոտության արդյունքում առանձնացրեցինք ավագ նախադպրոցական տարիքը, որպես առավել զգայուն ժամանակաշրջան երեխաների մոտ ապրումակցման կարողության ձևավորման համար և որպես դրսևորման միջոց առանձնացրեցինք խաղային գործունեությունը, հատկապես սյուժետա-դերային խաղերը, որոնք բարենպաստ պայմաններ են ստեղծում նախադպրոցականի անձնային որակների ձևավորման համար, որոնց հիման վրա էլ երեխան կառուցում է իր փոխհարաբերությունները թե իր հասակակիցների և թե մեծահասակների հետ:

Բանալի բառեր - Ավագ նախադպրոցական տարիք, ապրումակցում, սյուժետադերային խաղեր, մարդասիրական վերաբերմունք, մանկավարժական պայմաններ:

Իրինա Պոնոմարենկո, Գայանե Խաչատրյան, Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների ապրումակցման դրսևորումը սյուժետադերային խաղերի

ընթացքում - Ժամանակակից մանկավարժական տեսությունը և պրակտիկան մեծ ուշադրություն են դարձնում երեխաների միջանձնային հարաբերություններին, նրանց զգացմունքների կառավարման կարողությունների ձևավորմանն ու միմյանց հանդեպ ապրումակցման դրսևորմանը:

Ուստի, դաստիարակության գործընթացում ամենաբարդ խնդիրներից մեկը երեխայի մեջ դիմացինի նկատմամբ ապրումակցման կարողության ձևավորումն է, որը ենթադրում է հասկանալ դիմացինի զգացմունքները, մտքերը, ընկղմվել նրա ներաշխարհը, և հարկ եղած դեպքում, օգնության ձեռք մեկնել նրան:

Հոդվածում ներկայացված են ավագ նախադպրոցական տարիքի երեխաների ապրումակցման դրսևորման առանձնահատկությունները: Որպես ապրումակցման դրսևորման կարևոր պայման առանձնացվել են սյուժետադերային խաղերը:

Ирина Пономаренко, Гаяне Хачатрян, Проявления эмпатии у старших дошкольников в сюжетно-ролевых играх - Современная педагогическая теория и практика уделяют большое внимание межличностным отношениям детей, их эмоциональным способностям и их взаимной привязанности.

Поэтому одним из самых сложных вопросов в процессе воспитания является развитие эмпатии в ребенке, что подразумевает понимание эмоций, мыслей, погружения внутреннего мира и, при необходимости, оказывания помощи.

В статье представлены особенности проявлений эмпатии у старших дошкольников. Важнейшим условием для сопереживания рассматривается сюжетно-ролевая игра.

Irina Ponomarenko, Gayane Khachatryan, The manifestations of empathy in older preschool children in story-role games - Modern pedagogical theory and practice pay great attention to interpersonal relations of children, their emotional abilities and their mutual affection.

Therefore, one of the most difficult issues in the upbringing process is the development of empathy in the child, which means understanding emotions, thoughts, immersing the inner world and, if necessary, providing help.

The article presents the features of manifestations of empathy in older preschool children. The most important condition for empathy is the story-role play.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Ս. Մարության, Ա. Մ. Դավաթյան «Նախադպրոցական մանկավարժություն» 2008թ.

2. Ա. Թովուզյան «Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրը մանկավարժությանմեջ» 2009թ

3. В. В. Абраменкова «Социальная психология детства; развитие отношений ребенка в детской субкультуре». М. 2000
4. Г. Голдаева «Педагогика переживания // Дошкольное воспитание. М.2001.
5. О. Журавых. «Пойми меня» // Дошкольное воспитание. М.2002.
6. Г.А.Урунтаева «Дошкольная психология» М. 2001
7. Шишова Т. Л. Застенчивый невидимка (Как преодолеть детскую застенчивость), М., 1997

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ
ՄԱՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ

Մանկապարտեզում երեխաների կատարած աշխատանքները բազմազան են: Սա թույլ է տալիս նրանց պահպանել հետաքրքրությունը գործունեության նկատմամբ, նպաստում է բազմակողմանի ընկալմանը: Այդ զբաղմունքներից հիմնականը ձեռքի և կառուցողական աշխատանքներն են: Երեխաների կառուցողական գործունեությունը ենթադրում է կառուցման այնպիսի գործընթաց, որ նախատեսում է մասերի և տարրերի փոխադարձ համադրություն: Կառուցողական գործունեությունը հիմք է հանդիսանում երեխաների և մեծահասակների միջև բովանդակային կապի համար: Բացի այդ կառուցողական աշխատանքը կատարում է թերապևտիկ գործառնություն. ազատում է երեխաներին տխուր մտքերից, վերացնում է լարվածությունը, տազնապի և վախի զգացումները, առաջացնում է ուրախ տրամադրություն, դրական էմոցիոնալ վիճակ:

Կառուցողական աշխատանքներում օգտագործվում են երկու տեսակի շինանյութ՝ տեխնիկական և գեղարվեստական: Տեխնիկականը ներառում է կառուցում շինարարական նյութերից, կառուցողական տարրերից: Գեղարվեստական կառուցումը ներառում է թուղթ, ստվարաթուղթ, տարբեր բնական նյութեր՝ կոն, քարեր, ծառի ճյուղեր, ռետինե անվաղողերի մասեր, հին մետաղներ և նմանատիպ այլ նյութեր:

Նպատակաուղղված կառուցողական գործընթացում իրականացվում են երեխաների մտավոր, բարոյական, գեղագիտական, էսթետիկական, աշխատանքային դաստիարակությանն ուղղված խնդիրներ, մշակվում են շրջակա միջավայրի օբյեկտների վերլուծության հմտություններ, նպաստում ստեղծագործական մտածողության, գեղարվեստական ճաշակի զարգացմանը: Ձևավորվում են մարդկային արժեքավոր հատկություններ՝ նպատակապաշտություն, հաստատականություն, գործարար հարաբերություններ հաստատելու կարողություն:

Հնարավոր է նաև լայնորեն օգտագործել բնական նյութը՝ որպես կառուցողական նյութի տարր: Զբոսանքների ժամանակ կարելի է երեխաների հետ հավաքել տերևներ, սերմեր, քարեր: Երեխաների համար կառուցողական աշխատանքը և նախագծումը հետաքրքիր զբաղմունքներից մեկն է համարվում, որը նպաստում է մտածողության երկու կարևորագույն տեսակների՝ ակնառու-պատկերավոր և ակնառու-գործնական մտածողության միջև կապին, ստեղծագործական երևակայության զարգացմանը¹: Երեխաները այս տարիքում

¹ Давидчук А., Н., Конструктивное творчество дошкольника, Москва, 1973 էջ 175.

շրջապատից վերցնում են այն, ինչն իրենց հետաքրքիր է և դրա համար շատ հաճախ մեծահասակի ուղղորդում պետք չէ:

Կառուցողական խաղերի ուսուցանող և դաստիարակող կարևոր պայմաններից է երեխաների ստեղծագործական ինքնագործունեության պահպանումը, աշխատանքի նկատմամբ հետաքրքրության զարգացումը: Երեխան չի խաղում, երբ նրան զբաղեցնում են խաղով կամ պարտադրում խաղալ: Երեխաներն ապրումներ են ունենում, երբ նրանց առաջարկում են օտար, անցանկալի կերպարներ, սահմանափակում են նրանց երևակայությունը¹:

Երեխաների կոլեկտիվ աշխատանքը իր առջև դնում է մեկ կարևորագույն խնդիր. ձևավորել ընկերակցության զգացում: Դրա համար մանկավարժը առաջարկում է, որ երեխաները միասին մտածեն ընդհանուր գաղափարի շուրջ, աշխատանքը կատարեն միասին և պատասխանատվություն ստանձնեն ընդհանուր աշխատանքին մասնակցելու համար: Եթե կրտսեր և միջին խմբերում երեխաներին ցուցադրվում էին բնական նյութերի հետ աշխատանքի այնպիսի հնարներ, որոնք անհրաժեշտ էին տվյալ պարապմունքի ընթացքում և միայն տրված նյութերի հետ, ապա ավագ խմբում արդեն կարելի է ցուցադրել ընդհանուր հնարներ, որոնք օգտակար կլինեն կիրառել տարբեր կառուցողական աշխատանքներում, այլ ոչ թե կոնկրետ մեկ աշխատանքում²:

Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, երեխաները մեծ հետաքրքրությամբ արձագանքում են այն ամենին, ինչը նոր է և անսովոր, դառնալով փոքրիկ դիզայներներ՝ կարող են մրցել մեծահասակների հետ հավասարապես և առաջարկել ոչ ստանդարտ լուծումներ: Ելնելով վերոնշյալից, դաստիարակը պետք է նպատակ դնի աջակցել և զարգացնել մանկական հետաքրքրությունը, նպաստել սեփական ձեռքերով նոր բան ստեղծելուն, սովորելու ցանկությանը, ակտիվացնել երեխայի մտածողությունը շինարարական՝ կառուցողական գործիքների և տարրերի միջոցով³:

Կառուցողական աշխատանքներ կարելի է հանձնարարել կրտսեր խմբից սկսած: Միանշանակ այս խմբում հանձնարարվող աշխատանքները իրենց բնույթով չեն կարող համեմատվել ավագ խմբում հանձնարարվող կառուցողական աշխատանքների հետ, քանի որ դրանք կազմված են երկուսից երեք տարրերից, բնույթով առավել պարզ են և մատչելի: Նմանատիպ աշխատանքների շնորհիվ յուրաքանչյուր երեխա բացահայտում է սիմետրիայի

¹ Նալչաջյան Ա., Ա., Հոգեբանական բառարան, Երևան, 1984 էջ 219.

² Конструктивная деятельность с детьми дошкольного возраста, Статья Е. М. Вячеславовны, МГУ, 2013 էջ 138.

³ Гаврилушкина О., П., Конструктиванию в специальных дошкольных учреждениях для умственно отсталых детей, Москва, 1991 էջ 27-31.

աշխարհը, երկրաչափական հաջորդականությունները և օրինաչափությունները¹:

Ա. Ս. Մակարենկոն նշում էր, որ երեխաների խաղերի համար նախատեսված նյութերը, որոնցից նա կառուցում է «մարդիկ ստեղծում են արժեքներ և մշակույթ»²:

Ընդունված է սահմանել կառուցողական գործունեության երեք մակարդակ՝ ցածր, միջին և բարձր: Միանշանակ պետք է շեշտել այն փաստը, որ սովորաբար կառուցողական գործունեության բարձր կամ միջին մակարդակ ցուցաբերում են այն երեխաները, ովքեր ունեն մտածողության համապատասխանաբար բարձր կամ միջին մակարդակ: Ուստի չնկատել կառուցողական գործունեության և մտածողության միջև առկա կապը պարզապես անհնար է:

Տասը նախադպրոցականների հետ անցկացված հետազոտության արդյունքում բացահայտվել է, որ նրանցից վեցն ունեն կառուցողական գործունեության ցածր մակարդակ, երեքը՝ միջին, մեկը՝ բարձր³: Արդյունքների վերաբերյալ առանձնացվել է, որ՝

- Երեխաների մեծամասնությունը բնութագրվում է գործունեության հանդեպ անկեղծ հետաքրքրության բացակայությամբ:

- Կառուցողական աշխատանքներում նրանց անբավարար գործողությունները ցույց են տալիս նյութերի ֆունկցիոնալ հատկությունների մասին պատկերացումների անբավարարությունը:

- Գործունեության ցածր մակարդակը պայմանավորված է նյութերի տարածական հատկությունների կողմնորոշման բացակայությամբ:

- Այն դեպքում, երբ գործունեության ընթացքում ոչ մի բանավոր խոսքի վերլուծություն տեղի չի ունենում, կառուցման աշխատանքի ընթացքում թույլ են տրվում մեծ թվով սխալներ, որոշ տարրեր փոխարինվում են ուրիշներով, մի քանիսը իսպառ բացակայում են, որոշակի տարրեր բաց են թողնվում և այլն:

- Ընդգծվում է վերլուծական ընկալման, պատկերային մտածողության, ստեղծագործական երևակայության ցածր մակարդակ:

Միանշանակ պրակտիկայում սա առաջին օրինակը չէ և բազմաթիվ հոգեբաններ և մանկավարժներ իրենց աշխատանքներում անդրադարձել են այս խնդրին: Ուստի նման աղյուսների դեպքում առաջարկվում է կազմակերպել

¹ Ремезова Л. А. , Развитие конструктивной деятельности у старших дошкольников с нарушением зрения, Самара, 2002 էջ 126.

² Урунтаева Г. А., Дошкольная психология, Москва, 2001 էջ 241.

³ Конструктивная деятельность с детьми дошкольного возраста, Статья Е. М. Вячеславовны, МГУ, 2013.

նախադպրոցականների կառուցողական գործունեության ձևավորմանն ուղղված ուղղիչ զարգացնող մի շարք աշխատանքներ՝

- Ձևավորել մեծ հետաքրքրասիրություն կառուցողական գործունեության նկատմամբ:

- Զարգացնել կառուցվածքային նյութերի ֆունկցիոնալ հատկությունները հասկանալու ունակությունը:

- Զարգացնել կառուցվող օբյեկտի բաղադրիչների զգայական և տարածական հատկությունների վերաբերյալ կողմնորոշումը:

- Ձևավորել դիզայներական հմտություններ՝ ըստ մոդելի և սեփական նախագծմամբ:

- Զարգացնել հետագա գործողությունները պլանավորելու և կատարած աշխատանքների վերաբերյալ բանավոր հաշվետվություն տալու ընդունակություն:

- Սովորեցնել նախապես մտքում կառուցել¹:

«... գոյություն ունեցող ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դառնում, որ եթե կառուցողական աշխատանքներ կատարելու համար բավարար պայմաններ ստեղծված չեն, երեխաների մտածողությունը բավարար չափով զարգացած չէ, նրանց մտապատկերները ոչ այնքան վառ են և կապը երևակայության հետ ամուր չէ, բացակայում են փոխադարձ հարաբերությունները, երեխաների մոտ դրսևորվում է կառուցողական աշխատանքներին տիրապետելու հմտության ցածր մակարդակ...»²:

Բանալի բառեր - նախագծել, ճկունություն, մանր մոտորիկա, աչքաչափ, մտապատկեր, ինքնագործունեություն, զգայական փորձ, վերլուծական ընկալում:

Մանե Ղազարյան, Կառուցողական աշխատանքների նշանակությունը նախադպրոցականի զարգացման գործընթացում - Մույն հոդվածում անդրադարձել ենք նախադպրոցականների հետ անցկացվող կառուցողական աշխատանքներին: Կառուցողական գործունեությունը կատարելով թերապևտիկ գործառույթ, հիմք է հանդիսանում երեխաների և մեծահասակների միջև բովանդակալից կապի համար: Ճիշտ կազմակերպված կառուցողական աշխատանքները նպաստում են նախադպրոցականների մտավոր, գեղագիտական, բարոյական, աշխատանքային դաստիարակությանը: Կառուցողական գործունեությունը զարգացնում է ձեռք բերված գիտելիքները սերտորեն օգտագործելու, կիրառելու ունակությունը: Կառուցողական աշխատանքների ընթացքում երեխաները կարողանում են պլանավորել առաջիկա քայլերը, վերլուծել իրենց գործողությունները, կատարել

¹ Тарловская Е. И., Детей дошкольного возраста конструированию и ручному труду, Москва, 1994 էջ 123-125.

² Давидчук А., Н., Конструктивное творчество дошкольника, Москва, 1973 էջ 24

եզրակացություններ, որոշել սխալները, մասերը միացնել ամբողջին, համեմատել և ընդհանրացնել:

Мане Казарян, Значение конструктивной работы в процессе дошкольного развития - В этой статье мы ссылались на конструктивную работу дошкольников. Конструктивная деятельность терапевтического характера даёт основание для содержательной связи между детьми и взрослыми. Правильно организованная конструктивная деятельность способствует умственному, эстетическому, нравственному, трудовому воспитанию детей дошкольного возраста. Конструктивные мероприятия развивают навыки использования и применения усердно полученных знаний. В процессе конструктивных работ, дети могут планировать первоначальные шаги, анализировать свои действия, делать выводы, выводить ошибки, части соединять в целое, сравнивать и обобщать.

Mane Ghazaryan, The significance of the work on building and construction for the development of the child - This study is aimed to the pre-school children's work on building and constructions. Working with building and construction leads to a socio-cultural perspective, which is the basis for the interaction between children and adults. Well-planned building and construction work affects the pre-school children's cognitive, aesthetic and empathetic education. The constructive activity develop the ability to use the achieved Knowledge. During the constructive activities children can plan the further steps, analyze their activities, summarite the facts, make out the nustares,join the separate parts the whole , conpare and sum up.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ԱՄՈՒՄՆԱԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՐՏԱՅՈԼՈՒՄԸ «ՄԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍՈՒՄ.....5

ԱՇԽԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԵՏՄԱՌՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....22

ՄԵՐԻ ՆԱԶԱՐՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ԴԵՐԸ ՀԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 1991-1997 ԹԹ.....33

ԱՐԱՐԱՏ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅՈՒԹՅԱՆ ԳԱՂԹԵՐԸ 9-10-ԴԴ ԴԱՐԵՐՈՒՄ.....41

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱԻԴԱ ՍԱՐՀԱՏՅԱՆ

ԱՐՇԱԿ ԵՐԿՐՈՐԴԻ ԶԵՅԹՈՒՆՅՈՒՆԱԿԱՆ ԿԵՐՊԱՎՈՐՈՒՄԸ.....59

ՀԱՍՄԻԿ ՎԱՆՅԱՆ

ՍԻՐՈ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՐՈՒԽԱՆԻ
ՆՈՎԵԼՆԵՐՈՒՄ.....69

ՏԱԹԵՎԻԿ ԱՇՉՅԱՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ԱՆՅՈՒՄԸ
ՍՓՅՈՒՌՔՅԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ.....75

ՏԱԹԵՎԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀՐԱՉՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆՆ ՈՒ 1960 - ԱԿԱՆՆԵՐԻ
ԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ.....80

ՆԻՆԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ «ՇԱՐԱԿՆՈՅ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ.....86

ԱՆԻ ՇԻՐԻՆՅԱՆ

Հեթանոսական եվ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՄՈՏԻՎՆԵՐԻ ՈՐՈՇ
ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐ ՉՐԵՆՅԻ ՎԱՂ ՇՐՋԱՆԻ ԳՈՐԾԵՐՈՒՄ.....92

ԳԱՅԱՆԵ ԽԱԼԱԹՅԱՆ, ՌՈՒՋԱՆ ԶՈՒԼՖԱՅԱՆ

ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆՆ ՕԺԱՆԴԱԿՈՂ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ,
ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ, ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....104

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԴԻԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ, ՆԱՐԵ ՓԱՐԵՄՈՒՋՅԱՆ

ՀՈԳԵԿԱՆԻ ՕՆՏՈԳԵՆԵՏԻԿ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԻԲՆ
ԹՈՒՖԵՅԼԻ «ՀԱՅՅ ԻԲՆ ՅԱԿՉԱՆ»՝ «ԱՐԹՈՒՆԻ ՈՐԴԻ ՈՂՋԸ» ԳՐՔՈՒՄ.....116

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ

ԼԻԴԱ ԲԱԼԱԲԵԿՅԱՆ

ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՖԱՆԵՐԻ
ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԿԶԲՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ
ԽՆԴԻՐՆԵՐԸ. ԲԱԺԻՆՆԵՐՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐՈՒՄ.....125

ՀԱՍՄԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՂՈՐԴԱԿՅՄԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ.....131

ՆԱԻՐԱ ԹՈՌՈՒՆՅԱՆ

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ
ԱՐԴԻ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ.....141

ԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՎԱՐԴԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ԲԱՐՄԵՂ ԿԱՆԱՉՅԱՆԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԴԻՄԱՆԿԱՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՄԱՆ ՇՈՒՐՋ.....151

ՀԱՍՄԻԿ ՄԻՄՈՆՅԱՆ

«ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ» ԹԵՄԱՅԻ
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԱՐՅԻ ՇՈՒՐՋ.....158

ԱՐՄԻՆԵ ԵՓՐԻԿՑԱՆ
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ ԳԱՂԱՓԱՐՆԵՐՆ ԱՆՁԻ
ՀՈԳԵՎՈՐ-ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....165

ԻՐԻՆԱ ՊՈՆՈՍԱՐԵՆԿՈ, ԳԱՅԱՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԱՎԱԳ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ
ԱՊՐՈՒՄԱԿՅՄԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՍՅՈՒԺԵՏԱԴԵՐԱՅԻՆ
ԽԱՂԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ.....175

ՄԱՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ
ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ԶԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ.....181

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԱԿՈՒՆՔԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Ակունքում» տպագրության ներկայացվող հոդվածների տեխնիկական պահանջները.

Տպագրության ներկայացվող հոդվածները պետք է գրված լինեն Word տեքստային խմբագրի օգնությամբ:

Հոդվածները ներկայացնել հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն լեզուներով:

Հոդվածի շարվածքը լինի Unicode-ով (հայերեն հոդվածների դեպքում՝ նաև Sylfaen տառատեսակով), տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1.5, թղթի ֆորմատը՝ A4:

Հոդվածի սկզբում գրել վերնագիրը՝ մեծատառերով, հաջորդ տողում՝ հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ մեծատառերով:

Հղումները դնել տողատակում՝ համարների աճման կարգով, նշել աղբյուրը՝ հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝ նաև համարը) և էջը (էջերը):

Հոդվածի վերջում գրել բանալի - բառերը, հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերը՝ 50-60 բառի սահմաններում:

Հոդվածին անհրաժեշտ է կցել նաև (առանձին էջով կամ առանձին ֆայլով) հոդվածի վերնագիրը և հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև հեղինակի (հեղինակների) տվյալները՝ կոչումը, պաշտոնը, աշխատանքի վայրը, հեռախոսի համարը (համարները), էլեկտրոնային փոստի հասցե (e-mail):

Հոդվածներն ուղարկել akunq.ysuib@gmail.com էլեկտրոնային հասցեով:

ԱԿՈՒՆՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 2 (18)

Համարի պատասխանատու՝ Ա. Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Տեխնիկական խմբագիր՝ Թ. Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

Չափսը՝ 70x100/16: Ծավալը՝ 12 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 100

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025, Ալ. Մանուկյան 1

A K U N Q
COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES
NUMBER 2 (18)

Executive editor: A. A. NERSISYAN

Cover and content design: T. V. SARGSYAN

Format: 70x100/16. Size: 12 sheets. Copies: 100.

YSU Publishing House

Yerevan, 0025, Al. Manukyan 1